

ինչպիսիք են տվյալ տույժի կամ պատժամիջոցի բնույթը, տևողությունը, ազդեցությունը և ի կատար ածման ձևը»<sup>1</sup>:

Դիտարկվել են տարբեր տեսակի պատժամիջոցներ.

«Մեղմ ձերբակալումը», որի դեպքում շարունակվում է պարտականությունների կատարումը, իսկ պարտականությունների կատարումից դուրս անձը, կողպված դռների հետևում չգտնվելով հանդերձ, չի կարող կոնկրետ բնակելի տարածքից կամ զորանոցներից դուրս գալ, չի համարվել ազատագրվում,

«Ծանրացված պայմաններով ձերբակալումը» տարբերվել է միայն այն առումով, որ պարտականությունների կատարումից դուրս գտնվելու ընթացքում զինվորների տեղաշարժը չի սահմանափակվել հատուկ նախատեսված տարածքով, որը նրանք չէին կարող լքել՝ ճաշարան կամ զբաղմունքի վայրեր գնալու նպատակով, բայց քանի որ նրանք կողպված դռների հետևում չէին, դա ազատագրվում չէր համարվում,

«Խիստ ձերբակալում», որի դեպքում սուբյեկտն ազատվում է պարտականությունների կատարումից և արգելանքի վերցվում կողպվող խցում՝ գիշերուզօր. սա համարվել է ազատագրվում:

«Տեղափոխում կարգապահական գումարտակ», որի դեպքում անձը ծառայում է առանձին հաստատությունում քրեական գործերով դատապարտվածների հետ միասին, այդ թվում՝ գիշերները պահվում է կողպված դռան հետևում, և սա շատ ավելի երկար է տևում, քան «ծանրացված պայմաններով ձերբակալումը». այսպիսով, չնայած որ այս ռեժիմը դաժանության առումով մի փոքր զիջում է, այն, միևնույն է, հանդիսանում է ազատագրվում:

**Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների** գործում, որում կառավարությունը վկայակոչել էր այդ դրույթը, «խիստ ռեժիմով պահվող ձերբակալությունը» որպես ժամանակավոր միջոց հիմնավորելու համար, Դատարանը վճռել է, որ զինվորական կարգուկանոնը պահպանելու ընդհանուր պարտականությունը կոնկրետ չի եղել: Չուիլան ընդդեմ Իտալիայի գործով դիմողի կալանավորումը հիմնավորվել է նրանով, որ վերջինս չի կատարել «վարքագիծը փոխելու» պարտակա-

<sup>1</sup> St u Engel and others v. the Netherlands, Judgement of 08 June 1976:

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ  
2010

ՀՏԴ 341.231.14  
ԳՄԴ 67.91  
Մ 356

**Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետի խորհրդի կողմից**

**Հեղինակներ**

Ղազինյան Գագիկ Սերգեյի	իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Դիլբանդյան Սամվել Աղվանի Ղուկասյան Հրայր Հովհաննեսի Հարությունյան Արմեն Ռազմիկի Մելքոնյան Դավիթ Սանուկի Թաթոյան Արման Հակոբի	իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր՝  
իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր» ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Գ.Ս. Ղազինյան**

Մ 356 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում / Գ.Ս. Ղազինյան, Ս.Ա. Դիլբանդյան, Հ.Հ. Ղուկասյան, Ա.Ռ. Հարությունյան, Դ.Մ. Մելքոնյան, Ա.Հ. Թաթոյան – Եր.: ԵՊՀ իրատ., 2010, 272 էջ:

Աշխատանքը նվիրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ - հոդվածների վերլուծության հիման վրա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների վերլուծությանը և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում դրանց կիրառմանը:

Համեմատական վերլուծության հիման վրա աշխատանքում վեր են հանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա բացերը և ներկայացվել են դրանց հաղթահարման գործնական առաջարկներ:

Մենագրությունը կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների և պրակտիկ աշխատողների համար:

ՀՏԴ 341.231.14  
ԳՄԴ 67.91

ISBN 978-5-8084-1338-2

© Հեղ. կոլեկտիվ, 2010թ.  
© ԵՊՀ իրատ., 2010թ

մասն էր կազմում: Տարածքի մի մեծ մասում կային այլ անձինք, ովքեր ենթարկվում էին պարտադիր բնակության միևնույն ռեժիմին, ինչպես նաև՝ ոստիկաններ: Հայցվորի շփումները կղզու մշտական բնակչության հետ սահմանափակ էին, եթե ոչ՝ իսպառ արգելված, և նրա հեռախոսային շփումները և հազվադեպ այցելություններն արտաքին աշխարհի վերահսկվում էին ոստիկանության կողմից: Նա այս վիճակում մնացել էր ավելի քան տասնվեց ամիս: Հավաքաբար և համադրությամբ վերցված այս գործոնների հիման վրա Դատարանը եզրակացրեց, որ իրավիճակը հանդիսացել է ազատագրվում:

**Մասնավորապես, Գուզարդին ընդդեմ Իտալիայի** գործով Եվրոպական դատարանը գտել է, որ 5-րդ հոդվածը կիրարկելի է այն դեպքում, երբ կազմակերպված հանցագործության մեջ կասկածվող անձն ապրում է նման այլ անձանց հետ՝ չառանձնացված, 2,5 քառ. կմ տարածքում, հեռավոր կղզում: Չնայած նրա կնոջն ու երեխային թույլատրված էր ապրել նրա հետ, սակայն հարկադրանքի և մեկուսացման զուգակցումը բավական էր, որպեսզի այն դիտվեր որպես ազատությունից զրկում:

**Գուզարդին ընդդեմ Իտալիայի** գործով Դատարանը չի ընդունել կառավարության այն մոտեցումը, որ կազմակերպված հանցավոր խմբին պատկանող, եկամտի որոշակի աղբյուր չունեցող անձինք ընկնում են «թափառաշրջիկ» հասկացության տակ:

**Էնգելը և ուրիշներն ընդդեմ Նիդեռլանդների** գործով, որը վերաբերում էր Հոլանդիայի ազգային զինծառայողների նկատմամբ ձեռնարկված տարբեր կարգապահական պատժամիջոցներին, Դատարանը, հաշվի առնելով Կոնվենցիայի 4(3)(բ) հոդվածով նախատեսված՝ ազգային պարտադիր զինծառայության թույլատրելիությունը, նկատեց, որ.

«Կարգապահական տույժը կամ պատժամիջոցը, որը վերլուծելիս միանշանակ կերպով պարզ է դառնում, որ քաղաքացու նկատմամբ կիրառվելու դեպքում այն կհամարվեր ազատագրվում, չի կարող այս հատկությունն ունենալ զինծառայողի նկատմամբ կիրառվելիս: Որպեսզի պարզվի, թե որ դեպքերում այն ունի տվյալ հատկությունը, անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ,

կունը Եվրոպական դատարանի դիրքորոշման տեսանկյունից կհամարվի անօրինական:

**Վիտոլդ Լիտվան ընդդեմ Լեհաստանի** գործով վճռում՝ քննարկելով «հարբեցող» տերմինը, Դատարանը սահմանել է, որ «բժշկի եզրակացությամբ «հարբեցող» չճանաչված անձինք, բայց որոնց գործողությունները և պահվածքը ոգելից խմիչքի ազդեցության տակ վտանգ են սպառնում հասարակական կարգի կամ հասարակության համար, կարող են կալանավորվել բնակչության կամ իրենց իսկ շահերի պաշտպանության, մասնավորապես նրանց առողջության կամ անձնական անվտանգության ապահովման նպատակներով»: Այնուամենայնիվ, Դատարանը նաև պարզաբանել է, թե դա չի նշանակում, որ ըստ 5-րդ հոդվածի 1-ին կետի «e» ենթակետի՝ թույլատրվում է «անձի կալանավորումը միայն այն պատճառով, որ նա ոգելից խմիչք է օգտագործել»: Բացի դրանից, Դատարանը որոշել է, որ դիմողին սթափարան տեղավորելը կամայական է եղել, քանի որ նրա պահվածքը վտանգ չի սպառնացել բնակչության կամ հենց իր համար, և նրա նկատմամբ չեն կիրառվել հարբած վիճակում գտնվող անձանց համար ներպետական իրավունքով նախատեսված այլընտրանքային այլ միջոցներ: Դատարանը նշել է, որ համաձայն ներպետական իրավունքի՝ «հարբած վիճակում գտնվող անձը չպետք է անպայման զրկվի ազատությունից, քանի որ ոստիկանությունը լիովին կարող է նրան ուղեկցել հասարակական հոգածության հաստատություն կամ տուն»: Ի վերջո, Դատարանը վճռեց, որ դիմողի տեղավորումը սթափարան անօրինական է եղել:

**Գուզարդին ընդդեմ Իտալիայի (1980)** գործով քրեական դատարանը կարգադրել էր, որ մաֆիայի հետ հանցակցության մեջ կասկածվող անձը բնակվի մի փոքր կղզու վրա, որտեղ նա ոստիկանության կողմից ենթարկվել էր խիստ վերահսկողության՝ որպես խափանիչ միջոց: Նա չէր կարող գիշերով դուրս գալ իր բնակարանից՝ առանց նախապես այդ մասին ոստիկանությանը ծանուցելու, ընդ որում, նա ոստիկանությանը պետք է ներկայանար օրական երկու անգամ: Տարածքը, որում նա կարող էր ազատորեն տեղաշարժվել, ուներ 800 մետրից մի փոքր ավել շառավիղ և կղզու չնչին

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք
- 1.1. Ազատության կանխավարկած. ձերբակալման և կալանավորման հայեցակարգը
- 1.2. Քրեական դատավարության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի Եվրոպական չափանիշները
- 1.3. Քրեական դատավարությունում ազատությունից զրկման եղանակները՝ ըստ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի
- 1.4. Ձերբակալման պատճառների և ներկայացվող մեղադրանքի մասին անձին հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացնելը
- 1.5. Ձերբակալվածին կամ կալանավորվածին դատավորին կամ դատական իշխանություն իրականացնելու իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձին անհապաղ ներկայացնելու պարտականությունը
- 1.6. Ազատությունից զրկելու օրինականության բողոքարկման առանձնահատկությունները Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի լույսի ներքո
- 1.7. Անօրինական ձերբակալման կամ կալանավորման համար փոխհատուցում ստանալու իրավունքը
2. Արդար դատաքննության իրավունք
- 2.1. Արդար դատաքննության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը
- 2.2. Քրեական մեղադրանքը որպես ինքնավար իրավական հասկացություն
- 2.3. Հրապարակային դատական քննության Եվրոպական չափանիշները
- 2.4. Գործի քննությունը ողջամիտ ժամկետում
- 2.5. Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան

- 2.6. Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը լռելու իրավունքի եվրոպական չափանիշների լույսի ներքո
- 2.7. Մրցակցությունը և կողմերի հավասարությունը
- 2.8. Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները
- 2.9. Անմեղության կանխավարկածը քրեական դատավարությունում որպես արդար դատական քննության իրավունքի ապահովման երաշխիք
- 2.10. Մեղադրյալի պաշտպանության իրավունքը
- ա. Մեղադրյալի իրավունքը՝ իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետ)
  - բ. Մեղադրյալի իրավունքը՝ ունենալ բավարար ժամանակ և հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետ)
  - գ. Մեղադրյալի իրավունքը՝ պաշտպանելու իրեն անծանր կամ իր ընտրած պաշտպանի միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված պաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետ)
  - դ. Մեղադրյալի իրավունքը՝ հարցաքննել իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ՝ իր դեմ ցուցմունք տված վկաները (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետ)
  - ե. Մեղադրյալի իրավունքը՝ օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետ)

- նման միջոցներ կիրառելու ժամանակահատվածի տևողությունը:

Դատարանի մոտեցումն առավել պարզ է դառնում հետևյալ գործերի շնորհիվ.

**Լիտվան ընդդեմ Լեհաստանի (2000)**, գործով, հարբածության վիճակում գտնվող և հասարակական վայրում կարգը խախտող անձը ոստիկանության կողմից ուղարկվել էր սթափարան, որտեղ կալանքի տակ էր պահվել վեց և կես ժամ: Դատարանը վճռեց, որ սա 5-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է կալանք:

**Մասնավորապես, Վիտոլդ Լիտվան ընդդեմ Լեհաստանի** գործը, որում տեսողությունից գրեթե զուրկ անձին տեղավորել էին սթափարան. նա փոստային ծառայության աշխատակիցներին բողոքել էր, որ իր արկղը եղել է բացված և դատարկ: Վերջիններս ոստիկանություն էին կանչել՝ բողոքելով, թե նա հարբած է և իրեն ագրեսիվ է պահում: Չնայած դիմողը ձերբակալվել էր համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի (հարբեցողների կալանավորում), սակայն ակնհայտ է, որ լիազորությունների կիրառման անհրաժեշտություն չի եղել. չի եղել որևէ սպառնալիք շրջապատի կամ հենց իր՝ դիմողի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ նա կույր է, և միանգամայն սովորական հանգամանքներ են: Ավելին, օրենքը նախատեսում էր այլ, ավելի մեղմ միջոցներ հարբած վիճակում գտնվող անձանց նկատմամբ (օրինակ՝ հանրային խնամակալության հաստատություն կամ տուն հասցնելը), որոնց կիրառման հնարավորությունը, ամենայն հավանականությամբ, չի քննարկվել: Արդյունքում, ազատությունից զրկելը, չնայած իրավական հիմքի ձևական առկայությանը, եվրոպական դատարանը համարեց անօրինական:

Կարելի է հանգել համանման եզրակացության մաս այն դեպքում, երբ կալանավորման լիազորությունները կիրառվում են այն անձի ինքնությունը պարզելու համար, ում հետ ոստիկանության աշխատակիցն արդեն ծանոթ է, անկախ նրանից, թե տվյալ անձն այդ պահին ունեցե՞լ է անձը հաստատող փաստաթուղթ, թե՛ ոչ: Անկասկած, նման հանգամանքներում այդ լիազորությունների կիրառ-

հողվածի (1)-(4) կետերի խախտմամբ կալանավորված անձինք իրավասու են փոխհատուցում ստանալու՝ համաձայն 5-րդ հողվածի 5-րդ կետի: Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքից կարող են լինել շեղումներ («derogation») ազգային արտակարգ իրավիճակների ժամանակ՝ Կոնվենցիայի 15-րդ հողվածի համաձայն, սակայն որոշակի ընթացակարգերի պահպանմամբ:

### Ազատագրվումը

Եվրոպական Դատարանը բաժանիչ հիմնարար գիծ է անցկացրել մի կողմից 5-րդ հողվածով նախատեսված պաշտպանությունն առաջ բերող ազատագրվման, իսկ մյուս կողմից՝ նման պաշտպանությունն չառաջացնող՝ տեղաշարժվելու ազատության պարզ սահմանափակման միջև: Ազատագրվման և անձի տեղաշարժի պարզ սահմանափակման տարբերությունը կախված է աստիճանից և սրությունից, այլ ոչ՝ բնույթից կամ բովանդակությունից: Յետևաբար, շատ ընդհանրացումներ չի կարելի անել, և յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է մանրամասնորեն հաշվի առնել կոնկրետ դեպքի հանգամանքները: Չարկ է հաշվի առնել մի շարք չափանիշներ, այդ թվում՝ խնդրո առարկա միջոցի տեսակը, տևողությունը, ազդեցությունը կամ կիրառման եղանակը:<sup>1</sup> Խնդրի գնահատման տեսակետից կարևորվում են հետևյալ հանգամանքները.

- կիրառված հարկադրանքի աստիճանը,
- արգելանքի տակ պահման տարածքը (որքան ավելի փոքր է տարածքը, այնքան ավելի հավանական է, որ կարձանագրվի կալանք) և արգելանքն ապահովվելու անվտանգության աստիճանը,
- վերահսկողության միջոցների հաճախականությունը և անձնական կյանքին ներխառնվելու աստիճանը,
- արտաքին աշխարհի հետ շփումների թուլատրվածության չափը և այդ կապի նկատմամբ վերահսկողության մակարդակը,

<sup>1</sup> St u Engel and others v. the Netherlands, Judgement of 08 June 1976:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչ օրս ընթացող դատաիրավական բարեփոխումների մեկնարկը տրվեց 1995 թվականի Սահմանադրությամբ, երբ ընդհանուր գծերով կանխորոշվեցին իրավական համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերը: Իբրև արդյունք՝ արմատական վերափոխման ենթարկվեց ԶԳ դատաիրավական համակարգը՝ առաջնահերթ խնդիր ունենալով երաշխավորել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Որպես շարունակական գործընթաց՝ դատաիրավական բարեփոխումներն ուղղված էին նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի՝ ԶԳ իրավական համակարգում աստիճանական ներդրման ապահովմանը: Այդ գործընթացն առավել կարևորվեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների վավերացմամբ: Արդյունքում՝ եվրոպական իրավական արժեհամակարգը դիտվեց այն հիմնական ուղեցիչը, որը կանխորոշեց դատաիրավական համակարգի հետագա զարգացումը: Սակայն իրականացված դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի արդյունքները ցույց տվեցին, որ բարեփոխումների իրականացման ընթացքում անհրաժեշտ խորությամբ չուսումնասիրվեցին դատական իշխանության տեսական հարցերը եվ այդ ոլորտում այլ երկրների կուտակած փորձը: Դրանով պայմանավորվեց 2005թ-ի սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը, որից հետո առաջնակարգ խնդիր դարձավ եվրոպական արժեհամակարգին համապատասխանող դատաիրավական համակարգի ձեվավորումը:

Դատաիրավական համակարգի սպասվող վերափոխման նոր ալիքը դեռևս իրավական ամրագրում չի ստացել, սակայն ակնհայտ է, որ այն պետք է միտված լինի արդեն իսկ ձևավորված օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի կատարելագործմանը: Թե որքանով նշված բարեփոխումները կհասնեն սպասվող արդյունքին, կախված կլինի դրանց հետևողական, գիտականորեն հիմնավորված և համակարգային իրականացումից:

Սակայն հստակ է, որ նման զարգացումն ինքնանպատակ չէ և պետք է դիտվի որպես մարդու իրավունքների պաշտպանության ուղղակի նոր, առավել գործուն մակարդակի հասնելու անհրաժեշտ գրավական:

Դատաիրավական համակարգում եվրոպական չափանիշների հաջող ներդրումը մեծապես կկանխորոշի հասարակության վերաբերմունքը դատարանների, իրավապահպան մարմինների և ընդհանրապես իրավունքի նկատմամբ: Արդյունքում՝ հասարակական կյանքում տեղի կունենան այնպիսի խորքային փոփոխություններ, որոնց դժվար է հասնել առանց նշված ոլորտի հարաբերությունների արմատական վերաթեվորման:

Եվրոպական արժեքների հետևողական ներդրումը հատկապես կարևոր նշանակություն է ստանում քրեական դատավարությունում, քանի որ մարդու իրավունքների տեսանկյունից այդ ոլորտն օբյեկտիվորեն առավել զգայուն է: Բացի այդ, քրեական դատավարություն իրականացնող պետական մարմինները ունեն տասնամյակների ընթացքում արմատավորված ինստիտուցիոնալ և գործառնական ավանդույթներ, որոնցից ձերբազատվելն այնքան էլ հեշտ չէ:

Քրեական դատավարությունում եվրոպական չափանիշներն այն արժեքներն են, որոնք ժողովրդավարական հասարակությունում ապահովում են մարդու իրավունքների պաշտպանությունը՝ առանց վնասելու հանցագործությունների դեմ պայքարում պետության քրեական քաղաքականության իրականացմանը: Այլ խոսքով՝ սրանք այն պահանջներն են, որոնք քրեական դատավարությունում ապահովում են հանրային և մասնավոր շահերի համաչափությունն այն հաշվով, որպեսզի չխաթարվի հասարակության վստահությունը պետական համակարգի և մասնավորապես արդարադատության նկատմամբ, անձի իրավունքները սահմանափակվեն միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է պետական համապատասխան մարմինների կողմից իրենց առջև դրված խնդիրները լուծելու, այն է՝ հանցավորության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար:

անկախ (անջատ): Դատարանը նշել է, որ 5-րդ հոդվածն ուղղակիորեն վերաբերում է ազատությունից ապօրինի զրկելուց պաշտպանելուն: Ալթունի գործով դիմողը վկայակոչել է, որ իրեն հարկադրել են լքել իր տունը և գյուղը՝ խախտելով ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը: Դատարանը որոշել է, որ դիմողի անապահով անձնական դրությունը, որն առաջացել է բնակավայրից զրկվելու արդյունքում, չի ներառվում 5-րդ հոդվածով նախատեսված «անձնական անձեռնմխելիության» հասկացության մեջ: Այլ գործերով Դատարանը նշել է, որ «անձնական անձեռնմխելիության» հասկացությունը կարող է հավասարեցվել ազատությունից ապօրինի զրկելն արգելելու պարտականությանը (տես, օրինակ՝ Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի գործով և Օջալանն ընդդեմ Թուրքիայի 2005 թվականի գործով վճիռները):

### **Իրավունքը և թույլատրելի բացառությունները**

5-րդ հոդվածի առաջին նախադասությունը միանշանակ սահմանում է ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ իրավունք, որը երաշխավորվում է յուրաքանչյուրին: Երկրորդ նախադասությունը թույլատրում է բացառություններ միայն զգուշորեն ձևակերպվող հանգամանքներում: Նախևառաջ, ցանկացած կալանք պետք է հետևի «օրենքով սահմանված կարգին» և երկրորդ, այն պետք է 1-ին կետի (ա)-(գ) ենթակետերից որևէ մեկի հիման վրա թույլատրված լինի: Այս ենթակետերով նախատեսված՝ կալանքի հիմքերի ցանկը սպառնիչ է. կալանքի որևէ այլ հիմք 5-րդ հոդվածի շրջանակներում օրինական չէ: Ավելին, անձի այնպիսի ազատագրվումը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով, կամ 1-ին կետի (ա)-(գ) ենթակետերի հիման վրա, համարվում է կամայական և անօրինական: 5-րդ հոդվածին հակասող հանգամանքներում անձանց կալանքի տակ պահող իրավասու մարմինները պարտավոր են անհապաղ ազատ արձակել նրանց (տես՝ **Ասանիձեն ընդդեմ Վրաստանի (2004)** գործը և **Իլյիսկուն և ուրիշներն ընդդեմ Սլովակիայի և Ռուսաստանի (2004)** գործը): 5-րդ

1/ հռչակել ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը,

2/ սահմանել այն դեպքերը, երբ տվյալ իրավունքը կարող է սահմանափակվել պետական հարկադրանքի միջոցներ կիրառելիս,

3/ նախատեսել այն երաշխիքները, որոնք պետք է պահպանվեն օրենքով և որոնցից կարող է օգտվել ազատությունից զրկված անձը:

### **Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի կարևորությունը**

Եվրոպական Դատարանը շարունակաբար ընդգծում է ժողովրդավարական հասարակարգում ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի կարևորությունը: Օրինակ, **Դե Վիլդ Օոմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի** գործով (1971 թվականին), որի դեպքում հայցվորները կամավոր համձնվել էին ոստիկանությանը կալանքի վերցվելու նպատակով, Դատարանը վճռեց, որ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը ժողովրդավարական հասարակարգում չափազանց կարևոր է, այնքան կարևոր, որ դրա ընձեռած պաշտպանության օգուտներից անձը չի կարող զրկվել կամովին դրանից հրաժարվելու և կալանքի վերցվելու հետևանքով: 5-րդ հոդվածն ապահովում է պաշտպանություն ոչ միայն անձին կալանքի տակ վերցնելու պահին, այլ նաև դրանից հետո՝ պարբերաբար, մինչև անձի ազատ արձակվելը կամ քրեական դատարանի կողմից որոշակի ժամկետով ազատագրված և դատապարտվելը:

### **«Անձնական անձեռնմխելիության» հասկացությունը**

Մի շարք գործերով, ադ թվում Ալթունն ընդդեմ Թուրքիայի 2004 թվականի գործով, Դատարանը հստակորեն նշել է, որ 5-րդ հոդվածով նախատեսված անձնական անձեռնմխելիության հասկացությունը չի կարող մեկնաբանվել ազատության իրավունքից

Դրա հետ միասին, եվրոպական չափանիշներին համապատասխան օրենսդրության առկայությունն ինքնին անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ նշված չափանիշներին համահունչ քրեական դատավարություն ունենալու համար: Ոչ պակաս կարևոր նշանակությամբ է առանձնանում դրա կիրառումը, քանի որ անգամ կատարյալ օրենսդրության պայմաններում քրեական դատավարությունը հեռու կլինի ժողովրդավար լինելուց, եթե չապահովվի այդ չափանիշներին համապատասխան կիրառություն:

Այդ կապակցությամբ ներկա պայմաններում առանձնակի արդիականություն է ձեռք բերում ՀՀ քրեական դատավարությունում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի իրացման ուսումնասիրությունը, որոնք երաշխավորված են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայով<sup>1</sup>:

Սույն ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ կկատարվի ՀՀ-ում քրեական գործերի քննության ընթացքում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի, արդար դատաքննության իրավունքի իրացման հիմնահարցերին՝ նպատակ ունենալով ապահովել դրանց առավել ամբողջական և համակարգային հետազոտումը: Մասնավորապես, այդ տեսանկյունից ուսումնասիրության կենթարկվեն Եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթները, դրանց կիրառման առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային պրակտիկան, ինչպես նաև դրանց համապատասխանության լույսի ներքո՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը:

<sup>1</sup> Արդար դատաքննության իրավունքն ամրագրում է ստացել նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում:

# 1. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## 1.1. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ. ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ

### Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի իմաստը

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի կարևորությունը գիտակցվել է դեռ դարեր առաջ: Այն իր արտահայտությունն է գտել մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերի մի շարք «նախատիպերում», ինչպիսիք են 1215թ. «Ազատությունների Մեծ Խարտիան» և 18-րդ դարի ամերիկյան և ֆրանսիական սահմանադրությունները:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի բուն նպատակն է երաշխավորել անհատի ֆիզիկական ազատության պաշտպանությունը կամայական կալանքից: Այն չի սահմանափակվում զուտ անձի տեղաշարժվելու ազատությամբ, որը, ի դեպ, կարգավորվում է 4-րդ հոդվածի 2-րդ հոդվածով: Կոնվենցիայի համաձայն, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը երաշխավորվում է բոլորին, առանց որևէ խտրականության՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հանոգմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային, ծագման, կամ այլ կարգավիճակի հիմքով:

Եվրոպական Կոնվենցիայի 5 հոդվածով հռչակված այս իրավունքի նպատակն անձնական ազատությունն է դրա դասական ընկալմամբ, այսինքն՝ որպես անձի ֆիզիկական ազատություն: Եվրոպական Դատարանի պրակտիկայում բազմիցս ընդգծվել է այն կարևորությունը, որն ազատության իրավունքը ձեռք է բերում ժողովրդավարական հասարակությունում այն իմաստով, ինչպես որ դա հասկացվում է Եվրոպական Կոնվենցիայում: Այս իրավունքի սահ-

մանափակումը նախ և առաջ ընկալվում է որպես ուղղակի կամ հոգեկան հարկադրանքի արդյունքում մարդու գործողությունների ազատության և որոշումների ընդունման սահմանափակում: Բացի այդ, Եվրոպական Կոնվենցիայի 5 հոդվածի իմաստով ազատությունից զրկելը բնորոշելու համար անհրաժեշտ է ելնել այն կոնկրետ վիճակից, որում անձը հայտնվել է, հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսին են կիրառված միջոցների տևողությունը, հետևանքները և իրականացման եղանակները: Ի տարբերություն համապատասխան իրավունքների և ազատությունների խախտման, դրանց սահմանափակումը պետք է հասկացվի որպես իրավաչափ ներխուժում անձի անձնական կյանք, որը պայմանավորված է հասարակության և պետության շահերի ապահովման, ինչպես նաև այլոց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ<sup>1</sup>:

Եվրոպական Կոնվենցիայի հիմնական նպատակներից մեկը անձի ազատության և անձեռնմխելիության պաշտպանությունն է կամայական ձերբակալումից կամ կալանավորումից: Ազատության մեջ կամ կալանքի տակ գտնվող յուրաքանչյուր անձ օգտվում է իր անձեռնմխելիության պաշտպանության իրավունքից, այսինքն՝ չզրկվել ազատությունից կամ չպահվել անազատության մեջ այլ կերպ, քան 5-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների պահպանման պայմաններում, իսկ եթե անձը ձերբակալվել կամ կալանավորվել է, ապա օգտվել նշված հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված տարբեր երաշխիքներից:

Անձին ազատությունից զրկելու փաստը որոշելու համար անհրաժեշտ է ելնել այն կոնկրետ իրավիճակից, որում նա հայտնվել է, հաշվի առնել այնպիսի չափանիշների համակցություն, ինչպիսին են կիրառվող միջոցների բնույթը, տևողությունը, հետևանքները և եղանակները:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը հետապնդում է երեք նպատակ.

<sup>1</sup> Տե՛ս Бессарабов В.Г., Быкова Е.В., Курочкина Л.А. Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе. М., Юрлитинформ 2005, с. 39.



որի դեպքում ներպետական օրենսդրությունը հասանելի, հստակ և կանխատեսելի չէ, ցանկացած պարագայում համարվում է 5(1) հոդվածի խախտում:

**Կոնկան ընդդեմ Բելգիայի (2002 թ.)** գործով ներպետական իշխանությունների կողմից կիրառված միջոցները չեն համապատասխանել 5(1) հոդվածի պահանջներին: Դիմողները խաբեությամբ տեղափոխվել են ոստիկանատուն, պատճառաբանությամբ, որ նրանց ներկայությունը պահանջվում է նրանց ապաստարանի դիմումները լրացնելու համար: Այդուհանդերձ, ոստիկանատուն տեղափոխվելուն պես դիմողների նկատմամբ ընդունվել է նոր որոշում՝ տարածքը լքելու և այդ նպատակով նրանց կալանքի վերցնելու մասին: Դատարանը գտնում է, որ իշխանությունների կողմից գիտակցաբար ընդունված որոշումը՝ ուղղված օտարազգիներին արտաքսելու ծրագրված միջոցառումները հեշտացնելուն կամ առավել արդյունավետ դարձնելուն, ծանուցման պատճառի մասին նրանց շփոթեցնելու միջոցով, որը նպատակ է հետապնդում հեշտացնելու նրանց աստությունից զրկելը, չի համապատասխանում 5-րդ հոդվածին: Դատարանի կողմից անընդունելի է, երբ կալանքը (այն դեպքում, երբ իշխանությունների մոտ առկա չէ կալանավորման որևէ արձանագրություն) համարվում է 5-րդ հոդվածով նախատեսված «օրինականության» պահանջի խախտման ակնհայտ տարատեսակ:

**Մասնավորապես**, Ֆեդոտովն ընդդեմ Ռուսաստանի գործով Դատարանը գտել է, որ դիմողը ընդունելի կերպով էր ներկայացրել իր բողոքը անօրինական կալանքի հետևանքով առաջացած վնասների վերաբերյալ: Այնուամենայնիվ, ներպետական դատարանները արհամարհել էին այն, չնայած, դիմողի և նրա խորհրդատուի բանավոր և գրավոր հայտարարություններին: Ավելին, Բասմանիի Շրջանային դատարանը իրական փաստեր ներկայացրեց, որոնք հաստատում էին, որ դիմողը «իրականում չէր կալանավորվել», չնայած դրան հակասող բազմաթիվ ապացույցներին:

Այս հանգամանքներում Դատարանը գտավ, որ դիմողին մերժվել էր անօրինական ձերբակալության համար փոխհատուցման ի-

նությունը, ինչը ևս չի համարվել հստակ և կոնկրետ պարտականություն:

**Մասնավորապես, Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների** գործով Դատարանը վճռել է, որ 5-րդ հոդվածը չի կարելի կիրառել «ձերբակալման» այն ձևի պարագայում, որի արդյունքում զինծառայողների ազատությունը ոչ ծառայողական ժամերին սահմանափակվել է՝ այդ նպատակի համար նախատեսված բանակային տարածքում գտնվող չկողպված շինությունով, չնայած նրանք միաժամանակ պարտավոր էին կատարել իրենց սովորական ծառայողական պարտականությունները: Չինծառայողները կարող էին հիմնվել 5-րդ հոդվածի վրա միայն այն դեպքում, եթե ենթարկված լինեին խիստ ռեժիմի «ձերբակալման», որի արդյունքում նրանք կփակվեին խցում և չէին կարողանա կատարել իրենց սովորական պարտականությունը:

Նման որոշումը հիմնավորվում է այն ենթադրությամբ, որ քանի որ, զինվորական ծառայությունը, անկասկածառաջացնում է ազատության սահմանափակում, այդ սահմանափակումների աստիճանը պետք է միանշանակ բարձր լինի, քան քաղաքացիական անձանց դեպքում, որպեսզի նրանք ընկնեն 5-րդ հոդվածի գործողության տակ:

Քիչ հավանական է, որ արդեն իսկ բանտում գտնվող անձի նկատմամբ ազատության առավել խիստ սահմանափակումների կիրառումը (ինչպես, օրինակ, համեմատաբար մեղմ ռեժիմի բանտից տեղափոխումն ավելի խիստ ռեժիմի բանտ) Եվրոպական դատարանի կողմից դիտվի որպես ազատությունից զրկում՝ 5-րդ հոդվածի իմաստով: Քանի որ ազատությունն արդեն կորսվել էր մեղադրական դատավճռի կամ կալանավորման մասին այլ որոշման արդյունքում, Դատարանը վճռել էր, որ այն դեպքում, երբ կալանավորվածին պահել են առանձին բանտախցում՝ թույլ չտալով ազատ շփվել այլ կալանավորների հետ, ազատությունից զրկում չի դիտվում»:

**Աշինգոլենն ընդդեմ Միացյալ Թագավորության (1985)**, գործով, հոգեկան հիվանդությամբ տառապող մի անձ ստացված

թույլտվության համաձայն բարձր անվտանգության ռեժիմի «հատուկ հիվանդանոցից» պետք է տեղափոխվեր սովորական հոգեբուժարան այն բանից հետո, երբ նրա վիճակը բարելավվել էր: Այնուհանդերձ, նրան անհապաղ տեղափոխելն անհնար եղավ, քանի որ ընդունող հիվանդանոցում շինարարություն էր ընթանում: Նա պնդում էր, որ քանի որ հատուկ հիվանդանոցում ռեժիմը հավասարազոր էր կալանքի, իսկ մյուսում՝ ոչ, ապա թույլտվությունը ստանալուն պես նրա տեղափոխումը չապահովելը հանդիսացել էր նրա անօրինական ազատագրկում: **Մասնավորապես, Աշինգոյեյն ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով որոշվել էր, որ հոգեբուժարանում, չկողպված հիվանդասենյակում տեղավորված՝ հարկադիր բուժման մեջ գտնվող անձը, ում թույլատրված է ցերեկային ժամերին և հանգստյան օրերին դուրս գալ հիվանդանոցի տարածքից առանց ուղեկցության, ընկնում է 5-րդ հոդվածի գործողության տակ:

Սակայն **Աշինգոյեյնի գործով** Դատարանը վճռել է, որ «ազատագրկումը թույլատրող հիմքի, որով այն կատարվել է, և՛ տեղի, և՛ կալանավորման պայմանների միջև որոշակի կապ պետք է լինի», այսինքն՝ հոգեկան հիվանդին ազատությունից զրկող որոշման կատարումը նույնպես հանդիսանում է օրինականության պահանջի մաս: Այնուամենայնիվ, կալանավորված հոգեկան հիվանդին բուժվելու հնարավորություն չընձեռելն ընկնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթների («անմարդկային վերաբերմունք») գործողության տակ:

Հղումներ անելով **Գուզարդիի և Էնգելի** գործերին, Դատարանը վճռեց, որ հայցվորը պարզապես տեղափոխվել էր հիվանդանոցային կալանքի մի ռեժիմից մեկ այլ, պարզապես ավելի ազատական ռեժիմ: Նրա տեղափոխման ձգձգումը պարզապես երկարաձգել էր ավելի խիստ ռեժիմի պայմաններում նրա կալանքը, բայց ոչ՝ նրա ազատագրկման ընդհանուր տևողությունը:

**Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի (1996)**, գործով հայցվորները ապաստան փնտրող սոմալեցիներ էին, ովքեր ժամանել էին Փարիզի «Օրլի» օդանավակայան Սիրիայից: Նրանք հաջորդ քսան օրն անց էին կացրել «միջազգային» կամ «տարանցիկ» գոտում՝ տեխնիկա-

տակ պահելու համար եղել է օրինական հիմք, սակայն եզրակացրել է, որ դրույթները բավականաչափ որոշակի չեն եղել՝ կապված միջոցների տեսակի հետ, որը ոստիկանները իրավասու էին կիրառել կալանքի տակ գտնվողի նկատմամբ, ինչպես նաև նրանք չեն սահմանել կալանքի առավելագույն տևողությունը: Դեռ ավելին, ոստիկանության ցուցումները մատչելի չեն եղել: Հետևաբար, ոստիկանության կողմից ազատ գործելը և կալանքի տևողությունը պայմանավորված են եղել միայն վարչական պրակտիկայով, ոչ թե իրական համակարգով: Այդ պատճառով, Դատարանը չի համոզվել, որ օրենքը եղել է բավականաչափ հստակ և մատչելի՝ կամայականությունների ցանկացած ռիսկից խուսափելու համար: Համապատասխանաբար, դիմողին ազատությունից զրկելը չի եղել «օրինական»:

**Սվիպստան ընդդեմ Լատվիայի (2006թ.)** գործով դիմողի նախնական կալանքը իրականացվել է Քրեական դատավարության օրենսգրքի դրույթների հիման վրա, որը նախատեսել է, որ «մեղադրյալի կողմից գործի նյութերին ծանոթանալու համար պահանջվող ժամանակը չպետք է հաշվակցվի նախնական կալանքի տևողության մեջ»: Այս ձևակերպումը չափազանց անորոշ էր և ոչ հստակ: Այդ իսկ պատճառով, նշված դրույթը չի բավարարել 5(1) հոդվածով նախատեսված «օրինականության պահանջներին»: Իրականում դիմողի նախնական կալանքի երկարաձգումը եղել է լատվիական իշխանությունների կողմից սովորական դարձած պրակտիկայի արդյունք, որը որևէ որոշակի հիմք չի ունեցել օրենսդրության մեջ և նախատեսված է եղել լրացնելու ՔԴՕ-ում առկա բացթողումները:

**Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի (2007թ.)** գործով դիմողը կալանավորվել էր Ռուսաստանում՝ Թուրքմենստանի դատախազի կողմից ընդունված կալանքի որոշմանը համապատասխան: Վերջինիս կալանքը չի ընդունվել ռուսական դատարանի կողմից, ներպետական օրենսդրության համապատասխան: Այդ իսկ պատճառով, հանձնումից առաջ դիմողի կալանքը չի համապատասխանել 5(1) հոդվածով նախատեսված «օրենքով նախատեսված ընթացակարգին»:

Այսպիսով, ցանկացած կալանք, որը կարգադրվում է ներպետական օրենսդրությանը կամ ընթացակարգերին հակառակ, կամ

նուն: Հայցվորը պնդում էր, որ տեղի է ունեցել 5(1) հոդվածի խախտում՝ փաստելով, թե ներպետական օրենսդրության պահանջները չէին կատարվել: Դատարանը համաձայնվեց այս պնդմանը՝ նշելով, որ Սլովակիայի օրենսդրությամբ նախատեսված կալանքի ժամկետները չէին պահպանվել: Հետևաբար, կալանքը չէր եղել «օրինական», և արձանագրվեց 5(1) հոդվածի խախտում:

**Ահմեդ Ջկան և այլոք ընդդեմ Թուրքիայի (2004թ.)** գործով ժամարմատներից մեկուն կալանքի արձանագրությունների առհասարակ բացակայությունը, իսկ մյուսուն դրանց արժանահավատության բացակայությունը, ենթադրում էր, որ դիմողների կալանքը եղել է կամայական և 5-րդ հոդվածի խախտմամբ:

**Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի (2004թ.) գործով**, չնայած Քրեական դատավարության օրենսգիրքը թույլ էր տալիս սահմանափակումներ այնպիսի »հատուկ հանգամանքներում«, ինչպիսին է կալանքի տակ պահելը մինչև դատապարտելը, Կառավարությունը չի ներկայացրել այնպիսի գործերի օրինակներ, որոնք ենթադրաբար բացահայտած լինեին նման «բացառիկ հանգամանքների» առկայությունն անցյալում: Այդպիսով, չի պարզվել, որ հիմքը, որով անձը կարող էր զրկված լինել ազատությունից նման հանգամանքներում, բավարարել է 5-րդ հոդվածով նախատեսված «օրենքի որակական հատկանիշների» պահանջները: Դատարանը գտել է նաև, որ տեղի է ունեցել 18-րդ հոդվածի խախտում (իրավունքներից զրկելու վրա տարածվող սահմանափակումը)՝ 5-րդ հոդվածի հետ համատեղ, այն հիմքով, որ դիմողը կալանվորված է եղել ոչ միայն այն պատճառով, որ հիմնավոր կասկած է եղել նրա կողմից հանցանքը կատարելու համար (և այդ իսկ պաճառով՝ իրավասու մարմնի առաջ նրան բերելու նպատակով), այլ նաև՝ դիմողին վախեցնելու նպատակով, որպեսզի վերջինս փոխանցի իր հեռուստաընկերության որոշ բաժնետոմսեր պետության հսկողության ներքո գտնվող ընկերությանը:

**Հիլդա Հաֆստեինսդիթիրն ընդդեմ Իսլանդիայի (2004թ.)** գործով Դատարանը որոշել է, որ հարբեցողության և հասարակական կարգը խախտելու պաճառով դիմողին ոստիկանատանը կալանքի

պես այդպես էլ մուտք չգործելով Ֆրանսիա: Նրանք մինչև տասնհինգերորդ օրը իրավաբանական ներկայացուցչի ծառայություններից օգտվելու հնարավորություն չէին ունեցել: 16-րդ օրը նրանք դիմել էին ապաստանի համար, իսկ 17-րդ օրը՝ դիմել, որպեսզի կալանքից ազատ արձակվեն: Ֆրանսիայի իրավասու մարմինը իրաժարվել էր ապաստանի նրանց հայցը վարույթ ընդունել՝ որպես հիմք մեջբերելով այն հանգամանքը, թե նրանք չունեն ժամանակավոր բնակության թույլտվություններ: 20-րդ օրը նրանք դեպորտացվել էին Սիրիա՝ երկու կառավարությունների կնքած դիվանագիտական համաձայնագրի հիման վրա: Երկու օր անց Ֆրանսիայի դատարաններից մեկը կարգադրել էր նրանց ազատ արձակել այն հիմքով, թե նրանց նախկին կալանքն օրենսդրությամբ նախատեսված չէր եղել, և որ, այդպիսով, եղել էր կամայական և անօրինական ազատագրվում: Դատարանը, միանշանակ ժխտելով այն փաստարկը, թե հայցվորները կարող էին իրենց կալանքին վերջ տալ ցանկացած պահի՝ հրաժարվելով Ֆրանսիա մուտք գործելու իրենց դիմումներից, նշեց հետևյալը.

«Այն պարզ փաստը, որ ապաստան հայցողները կարող են կամավոր կերպով լքել այն երկիրը, որտեղ նրանք ցանկանում են ապաստան գտնել, չի կարող բացառել ազատագրվման հանգամանքը: Ավելին, հարկ է հաշվի առնել, որ ցանկացած երկիր, այդ թվում՝ սեփական երկիրը լքելու իրավունքը երաշխավորված է Կոնվենցիայի 4-րդ Արձանագրությամբ: Բացի այդ, այս հնարավորությունը դառնում է տեսական, եթե ոչ մի այլ երկիր, որը հակված է կամ պատրաստ նրանց ընդունել, չի առաջարկում պաշտպանություն՝ համեմատելի այն պաշտպանությանը, որ նրանք ակնկալում են ստանալ այն երկրում, որից հայցում են ապաստան»:

Սիրիան չէր ստորագրել Փախստականների մասին 1951թ. կոնվենցիան: Հաշվի առնելով այն փաստերը, որ հայցվորները ոչ թե հանցագործներ էին, այլ ապաստան հայցողներ, որ նրանք մշտապես գտնվում էին ոստիկանության խիստ հսկողության ներքո, որ նրանք իրենց ժամանակի մեծ մասը տնօրինում էին ինքները՝ առանց սոցիալական կամ իրավաբանական աջակցության, այն, ինչ

պարզապես կարող էր ազատության սահմանափակում լինել, դարձել էր ազատագրվում՝ հաշվի առնելով տեղաշարժվելու սահմանափակման աստիճանը և դրա տևողությունը: Տարածքը «միջազգային» պիտակով անվանադրելն այն չէր դարձնում արտատարածքային գոտի կամ Ֆրանսիայի ընդդատությունից դուրս գտնվող տարածք, և այդ շրջանակներում իրենց կալանքի դեմ բողոքարկելու՝ հայցվորների տրամադրության տակ եղած իրավաբանական մեխանիզմները չէին համապատասխանում Կոնվենցիայի պահանջներին:

**Մասնավորապես, Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի** գործով վճռի մեջ, որտեղ ապաստան փնտրող անձինք 20 օրով կալանավորվել էին, Եվրոպական դատարանը հավանություն չի տվել այն փաստին, որ օտարերկրացիներին տարանցիկ գոտում կալանավորելու համար կիրառվող օրենքի ոչ մի նորմ դատարաններին թույլ չէր տալիս ուսումնասիրել նրանց պահելու պայմանները կամ, անհրաժեշտության դեպքում՝ սահմանափակում դնել իշխանական մարմինների վրա՝ նրանց կալանավորման ժամկետի առումով: Բացի դրանից, Եվրոպական դատարանը նկատել էր, որ ոչ մի իրավաբանական տեքստ չէր նախատեսում իրավաբանական, մարդասիրական և սոցիալական օգնության կամ նման օգնության դիմելու որևէ ընթացակարգ և ժամկետ, որպեսզի ապաստան փնտրող անձինք կարողանային համապատասխան քայլեր ձեռնարկել: Դրանով իսկ օրենքները բավարար չափով չէին երաշխավորում դիմողների խմբի ազատության իրավունքը, որոնք առանց նման օգնության կարող էին համարվել խոցելի:

Այսպես, Եվրոպական դատարանը 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է արձանագրել **Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի** գործով, քանի որ Դատարանը գտնում էր, որ չիրապարակված շրջաբերականը, որը կարգավորում էր տարանցիկ գոտում օտարերկրացիների ձերբակալումը, այնքան էլ տարողունակ չէր և չէր պարունակում համապատասխան երաշխիքներ: Ընդ որում, տվյալ դեպքում կարևոր չէր, որ շրջաբերականը փաստորեն չէր հրապարակվել, որի պատճառով

լանավորման օրինականության դեմ դիմողի կողմից ներկայացված բողոքների մասին: Ավելին, վերադաս դատարանները, չնայած ընդունել են, որ դիմողի կալանավորման օրինականության հարցը թերի է մնում, այնուամենայնիվ, չեն քննարկել նրա բողոքները՝ վկայակոչելով այդ ժամանակ գործող օրենքով նախատեսված արգելքը:

**Շամսան ընդդեմ Լեհաստանի (2003թ.)** գործով Դատարանը գտել է, որ առանց իրավական հիմքի կամ օրինական դատական որոշման անորոշ և անկանխատեսելի ժամանակահատվածով կալանքը տարանցիկ գոտում հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

**Կեպենեքովն ընդդեմ Բուլղարիայի (2003թ.)** գործով, հայցվորի մասնակցությամբ դատավարության ընթացքում դատախազը կարգադրել էր, որ հայցվորը հոգեբուժական զննության ենթարկվի: Երբ նա դատախազի հրահանգը չէր կատարել, դատախազը կարգադրել էր, որ ոստիկանությունը ձերբակալի և կալանավորի հայցվորին: Նա ձերբակալվել էր և հարկադրաբար տեղափոխվել հիվանդանոց, որտեղ նա կալանավորվել էր 30 օր: Դատարանը վճռեց, որ հոգեկան առողջության հիմքով կալանավորումը կարգավորող օրենքը դատախազին իրավունք չէր վերապահում՝ կարգադրելու հոգեբուժական զննություն անցկացնելու նպատակով անձի հարկադիր կալանքը հոգեբուժական հիվանդանոցում: Բացի այդ, գործող օրենքը չէր նախատեսում կալանավորումից առաջ բժշկի փորձագիտական եզրակացություն ստանալու պահանջ: Դատարանը եզրակացրեց, որ կալանքը չէր եղել ոչ օրինական՝ 5(1) հոդվածի համաձայն, քանի որ ներպետական օրենսդրությամբ դրա հիմքերը նախատեսված չէին եղել, ոչ էլ ապահովել էր պաշտպանություն կամ այլակալությունից, քանզի կալանքից առաջ բժշկի փորձագիտական եզրակացություն չէր պահանջվել:

**Տկաչիկն ընդդեմ Սլովակիայի (2003թ.)** գործով հայցվորը սեփական կամքին հակառակ ոստիկանության կողմից տեղափոխվել էր հոգեբուժարան, որտեղ նա պետք է որոշակի դեղեր ստանար և ստուգումներ անցներ: Նա մի քանի օր պահվել էր հոգեբուժարանում:

հիմնվելով Քրեական օրենսգրքի դրույթներից մեկի վրա, այնուամենայնիվ, Դատարանը համարել է, որ իրավական որոշակիությունը բացակայել է: Ընդ որում, դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմենը), Գերագույն դատարանի քրեական գործերով պալատի նախագահը և կառավարությունը ներկայացրել են երեք տարբեր բացատրություն առ այն, թե ինչպես կարող էր այդ դրույթը թույլատրել տվյալ կալանավորումը: Չփորձելով լուծել նման տարակարծության ծագման հարցը՝ Դատարանը հանգել է հետևյալ եզրակացությանը. ցանկացած անորոշ դրույթ, որը կարող է խառնաշփոթ առաջացնել պետական իրավասու մարմինների միջև, օրինականության պահանջների հետ անհամատեղելի է:

**Ժեսիուսն ընդդեմ Լիտվայի** գործով դիմողի կալանավորման ժամկետի երկարացման միակ հիմնավորումը կատարած հանցագործության ծանրությունն ու նրա դեմ առկա ծանրակշիռ ապացույցներն էին: Դատարանը համարեց՝ կասկածը, որ դիմողը սպանություն է կատարել, սկզբից կարող էր կալանավորման հիմք ծառայել, սակայն այն չէր կարող արդարացնել գրեթե 15 ամիս տևած կալանավորումը, հատկապես այն բանից հետո, երբ դիմողին արդարացրած առաջին ատյանի դատարանում հերքվել էին այդ կասկածները, ուստի գտել է, որ դիմողի կալանավորումը չափից ավելի է տևել:

**Ժեսիուսն ընդդեմ Լիտվայի** գործով վճռում Եվրոդատարանը հիշեցրել է, որ համաձայն 5-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ձերբակալված և կալանավորված անձինք գործի վերանայման իրավունք ունեն՝ հաշվի առնելով դատավարական և նյութական պայմանները, որոնք, ըստ Կոնվենցիայի՝ էական են նրանց ազատագրկման «օրինականության» համար: Դա նշանակում է, որ իրավասու դատարանը պետք է քննի ոչ միայն ներպետական իրավունքի դատավարական պահանջների պահպանման հարցը, այլ նաև ձերբակալության հիմքում ընկած կասկածի հիմնավորումը, այդ ձերբակալությանը հետևող նպատակի և հետագա կալանավորման իրավաչափությունը»: Այս գործով վճռում Դատարանը նշել է, որ դիմողի կալանավորումը թույլատրած դատարանները բոլորովին չեն հիշատակել կա-

մատչելի չէր եղել, թեև, անշուշտ, կարող են լինել դեպքեր, երբ դա որոշիչ գործոն լինի»:

**Ռ. Մ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (2002)** գործով հայցվորը մի տարեց կին էր, ով լուրջ անկարողության պատճառաբանմամբ, սեփական կանքին հակառակ տեղափոխվել էր ծերանոց. որոշել էին, որ նա անկարող է ինքն իրեն խնամել: Կինը պնդում էր, որ իր տեղափոխումը ծերանոց հանդիսացել էր կալանք 5-րդ հոդվածի իմաստով, և որ 5-րդ հոդվածով չէր թույլատրվում կալանքը անկարողության հիմքով: Դատարանը քննության առավ բոլոր հանգամանքները՝ նշելով, որ հայցվորին հնարավորություն էր տրվել, որպեսզի նա ծերանոց տեղափոխվելու փոխարեն ընդուներ «Հիվանդների տնային խնամքի միության» աջակցությունը, սակայն կինը իրաժարվել էր համազործակցել: Դատարանը նաև նկատեց, որ տեղափոխվելուց հետո արդեն հայցվորը համաձայնվել էր մնալ, և որ նա վստահ չէր, թե այդտեղ է լավ, թե սեփական տանը ք

հայտնվել են ազատությունից ապօրինի զրկվածի դրության մեջ, որն իրենք ի վիճակի չեն եղել արդյունավետորեն վիճարկելու, քանի որ ավստրիական իշխանությունները հրաժարվել են այն այդպիսին ճանաչելուց: Դատարանը տարբերեց նրանց դրությունը **Ամուրի** գործից և հայտարարեց, որ ազատությունից զրկում տեղի չի ունեցել: Դատարանը նկատել է, որ ապաստան ստանալու խանդրանքը քննարկվել է երեք օրվա ընթացքում, սակայն դիմողները որոշել են մնալ: Ապա Դատարանը նկատել է, որ դիմողները մերժել են հատուկ նախատեսված վայրում բնակվելու առաջարկը և մնացել են իրենց անձնական իրերով: Նրանք մնացել են առանց ոստիկանական հսկողության և, համապատասխանաբար, կարողացել են կազմակերպել իրենց առօրյա կյանքը և շփվել երրորդ անձանց հետ, առանց իշխանությունների կողմից միջամտության կամ հսկողության: Սկզբնապես նրանք կապի մեջ են եղել հունանիտար կազմակերպության հետ, որը նրանց տրամադրել է սոցիալական և իրավական օժանդակություն: Նրանց թունիս արտաքսելու փորձը երկու անգամ ձախողվել է, քանի որ մեկ անգամ վերջիններիս չեն կարողացել գտնել, իսկ մեկ այլ դեպքում՝ նրանք հրաժարվել են ինքնաթիռ նստելուց: Ապա Դատարանն ընդգծել է, որ դիմողները դիտավորյալ նախընտրել են ոչնչացնել իրենց անձնագրերը և հրաժարվել են գնալ այլ երկիր, որպեսզի հարկադրաբար մտնեն Ավստրիա, ինչի համար Ավստրիան ոչ մի պարագայում պատասխանատվություն չի կրում:

5-րդ հոդվածի իմաստով անձի կալանավորվելու հարցը քննելիս Դատարանին այնքան չի հուզում կալանքի վայրի բնույթը, որքան՝ վերոհիշյալ գործոնները: Այսպիսով, եղել են դեպքեր, երբ Դատարանը վճռել է, որ, օրինակ, եկեղեցիներում, տներում, հիվանդանոցներում, օդանավակայանի արգելագոտիներում և ավտոմեքենաներում պահվող անձինք զրկված են եղել ազատությունից:

որ չի պահպանվել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետը: Կառավարությունն ընդունել է, որ դիմողի կանխիչ կալանքը չի ծառայել նույն նպատակին, ինչ կալանքը: Ավելին, նրա կանխիչ կալանքը թույլատրված է եղել ներպետական ընթացակարգի հիման վրա, քան հետագա կալանքը: Քանի որ կանխիչ կալանքի ժամկետն ավարտվել էր 1996թ. դեկտեմբերի 30-ին, ապա գործի այս ասպեկտը ներկայացվել էր ժամկետանց:

Հանձնաժողովը գտել է, որ չնայած դիմողի կանխիչ կալանքը թույլատրվել էին ներպետական օրենսդրության հասկացությունների համաձայն՝ տարբեր հիմքերով, սակայն դիմողի կարգավիճակի ոչ մի ակնհայտ փոփոխություն չի եղել, երբ նրա կանխիչ կալանքը փոխարինվել է կալանքով: Հանձնաժողովը գտել է, որ Կոնվենցիայի ժամկետը պետք է դիտվի որպես ամբողջություն, և որ կանխիչ կալանքի վերաբերյալ դիմողի գանգատը չի կարող մերժվել վեցամսյա ժամկետի վերաբերյալ կանոնը չպահպանելու պատճառաբանությամբ:

Դատարանը համամիտ է Հանձնաժողովի եզրակացությանը: Այնպիսի շարունակվող վիճակի նկատմամբ պաշտպանության միջոցի բացակայությունը, ինչպիսին կալանքի ժամանակահատվածն է, 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետը սկսում է հաշվվել այդ վիճակը դադարելու պահից, մասնավորապես, կալանքից ազատելու պահից սկսած: Ի հավելումն դրա, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելիս՝ Դատարանը հաճախ, առանց ձևական նկատառումների, անդրադառնում է ակնհայտ հանգամանքներին:

**Ժեսիուսն ընդդեմ Լիտվայի** գործով նույնպես արձանագրվել է իրավական որոշակիության բացակայություն, քանի որ չկային կալանքի տակ գտնվող անձի վիճակը կարգավորող ճշգրիտ ձևակերպված նորմեր: Առանց դատարանի թույլտվության որևէ մեկի անսահմանափակ ժամանակով կալանավորումը՝ հիմնվելով միայն այն հանգամանքի վրա, որ գործը տրվել է առաջին ատյանի դատարան, դիտվել է որպես 5-րդ հոդվածի 1-ին կետին հակասող: Չնայած փորձ էր արվել կալանավորման ժամկետը պատճառաբանել՝

Նորմերից մեկի հիման վրա՝ կապված հանցավոր աշխարհին պատկանելու և այլ անձանց նկատմամբ կատարված ահաբեկչության հետ, որը թույլատրում էր ձերբակալում կանխիչ նպատակով: Գործելով այդ նորմի հիման վրա՝ գլխավոր դատախազի տեղակալը 60-օրյա ձերբակալման թույլտվություն էր տվել, իսկ դատարանը մերժել էր այդ որոշման բողոքարկումը: Դիմողին կոնկրետ որևէ մեղադրանք չէր առաջադրվել, և այդ կանխիչ կալանավորման հետ կապված որևէ քննություն չէր կատարվել: Ձերբակալության թույլտվություն տալուց մեկ ամիս անց հայցվորին սպանության մեղադրանք էր առաջադրվել, ինչն էլ հիմք էր հանդիսացել կալանքի տակ պահելու համար: Եվրոդատարանն առանց վարանելու վճռել է, որ նախնական կանխիչ կալանավորումը եղել է 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ այն որևէ կապ չի ունեցել քրեական գործի ընթացքի հետ:

**ժեսիուսն ընդդեմ Լիտվայի (2000թ.)** գործով Դատարանը գտել է, որ ներպետական դատարանի կողմից կայացված կալանքի որոշումը եղել է օրինական, թեև չի եղել հստակ: Դատարանը գտել է, որ շրջանային դատարանը եղել է իրավասու, իսկ որոշման նպատակը պարզ է եղել տվյալ պահին: Բացի այդ, Դատարանը գտել է, որ չի կարելի ասել, որ ներպետական դատարանը չի եղել բարեխիղճ կամ ճշգրտիտ չի կրառել ներպետական օրենսդրությունը:

**Մասնավորապես, ժեսիուսն ընդդեմ Լիտվայի** գործով դիմողը՝ սպանության կատարման մեջ կասկածվող անձը, կալանքի տակ էր պահվել նաև կալանավորման ժամկետը լրանալուց հետո, որի համար գլխավոր դատախազի տեղակալը սանկցիա էր տվել: Պարզվում է, որ նման պրակտիկան լայն տարածում ունի: Սակայն նման սովորույթը չի կարող գոյություն ունենալ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջների հետ համատեղ: Դատարանը վճռել է, որ դիմողին ազատությունից զրկելը իրավական որոշակիության սկզբունքների և կամայականությունից պաշտպանվելու հետ անհամատեղելի է եղել:

Կառավարությունը նշել է, որ Դատարանը չի կարող քննության ամեն ինչի կանխիչ կալանքի հետ կապված գանգատը, քանի

## **Բացառություններ. ազատագրկաման թույլատրելի հիմքերը**

### **Բացառությունների բնույթը**

Ազատության և անձեռնմխելիության իրավունքը բացարձակ իրավունք չէ, սակայն 5-րդ հոդվածից բխող նախապատվությունը («պրեզումպցիա») գործում է հօգուտ ազատության: 5-րդ հոդվածով նախատեսված բացառությունները, ինչպես Կոնվենցիայով նախատեսված ցանկացած բացառություն, պետք է նեղ մեկնաբանման ենթարկվի: **Քուինն ընդդեմ Ֆրանսիայի (1995թ.)** գործով հայցվորը կալանավորվել էր խարդախության մեջ մեղադրվելու կապակցությամբ: Ներպետական դատարանը կարգադրել էր նրան «անմիջապես» ազատ արձակել, սակայն նրան փաստացի ազատ էին արձակել միայն տասնմեկ ժամ անց: Դատարանը վճռեց, որ այս ուշացումը խախտել էր 5-րդ հոդվածը, և ընդգծեց, որ 5-րդ հոդվածի նպատակն է ապահովել, որպեսզի ոչ ոք կամայականորեն չզրկվի ազատությունից:

**Մասնավորապես, Քուինն ընդդեմ Ֆրանսիայի** գործում ազգային դատարանը որոշում է ընդունել ազատ արձակել մի մարդու, որը նախկինում կալանավորվել է ֆրանսիական օրենքների հիման վրա: Չնայած դրան, հայցվորին ազատ արձակելու որոշումից հետո պահել էին ևս 11 ժամ՝ չտեղեկացնելով որոշման մասին և չձեռնարկելով որևէ գործողություն այն կատարելու համար: Ամենայն հավանականությամբ, դատախազությանը ժամանակ էր պետք դիմողի հանձնման վերաբերյալ դատավարությունը (կամ վարույթը) սկսելու համար՝ դրանով իսկ փորձելով կանխել ազատման մասին որոշման կատարման անհրաժեշտությունը: Եվրոպական դատարանը համարել է, որ նման որոշման իրականացման ձգձգումը կարող էր արդարացվել, բայց ավելացրել է, որ այդ ժամկետն ակնհայտորեն արհեստականորեն է երկարաձգվել, որպեսզի համապատասխանի 5-րդ հոդվածի պահանջներին:

Ազատության և անձեռնմխելիության իրավունքից միակ բացառությունները նրանք են, որոնք ուղղակիորեն ամրագրված են 5-րդ

հողվածում. ցանկացած այլ հիմք, նույնիսկ եթե այն թույլատրված է ներպետական օրենքներով, հակասում է 5-րդ հոդվածին:

Չնայած որ բացառությունների ցանկը սպառնիչ է, կոնկրետ գործով հիմքերից որևէ մեկի կիրառելիությունը չի բացառում մեկ այլ հիմքի կիրառելիությունը: Կալանքը կարող է, կախված հանգամանքներից, հիմնավորված լինել 5-րդ հոդվածի 1-ին մասի մեկից ավելի ենթակետերով: Այլ կերպ ասած, երկու բացառություններ կարող են վերաբերել մեկ գործի<sup>1</sup>:

### **Օրինականության սկզբունքը**

Իրավական որոշակիության հասկացությունը, որը հիմնված է իրավունքի նորմի վրա, տարածվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի, մասնավորապես՝ 5-րդ հոդվածի 3-րդ մասի վրա: 5-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած ազատագրվում պետք է ի կատար ածվի «օրենքով նախատեսված կարգով» և լինի «օրինական»: Այս արտահայտություններն առնչվում են ներպետական օրենսդրությանը, և դրանց հիմքում ընկած է արդար և պատշաճ դատաքննության հասկացությունը: Այսինքն, անձին ազատությունից զրկող ցանկացած որոշում պետք է կայացված լինի և ի կատար ածվի համապատասխան իրավասու մարմնի կողմից և չլինի կամայական:<sup>2</sup>

### **Օրենքի որակական հատկանիշները**

«Օրինականության» հասկացությունը առնչվում է նաև համապատասխան օրենքի որակական հատկանիշներին: Հետևաբար, կալանք թույլատրող օրենքը պետք է համատեղելի լինի իրավունքի գերիշխանության սկզբունքին և բավարար չափով հասանելի, ճշգրիտ և կանխատեսելի լինի հետևանքների առումով, որպեսզի հնարավոր լինի խուսափել կամայականության ցանկացած ռիսկից:

<sup>1</sup> St u Eriksen v. Norway, Judgement of 27 May 1997:

<sup>2</sup> St u Bizzotto v. Greece, Judgement of 15 November 1996:

**Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի (1996թ.)** գործով Դատարանը վճռեց, որ նախարարների և ոստիկանապետերի կողմից արձակված հրահանգներից կազմված, բայց չիրապարակված շրջաբերականը, որը վերաբերում էր սահմանին մուտք գործելու թույլտվություն չստացած օտարերկրացիներին, չէր հանդիսանում «բավարար որակի օրենք», քանի որ այն «հասանելի» չէր եղել:

**Վարբանովն ընդդեմ Բուլղարիայի (2000թ.)** գործով հայցվորը հարկադրանքով կալանքի տակ էր պահվել 25 օր հոգեբուժական հիվանդանոցում՝ դատախազի հրահանգի հիման վրա: Դատարանը ներպետական օրենսդրության մի քանի թերություններ նկատեց: Դատարանը նշեց, որ դատախազի արձակած հրահանգների գոյությամբ օրենքն իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չէր ընձեռում, քանի որ այդ հրահանգները պարունակվում էին չիրապարակված փաստաթղթում և պաշտոնապես իրավաբանական որևէ ուժ չունեին: Դատարանը նկատեց, որ «օրենքի համաձայն» և «օրենքով սահմանված կարգով» հասկացությունները պահանջում են, որ կիրառված միջոցի հիմքերը նախատեսված լինեն ներպետական օրենսդրությամբ, և որ խնդրո առարկա օրենքը որակական առումով հասանելի, իսկ հետևանքների առումով՝ կանխատեսելի լինի տվյալ անձի համար:

**Մասնավորապես**, Վարբանովն ընդդեմ Բուլղարիայի գործով դիմողի կալանավորման օրդերը տվել էր շրջանային դատախազը, որը հետագայում, դատավարության ժամանակ որպես մեղադրող հանդես է եկել ընդդեմ դիմողի՝ պահանջելով նրան տեղավորել հոգեբուժարան, և շրջանային դատախազի տված օրդերը կարող էր բողոքարկվել միայն վերադաս դատախազներին: Տվյալ դեպքում եվրոդատարանը վճռել է, որ դիմողը զրկված է եղել դատարանում կալանավորման օրինականության հարցը քննարկելու հնարավորությունից, որը հակասում է 5-րդ հոդվածի 4-րդ կետին:

**Ժեսիուսն ընդդեմ Լիտվայի** գործում այն վերաբերում է սպանության մեջ կասկածվող դիմողին, որի նկատմամբ քննությունը դադարեցվել էր ապացույցների անբավարարության պատճառով: Ավելի ուշ նա ձերբակալվել էր քրեադատավարական օրենսգրքի



րեցնի կատարել ճիշտ և կոնկրետ պարտավորությունը, որը նա չի կատարել:

**Դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելը**

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի առաջին մասի համաձայն՝ կալանքի նախապայմանն է դատարանի օրինական ուժ ունեցող և կատարման ենթակա կարգադրությանը չենթարկվելը: Այստեղ նախատեսված են դատական կարգադրությունների հետևյալ տեսակները.

- առգրավման կարգադրությունները
- արյան անալիզ հանձնելու մասին դատական կարգադրությունը
- գույքի հայտարարագիր ներկայացնելու մասին կարգադրությունը
- բժշկական ստուգում անցնելու մասին կարգադրությունը
- դատարանի կողմից կարգադրված տույժերի վճարումից դիտավորյալ կերպով խուսափելը
- դատարանի կարգադրությունը ստանալուց հետո դատարան ներկայանալուց կամ վկայի կարգավիճակով հարցերի պատասխանելուց հրաժարվելը:

Դատարանի կարգադրության օրինականությունը կախված է հետևյալ գործոններից.

- դատարանն ինքը պետք է պատշաճ կերպով կազմված և ձևավորված լինի,
- դատարանը պետք է օժտված լինի տվյալ կարգադրությունն արձակելու իրավասությամբ,
- կարգադրությունը պետք է տրված լինի պատշաճ դատավարական ընթացակարգերի համաձայն:

**Օրենքով նախատեսված պարտավորության կատարման ապահովումը**

Երկրորդ «Ճյուղի», մասնավորապես՝ օրենքով նախատեսված պարտավորության կատարման կապակցությամբ թույլատրվում է անձին կալանավորել միայն այն նպատակով, որպեսզի նրան հար-

րավունքը և տեղի էր ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

**Ֆեդոտովն ընդդեմ Ռուսաստանի (2005 թ.)** գործով Դատարանը գտել է, որ չեն կազմվել դիմողի ձերբակալումների վերաբերյալ որևէ արձանագրություն, և որ պատասխանատու ոստիկանության աշխատակիցը բացահայտորեն մերժել է արձանագրություն կազմելու միջնորդությունը: Դատարանը համարում է այն բավականին լուրջ խախտում, քանի որ Դատարանի ավանդական կարծիքն է այն, որ անձի չճանաչված կալանքը 5-րդ հոդվածով նախատեսված հիմնարար կարևոր սկզբունքների բացարձակ ժխտումն է, որն առաջացնում է այդ դրույթի ամենակոպիտ խախտումը: Դատարանը եզրակցել է, որ այնպիսի հարցերի գրանցման բացակայությունը, ինչպիսիք են կալանքի օրը, ժամը և վայրը, կալանավորվածի անունը, կալանքի պատճառները և կալանավորող անձի անունը, անհամատեղելի է օրինականության պահանջի և 5-րդ հոդվածի բուն պահանջի հետ (տես նաև՝ **Մենեշևան ընդդեմ Ռուսաստանի (2006թ.)** գործը): Դատարանը նշել է, որ կալանքի տևողությունը, ըստ էության, կլինի օրինական, եթե այն իրականացվի ներպետական դատարանի որոշման հիման վրա: Եզակի հանգամանքները, որոնցում այն կհամարի կալանքի նման ժամանակահատվածները անօրինական, դրանք այն դեպքերն են, երբ կալանքի մասին որոշումն ընդունված է իրավասությունների սահմանազանցմամբ, կամ, երբ ապացույցներ կան, որ ընդունված է կամայական որոշում: Կալանքի որոշումը կարող է վերացվել վերադաս աստիճանի դատարանի կողմից հետագա փուլում: Այդուհանդերձ, պարտադիր չէ, որ հետևություն արվի, որ կալանքի սկզբնական որոշումը եղել է ապօրինի և, այդ իսկ պատճառով, 5(1) հոդվածին հակասող (տես՝ **Բենհամն ընդդեմ Միացյալ Թագավորության (1996 թ.)** գործը):

**Իյասկուն և այլոք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի** գործով 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված «օրինականության» սկզբունքի վրա հիմնվող դիմողները բողոքել են, որ իրենց կալանքը Մերձդնիեստրի Մոլդովական Հանրապետությունում (ՏՄՀ), որն իրենից ներկայացնում է 1991 թվականին անկախություն

հռչակած մոլորակական մի շրջան, որի անկախությունը, սակայն, չի ճանաչվել միջազգային հանրության կողմից, եղել է ապօրինի, և որ իրենց դատապարտած դատարանը չի եղել իրավասու դատարան: Դատարանը նկատեց, որ 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված «օրենքով նախատեսված կարգով» հասկացությունը, ամենաարդարացի և պատշաճ ընթացակարգն է, այսինքն՝ անձին ազատությունից զրկող ցանկացած միջոց պետք է բխի, իրականացվի իրավասու մարմնի կողմից և չպետք է լինի կամայական: Դեռ ավելին, քանի որ 5-րդ հոդվածի նպատակն է պաշտպանել անձին կամայականություններից, «դատապարտումը» չի կարող լինել արդարադատության ժխտման արդյունք: Այս գործով Դատարանը գտել է, որ դիմողներից ոչ մեկը չի դատապարտվել «դատարանի» կողմից, և որ ազատագրված ձևով պատիժ նշանակելն այնպիսի դատական մարմնի կողմից, ինչպիսին է ՏՄՀ «Գերագույն դատարանը», քննության ավարտին չի կարող դիտվել իբրև «օրինական ազատագրվում»՝ նշանակված «օրենքով նախատեսված կարգով»: Արտակարգ միջոցառումները հաճախ «օրինականության» պահանջին չեն համապատասխանում: Նման միջոցառումները կամայականորեն կիրառվելու դեպքում օրինական չեն համարվի, եթե դրանք ձեռնարկվել են օրինական իրավասությունների սահմանազանցմամբ:

### **Միջազգային իրավական պարտականություններ**

**Օջալանն ընդդեմ Թուրքիայի (2005 թ.)** գործով Դատարանն ընդունեց, որ Կոնվենցիան չի արգելում Պետությունների միջև համագործակցությունը՝ հանձնմանը վերաբերող պայմանագրերի շրջանակներում կամ արտաքսման հարցերով՝ հայտնաբերված հանցագործներին արդարադատության առաջ կանգնեցնելու նպատակով: Դատարանը գտել է, որ դա չի ազդում Կոնվենցիայի կողմից ճանաչված որևէ հատուկ իրավունքի վրա: Պետությունների միջև համագործակցությունը եղել է նաև համապատասխան գործոն, որը պետք է հաշվի առնվի Դատարանին համապատասխան բողոք ներկայացնելու պատճառ դարձած ձերբակալման օրինականությունը որոշելու

### **1.3. Քրեական դատավարությունում ազատությունից զրկման եղանակները՝ ըստ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի**

*Պամաձայն Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը թույլատրում է անձին ազատությունից զրկելը անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:*

Սույն ենթավերնագրի ներքո ձերբակալումը կամ կալանավորումը նախատեսվում է որպես կոնկրետ պարտավորությունների կատարումն ապահովելու մեթոդ: Այս դրույթը կազմված է երկու առանձին մասերից, որոնցից առաջինը վերաբերում է դատարանի կարգադրությանը, իսկ երկրորդը՝ այլ արբյուրներից ծագող օրինական պարտավորություններին:

Եվրոպական դատարանի որոշումներում առաջին պայմանի կիրառումը հիմնականում կապվում է այնպիսի պարտավորությունների կատարման հետ, ինչպիսին են հայրությունը հաստատելու նպատակով արյունը փորձաքննության վերցնելը, անձի մեղսունակությունը որոշելու համար հոգեբույժի եզրակացությունը ստանալը և այլն, երբ անձը կամավոր չի կատարում այդ գործողությունները:

Որոշակի բարդություն է ներկայացնում երկրորդ պայմանում ամրագրված դրույթը: Այն չպետք է հասկանալ լայն իմաստով, քանի որ իրավունքի նորմերի սովորական պահպանումը չի կարող ապահովվել այդ ձևով: ՀՀ օրենսդրությունը Եվրոպական կոնվենցիային համապատասխան արգելում է անձին զրկել ազատությունից միայն այն հիմքով, որ նա չի կարող կատարել իր պայմանագրային պարտավորությունները (N 4 Արձանագրության 1-ին հոդված): «Օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով» հասկացությունը վերաբերում է այն դեպքերին, երբ օրենքը թույլատրում է անձի ձերբակալումը կամ կալանավորումը այն նպատակով, որ նրան պարտավոր

ամրագրող՝ Կոնվենցիայի 2 հոդվածին հակասող կալանքի ընթացքում մահվան և անհետացումների ռիսկը:

Դրանք նաև նպաստում են մեղադրյալի արդարացի դատաքննության իրավունքի ապահովմանը: Խստորեն կանոնակարգված մինչդատական կալանքը նվազեցնում է մեղադրյալից հարկադրանքի ուժով խոստովանություն կորզելու ռիսկը. հայտնի է, որ շատ դեպքերում նման խոստովանություններին չի կարելի հավատալ:

Վերոշարադրյալ հիմնախնդիրների քննարկումը ցույց է տալիս, որ քրեադատավարական օրենսդրության մեջ մարդու իրավունքների հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի իմպլեմենտացիան բավականին բարդ մեխանիզմ է ենթադրում: Այն պահանջում է ոչ միայն այդ սկզբունքների ու նորմերի մեխանիկական տրանսֆորմացիա ԶԶ Սահմանադրության մեջ, այլև դրանց կոնկրետացում և մանրամասնում ճյուղային օրենսդրությունում, մասնավորապես, ԶԶ քրեական դատավարության օրենսգրքում: Քրեադատավարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում պետք է ունենա կոնկրետ նպատակ և որոշակի տրամաբանություն, ինչպես նաև պետք է հանդիսանա համակարգված և հետևողական գործընթացի արդյունք:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ճյուղային օրենսդրության մեջ սահմանադրական դրույթների և միջազգային իրավական սկզբունքների կոնկրետացման ժամանակ թույլ տրված թերություններն ու անհստակությունները չպետք է կաշկանդեն իրավակիրառող սուբյեկտներին (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատարան) պրակտիկայում անմիջականորեն կիրառել ԶԶ համար միջազգայնորեն պարտադիր և ազգային օրենսդրության բաղկացուցիչ մասը կազմող այդ չափանիշները:

համար: Դատարանը նշում է, որ կողմերի փաստարկների լույսի ներքո պետք է որոշի, արդյոք, դիմողին Քենիայում ձերբակալելը Նայրոբիի օդանավակայանում թուրքական պաշտոնատար անձանց օդանավում հանձնվելուց անմիջապես առաջ եղել է թուրքական պաշտոնատար անձանց գործողությունների արդյունք, որով խախտվել է Քենիայի ինքնավարությունը և միջազգային իրավունքը (ինչպես որ հայտարարել է դիմողը), թե եղել է Թուրքիայի և Քենիայի իշխանությունների միջև համագործակցության արդյունք՝ Թուրքիայի և Քենիայի միջև հանձնման վերաբերյալ պաշտոնական ընթացակարգ նախատեսող պայմանագրի բացակայության պատճառով (ինչպես որ հայտարարել է Կառավարությունը): Դատարանը գտնում է, որ քննարկվող ժամանակահատվածում Քենիայի իշխանությունները որոշել են կամ փոխանցել դիմողին թուրքական իշխանություններն կամ հեշտացնեն նման փոխանցումը: Այդ իսկ պատճառով, Դատարանը եզրակացրեց, որ դիմողը չի ներկայացրել ապացույց, որով հնարավոր կլիներ միանշանակ հետևություն անել, որ Թուրքիան չի հարգել Քենիայի ինքնավարությունը կամ որ գործել է միջազգային իրավունքին համապատասխան տվյալ գործով: Դիմողի ձերբակալումը և նրա կալանքը իրականացվել են «օրենքով նախատեսված կարգով»՝ Կոնվենցիայի 5(1) հոդվածին համապատասխան: Այդ իսկ պատճառով, տեղի չի ունեցել այդ սկզբունքի խախտում:

## **1.2. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԼԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Եվրոպական Կոնվենցիայի 5 հոդվածի 1-ին մասի «գ» կետը սահմանում է, որ քրեական դատավարության շրջանակներում անձը կարող է զրկվել ազատությունից, եթե առկա է իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկած կամ, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

Ինչպես տեսնում ենք, Եվրոպական Կոնվենցիայի 5 հոդվածի 1-ին մասի «գ» կետը սահմանում է քրեադատավարական ձերբակալման կամ կալանավորման հիմքերը: Ընդ որում, Եվրոպական դատարանի որոշումներից հետևում է, որ անձին ձերբակալելու կամ կալանավորելու թվարկված հիմքերն ունեն սպառիչ բնույթ<sup>1</sup>:

Ընդ որում, որպեսզի անձին ազատությունից զրկելը համարվի Կոնվենցիայի շրջանակներում կատարված, այն պետք է համապատասխանի կրկնակի չափանիշի.

ա/ ազատությունից զրկելը պետք է իրավաբանորեն օրինական լինի համաձայն համապատասխան երկրի ներպետական իրավունքի,

բ/ այն պետք է իրավաչափ լինի Կոնվենցիայի մակարդակով, այսինքն՝ համապատասխանի այն հանգամանքներին, որոնք սպառիչ թվարկված են 5 հոդվածի 1-ին մասում<sup>2</sup>:

Ընդունելով այս իրողությունը՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ - հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը քրեական դատավարության շրջանակներում անձին ազատությունից զրկելը հնարավոր է համարում, եթե առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության

չէ, որ կասկածներ հարուցող փաստերը կամ տվյալները լինեն նույն կարգի, ինչ որ հիմնավոր դատապարտման համար անհրաժեշտ տվյալները: Այդ խնդիրը լուծվում է քրեական գործի քննության հաջորդ փուլերում: Ողջամիտ կասկածի առկայությունը կամ բացակայությունը վերջին հաշվով կախված է կոնկրետ գործի հատուկ հանգամանքներից: Սակայն կասկածը կարող է հիմնավոր համարվել միայն այն դեպքում, երբ դրա հիմքում ընկած փաստերն ու տեղեկությունները կասկածվող անձին օբյեկտիվորեն կապում են ենթադրյալ հանցագործության հետ, այսինքն՝ պետք է լինեն այն բանի ապացույցներ, որ տվյալ անձի կողմից կատարված գործողությունները ուղղակիորեն մատնացույց են անում նրա առնչությունը իրավախախտմանը<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը միշտ չէ, որ կարողանում է համարժեք արձագանքել միջազգային չափանիշների տեղայնացման հետ կապված փոփոխություններին: Սակայն բացարձակապես անընդունելի է այն գործելակերպը, երբ քրեադատավարական օրենսդրության բարեփոխումների անվան տակ փորձեր են արվում օրենսդրական մակարդակով շրջանցել անձի իրավունքների պաշտպանությունն ապահովող կառուցակարգերը:

Անհրաժեշտ է նշել, որ անձին ազատությունից զրկելու՝ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված հիմքերը ոչ միայն ծառայում են կամայական կալանքից պաշտպանելու նպատակին, այլև կազմում են կալանավորված անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանող իրավունքների զինանոցի անբաժանելի մասը: Խստորեն կանոնակարգված կալանքի, դրա հիմքերի, կիրառման ընթացակարգի շնորհիվ կրճատվում է կալանավորված անձի՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի (խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի) ենթարկվելու ռիսկը, ինչպես նաև կյանքի իրավունքն

<sup>1</sup> St'u Egorov C. E. Права человека в уголовном процессе: международные стандарты и российское законодательство. М., Норма 2006, с. 128.

<sup>2</sup> St'u Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения. М., Норма 2002, с. 57:

<sup>1</sup> St'u Моника Маковей, Разумов С. А. Европейская Конвенция о защите прав человека и основных свобод. Статья 5 Право на свободу и личную неприкосновенность. Прецеденты и Комментарии. М., 2002, с. 44:

դեպքեր, երբ դատարանների որոշումներն ուղղակիորեն կրկնում են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմինների միջնորդությունները առանց որևէ համոզիչ փաստարկման:

Վերոգրյալի հետ կապված, անընդունելի է այն իրավիճակը, երբ կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառումը ստացել է համատարած բնույթ: Մինչդեռ, այն պետք է դիտարկվի որպես բացառիկ հարկադրանքի միջոց, իսկ կիրառումը լինի բացառություն և ոչ թե կանոն: Այստեղ պետք է նշել, որ նշված սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև որոշ երկրների քրեական դատավարության օրենսգրքով: Օրինակ՝ համաձայն Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի (ուժի մեջ է մտել 2010 թ. հոկտեմբերի 1-ից) 198-րդ հոդվածի 1-ին մասի՝ կալանքը չի կարող կիրառվել մեղադրյալի նկատմամբ, եթե ավելի մեղմ խափանման միջոցը համապատասխանում է խափանման միջոցների նպատակին և հիմքերին: Դրանից բացի, նույն օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը կալանքը համարում է բացառիկ խափանման միջոց:

Կարծում ենք, այս չափանիշներին համահունչ ներպետական օրենսդրական կարգավորման պայմաններում անձին հետազայում անազատության մեջ պահելու հիմքերն առավել որոշակի ու կանխատեսելի կլինեն, իսկ դատարաններն էլ ձեռնպահ կմնան «լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու» կամ «նոր ապացույցներ հավաքելու» հիմքերով կալանավորման ժամեկտներ երկարացնելու որոշումներ կայացնելուց:

Սույն աշխատության շրջանակներում կարևոր է նաև քննարկել ողջամիտ կասկածի հարցը, որի առկայությունը ենթադրում է այնպիսի հանգամանքների կամ տվյալների գոյություն, որոնք կարող են համոզել օբյեկտիվ դիտարկողին, որ հնարավոր է, որ կոնկրետ անձը հանցագործություն է կատարել: Այն, թե ինչը կարող է ողջամիտ համարվել, կախված է կոնկրետ հանգամանքների ամբողջությունից<sup>1</sup>: Սա կամայական կալանավորման (ձերբակալման) կանխման էական երաշխիքներից մեկն է: Դրա հետ մեկտեղ պարտադիր

<sup>1</sup> St u, օրինակ, Campbell et Hartley v. The United Kingdom, զանգատ թիվ 12244/86; 12245/86; 12383/86, կետ 32:

կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով:

Զնայած վերը նշված իրավանորմերի առկայությանը, օրենսդիրն, այդուհանդերձ, չի ցուցաբերել անհրաժեշտ հետևողականություն և քրեադատավարական օրենսդրությունը չի համապատասխանեցրել արդի պահանջներին: Նույնիսկ 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135 հոդվածի առաջին մասը, որը սահմանում է խափանման միջոց, այդ թվում՝ կալանավորում, կիրառելու հիմքերը, շարունակում է պահպանել հետևյալ բովանդակությունը.

«Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝

քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն

գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ

կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի

պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Ակնհայտ է, որ վերը նշված հոդվածում սահմանված հիմքերից առնվազն երկուսը (խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով

առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը) դուրս են ԶԶ Սահմանադրության մեջ և Եվրոպական Կոնվենցիայում նշված հիմքերի շրջանակից: Սակայն դա խոչընդոտ չի հանդիսացել, որպեսզի իրավակիրառ պրակտիկայում քրեական հետապնդման մարմիններն այդ հիմքերով կալանավորման միջնորդություններ ներկայացնեն, իսկ դատարանները՝ բավարարեն դրանք:

Այսպիսի հանգամանքներում իրավակիրառող սուբյեկտները, և առաջին հերթին դատարանները, պետք է նկատի ունենան, որ անձի այնպիսի ազատագրվումը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով կամ Կոնվենցիայի 5 հոդվածի 1-ին մասի «ա»-«զ» կետերի հիման վրա, հանդիսանում է կամայական և անօրինական: Կոնվենցիայի 5 հոդվածին հակասող հանգամանքներում անձանց կալանքի տակ պահող իրավասու մարմինները պարտավոր են անհապաղ կերպով ազատ արձակել նրանց, իսկ 5-րդ հոդվածի 1-4 մասերի խախտմամբ կալանավորված անձինք իրավասու են փոխհատուցում ստանալու՝ համաձայն 5 հոդվածի 5-րդ մասի<sup>1</sup>:

Վերը նշված խնդրի հետ մեկտեղ, ԶԶ քրեադատավարական օրենսդրությունը տարբերակում չի դնում կալանավորման կիրառման և դրա ժամկետի երկարաձգման հիմքերի միջև: ԶԶ քր. դատ. օր. 135 հոդվածի առաջին մասում թվարկված հիմքերը հավասարապես կիրառվում են ինչպես առաջին անգամ կալանքի ընտրության, այնպես էլ այն երկարացնելու ընթացակարգերում, այն դեպքում, երբ Եվրոպական Կոնվենցիան անձի ազատ արձակումը պայմանավորում է դատաքննության ներկայանալու որոշակի երաշխիքներով: Այսինքն՝ ԶԶ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը կանոնակարգող հատուկ նորմ:

Եվրոպական դատարանի դիրքորոշումն այս հարցում բավականին հստակ է: Յուրաքանչյուր անգամ, երբ մեղադրյալը ներկայանում է դատարանի կամ «օրենքով լիազորված դատական այլ պաշտոնատար անձի առջև, 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն,

<sup>1</sup> Տե՛ս Քոչարյան Վ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան. ուսումնական նյութերի ժողովածու, Երևան 2007թ., էջ 188:

վորները չեն ցուցաբերել պատշաճ լրջության, ինչը սահմանված է այս չափանիշներով: Մեղադրյալների նկատմամբ կալանք կիրառելու վերաբերյալ սկզբնական որոշումների առնչությամբ արտահայտված վերոնշյալ մտահոգությունների գերակշիռ մասը հավասարապես կիրառելի են շարունակական կալանավորման վերաբերյալ որոշումներին:

Ուսումնասիրված գրեթե բոլոր գործերում, կալանավորման սկզբնական ժամկետը ավարտվելուց հետո, դատավորները շարունակաբար երկարացրել են կալանքի ժամկետը երկու ամիս ժամկետով՝ որն այն առավելագույն ժամկետն է, որը թույլատրված է նշանակել յուրաքանչյուր դեպքում:

Նման պրակտիկան, համաձայն զեկույցի, վկայում է, որ դատավորները յուրաքանչյուր անհատական դեպքում չեն գնահատում իրական և հնարավոր վտանգները՝ սահմանափակվելով նախկին որոշումների ձևական հաստատմամբ: Որոշ դեպքերում, դատավորները պարզապես կրկնում էին այն ձևակերպումները, որոնք տրվել էին՝ քննության նախնական փուլում կալանավորումն արդարացնելու նպատակով: Տպավորությունն այն է, որ դատավորները քննադատաբար չեն հետազոտում մեղադրանքի կողմի միջնորդությունները՝ առավելագույն ժամկետով կալանավորման շարունակական կիրառման վերաբերյալ: Ըստ զեկույցի հեղինակների՝ գործի անհատական հանգամանքների և բարդության անտեսմամբ՝ բոլոր կասկածյալների նկատմամբ ստանդարտ (առավելագույն) ժամկետով կալանք կիրառելու այս պրակտիկան վերահաստատում է որոշումների կայացման մակերեսային բնույթի առնչությամբ ստացված տպավորությունը<sup>1</sup>:

Սրա հետ կապված, կարևոր խնդիր է կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանների որոշումների պատճառաբանվածության բավարար մակարդակի ապահովումը: ԶԶ քրեական դատավարության գործող օրենսգիրքը այս հարցի կարգավորմանը պատշաճ ուշադրություն չի դարձրել, ինչի հետևանքով գործնականում լայն տարածում են գտել այնպիսի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 7, 27, 30-35:

յունների բնույթը, դրանց օբյեկտիվության վրա մեղադրյալի կողմից ազդեցություն գործելու հնարավորությունը<sup>1</sup>:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի նշված որոշման 28-րդ կետում սահմանված է, որ յուրաքանչյուր գործով կալանքի տևողությունը կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ կան հասարակական շահի իրական պահանջների հատուկ հատկանիշներ, որոնք ինքնուրույնաբար, չվտանգելով անմեղության կանխավարկածը, գերակշռում են ՀՀ Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը

Պետք է նշել, որ ՀՀ օրենսդրության մեջ և դրա հիման վրա ձևավորված գործնական աշխատանքում կալանքի՝ որպես խափանման միջոցի առաջին անգամ կիրառման և դրա ժամկետի երկարացման հիմքերի հարցում տարբերակված մոտեցման բացակայությունը խիստ քննադատության է արժանացել նաև միջազգային կազմակերպությունների՝ ՀՀ վերաբերյալ հրապարակած զեկույցներում: Խոսքը, նասնավորապես, վերաբերում է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից Հայաստանում “Դատավարությունների դիտարկում” ծրագրի (ապրիլ 2008թ. – հունիս 2009թ.) շրջանակներում ներկայացված վերջնական զեկույցին: Համաձայն այդ զեկույցի՝ կալանավորումը երկարացնելու վերաբերյալ հարցը քննարկելիս ՄԻԵԴ-ը կիրառում է առավել խիստ չափանիշներ, քան սկզբնական կալանավորման արդարացման դեպքում՝ պահանջելով ներկայացնել շարունակական կալանավորումն արդարացնող պատշաճ և բավարար հիմքեր: Այնուամենայնիվ, այս որոշումների հանդեպ դատա-

<sup>1</sup> Այն, որ մեղադրանքի ծանրությունն ինքնին համարվել է նախնական կալանքի կիրառման համար բավարար հիմք, քննադատվել է նաև ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից Հայաստանում “Դատավարությունների դիտարկում” ծրագրի վերջնական զեկույցում (ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ, Հայաստանում “Դատավարությունների դիտարկում” ծրագիր (ապրիլ 2008թ. – հունիս 2009թ.), Վարչավա, 2010, էջ 29):

դատավորը կամ դատական պաշտոնատար անձը պարտավոր են մանրամասնորեն քննության առնել կալանքը շարունակելու համար ներկայացվող պատճառաբանությունները, ինչպես նաև պաշտպանական կողմի՝ ազատ արձակումը հիմնավորող փաստարկները: Դատարանը վճռել է, որ կոնկրետ գործով կալանքի երկարացումը կարող է հիմնավորված լինել միայն այն դեպքում, երբ գոյություն ունեն «հստակ նշաններ, որոնք արտացոլում են իսկական հանրային շահի գոյությունը, որը, անկախ անմեղության կանխավարկածից, գերակայում է ազատության իրավունքի նկատմամբ»<sup>1</sup>: Հետևաբար, կանխավարկածը պետք է միշտ գործի հոգուտ ազատ արձակման, բացառությամբ, երբ առկա են կալանքի շարունակումը հիմնավորող ծանրակշիռ պատճառներ: Այդ պատճառների գոյությունը պետք է շարունակվի մինչդատական ողջ ժամանակահատվածում: Համապատասխանաբար, կալանքը մինչև դատաքննության օրը շարունակելու հարցը պետք է պարբերաբար վերանայվի: 5-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսված է այնպես, որ ապահովի անձի ազատումը հենց այն պահից, երբ կալանքի շարունակումն այլևս չի կարող հիմնավորվել<sup>2</sup>: Սրա համար պահանջվում է, որ մեղադրյալն ինքնաբերաբար, առանց նրա դիմումին սպասելու, պարբերաբար տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ:

Դատարանը վճռել է, որ կալանքի ողջամտությունը պետք է յուրաքանչյուր գործի համար որոշվի ըստ տվյալ գործի առանձնահատկությունների<sup>3</sup>: Ներպետական դատարանները պետք է իրենց որոշումները հիմնեն այն փաստերի և տեղեկությունների վրա, որոնցով պայմանավորված է ազատ արձակումը մերժելու կոնկրետ պատճառը: Դատավորները չեն կարող իրենց որոշումները հիմնել կարծրատիպային պատճառների վրա:

Դատարանը նշել է, որ նախնական փուլերում ներպետական դատարաններն իրավասու են հիմնվել այն ողջամիտ կասկածի վրա, թե մեղադրյալն է կատարել տվյալ իրավախախտումը. դա կա-

<sup>1</sup> St' u Punzelt v. The Czech Republic, Judgement of 25 April 2000:

<sup>2</sup> St' u Neumeister v. Austria, Judgement of 27 June 1968:

<sup>3</sup> St' u Punzelt v. The Czech Republic, Judgement of 25 April 2000:

լանքը շարունակելու օրինականության պարտադիր նախապայման է: Այնուհանդերձ, որոշակի ժամանակ անց այս հիմքն այլևս բավարար չէ կալանքի շարունակումը հիմնավորելու համար<sup>1</sup>: Դժվար է համոզվածությամբ նշել, թե որ պահից սկսած է անհրաժեշտ լինելու լրացուցիչ հիմնավորում, որպեսզի կալանքի երկարաձգումը հաստատվի: Ամեն դեպքում, յուրաքանչյուր գործ պետք է գնահատվի ըստ դրա առանձնահատկությունների, որպեսզի որոշվի, թե որ պահից է դատախազը պարտավոր ավելի քան ողջամիտ կասկած հիմնավորել առ այն, որ մեղադրյալն է կատարել տվյալ իրավախախտումը: Դատարանը միշտ հաշվի է առել այն պատճառները, որոնք ներկայացվում են «անհատի ազատության սկզբունքի հարգման և անմեղության կանխավարկածի կանոններից էական շեղումները հիմնավորելու համար, որոնք կարելի է գտնել առանց դատապարտման իրականացվող կալանքի յուրաքանչյուր դեպքում»<sup>2</sup>: Որոշ պետություններում, հնարավոր է, ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջն ավելի խիստ լինի, քան սկզբից և եթե իրավախախտման լուրջ բնույթի և մեղավորության նշանների հիմնավորումն է: Նման դեպքերում պետք է կատարվեն ներպետական օրենքների այն դրույթները, որոնցով ավելի հիմնավոր երաշխիքներ են պահանջվում. հակառակ դեպքում՝ կարծանագրվի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ - մասի շրջանակներում անձի ազատ արձակումը մերժելու համար ընդունելի է համարում հետևյալ հիմքերը.

- դատաքննությանը չներկայանալու ռիսկը,
- այն ռիսկը, որ կալանավորվածը կմիջամտի արդարադատության իրականացմանը,
- այն ռիսկը, որ կալանավորվածը նոր իրավախախտում կկատարի,
- կալանքի անհրաժեշտությունը հասարակական կարգի պահպանման տեսակետից:

<sup>1</sup> St' u Punzelt v. The Czech Republic, Judgement of 25 April 2000:

<sup>2</sup> St' u Stogmuller v. Austria, Judgement of 10 November 1969:

Ընդ որում, անձին սպառնացող պատժի խստության հետ կապված Եվրոպական դատարանն ընդգծել է, որ «... թեև անձին սպառնացող պատժի խստությունը հանդիսանում է փախուստի դիմելու կամ նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու կարևոր տարր, ազատությունից զրկելը երկարաձգելու անհրաժեշտությունը չի կարող գնահատվել բացառապես վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը»<sup>1</sup>:

Քննարկվող համատեքստում կարևոր նշանակությամբ է առանձնանում Ասլան Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի որոշումը: Մասնավորապես, այդ որոշման 26-րդ կետում կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը.

Իսկ ինչ վերաբերում է անձին մեղսագրվող հանցանքի ծանրությանը, ապա Վճռաբեկ դատարանը նշել է, որ թեև այն էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այդ հանգամանքը պետք է գնահատվի գործում առկա մնացած, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում մատնանշված հանգամանքների համատեքստում: Այդ առումով կարող է քննության առարկա դառնալ նաև դեռևս չկատարված քննչական գործողութ-

<sup>1</sup> St' u, Mamedova v. Russia, Judgement of 1 June 2006, կետ 74, Panchenko v. Russia, Judgement of 8 February 2005, կետ 102 և այլն:



3. Ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում, հետաքննության մարմինը կամ քննիչը գրավոր իրազեկում է դատախազին:

Ինչ վերաբերում է կալանավորման հիմքերը հայտնելուն, ապա նման իրավունքից օգտվում է միայն մեղադրյալը, որին արդեն հայտնի է իրեն առաջադրված մեղադրանքի էությունը: Սակայն դրանից բացի մեղադրյալին պետք է առանձին բացատրվեն նաև կալանավորման հիմքերը, քանի որ նախ՝ դրանք չեն համընկնում մեղադրանքի էության հետ և բացի այդ, մեղադրյալը կարող է և կալանավորման պահին տեղեկացված չլինել մեղադրանքի էության մասին, օրինակ, գտնվել է փախուստի մեջ:

Վարչական ձերբակալման մասին կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է այն կազմելու ժամանակաթիվն ու տեղը, արձանագրություն կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, տեղեկություններ ձերբակալված անձի մասին, ձերբակալման ժամանակը, տեղը և հիմքերը: Արձանագրությունը ստորագրում են այն կազմող պաշտոնատար անձը և ձերբակալվածը: Արձանագրությունը ստորագրելուց ձերբակալվածի հրաժարվելու դեպքում դրանում այդ մասին նշում է արվում:

ՀՀ օրենսդրությամբ չի կարգավորվում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով ձերբակալման կամ կալանավորման ենթակա այլ անձանց (հոգեկան հիվանդներ, ալկոհոլիկներ, թափառաշրջիկներ) ազատությունից զրկելու կարգը՝ այդ թվում նրանց տրամադրվող երաշխիքների առումով:

կադրվի կատարել *կոնկրետ և որոշակի պարտավորություն*, որը նա մինչ այդ չի կատարել<sup>1</sup>:

Ավելին, պարտավորությունն ընդհանուր առմամբ պետք է լինի այնպիսին, որի ծագումն արդեն իսկ պայմանավորված է անհատի վարքագծով: Հետևաբար, կալանքը, որպես կանոն, թույլատրելի չէ, եթե մինչ այդ օրինական որևէ պարտավորություն չի խախտվել: Կալանքը չի կարող պատժելու նպատակ հետապնդել. այս «ճյուղի» շրջանակներում կալանքի նպատակն է ապահովել խնդրո առարկա պարտավորության կատարումը: Դատարանը հստակորեն ամրագրել է, որ չի թույլատրում հետևյալը.

- ահաբեկչության մեջ մեղադրվող անձանց կալանքը որպես խափանման միջոց
  - օրենքին ենթարկվելու ընդհանուր պարտավորության կատարումն ապահովելու նպատակ հետապնդող կալանքը<sup>2</sup>:
- Կալանքը պետք է իսկապես ի կատար ածվի այնպես, որպեսզի ապահովի պարտավորության անմիջական կատարումը:

• **Նովիչկան ընդդեմ Լեհաստանի** գործով հայցվորը դատավարության մասնակից էր, որում հարց էր ծագել նրա հոգեկան առողջության մասին: Նրան կարգադրել էին հոգեբուժական ստուգում անցնել: Երբ նա չէր ենթարկվել այդ կարգադրությանը, արձակվել էր ձերբակալման օրդեր: Նա պահվել էր կալանքի տակ ութ օր, որից հետո միայն անցել էր ստուգում: Ավելի ուշ, դատարանի մեկ այլ կարգադրություն էր արձակվել, որով նա ձերբակալվել էր լրացուցիչ բժշկական զննության նպատակով: Այս անգամ նա զննությունից առաջ կալանքի տակ էր պահվել 27 օր: Դատարանը նկատելով, որ կալանքի հիմքն օրինական էր եղել, այսինքն՝ հոգեբուժական զննության ներկայացնելու պարտավորության կատարում, վճռեց, որ երկու անգամ զննությունից առաջ նրան կալանքի տակ պահելու երկու ժամկետները համահունչ չէին հայցվորի պարտավորության անհապաղ կատարումն ապահովելու՝ իշխանությունների ցանկությանը: Տվյալ հանգամանքներում Դատարանը եզրա-

<sup>1</sup> St'u Engel and others v. the Netherlands, Judgement of 08 June 1976:

<sup>2</sup> St'u Engel and others v. the Netherlands, Judgement of 08 June 1976:

կացրեց, որ իշխանությունները չեն հավասարակշռել խնդրո առարկա պարտավորության անհապաղ կատարումն ապահովելու կարևորությունը՝ մի կողմից, և ազատության իրավունքի կարևորությունը, մյուս կողմից: Յետևաբար, արձանագրվեց 5(1) հոդվածի խախտում:

Կալանքը պետք է նաև իրավաչափ լինի կալանքի միջոցով հետապնդվող նպատակին:

• **Վասիլևան ընդդեմ Դանիայի** գործով հայցվորը մի 67-ամյա կին էր, ով մեղադրվում էր ավտոբուսի վարորդի կողմից առանց պահանջվող ուղեւորման երթևեկելու մեջ: Վարորդը փորձել էր կնոջը տուգանել, սակայն հայցվորը հրաժարվել էր հայտնել իր ինքնությունը, որը պահանջվում էր օրենքով: Վարորդը կանչել էր ոստիկանների, և կինը շարունակել էր հրաժարվել իր ինքնությունը բացահայտելուց: Հայցվորը ձերբակալվել էր և տեղափոխվել ոստիկանության բաժին: Այնտեղ նա պահվել էր 13 և կես ժամ, որի ավարտի դրությամբ բացահայտել էր իր ինքնությունը: Դատարանը վճռեց, որ հաշվի առնելով իրավախախտման չնչին բնույթը, որի դիմաց որպես պատիժ միայն տուգանք է սահմանված, 13 և կես ժամով կալանքն իրավաչափ չի եղել կալանքի նպատակին: Դատարանն առանձնակի ուշադրություն դարձրեց այն փաստին, որ տվյալ ժամանակահատվածում կնոջ ինքնությունը հաստատելու որևէ փորձեր չեն կատարվել: Ավելին, Դատարանը նկատեց, որ հաշվի առնելով հայցվորի տարիքը, անհրաժեշտ էր հրավիրել բժշկի, քանի որ դա, հնարավոր է, նպաստեր հայցվորի և ոստիկանության միջև հաղորդակցության դժվարությունների հաղթահարմանը:

Այս մասով նախատեսված են պարտավորությունների հետևյալ տեսակները (որոնք պետք է համահունչ լինեն Կոնվենցիային)՝

- անձը հաստատող փաստաթուղթ կրելու պարտավորությունը
- հարկային հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունը
- զինվորական ծառայություն անցնելու պարտավորությունը

յան կամ կալանավորման հիմքերը, ինչպես նաև այն հանցագործության փաստական հանգամանքները և իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է (11-րդ հոդվածի 4-րդ մաս): Ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքները սահմանված են քր. դատ. օր. 63, 65, 128, 211 և այլ հոդվածներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում շտկվեց օրենսդրական այն բացը, թե անձին հետաքննության մարմին կամ վարույթն իրականացնող մարմին բերելուց հետո որքան ժամանակի ընթացքում պետք է կազմվի և նրան հայտարարվի ձերբակալման արձանագրությունը: Օրենսդրական այս բացը հնարավորություն էր տալիս շրջանցելու կասկածանքի կամ ձերբակալման հիմքերի մասին անհապաղ տեղյակ պահելու պարտականության կատարումը:

Ներկայումս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածը սահմանում է, որ.

1. Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին:

2. Արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

- **Ֆոքսը, Քենսֆելը և Չարտլինը ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով հայցվորներին տեղեկացրել էին, որ իրենց ձերբակալում են ահաբեկիչներ լինելու կասկածանքով: Դատարանը նշեց, որ այս «մերկապարանոց» տեղեկությունն իրենով բավարար չէր կարող լինել 5-րդ հոդվածի 2-րդ մասի առումով: Այնուհանդերձ, Դատարանը նկատեց, որ հայցվորները ձերբակալման երեք և չորս ժամերի ընթացքում հարցաքննվել էին կոնկրետ ահաբեկչական հարձակումների մասին: Դատարանը վճռեց, որ դա հանդիսանում է բավականաչափ արագ կերպով կատարված բավարար ծանուցում:

- **Մարգարետ Սյուրեյնը ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով ոստիկանությունը հայցվորին կասկածում էր Իռլանդիայի հանրապետական բանակի համար գումարներ հայթայթելուն մասնակից լինելու մեջ: Այնուհանդերձ, հայցվորին միայն ասել էին, ընդ որում՝ ձերբակալման պահին, որ նա ձերբակալվում է «14-րդ հոդվածի» հիման վրա: Ձերբակալման պահին նրան լրացուցիչ տեղեկություններ չէին տրամադրվել: Դատարանը վճռեց, որ այս տեղեկատվությունն իրենով բավարար չէր 5-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով: Այնուհանդերձ, Դատարանը վճռեց, որ ձերբակալմանը հաջորդած մեկ ժամվա ընթացքում ոստիկանության հետ հարցազրույցի ընթացքում իրեն ուղղված հարցերից նրան պետք է որ պարզ դարձած լիներ, որ իրեն կալանավորել են Իռլանդիայի հանրապետական բանակի համար գումարներ հայթայթելու կասկածանքով: Դա բավարար տեղեկատվություն էր, որը 5-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով մատուցվել էր «անհապաղ»:

Այնուհանդերձ, ահաբեկչության գործերը, հավանաբար, պետք է համարվեն ծայրահեղ դեպքեր: Սովորական հանցագործությունների կամ հոգեկան հիվանդության առնչվող կամ այլ գործերով ձերբակալված և կալանավորված անձինք պետք է կամ անհապաղ, կամ հնարավորին չափ շուտ, պարզ և հասկանալի լեզվով տեղեկացվեն իրենց ձերբակալման կամ կալանավորման պատճառների մասին:

ՀՀ քր. դատ. օր.-ի համաձայն յուրաքանչյուր ձերբակալվածի կամ կալանավորվածի անհապաղ հաղորդվում են ձերբակալութ-

«Չույժ կարևոր բնույթի որոշակի, սահմանափակ թվով իրավիճակներում», ինչպիսին է, օրինակ, պայքարն ահաբեկչության դեմ, կալանքը կարող է թուլատրելի լինել տվյալ ենթակետի համաձայն, եթե անհրաժեշտ է համարվում ընթացիկ պարտավորության գործուն կատարումն ապահովելը:

- **Մաքվեյնը ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով նախկին Հանձնաժողովը քննության առավ մի իրավիճակ, որում երեք տղամարդ 45 ժամ կալանքի տակ էին պահվել Յուսիսային Իռլանդիայից Մեծ Բրիտանիա մուտք գործելու կետում, որպեսզի «անցնեն լրացուցիչ ստուգում»: Այն ժամանակ գործող հակաահաբեկչական օրենքի համաձայն, Մեծ Բրիտանիա մուտք գործող անձինք կարող էին հարցաքննվել, որպեսզի պարզվեին նրանց հնարավոր կապերն ահաբեկչության հետ: Կասկած առաջանալու դեպքում անձից կարող էր պահանջվել «լրացուցիչ ստուգումներ անցնել»: Տվյալ դեպքում հայցվորները կալանավորվել էին, որպեսզի ապահովվեր պարտավորության գործուն կատարումն այն ժամանակ, երբ այդ պարտավորությունն առաջանար: Հանձնաժողովը որոշեց, որ պարտավորությունը «որոշակի էր և կոնկրետ»: Վճռելով, որ կալանքը 5(1)(բ) հոդվածի համաձայն հիմնավորված էր, Հանձնաժողովը նկատեց, որ պարտավորության կատարումն անհապաղ անհրաժեշտության խնդիր էր, և որ դրա կատարումն ապահովելու ողջամտորեն պրակտիկ որևէ այլ միջոցներ չկային: Ձուգահեռաբար, Հանձնաժողովը նշեց, որ ժողովրդավարական հասարակարգում կարևոր է հավասարակշռել, մի կողմից, պարտավորության անհապաղ կատարումն ապահովելու անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ ազատության իրավունքի կարևորությունը: Հավասարակշռությունը հաստատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի գործոն, ինչպիսին է կալանքի տևողությունը:

Ընդհանուր առմամբ, 5(1)(բ) հոդվածի համաձայն կալանքի հիմնավորվածության գնահատումը կարող է ամբողջությամբ վերցված Կոնվենցիայի լույսի ներքո օգտակար լինել, երբ.

- դա նախատեսված է ուրիշների իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար (օրինակ, գույքային իրավունքների իրականացումը 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա),

- դա առնչվում է Կոնվենցիայով նախատեսված կոնկրետ պարտավորությունների կատարմանը (օրինակ, զինծառայություն անցնելու պարտավորությանը. տես հոդված 4),

- դրանից ծագում են այլ իրավունքներ (օրինակ, դատական համակարգի արդյունավետությունը՝ համաձայն 6-րդ հոդվածի),

- դա հիմնավորվող և իրավաչափ միջոց է, որի նպատակն է պաշտպանել հանրության լայն խավերի շահերը (օրինակ, մաքսային և ոստիկանական հսկողությունը սահմանափակումն է կետերում):

ՀՀ օրենսդրությամբ դատարանի օրինական որոշման չկատարումը հազվադեպ է հանգեցնում անձի ձերբակալման կամ կալանավորման: Քաղաքացիաիրավական ոլորտում դատարանի որոշման չկատարումը հանգեցնում է ոչ թե ձերբակալման կամ կալանավորման, այլ գույքային սանկցիաների կամ դատական ակտերի հարկադիր կատարման: Սակայն հնարավոր են նաև այլ իրավիճակներ, օրինակ, քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու գործերի վարույթում քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը, նրա հոգեկան վիճակը պարզելու համար, նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն: Դատահոգեբուժական փորձաքննության անցկացումից այն անձի ակնհայտ խուսափելու դեպքում, որի նկատմամբ անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործ է հարուցվել, դատարանը որոշում է կայացնում քաղաքացուն հարկադիր կարգով դատահոգեբուժական փորձաքննության ուղարկելու մասին (ՀՀ քաղ. դատ. օր. 170-րդ հոդված), ինչը Կոնվենցիայի տերմինոլոգիայով հավասարազոր է ձերբակալմանը կամ կալանքին:

Ինչ վերաբերում է օրենքով սահմանված ցանկացած պարտականության կատարման ապահովման նպատակով իրականացվող ձերբակալմանը կամ կալանավորմանը, ապա այստեղ ՀՀ-ում կիրառվող հարկադրանքի ոլորտն ավելի նեղ է: Օրինակ, եթե վկան կամ տուժողը քրեական գործի քննության ընթացքում առանց հարգելի պատճառի չի ներկայանում վարույթն իրականացնող մարմնի կանչով, ապա նա կարող է բերման ենթարկվել (քր. դատ. օր. 153-րդ հոդված), ինչը սակայն չի նույնանում ձերբակալման կամ կալանավորման հետ:

### **«Անհապաղ»**

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված երաշխիքի մեջ առանցքային նշանակություն ունի «անհապաղ» տերմինը, որը կիրառվում է նաև նույն հոդվածի 3-րդ մասում:

«Անհապաղության» կապակցությամբ չի պահանջվում տեղեկությունները ներկայացնել անմիջապես. ավելի շատ, թույլատրվում է որոշակի ճկունություն, որպեսզի հաշվի առնվեն կոնկրետ գործի հանգամանքները: Այն դեպքում, օրինակ, երբ անհնար է անձին տեղեկացնել, քանի որ նա դիմադրում է, հնարավոր է, որ արդարացված կլինի սպասել, մինչև նա բավականաչափ հանդարտվի, որպեսզի կարողանա ստանալ տեղեկությունները: Որոշ դեպքերում, օրինակ, երբ անհատին խնդրում են ներկայացնել իր անձը հաստատող փաստաթղթերը, իսկ նա ցույց է տալիս կեղծ փաստաթղթեր, այդ փաստն իրենով կարող է բավարար լինել՝ հաշվի առնելով տվյալ գործողության հանցավոր և դիտավորյալ բնույթը: Յուրաքանչյուր դեպք անհրաժեշտ է քննության առնել ըստ փաստերի և կոնկրետ գործի առանձնահատկությունների:

Ընդհանուր առմամբ եվրոպական պրակտիկան հանգում է նրան, որ այս դեպքում անհապաղությունը չպետք է գերազանցի վեց ժամը: Միաժամանակ եվրոպական դատարանը գտնում է, որ այս կանոնը տարածվում է ոչ միայն կալանավորման, այլև ձերբակալման վրա:

- **Կոնկան ընդդեմ Բելգիայի** գործով հայցվորներին, ովքեր զնչուական ծագման մի շարք այլ անձանց հետ միասին Բելգիայում ապաստան էին հայցել, խնդրել էին ներկայանալ ոստիկանության բաժին: Գալով ոստիկանություն, նրանք տեղեկացել էին իրենց արտաքսման և հանձնման կարգադրությունների մասին, և ապահովվել էր բանավոր թարգմանություն: Դատարանը վճռեց, որ սա համահունչ է եղել 5(2) հոդվածին:

Այնուհանդերձ, ահաբեկչության մեջ կասկածվող անձանց հետաքննության գործերով Դատարանը վճռել է, որ կարող է բավարար լինել, եթե սկզբում տեղեկացվեն մեղադրանքի ընդհանուր բնույթի մասին, որից հետո, բայց ոչ շատ ուշ, լրացուցիչ մանրամասներ, օրինակ՝ կախված հարցաքննության բնույթից:

կինն իրավասու էր տեղեկացված լինելու իր հարկադիր կալանքի պատճառների մասին:

**«Իրեն հասկանալի լեզվով»**

Այս արտահայտությունը նշանակում է ոչ միայն «մայրենի կամ այլ հասկանալի լեզուն», այլ նաև՝ տեղեկությունների արտահայտման ձևը: Տեղեկությունները պետք է ներկայացվեն պարզ, ոչ տեխնիկական արտահայտություններով, մանրամասնելով ձերբակալման կամ կալանքի իրավաբանական և տեխնիկական պատճառները, որպեսզի կալանավորվածը կարողանա ցանկության դեպքում իրավական քայլեր ձեռնարկել 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն իր կալանքի օրինականությունը վիճարկելու ուղղությամբ. անհասկանալի իրավաբանական տերմինաբանությունն այս պահանջին չի համապատասխանում:<sup>1</sup>

Պարտադիր չէ, որ ներկայացվող տեղեկությունները բառ առ բառ կամ գրավոր տեսքով պարունակեն ձերբակալման պատճառները, եթե այն, ինչ ներկայացվում է, բավարար է վերոհիշյալ նպատակներով: Գրավոր/բանավոր թարգմանության կապակցությամբ հարկ է նշել, որ հնարավոր է, որ անհրաժեշտ չլինի տեղեկությունները մատուցել կալանավորվածի մայրենի լեզվով, սակայն տեղեկությունները պետք է թույլ տան բավարար չափով հասկանալ կալանքի պատճառները, որպեսզի հնարավոր լինի դրանք վիճարկել: Պարտադիր չէ, որ տեղեկությունները գրավոր լինեն, և պարտադիր չէ, որպեսզի առանձին կոնկրետ քայլ կատարվի կալանավորվածին տեղեկացնելու ուղղությամբ: Բավարար կլինի, որ ներկայացված տեղեկություններն արդյունավետ կերպով կալանավորվածին թույլ տան հասկանալու իր կալանքի պատճառները, կալանքի օրինականությունը վիճարկելու համար:

<sup>1</sup> St u Van Der Leer v. the Netherderlands, Judgement of 21 February 1990:

**Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետը թույլատրում է նաև անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:**

Ըստ Եվրոպական դատարանի մեկնաբանությունների՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի ձևակերպումը բովանդակում է ձերբակալման կամ կալանավորման երեք հիմք.

ա/ իրավախախտում կատարելը,

բ/ իրավախախտման կատարումը կանխելը,

գ/ իրավախախտում կատարած անձի թաքնվելը կանխելը:

Բոլոր երեք հիմքերով կատարված ձերբակալումը կամ կալանավորումը պետք է հետապնդի մեկ որոշակի նպատակ, այն է՝ որպեսզի անձը կանգնի իրավասու մարմնի առջև: Այսպիսի երաշխիքը ներառում է բոլոր այն իրավախախտումները, որոնք թույլ են տալիս ձերբակալման կամ կալանավորման կիրառում: Միաժամանակ Կոնվենցիայում հիշատակվող կասկածները պետք է անպայման լինեն հիմնավորված, սակայն դա չի նշանակում, որ կատարված իրավախախտման մեջ անձի մեղքն այդ պահին պետք է անվերապահորեն և լիովին ապացուցված լինի:

Ձերբակալման իրավասությունը քրեական արդարադատության համակարգի կարևոր բաղկացուցիչներից է, սակայն այն պետք է ի կատար ածել պատշաճ կերպով, որպեսզի չխախտվեն 5-րդ հոդվածի դրույթները: 5(1)(գ) հոդվածը պետք է ընթերցել 5(3) հոդվածի հետ միասին: Այսպես, 5(1)(գ) հոդվածի հիման վրա ձերբակալված և կալանավորված բոլոր անձինք իրավասու են անհապաղ ներկայացվել դատարանի առջև, ինչպես նաև՝ օգտվում են ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքից:<sup>1</sup> 5(գ) և 5(3) հոդվածները ոչ

<sup>1</sup> Բացատրվում է ստորև:

միայն ծառայում են կանայական կալանքից պաշտպանության նպատակին, այլ նաև մտնում են կալանավորված անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանող իրավունքների զինանոցի անբաժանելի մասը: Խստորեն կանոնակարգված կալանքի շնորհիվ կրճատվում է կալանավորված անձի՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի (խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի) ենթարկվելու ռիսկը, ինչպես նաև կյանքի իրավունքն ամրագրող՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածին հակասող կալանքի ընթացքում մահվան և անհայտացումների ռիսկը: Դրանք նաև նպաստում են մեղադրյալի արդարացի դատաքննության իրավունքի ապահովմանը:

Խստորեն կանոնակարգված մինչդատական կալանքը նվազեցնում է մեղադրյալից հարկադրանքի ուժով խոստովանություն կորզելու ռիսկը: Հայտնի է, որ շատ դեպքերում նման խոստովանություններին չի կարելի հավատալ: Խստորեն կանոնակարգված մինչդատական կալանքը նաև երաշխավորում է, որպեսզի պետական իշխանությունները կալանավորված անձանց գործերի անհրաժեշտ քննությունն անցկացնեն առանց ձգձգումների:

### ***Ձերբակալում***

Պարտադիր չէ, որպեսզի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի շրջանակներում այս բառի իմաստը համահունչ լինի ներպետական օրենսդրությամբ դրան վերագրված իմաստներին: Քանի որ Կոնվենցիայով նախատեսված իմաստը գերակայում է ներպետական մեկնաբանությունների նկատմամբ, շատ կարևոր է, որպեսզի ներպետական իրավասու մարմինները հասկանան ձերբակալում բառի իմաստը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի շրջանակներում: 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ձերբակալումը հանցագործության կատարման կասկածով անձին առաջին անգամ բերման ենթարկելու գործողությունն է:

### ***Կասկածի մակարդակը***

Այս բաժնով պահանջվող կասկածի մակարդակը «ողջամիտ կասկածն» է, որը պետք է հասկանալ Կոնվենցիայի իմաստով: Այն

ված գործողությունները հանգեցրել են հանցավոր համաձայնության կամ հանցափորձերի: Հետևաբար, մտադրության կասկածի հիման վրա ձերբակալումը նախատեսված նպատակից չի բխում և հակասում է 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետին:

## **1.4. Ձերբակալման պատճառների և ներկայացվող մեղադրանքի մասին անձին հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացնելը**

### ***Ձերբակալում և մեղադրանքի ներկայացում***

Ձերբակալման պատճառների մասին անհապաղ տեղեկացնելու պարտավորությունը տարածվում է 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կալանքի բոլոր դեպքերի նկատմամբ, և չի սահմանափակվում միայն քրեական մեղադրանքի կապակցությամբ կալանավորվածներով: «Ձերբակալում» բառն ունի ինքնուրույն իմաստ, որը տարածվում է «քրեաիրավական միջոցների տիրույթից դուրս»: <sup>1</sup> Այն, ըստ երևույթին, նշանակում է այն պահը, որից սկսած անձն այլևս ազատ չէ: «Մեղադրանք» բառը վերաբերում է քրեական իրավունքին, սակայն այս դրույթով նախատեսված բազմաթիվ դեպքերից մեկն է միայն: <sup>2</sup> 5-րդ հոդվածի 2-րդ մասը հանդիսանում է տարրական երաշխիք, որպեսզի կալանավորված յուրաքանչյուր ոք կարողանա քայլեր ձեռնարկել իր կալանքի օրինականության դեմ հնարավորինս շուտ բողոքարկելու ուղղությամբ:

• ***Վան դեր Լիթմ ընդդեմ Նիդեռլանդների*** գործով հայցվորը սկզբում ինքնական հիվանդ էր հոգեբուժարանում: Հետագայում նրան կալանավորել էին հարկադրաբար, սակայն այդ փաստի մասին նրան չէին իրազեկել: Նա իր հարկադիր կալանքի մասին տեղեկացել էր միայն պատահաբար՝ կարգադրության արձակումից 10 օր անց, երբ նրան մեկուսացրել էին: Դատարանը, նշելով, որ «ձերբակալում» բառը պետք է մեկնաբանվի ինքնուրույն իմաստով, որպեսզի կանխարգելվի կանայական ազատագրկումը, վճռեց, որ

<sup>1</sup> St'u Van Der Leer v. the Nethederlands, Judgement of 21 February 1990:

<sup>2</sup> St'u Van Der Leer v. the Nethederlands, Judgement of 21 February 1990:

րավասու է պարզել, թե արդյոք կոնկրետ միջոցը խստորեն է կիրառվել՝ ելնելով կոնկրետ իրավիճակի ստեղծած դժվարություններից:

### **«Իրավախախտում»**

5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի առնչությամբ Դատարանին ներկայացված գործերի մեծ մասը վերաբերում է իրավախախտում կատարելու ողջամիտ կասկածին. մյուս երկու դեպքերը («Իրավախախտման կատարումը կանխելու համար հիմնավոր կերպով անհրաժեշտ», կամ «իրավախախտում կատարելուց հետո անձի փախուստ կանխելու համար») հազվադեպ են կիրառվում: Ցանկացած դեպքում, դրանք, ըստ երևույթին, փոխլրացնող պահանջներ են, քանի որ այս երկու արտահայտությունների ձևակերպումների հիման վրա ենթադրվում է քրեական իրավախախտման կատարում ((1) իրավախախտում կատարելու փորձ կամ հանցավոր համաձայնություն, և (2) իրավախախտման կատարում):

5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի իմաստով «իրավախախտումը» պետք է լինի «կոնկրետ և որոշակի»: **Գուզարդին ընդդեմ Իտալիայի** գործով Դատարանը վճռեց, որ «իրավախախտում» բառը չի ներառում է հանցավորության կանխարգելման ընդհանուր քաղաքականություն՝ ուղղված այնպիսի մարդկանց որոշակի խմբատեսակի (այս դեպքում՝ Մաֆիայի անդամների) դեմ, ովքեր վտանգավոր են հանցավորության նկատմամբ իրենց ընդհանուր հակվածության պատճառով: Հետևաբար, 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն ցանկացած ձերբակալում պետք է կատարվի «կալանավորվածին իրավասու օրինական մարմնի առջև կանգնեցնելու նպատակով»: <sup>1</sup> Հետևաբար, կասկածը պետք է առնչվի անցյալում տվյալ անձի դրսևորած այնպիսի վարքագծի, որը կարող է հանգեցնել կոնկրետ հանցավոր իրավախախտման: Իրավախախտում կատարելու մտադրության մասին պարզ կասկածը չի կարող դատական կարգով քննության ենթակա մեղադրանքի հիմք հանդիսանալ, բացառությամբ, եթե տվյալ մտադրության ուղղությամբ կատար-

դեպքում, երբ ներպետական օրենսդրության առումով կասկածի մակարդակը Դատարանի չափանիշներին չի համապատասխանում, նման կասկածի հիման վրա իրականացված մինչդատական կալանքը հակասում է 5-րդ հոդվածին: «Ողջամիտ կասկած» հասկացությունից բխում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների գոյություն, որոնք կգոհացնեն անկողմնակալ դիտորդին առ այն, որ տվյալ անձը, հնարավոր է, հանցանք գործած լինի»: <sup>1</sup>

Հետևաբար, պահանջվող կասկածի մակարդակը չի նշանակում, թե վարույթն իրականացնող մարմինները պետք է բավարար ապացույցներ հավաքած լինեն, որպեսզի մեղադրանք ներկայացնեն ձերբակալման պահին կամ, նույնիսկ, անձի՝ իրենց մոտ կալանքի տակ գտնվելու ընթացքում: Պարտադիր չէ, որ ձերբակալողը վստահ լինի, որ իսկապես գործվել է հանցանք: Ձերբակալմանը հաջորդող կալանքի ընթացքում հարցաքննության նպատակն է. «առաջ տանել քրեական հետաքննությունը՝ հաստատելով կամ փարատելով ձերբակալման հիմքում ընկած կոնկրետ կասկածը»: <sup>2</sup>

Ողջամիտ լինելու հարցի պատասխանը որոշ չափով կախված է գործի հանգամանքներից. հետևաբար, ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում ձերբակալումները կազմում են առանձին տարատեսակ: Ահաբեկչական հարձակումների առնչությամբ ձերբակալումը հիմնավորվող կասկածի ողջամտության մասին չի կարելի բոլոր դեպքերում դատել նույն չափանիշներով, ինչ կիրառվում են սովորական հանցատեսակների նկատմամբ: <sup>3</sup>

• **Ֆոքսը, Քեմպբելը և Հարտլին ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով, այդ պահին գործող օրենսդրության համաձայն ահաբեկչության մեջ կասկածվող անձանց ձերբակալման և հարցաքննության նպատակով կալանավորման համար անհրաժեշտ էր ունենալ «իսկական և անկեղծ կասկած»: Պատասխանող Կառավարությունը պնդում էր, որ հաշվի առնելով անվտանգության նկա-

<sup>1</sup> Տես դրույթի բառային ձևակերպումը:  
58

<sup>1</sup> Տես Fox, Campbell and Hartley v. United Kingdom, Judgement of 27 March 1991:  
<sup>2</sup> Տես Murray v. United Kingdom, Judgement of 28 October 1994:  
<sup>3</sup> Տես Fox, Campbell and Hartley v. United Kingdom, Judgement of 27 March 1991:

տառուները, ինքը չէր կարող ձերբակալման հիմքում ընկած գաղտնի տեղեկությունները հրապարակել: Արձանագրելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի խախտում, Դատարանը վճռեց, որ կիրառված ներպետական չափանիշը «ողջամիտ կասկածի» չափանիշից ցածր էր: Դատարանը նշեց, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը չպետք է կիրառել այնպես, որպեսզի այն անիրավաչափ դժվարություններ առաջացնի պայմանավորվող պետությունների ոստիկանական մարմինների կողմից կազմակերպված ահաբեկչության դեմ մղվող պայքարի և գործողությունների ճանապարհին: Նման իրավիճակում պետություններից չի կարելի ակնկալել, որ վերջիններս հիմնավորող տեղեկությունների այնպիսի գաղտնի աղբյուրներ կան, անգամ, փաստեր կիրառարկեն, որոնք կարող են դրանց ինքնությունը բացահայտելու տեղիք տալ:<sup>1</sup> Այնուհանդերձ, որոշ տեղեկություններ անհրաժեշտ էր տրամադրել, որով Դատարանը կկարողանար հանդգնել ողջամիտ կասկածի համար հիմքերի փաստացի գոյության մեջ: Տվյալ դեպքում օգտագործված տեղեկությունները (նախկինում ահաբեկչությանն առնչվող գործերով դատապարտման դեպքերը և կոնկրետ ահաբեկչական գործողությունների առնչությամբ կալանքի ընթացքում հարցաքննությունները) բավարար չէին, որպեսզի ողջամիտ կասկած հիմնավորեին: Հետևաբար, տեղի էր ունեցել 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի խախտում:

**Մարզաբետ Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության** գործը ցույց է տալիս, թե ահաբեկչության գործերով «ողջամտության» չափանիշի նվազագույն շեմը որքան ցածր է այն դեպքերում, երբ կասկածյալները ձերբակալվում են կարճ ժամկետով: Մյուրեյն ձերբակալվել էր զինված ուժերի մի ներկայացուցչի կողմից, որը նրան ասել էր, թե ձերբակալվում է «14-րդ կետի համաձայն»: Այդ պահին Մյուրեյն այլևս տեղեկություններ չէին տրամադրել: Նա կալանավորվել էր և պահվել կալանքի տակ երկու ժամից մի փոքր ավել (օրերնքի համապատասխան դրույթով թույլատրվում էր կալանավորում մինչև չորս ժամով), որի ընթացքում հարցաքննվել էր ահաբեկչական գործողություններին իր ներգրավվածության մասին: Նրան

հարցրել էին, թե ինչպիսի հարաբերությունների մեջ է իր երկու եղբայրների հետ, ովքեր երկուսն էր վերջերս դատապարտվել էին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ահաբեկչական մի կազմակերպության՝ Իռլանդիայի հանրապետական բանակի համար զենք գնելու համար: Կինն ազատ էր արձակվել, և նրան մեղադրանք չէր ներկայացվել: Հայցվորը պնդում էր, որ իրեն չեն ձերբակալել որևէ իրավախախտում կատարելու ողջամիտ կասկածի հիմով: Պատասխանող Կառավարությունը հենվել էր այն փաստերի վրա, որ հայցվորի եղբայրները վերջերս դատապարտվել էին ԱՄՆ-ում ահաբեկչական հանցագործությունների համար, և որ հայցվորը վերջերս ուղևորվել էր ԱՄՆ և այնտեղ գտնվելիս շփվել իր երկու եղբայրների հետ: Կառավարությունը նաև պնդում էր, որ հուսալի, սակայն գաղտնի մի աղբյուր իրեն տրամադրել էր տեղեկություններ, որոնք հիմնավորել էին Կառավարության կասկածը: Դատարանը հաշվի առավ հայցվորի կալանքի ժամկետը, ինչպես նաև՝ թույլատրված կալանքի առավելագույն ժամկետը: Դատարանը եզրակացրեց, հաշվի առնելով «ահաբեկչության հանցագործությունը հետաքննելու հատուկ պահանջները», որ Մյուրեյն ձերբակալվել էր ահաբեկչական գործունեության մասնակից լինելու մասին «ողջամիտ կասկածով»:

Չնայած այն հանգամանքին, որ Դատարանն ընդունում է, որ ահաբեկչական հանցագործությունների հետաքննությունն առանձնահատուկ բարդության խնդիրներ է առաջացնում իշխանությունների համար, դա դեռ չի նշանակում, որ իշխանությունները բացարձակ իրավասություն ունեն՝ ձերբակալելու կասկածյալների և վերջիններիս պահելու ոստիկանությունում կալանքի տակ, մինչև այն ժամանակ զերծ մնալով ներպետական դատարանների կողմից հսկողության արդյունավետ միջոցներից: Եթե պետությունը 15-րդ հոդվածի համաձայն շեղման («դեռոգացիա») չի գնացել, ապա 5-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը լիովին կիրառվում է նույնիսկ ահաբեկչության մեջ մեղադրվող անձանց կամ պետությանը վտանգ սպառնացողների նկատմամբ:<sup>1</sup> Դատարանը նշել է, որ նույնիսկ եթե պետությունը շեղման է գնացել, Դատարանն ի-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>1</sup> *Stu, orihinal, Demir and others v. Turkey, Judgement of 29 September 1998:*



## Դատավոր կամ օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձ

«Օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձ» հասկացությունը եզրաբանական առումով զուգահեռվում է 5-րդ հոդվածի 1-ի մասի «գ» կետում տեղ գտած «իրավասու օրինական մարմին» հասկացությանը: Ուստի, դատական մարմինը պետք է լինի անկախ և անկողմնակալ, և իրավունք ունենա կայացնելու ազատ արձակում կարգադրող, պարտադիր բնույթ ունեցող օրինական որոշում:<sup>1</sup>

**Դե Յոնգ Բայետը և Վեն դեն Բրինկն ընդդեմ Նիդեռլանդների (1984թ.)** գործով զինվորական կարգապահության խախտման համար ձերբակալվել էին այն գորակոչիկները, ովքեր սեփական խղճի դրդմամբ հրաժարվել էին ենթարկվել կարգադրությունների: Նրանց գործը քննության համար ուղարկվել էր զինվորական գործեր լսող պաշտոնյային (auditeur-militair): Վերջինս իրավասու էր առաջարկություններ ներկայացնել հայցվորների գործի մասին, սակայն նրանց ազատ արձակում կարգադրելու իրավունք չուներ: Ավելին, նա անկախության բավարար երաշխիքներ չուներ, քանի որ գործը Ձինվորական դատարան ուղարկելուց հետո հենց նա էր գործով ներգրավվում որպես դատախազ: Արձանագրվեց 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

Մասնավորապես, «Ըստ ընդհանուր քրեական օրենսդրության» քրեական դատավարության օրենսգրքի 89-րդ և հաջորդող հոդվածի ուժով կարող է պահանջվել ապօրինի կալանքի հետևանքով կրած նյութական և ոչ նյութական վնասի հատուցում: Ձինվորական օրենսգիրքը նման ոչ մի հոդված չի նախատեսում: 1979թ. հունիսի 26-ին, այսինքն պրն Դե Յոնգի և պրն Բալչեթի կալանավորումից հետո, Արդարադատության նախարան ընդունել է եռամսյա գործողության ժամկետով «ժամանակավոր դրույթ», ըստ որի՝ 89-րդ և հաջորդող հոդվածները համանմանությամբ կիրառելի են զինվորական գործերով քրեական դատավարության նկատմամբ:

<sup>1</sup> *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության:*

## 1.5. ՉԵՐԲԱԿԱԼՎԱԾԻՆ ԿԱՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾԻՆ ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱՍՐ ԱՆՁԻՆ ԱՆՅԱՊԱՂ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները հռչակել է որպես բարձրագույն արժեք: Իրավական պետության կառուցման ճանապարհին պետական գործունեության առավել առաջնահերթ ուղղություններից մեկը դարձել է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, պահպանումը և պաշտպանությունը: Նշված խնդիրների ճշգրիտ և անշեղ իրականացումը հատկապես արդիական է քրեական դատավարության ոլորտում, ուր անձի օրինական շահերն առավել զգալի են շոշափվում:

Ներկայումս ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումները կոչված են ապահովել ողջ իրավական համակարգի և, մասնավորապես, քրեական արդարադատության ժողովրդավարացումը, անձի իրավունքների արդյունավետ պահպանությունը: Անվիճելի է, որ իրավական պետության անբաժան հատկանիշներից մեկը օրենքի գերակայությունն է, պետական մարմինների, պաշտոնատար անձանց և անձի փոխհարաբերություններում կամայականության և ապօրինությունների անթույլատրելիությունը, ինչպես նաև հարկադրանքի սահմանափակումը միայն այն դեպքերով, երբ այն իրոք անհրաժեշտ է հասարակության և այլ անձանց շահերի պաշտպանության համար:

Քրեադատավարական ոլորտում հարկադրանքի միջոցներն անհրաժեշտ են հանցագործությունների նախազգուշացման, կանխման և բացահայտման համար: Դրանց կիրառումն էապես սահմանափակում է անձի սահմանադրական իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, կասկածի տակ դնում նրա պա-

ստիվը և արժանապատվությունը, իսկ անհիմն կամ անօրինական լի-  
նելու դեպքում՝ ազդում նաև անձի հետագա ճակատագրի վրա,  
պատճառում բարոյական տառապանքներ:

Քրեական գործերի քննության ընթացքում դատավարական  
հարկադրանքի միջոցները կիրառելիս հատկապես սուր է դրսևոր-  
վում քրեական դատավարության երկու հիմնական հակադրություն-  
ների՝ հանրային և մասնավոր շահերի բախումը: Մի կողմից կաս-  
կածյալի, մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի միջոցների ընտ-  
րությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիր-  
ների լուծման պատշաճ հնարավորության ապահովման անհրա-  
ժեշտությամբ, մյուս կողմից՝ դա հակասում է իր իրավունքների և  
ազատությունների սահմանափակում թույլ չտալու՝ անձի շա-  
հագրգռվածությանը: Նշված տարբերությունները ստիպում են  
փնտրել փոխզիջումային լուծումներ՝ քրեական դատավարությու-  
նում անձի, հասարակության և պետության շահերի հավասա-  
րակշռված պաշտպանություն ապահովելու նպատակով<sup>1</sup>:

Նման լուծումների շարքում իր արդիականությամբ առանձնա-  
նում է մարդու իրավունքներին վերաբերող միջազգային չափանիշ-  
ների ընդունումը, ինչը ենթադրում է նաև քրեական դատավարու-  
թյան օպտիմիզացիային ուղղված նոր մոտեցումներ որոնելու, դա-  
տավարական հարկադրանքի միջոցների կիրառման հետ կապված  
անձի անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու  
անհրաժեշտությունը:

Միջազգային հանրության կողմից մշակված իրավական փաս-  
տաթղթերի հիմքում ընկած սկզբունքների գերակայության ճանա-  
չումն անխուսափելիորեն հանգեցնում է ազգային իրավական հա-  
մակարգերի հետագա զարգացման և կատարելագործման: Քրեա-  
կան արդարադատության ոլորտում դա առաջին հերթին վերաբե-  
րում է անձի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտ-  
պանության չափանիշների տեղայնացմանը:

Այս առումով ՀՀ օրենսդրության և միջազգային իրավական  
համակարգի մերձեցման ուղղությամբ կատարված կարևորագույն

այլ տեղի էին ունենում «կանոնավոր ժամանակահատվածում, ուս-  
տի անկանխատեսելի չէին, դրանք չէին խանգարում զինվորական  
իշխանություններին ապահովել, որ Ձինվորական դատարանը ի վի-  
ճակի լիներ գործի լուծման անցկացնել Կոնվենցիայի պահանջների  
պահպանմանը, անգամ շաբաթ ու կիրակի օրերին»: Նման արձա-  
գանք, անկասկած, կլինի նաև այն դեպքում, երբ որպես արդարա-  
ցում կպատճառաբանվի դատավորների սակավաթիվ լինելը, եթե  
դա հիվանդության հետևանքով ծագած ժամանակավոր խնդիր չէ  
(օրինակ՝ գրիպի համաճարակ): Դա նաև նշանակում է, որ հանգստ-  
յան օրերը, որոնց ընթացքում ձերբակալված անձին պետք է ներ-  
կայացնել դատարան ևս չեն կարող օգտագործվել ժամկետը երկա-  
րացնելու համար: Դատարանը հաճախ վկայակոչել է գործի լսման  
անցկացումը հանգստյան օրերին, որը հստակ մատնանշում է պե-  
տության պատասխանատվությունը՝ ապահովել, որ կալանավոր-  
ված անձի նկատմամբ դատական վերահսկողությունն իրականաց-  
վի նաև այն օրերին, երբ դատարանները, սովորաբար, փակ են լի-  
նում: Այդ փաստարկները հավասարապես կիրառվում են ցանկա-  
ցած ձերբակալման ժամկետի նկատմամբ. այն փաստը, որ դա կա-  
տարվել է դատարաններում աշխատանքային ժամի ավարտից հե-  
տո, ինքնըստինքյան արդարացում չէ, որպեսզի մինչև հաջորդ աշ-  
խատանքային օրը հետաձգվի անձին դատարան ներկայացնելը:  
Նման դեպքերում պետք է դատավորներ լինեն երեկոյան կամ գիշե-  
րը կատարված ձերբակալման նկատմամբ, վերահսկողություն իրա-  
կանացնելու համար: Նույնիսկ բյուջետային նկատառումներով ձեր-  
բակալման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար  
դատավորների սակավաթիվ լինելը արդարացուցիչ չէ:

Պետությունը չի կարող ուշացումն արդարացնել այն փաս-  
տարկով, թե դատավորների կամ դատարանների պակաս կա: Ազ-  
գային իրավասու մարմինները պարտավոր են ապահովել բավա-  
րար ռեսուրսների հատկացում՝ ապահովելու 5-րդ հոդվածով երաշ-  
խավորված արդյունավետ պաշտպանություն:

<sup>1</sup> St' u Mельников В. Ю. Обеспечение прав граждан в ходе досудебного  
производства. М., Юриспруденция 2006, с. 4.

մը, իրավասություն ունենա նաև որոշում կայացնելու գրավով ազատելու վերաբերյալ: Այդուհանդերձ, դա Կոնվենցիայի պահանջը չէ, և ըստ էության, որևէ պահանջ չկա այն մասին, թե ինչու հարցը չի կարող կապված լինել երկու դատական մարմինների համար պահանջվող ժամկետների շրջանակում»: Անհապաղության պահանջը կարող է դատավորներին ստիպել հերթապահել շաբաթ-կիրակի օրերին, կամ գիշերային ժամերին, կամ ազգային տոն օրերին:

**Կոստերն ընդդեմ Նիդեռլանդների (1991թ.)** գործով հայցվորը՝ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող մի զինվոր, ձերբակալվել և կալանավորվել էր համազգեստի և զենքի ստացական չվերցնելու համար: Նա կալանավորվել էր չորեքշաբթի օրը և պահվել կալանքի տակ հինգ օր, որից հետո, միայն հաջորդ երկուշաբթի օրը, նրան տարել էին Ջինվորական դատարան: Պատասխանող պետության կառավարությունն ուշացումը հիմնավորում էր՝ պնդելով, թե զինվորական դատարանի անդամ դատավորները շաբաթ և կիրակի օրերին զբաղված էին եղել երկու տարին մեկ անցկացվող կարևոր զորավարություններով: Դատարանը վճռեց, որ զորավարությունների փաստարկը չէր կարող արդարացնել վարույթի որևիցե ձգձգում: զորավարություններ տեղի էին ունենում պարբերաբար, ուստի դրանք կարելի էր կանխատեսել: Դրանք որևէ կերպ չէին խոչընդոտում, որպեսզի ռազմական իրավասու մարմիններն ապահովեին Ջինվորական դատարանի նիստ բավականաչափ շուտ, որպեսզի կատարվեին Կոնվենցիայի պահանջները, եթե անհրաժեշտ է՝ շաբաթ կամ կիրակի օրը: Անգամ հաշվի առնելով ռազմական կյանքի և արդարադատության պահանջները, հայցվորը դատական մարմնի առջև ներկայացվել էր ավելի ուշ, քան պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «անհապաղության» սկզբունքը:

**Այսպես, Կոստերն ընդդեմ Նիդեռլանդների** գործում արձանագրվել է 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում, չնայած կառավարությունը պնդում էր, որ 5 օր շարունակվող վարությունները խանգարել են ձերբակալված անձին հասցնել զինվորական դատարան: Դատարանը պնդել է, որ զորավարություններն անսպասելի չէին,

քայլերից մեկը պետք է համարել 2005 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունները: Վերջիններս նոր թափ պետք է հաղորդեին երկրում ընթացքող դատաիրավական բարեփոխումներին և անհրաժեշտ պայմաններ ստեղծեին ՀՀ կողմից միջազգայնորեն ստանձնված պարտավորությունների կատարման համար: Այդուհանդերձ, շուրջ երեք տարվա փորձը ցույց տվեց, որ քրեական արդարադատության ոլորտում կատարված սահմանադրական բարեփոխումները և դրանց հաջորդած օրենսդրական զարգացումներն այնքան էլ չեն համապատասխանում ՀՀ միջազգային պարտավորությունների ոգուն և բովանդակությանը:

Առավել մեծ մտահոգության տեղիք է տալիս ՀՀ օրենսդրության մեջ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության ապահովման այն երաշխիքների բացակայությունը, որոնք անրագրված են Եվրոպական Կոնվենցիայում: ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի բովանդակությունն աչքի է ընկնում հենց վերը նշված երաշխիքների բացակայությամբ: Մասնավորապես, Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը սահմանում է, որ քրեական դատավարության շրջանակներում անձը կարող է զրկվել ազատությունից, եթե առկա է իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկած կամ, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար: Ընդ որում, բոլոր երեք հիմքերով կատարված ձերբակալումը կամ կալանավորումը պետք է հետապնդի մեկ որոշակի նպատակ: որպեսզի անձը կանգնի իրավասու մարմնի առջև: Այսպիսի երաշխիքը ներառում է բոլոր այն իրավախախտումները, որոնք թույլ են տալիս ձերբակալման կամ կալանավորման կիրառում: Ընդ որում, ազատությունից զրկված անձը պետք է կանգնի դատարանի առջև անկախ այն հանգամանքից, թե նշված հիմքերից որ մեկին է խոսքը վերաբերում<sup>1</sup>:

Բացի այդ, Կոնվենցիայի նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առաջին մասի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք

<sup>1</sup> Ст'я Европейская конвенция о защите прав человека и основных свобод: Комментарий к статьям 5 и 6, с. 24:

անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք:

Իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակմանը վերաբերող հարցերը ազգային մակարդակով դառնան դատական վերահսկողության օբյեկտ: Առաջին հերթին հենց ազգային դատական մարմինների վրա է դրվում անձի ազատության իրավունքի պահպանումից թույլ տրվող շեղումներն արդարացնող բոլոր հանգամանքները պարզելու պարտականությունը:

Այս առումով ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը միայն բավարարվել է հետևյալ ձևակերպմամբ. «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման»: Ակնհայտ է, որ երկրի հիմնական օրենքն անտեսել է ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձի դատարան տանելու պարտադիր պահանջը, ինչն իր բացասական զարգացումն է ստացել նաև ճյուղային օրենսդրության մեջ:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածը սահմանելով կասկածյալի ձերբակալման կարգը և ամրագրելով այս ձևով ազատությունից զրկված անձի մի շարք երաշխիքներ (անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո երեք ժամվա ընթացքում ձերբակալելու մասին արձանագրություն կազմելը, նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելը, արձանագրության մեջ ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը և նպատակը նշելը, ձերբակալվածի միջնորդություններն ու հայտարարություններն ամրագրելը, ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո 12 ժամվա ընթացքում այդ մասին դատախազին գրավոր իրազեկելը և այլն), այդուհանդերձ, որևէ դրույթ չի պարունակում ձերբակալվածին անհապաղ դատարան տանելու՝ քրեական հետապնդման մարմնի պարտականության մասին: Դեռ ավելին, ձերբակալման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող քրեադատավարական նորմերը

կածյալի ձերբակալումը և կալանավորումը տեղի է ունենում բարդ իրավիճակում (օրինակ, նույն գործով մեծաթիվ այլ կասկածյալներ կան, հրատապ կարգով անհրաժեշտ է ոչնչացումից պաշտպանել որոշակի ապացույցներ, և այլն), կամ երբ կասկածյալը ձերբակալվում է գյուղական վայրում, և անհրաժեշտ է նրան մեքենայով տեղափոխել երկար ճանապարհ, որպեսզի հասցվի մոտակա ոստիկանության բաժին, ձերբակալման պահի և դատավորի առջև ներկայացվելու միջև ընկած ժամկետը կարող է, հիմնավորման առկայության դեպքում, ավելի երկար լինել, քան եթե անձը ձերբակալված լիներ սովորական իրավիճակում: Ուստի, կոնկրետ գործով «անհապաղության» չափը պարզելիս առկա է որոշակի ճկունություն:

Հույժ կարևոր է ընդգծել, որ ինչպես և 5-րդ հոդվածի 1-ի մասի բոլոր ենթակետերի դեպքում, 5-րդ հոդվածի 1-ի մասի «գ» կետի հիմքով կալանքը պետք է լինի օրինական, և իրականացվի օրենքով սահմանված կարգով: Հարկ է վերհիշել, որ «օրինականություն» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունները վերաբերում են ներպետական օրենսդրությանը. ներպետական օրենսդրության պահանջներին չենթարկվելն առաջացնում է 5-րդ հոդվածի 1-ի մասի «գ» կետի խախտում: Ուստի, եթե ներպետական օրենսդրությամբ նախատեսվում է, որ քրեական իրավախախտման կասկակցությամբ կալանավորված անձը պետք է որոշակի ժամկետում, օրինակ, 24 ժամում ներկայացվի դատավորի առջև, ապա այդ դրույթի կատարումը չապահովելը հանդիսանում է 5-րդ հոդվածի 1-ի մասի «գ» կետի խախտում, չնայած այն փաստին, որ Կոնվենցիայով թույլատրվում է ավելի երկար ժամկետ՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից:

Ինչ վերաբերում է ներպետական դատարանի դիրքորոշմանը կալանքի օրինականության առնչությամբ, նշենք, որ **Սաքքայն ընդդեմ Միացյալ Թագավորության (2006թ.)** գործով Դատարանը նշել է, որ. «Որպեսզի երաշխավորված իրավունքը լինի պրակտիկ և արդյունավետ, այլ ոչ թե տեսական կամ պատրանքային, ձգձգումները նվազեցնելու համար ոչ միայն գործնական է, այլ նաև ցանկալի է, որպեսզի դատական մարմինը, որն իրականացնում է կալանավորման հիմքի օրինականության և առկայության առաջին վերանայու-

**Աքսոյն ընդդէմ Թուրքիայի (1996թ.)** գործով հայցվորը ձերբակալվել էր և կալանավորվել ահաբեկչական իրավախախտումների մեջ կասկածանքով: Նա կալանավորվել էր 14 օր, որից հետո միայն ազատ էր արձակվել, սակայն նրան այդպես էլ մեղադրանք չէր ներկայացվել: Այս ընթացքում նա խոշտանգվել էր: Կառավարությունը պնդում էր, որ քանի որ պետությունը սահմանված կարգով գնացել է 5-րդ հոդվածի դրույթներից շեղման, այդ հոդվածի խախտում չի կարող արձանագրվել: Այնուհանդերձ, Դատարանը վճռեց, որ Դատարանն իրավասու է պարզել, թե արդյոք պետությունները գերազանցել են «ճգնաժամային վիճակի պահանջներով խստորեն թելադրված չափը»: Այս դեպքում, համաձայնվելով, որ հարավ-արևելյան Թուրքիայում գոյություն ունեւր արտակարգ իրավիճակ, և որ ահաբեկչական իրավախախտումների հետաքննության առնչությամբ իշխանությունների առջև առանձնահատուկ խնդիրներ էին ծառանում, Դատարանը չընդունեց այն փաստարկը, թե անհրաժեշտ էր եղել կասկածյալին պահել տասնչորս օր առանց դատական որևէ միջամտության: Դատարանը նկատեց, որ այդ ժամանակահատվածը չափազանց երկար էր եղել, և հայցվորը մնացել էր խոցելի ոչ միայն իր ազատության իրավունքի նկատմամբ կամայական միջամտության, այլ նաև խոշտանգումների նկատմամբ: Ավելին, պետությունը չկարողացավ Դատարանին ներկայացնել որևէ մանրամասն հիմնավորում, թե ինչու էր հարավ-արևելյան Թուրքիայում ահաբեկչության դեմ պայքարը գործնականում անհնար դարձրել դատական միջամտությունը: Դատարանը նաև վճռեց, որ հայցվորը չէր ունեցել իրավական պաշտպանության բավարար երաշխիքներից օգտվելու հնարավորություն, և որ, այդ պատճառով, նա մնացել էր բացառապես իրեն կալանավորողների գոությունից կախված (տես նաև՝ Դեմիրը և ուրիշներն ընդդէմ Թուրքիայի (1993թ.) գործը):

Չնայած որ հնարավոր չէ մեջբերել որևէ նախադեպային որոշում, որով կսահմանվեր ձերբակալման պահից մինչև դատարանի կամ դատական այլ պաշտոնյայի մոտ տարվելու պահն ընկած կալանքի առավելագույն ժամանակահատվածը, Դատարանը պրակտիկան միշտ եղել է այնպիսին, որ յուրաքանչյուր դեպքում քննվել են գործի հանգամանքների առանձնահատկությունները: Երբ կաս-

նույնիսկ չեն սահմանում անձի՝ ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու կոնկրետ իրավունքը և այդ բողոքը դատարանի կողմից քննելու կարգը: Այս պարագայում անձը ստիպված է ղեկավարվել միայն ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի կանոններով, որոնք ձերբակալման կարճատևության պայմաններում պարզապես անարդյունավետ են:

Վիճակը, մեղմ ասած, բարվոք չէ նաև կալանավորման, որպես խափանման միջոցի, ընտրության ընթացակարգի դեպքում: Թեև ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածն ընդհանուր առմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննման մրցակցային կարգ է նախատեսել (կողմերի առկայություն, գործի քննություն դատական նիստում և այլն), սակայն դրա առանձին դրույթներ թույլ են տալիս շրջանցել Եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն դրույթին, համաձայն որի՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը:

Նման ձևակերպումը քրեական հետապնդման մարմնին, ըստ էության, ազատում է մեղադրյալին դատարան բերելու պարտականությունից, ինչը կասկածի տակ է դնում ոչ միայն այս ընթացակարգի մրցակցային բնույթը, այլև կալանավորման օրինականության և հիմնավորվածության ստուգման օբյեկտիվությունը: Բացի այդ, առնվազն անտրամաբանական է քննել և լուծել անձին ազատությունից զրկելու հարցը, երբ դատարանը հնարավորություն չունի տեսնելու և լսելու այդ անձին:

Ձարգացնելով այս բացասական միտումը և ուղղակի հակասության մեջ մտնելով պետության միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների հետ, վերը նշված հոդվածը սահմանում է, որ «հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»: Նման իրավական կարգավորման պայմաններում անձը ոչ միայն չի կանգնում դատարանի առջև և զրկվում է «լսված լինելու» իրավունքից, այլև հնարավորություն չի ստանում նույնիսկ ի դեմս իր պաշտպանի ներկայացված լինելու այդ ընթացակարգում: Բանն այն է, որ պաշտպան ունենալու կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքը ծագում է ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից (ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 2-րդ մաս), իսկ հետախուզման մեջ, որպես կանոն, գտնվում է այն անձը, ում նկատմամբ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն մեղադրանք չի առաջադրվել և խափանման միջոց էլ դեռ չի ընտրվել:

Այնինչ Ստրասբուրգյան նախադեպային իրավունքը պահանջում է, որ դատավարությունն իր բնույթով լինի մրցակցային և կողմերի միջև մշտապես ապահովի զենքերի հավասարություն: Ազատությունից զրկված անձը պետք է իրավունք ունենա ներկա գտնվել և հայտնել իր փաստարկները, իսկ երբ առկա են բարդ իրավաբանական խնդիրներ՝ նաև ներկայացված լինի փաստաբանով: Բացի այդ, ազատությունից զրկված անձը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու պետական մարմինների տրամադրության տակ գտնվող գործի համապատասխան նյութերին: Ձեռքերի հավասարությունը երաշխավորելու նպատակով կալանավորված անձի իրավախորհրդատուն պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու քննչական գործի մեջ գտնվող այն փաստաթղթերին, որոնք որոշակի կարևորություն ունեն կալանքի օրինականությունը հաջողությամբ վիճարկելու տեսակետից: Այլ կերպ ասած, կալանավորված անձը կամ նրա իրավախորհրդատուն պետք է ստանան այն նյութերի կրկնօրինակները, որոնց վրա հենվում են պետական

**Բրոզենը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (1988թ.)** գործով հայցվորները ձերբակալվել էին և կալանավորվել ահաբեկչական հանցագործությունների առնչությամբ: Նրանցից ոչ մեկին քրեական մեղադրանք չէր ներկայացվել, և նրանք բոլորն ազատ էին արձակվել առնվազն 4 օր 6 ժամ, և առավելագույնը 6 օր 16 ժամ անց: Դատարանն ի գիտություն ընդունեց ահաբեկչության դեմ պայքարում առկա առանձնահատուկ դժվարությունները: Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ 5-րդ հոդվածի ընդհանուր նպատակն է կանխել կամայական կալանքը, նույնիսկ չորս օր և վեց ժամ ժամկետը գերազանցել էր «անհապաղության» հասկացությունից բխող ժամկետը: Դատարանը եզրակացրեց, որ նրանք անհապաղ կերպով ազատ չէին արձակվել, և որ, այդ պատճառով, տեղի էր ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

Ուստի, ձերբակալմանը հաջորդող կալանքի ժամկետների առնչությամբ որոշակի համոզվածությամբ կարելի է ասել միայն այն, որ ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում 4 օր և 6 ժամ ժամկետը նախքան դատավորի մոտ տարվելը կամ ազատ արձակվելը չի համապատասխանում անհապաղության սկզբունքին: Այլ գործերով (ահաբեկչության հետ առնչվող հանցագործությունների հետ կապ չունեցող) հնգօրյա ժամկետը (տես՝ **Քոստերն ընդդեմ Նիդերլանդների (1991թ.)** գործը) և վեցօրյա ժամկետը (տես՝ **Դե Յոնգը, Բալյետը և Վան դեն Բրինքն ընդդեմ Նիդերլանդների (1984թ.)** գործը) համարվել են 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված անհապաղության պահանջի խախտում: Ահաբեկչությանն առնչվող մի շարք գործերով պատասխանող պետությունը 15-րդ հոդվածի համաձայն արտակարգ իրավիճակ է հայտարարել՝ շեղվելով (դեռոգացիա կատարելով) 5-րդ հոդվածի ընձեռած պաշտպանությունից: Նույնիսկ նման դեպքերում Դատարանն առանձին գործերով պահանջում է փաստերով հիմնավորել կիրառված կալանքի՝ նորմայից ավելի երկար ժամկետները: Այն դեպքերում, երբ պատասխանող պետությունը չի կարողացել ապացուցել, որ անհրաժեշտ է եղել ժամկետները երկարաձգել, միևնույն է, կարող է արձանագրվել 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:<sup>1</sup>

<sup>1</sup> Աքսոյն ընդդեմ Թուրքիայի և Դեմիրը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի:

գործը): 5(3) հողվածով պահանջվում է ոչ միայն ձերբակալումից անմիջապես հետո կալանքի հիմքերի անհապաղ քննություն, այլ նաև այդ հիմքերի ինքնաբերական վերանայում որոշակի պարբերականությամբ:<sup>1</sup> Այնուհանդերձ, Դատարանը հստակորեն չի նշել, թե ինչ հաճախականությամբ պետք է տեղի ունենան նշված ինքնաբերական վերանայումները: Հաճախ, 5-րդ հողվածի 3-րդ մասի շրջանակներում դատաքննության ժամանակ քննության են առնվում նաև 5-րդ հողվածի 4-րդ մասի հիման վրա կալանքի օրինականության վիճարկման հարցերը:

Այս իրավունքի առաջացումը կախված չէ անհատից: Դա պարտավորություն է, որը պետությունը պարտավոր է կատարել: Հետևաբար, այդ ընթացակարգը պետք է լինի ինքնաբերական:<sup>2</sup> Կալանքի հարցը վերանայելիս իշխանություններն են պարտավոր ապացուցելու, որ կալանքը հիմնավորող բավարար հիմքեր կան, այլապես կալանավորվածը պետք է ազատ արձակվի գրավի դիմաց:

### Անհապաղության պահանջը

Դատարանը խուսափում է այս առնչությամբ առավելագույն ժամկետներ սահմանելուց: Դատարանը նշել է, որ անհապաղության հասկացությունն ունի որոշակի ճկունություն, չնայած որ այդ ճկունությունը սահմանափակ է: Մինչ օրս, Դատարանը նշել է, որ որոշակի ժամկետներ գերազանցել են անհապաղության հասկացության սահմանն ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում: Սովորական քրեական իրավունքի կապակցությամբ Դատարանը դեռևս նմանօրինակ հայտարարություններով հանդես չի եկել: Քրեական իրավախախտման կապակցությամբ ձերբակալված անձին դատավորի կամ դատական այլ պաշտոնյային փաստացի ներկայացնելը բացարձակապես պարտադիր չէ, եթե նա անհապաղ ազատ է արձակվում:

<sup>1</sup> Տե՛ս *Նյումայստերն ընդդեմ Ավստրիայի*, 27-ը հունիսի, 1968թ., կետ 4:

<sup>2</sup> *Նիդերլանդական ընդդեմ Լեհաստանի (2000թ.)*, կետ 50:

մարմինները տվյալ անձի կալանքը երկարաձգելու փորձեր կատարելիս<sup>1</sup>: Նույն նկատառումներից ելնելով, կալանքի օրինականությունը վիճարկող վարույթներում ապացուցելու բեռը (պարտականությունը) կրում են պետական մարմինները:

### Իրավունքի բնույթը

Այս իրավունքի ձևակերպումը, ըստ երևույթին, հուշում է, որ ներպետական իրավասու մարմինները կանգնած են ընտրության առջև. կամ ողջամիտ ժամկետում դատաքննության ապահովում, կամ ազատ արձակում: Այնուհանդերձ, իրականում այդպես չէ, ինչպես կարելի է տեսնել 6(1) հողվածի կապակցությամբ, որով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում (այսինքն, անկախ կալանքի տակ գտնվելու կամ չգտնվելու հանգամանքից) դատաքննության իրավունք: Ընդամին, այս դրույթի նպատակն է երաշխավորել, որպեսզի անձը ողջամիտ համարվող ժամկետից ավելի երկար չպահվի մինչդատական կալանքի տակ:<sup>2</sup> 5(3) հողվածը հասկանալու համար պետք է նախևառաջ ընկալել, որ այն անձի ֆիզիկական ազատության երաշխիքի մի մասն է կազմում: Ինչպես Դատարանը նշել է *Նյումայստերն ընդդեմ Ավստրիայի* (1968թ.) գործով, 5(3) հողվածի նպատակն է պահանջել, որպեսզի սկսած այն պահից, երբ կալանքը դադարի ողջամիտ լինելուց, մեղադրյալը պայմանականորեն ազատ արձակվի:<sup>3</sup> Արդարացի դատաքննության իրավունքի հարցը ենթակա է քննության 6-րդ հողվածի շրջանակներում: Ազգային իրավասու մարմինները 5(3) հողվածի շրջանակներում երկու խնդիր ունեն. առաջին, նրանք պարտավոր են ապահովել, որպեսզի մինչդատական ժամանակահատվածի ցանկացած փուլում կալանքը կոնկրետ գործով անհրաժեշտ լինի, և երկրորդ, ապահովել, որպեսզի հետաքննությունն անցկացվի պատշաճ շրջահայացությամբ՝ այնպես, որ մեղադրյալը պահանջվածից ավելի երկար ժամանակ չանցկացնի մինչդատական

<sup>1</sup> Լամին ընդդեմ Բելգիայի:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի (1968թ.), 4-րդ և 5-րդ կետեր:

<sup>3</sup> *Նյումայստերն ընդդեմ Ավստրիայի*, կետ 4:

կալանքի տակ: Դատարանը նշել է, որ կալանքի տակ գտնվող մեղադրյալն իրավունք ունի, որպեսզի իր գործը ստանա առաջնայնություն և ընթանա առանձնակի արագությամբ:<sup>1</sup>

**Սասնավորապես, Նեյմաստերն ընդդեմ Ավստրիայի** գործով վճռում, ըստ որի ազգային մարմինները գրավի չափը հաշվարկել էին՝ ելնելով դիմողի պատճառած վնասից, Դատարանը վճռել էր, որ դա հակասում է 5-րդ հոդվածի 3-րդ կետին՝ հավելելով, որ գրավի միջոցով նախատեսված երաշխիքը պետք է ապահովի մեղադրյալի ներկայությունը դատական նիստին, այլ ոչ թե նրա պատճառած վնասի փոխհատուցումը: Կալանքից ազատ արձակելու փոխարեն պահանջվող երաշխիքը մեղադրյալի վրա չպետք է ավելի ծանր բեռ դնի, քան դա պահանջում է ապահովության ողջամիտ աստիճանը: Մեղադրյալի դատարան ներկայանալու համար նախատեսված երաշխիքի չափն ու բնույթը պետք է կապված լինեն նախնական կալանքը հիմնավորող պատճառների հետ, ինչպես նաև տրամաբանորեն բխեն դրանցից: Այդ նպատակով կարող է պահանջվել ֆինանսական երաշխիք, գումար, որը պետք է հաշվարկվի՝ նկատի ունենալով մեղադրյալի տվյալները, ունեցվածքի չափը և կապը երաշխիք ներկայացնող անձի հետ: Մեղադրյալը տեղեկություն պետք է հաղորդի իր ունեցվածքի մասին, ազգային մարմինները մամուրակրկիտ պետք է զննահատեն այդ տեղեկատվությունը՝ երաշխիքի պատշաճ գումարի չափը հաշվարկելու համար: Եթե նախատեսված գումարն ավելին չի, քան անհրաժեշտ է «մեղադրյալի թաքնվելու յուրաքանչյուր ցանկությունը զսպող միջոցը» ապահովելու համար, երաշխիքով ազատ արձակվելու իրավունքի խախտում կլինի: Դատարանում մեղադրյալի ներկայությունն ապահովվելու համար կարող են պահանջվել նաև ոչ դրամական երաշխիքներ (օրինակ՝ հանձնել անձնագիրը):

### **Իրավունքի ինքնաբերական բնույթը**

5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի շրջանակներում քրեական

<sup>1</sup> Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի, կետ 17:

վարույթի առնչությամբ կալանավորվածներն այս դրույթի շնորհիվ ստանում են հատուկ երաշխիք, մասնավորապես՝ ինքնաբերաբար դատաքննությունից օգտվելու իրավունք, որը կապահովագրի նրանց կամայական կալանավորումից, և կապահովի, որպեսզի մինչդատական կալանքի ժամկետը սահմանափակվի նվազագույնով: 5-րդ հոդվածի 3-րդ մասի հոդվածի նպատակը ձևակերպվել է **Դյունհոֆը և Դյույֆն ընդդեմ Նիդեռլանդների (1984թ.)** գործի դատավճռում, որտեղ Դատարանը նշել է, որ «այդ դրույթի նպատակն է ապահովել ոստիկանությունում կալանքի կամ վարչական կալանքի նկատմամբ անհապաղ և ինքնաբերական դատական հսկողություն», և որ դատավորը կամ դատական պաշտոնյան «պարտավոր է լսել կալանավորվածի փաստարկները և հետո միայն կայացնել համապատասխան որոշում»: <sup>1</sup> Այս ենթակետից բխում է առաջին ձեռքակալումից և կալանավորումից հետո «անհապաղ» կերպով գործի քննություն իրականացնելու պարտավորությունը, ինչպես նաև մինչդատական կալանքի ընթացքում կալանքի օրինականությունը պարբերաբար վերանայելու պարտավորությունը, ինչպես կներկայացվի ստորև: <sup>2</sup> Յուրաքանչյուր անգամ վերանայելիս, դատավորը կամ օրենքով լիազորված այլ պաշտոնյան պարտավոր է հաշվի առնել նախքան դատը անձին գրավով ազատ արձակելու դեմ խոսող բոլոր գործոնները: Դատարանի մոտեցումն այսպիսին է. անձը, ում ներկայացվել է քրեական մեղադրանք, պետք է բոլոր դեպքերում ազատ արձակվի, բացառությամբ, եթե գոյություն ունեն վերաբերելի և բավարար պատճառներ, որոնք հիմնավորում են մինչդատական փուլում նրա կալանքը շարունակելը: Կալանքը մինչև դատի օրը շարունակելու հարցը պետք է շարունակաբար քննության առնել: 5-րդ հոդվածի 3-րդ մասը, համապատասխանաբար կխախտվի ցանկացած դեպքում, երբ ներպետական օրենքը մեխանիկորեն բացառում է գրավի իրավունքը որոշակի կատեգորիայի մեղադրյալների նկատմամբ, առանց հատուկ հանգամանքները դատական կարգով քննելու (տես, օրինակ, **Լիժկովն ընդդեմ Բուլղարիայի (2001թ.)** գործը, և **Բոիչենկոն ընդդեմ Բուլղարիայի (2006թ.)**

<sup>1</sup> Դյունհոֆը և Դյույֆն ընդդեմ Նիդեռլանդների, կետ 36:

<sup>2</sup> Տես ստորև՝ էջ ... **Գրավը մերժելու/կալանքը երկարաձգելու հիմքերը:**



մին ընդդեմ Բելգիայի գործով նույնպես Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, երբ պետության շահերը ներկայացնող փաստաբանը գործի նախապատրաստման ընթացքում հնարավորություն է ունեցել օգտվելու պաշտոնական փաստաթղթերից, մինչդեռ ազատությունից զրկված անձը նման հնարավորությունից զրկված է եղել: Կողմերի հավաստությունը նաև նշանակում է, որ ազատությունից զրկված անձը բավարար ժամանակ և հնարավորություն պետք է ունենա դատարանում իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Հակառակ պարագայում իրավական պաշտպանության միջոցները կլիներ վերացական ոչ թե ռեալ: Միևնույն ժամանակ ազատությունից զրկված անձը հնարավորություն պետք է ունենա օգտվելու այն բոլոր հնարավորություններից, որոնք անհրաժեշտ են իր պաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ հնարավորությունները ենթադրում են ինչպես գործի նյութերին ծանաթանալու՝ ազատությունից զրկված անձի իրավունքը, այնպես էլ՝ կոնֆիդենցիալ, առանց քանակի և տևողության սահմանափակման իր պաշտպանին տեսակցելու իրավունքը:

*Նիդրալանդական ընդդեմ Լեհաստանի* գործով որոշմամբ դատարանն արձանագրել է, որ այդ ժամանակ գործող օրենքը ազատությունից զրկված անձին և նրա պաշտպանին իրավունք չէր տալիս ներկա գտնվել դատական նիստին և չէր պահանջում վերջիններիս տեղյակ պահել սպասվող դատական նիստի մասին: Արդյունքում՝ դիմողը զրկված է եղել դատախազի փաստարկների դեմ դիտողություններ ներկայացնելու հնարավորությունից: Ավելին, այն դեպքում, երբ դիմողը կամ նրա պաշտպանը հնարավորություն չեն ունեցել մասնակցելու այն դատական նիստին, որի ժամանակ քննվել է իրեն ազատությունից զրկելու օրինականության հարցը, այդ պահին գործող օրենքով դատախազին նման իրավունք վերապահված է եղել: Այդ պատճառով դատարանը այս գործով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում է արձանագրել:

ՀՀ քր. դատ. օր-ի համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ազատությունից զրկելու օրինականության ստու-

Հանձնաժողովում Կառավարությունը հայտարարել է, որ անկախ դրանից, Կոնվենցիայի դրույթներին ենթադրաբար հակասող հարցերի վերաբերյալ միշտ էլ կարելի է զինվորական իշխանությունների դեմ բողոք ներկայացնել Քաղաքացիական օրենսգրքի 1401-րդ հոդվածի հիման վրա. նշված հոդվածը նախատեսում է. «Ցանկացած ապօրինի գործողություն (onrechtmatige daad), որի հետևանքով վնաս է հասցվել այլ անձի, պարտավորեցնում է այն անձին, որի մեղքով վնաս է հասցվել (door wiens schuld), վճարել հատուցում»:

Կառավարությունը նաև բացատրել է, որ 1401 հոդվածը կողմին պարզապես փոխհատուցում պահանջելու հնարավորություն չի տալիս. ըստ ձևավորված նախադեպային իրավունքի՝ ապօրինի և շարունակվող գործողության զոհը կարող է, 1401-րդ հոդվածի հիման վրա, դիմել, որպեսզի քաղաքացիական գործերով դատարանն ըստ էության որոշում կայացնի: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում անձը կարող է դիմել Մարզային դատարանի նախագահին, որպեսզի նա, արագացված դատաքննության կարգով, անմիջապես ժամանակավոր միջոց ձեռնարկի (Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 289-րդ և հաջորդող հոդվածներ): Ենթադրյալ ապօրինի կալանքի դեպքում, արագացված դատաքննության ընթացքում, 1401-րդ հոդվածի ուժով դատարանը կարող է կարգադրել անհապաղ ազատ արձակում:

Այնուամենայնիվ, մինչ օրս չի գրանցվել մի դեպք, երբ նախնական կալանքի տակ պահվող զինծառայողը հիմնվի 1401-րդ հոդվածի վրա՝ կա՛մ ներկայացնելով ֆինանսական հատուցման պահանջ, կա՛մ արագացված դատաքննության հիման վրա անհապաղ ազատ արձակման խնդրանք ներկայացնի:

**Շայսերն ընդդեմ Շվեյցարիայի (1979թ.)** գործով Դատարանը վճռեց, որ դատավարական պահանջների համաձայն դատավորը կամ «պաշտոնատար անձը» պարտավոր է անձամբ լսել իր մոտ բերվող անհատին, այսինքն՝ կասկածյալը պետք է անձամբ տարվի դատարան: «Օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձ» հասկացությունից բխում են նյութական իրավունքի պահանջներ, որոնց համաձայն նա պարտավոր է ուսումնասիրել կալանքի օգտին կամ

դրա դեմ խոսող հանգամանքները, օրենքով սահմանված չափանիշների հիման վրա որոշել, թե արդյոք կան կալանքը հիմնավորող պատճառներ, և վերջիններիս բացակայության դեպքում կարգադրել, որպեսզի կալանավորվածն ազատ արձակվի:

**Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (1978թ.)** միջպետական գործով ահաբեկչության դեմ պայքարի օրենքների հիման վրա բերման էին ենթարկվել մի շարք անհատներ: Տուժողներից մի քանիսը տարվել էին մեկ դատավորից և երկու ատենակալներից կազմված կոմիտեների մոտ: Վերջիններս իրավասու էին խորհուրդ տալ, որպեսզի անձն ազատ արձակվի, սակայն իրավասու չէին կարգադրել, որպեսզի անձն ազատ արձակվի: Դատարանը վճռեց, որ քանի որ այդ կոմիտեներն անձանց ազատ արձակում կարգադրելու իրավասություն չունեին, դրանք չէին համապատասխանում 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Որոշ իրավական համակարգերում մինչդատական կալանքի մասին որոշումը կայացնում է դատախազը: Անցյալում, Դատարանը բավարարվում էր, եթե հնարավոր էր երաշխավորել անկախության և անկողմնակալության պահանջների կատարումը, և դատախազը կարող էր համարվել «օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձ»:<sup>1</sup> Այնուհանդերձ, 1990 թվականից ի վեր Դատարանի ընդհանուր միտումն այն է, որ համարվում է, թե դատախազը չի կարող պահանջվող անկախությունը և անկողմնակալությունն ունենալ: Շատ իրավիճակներում դատախազի որոշումը կարող է ներազդվել գործադիրի կողմից, կամ՝ դատախազի որոշումները ենթակա են վերանայման վերադաս դատախազի կողմից, կամ դատախազն իրավասու է դատավարության հետագա փուլերում մեղադրանքը պաշտպանող մարմնի անունից միջամտել գործին: Նման պարագայում դատախազն օժտված չէ անկախության և անկողմնակալության անհրաժեշտ երաշխիքներով:

**Բրինկատն ընդդեմ Իտալիայի (1992թ.)** գործով հայցվորը ձերբակալվել էր և կալանավորվել առևանգմանը մասնակից լինելու կասկածանքով: Պետական դատախազը, անցկացնելով լսում, ո-

անձին հնարավորություն վերապահել հակազդելու ազատությունից զրկման օրինականության վերաբերյալ դատախազի հիմնավորումներին, իսկ անձին դատարան ներկայանալու հնարավորությունը դրա ապահովման կարևոր երաշխիք է:

Ակնհայտ է, որ անձին ազատությունից զրկելու վերաբերյալ բողոքի կամ միջնորդության նախապատրաստման ժամանակ կարող են արժարծվել լուրջ իրավաբանական նշանակություն ունեցող խնդիրներ, որոնք հասարակության անդամների մեծամասնությանը կարող են հասու չլինել: Սա նշանակում է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իր ազատության օրինականության ստուգման նպատակով ունի պաշտպան ունենալու իրավունք: Եթե անձը չի տիրապետում պաշտպան ունենալու համար բավարար միջոցների, պետությունը իր վրա է վերցնում պաշտպանին վարձատրելու ծախսերը:

ՀՀ քր. դատ. օր-ը երաշխավորում է ինչպես մեղադրյալի, այնպես էլ նրա պաշտպանի մասնակցությունը վերաքննիչ դատարանում կալանավորման օրինականության ստուգմանը: Այսպես, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոք ներկայացնելու իրավունք ունեն ինչպես մեղադրյալը, այնպես էլ նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցչը (հոդված 287):

Միևնույն ժամանակ ազատազրկման օրինականության քննությունը պետք է համապատասխանի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստության Եվրոպական դատարանի կողմից ձևակերպված մրցակցության և կողմերի հավասարության պահանջներին: Այսինքն, ազատությունից զրկված անձը պետք է ծանոթ լինի իրեն ազատությունից զրկելու իրավական հիմքերին, իրավունք ունենա ծանոթանալու դրա հիմքում ընկած ապացույցներին, ինչպես նաև՝ բավարար ժամանակ և հնարավորություն՝ դրա դեմ հակափաստարկներ ներկայացնելու համար: *Թոտն ընդդեմ Ավստրալի* գործով դատարանը լսել էր մեղադրանքի կողմին ազատությունից զրկված մեղադրյալի բացակայությամբ: Մեկ այլ՝ Լա-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, *Շայգերն ընդդեմ Շվեյցարիայի*:

Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում, անձին վերապահվող իրավունքը պետք է լինի իրական և ոչ պատրանքային:

Կոնվենցիոնալ այս պահանջներն իրացված են ՀՀ քր. դատ. օր. 288-րդ հոդվածում: Նման եզրահանգման կարելի է հանգել անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման վերանայման արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվող վերլուծության արդյունքում: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 288-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.

2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.

3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին»:

Այսպիսով, ի թիվս այլ որոշումների վերաքննիչ դատարանն իրավասու է որոշում կայացնել կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի նախորդ մասերի վերլուծության ժամանակ իրավացիորեն նշվել է, որ դատական վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է ինչպես ազատությունից զրկելու օրինականության ստուգման, այնպես էլ ազատությունից զրկելու ընթացքում թույլ տրված խախտումների ստուգմամբ: Դա, մասնավորապես արտահայտվում է նրանում, որ ազատությունից զրկված անձն անհապաղ տարվում է դատավորի մոտ՝ ազատությունից զրկելու օրինականության ստուգման նպատակով: Այսպես՝ *Կանյանիսն ընդդեմ Հունաստանի* գործով խարդախության համար մեղադրվող անձին հնարավորություն չի տրվել կանգնելու դատարանի առաջ, թեև նման հնարավորության նախատեսված է եղել քրեական դատավարության օրենսգրքով: Եվրոպական դատարանը սա դիտել է որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում և նշել, որ անչափ կարևոր է ազատությունից զրկված

րում իրավաբանի միջոցով ներկայացված էր եղել հայցվորը, որոշել էր երկարաձգել նրա կալանքը: Այնուհետև, պետական դատախազն անցկացրել էր գործի նախաքննությունը, որից հետո հայտարարել, որ ինքը գործի նկատմամբ տարածքային ընդդատություն չունի: Նա գործն ուղարկել էր այն դատախազին, ով տարածքային առումով իրավասու էր քննելու տվյալ գործը: Գործադիրից դատախազի անկախության հարցը չէր վիճարկվում: Սակայն, հարց ծագեց դատախազի անկողմնակալության կապակցությամբ: Դատարանը վճռեց, որ դատախազը չէր կարող նախաքննության փուլում անկողմնակալ համարվել, քանի որ նա ավելի ուշ դառնալու էր գործի մասնակից կողմ: Դատարանը նաև վճռեց, որ կալանքի որոշում կայացնելու պահին արտաքննապես թվացող օբյեկտիվությունն իսկապես առկա էր. սակայն, եթե ավելի ուշ պարզ է դառնում, որ «դատական իշխանություն իրականացնելու համար օրենքով լիազորված պաշտանատար անձը» կարող է ավելի ուշ՝ դատավարության հետագա փուլերում միջամտել որպես քրեական մեղադրանքը պաշտպանող մարմնի ներկայացուցիչ, ապա գոյություն ունի ռիսկ, որ նրա անկողմնակալության մասին կարող են կասկածներ ծագել, որոնք օբյեկտիվորեն հիմնավորված են համարվում: Այն փաստը, որ դատախազին ավելի ուշ հայտնի էր դարձել, որ ինքը գործի նկատմամբ տարածքային ընդդատություն չունի, և որ այդ պատճառով իրավասու չէ քրեական հետապնդում իրականացնել, հետագայում համարվել էր ոչ նյութական հանգամանք: Արձանագրվեց 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

**Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի (2000թ.)** գործով հայցվորի կալանքի կարգադրությունը տվել էր Շրջանային դատախազը: Հայցվորը մի քանի անգամ բողոքարկել էր, սակայն՝ ապարդյուն, և նրա կալանքը շարունակաբար երկարաձգվել էր Շրջանային դատախազի կողմից: Դատարանը վճռեց, որ Շրջանային դատախազը ենթակա էր Գլխավոր դատախազին, որն, իր հերթին, Արդարադատության նախարարի գործառույթներն էր իրականացնում: Այլ կերպ ասած, դատախազը ենթակա էր գործադիր ճյուղին պատկանող իրավասու մարմնի վերահսկողությանը: Ավելին, Դատարանը վճռեց, որ օրենքով նախատեսվում է, որ դատախազները կատարում են

հետաքննության և քրեական հետապնդման գործառնություններ, ուստի դատախազը պետք է համարվեր հայցվորի դեմ հետապնդվող գործի դատավարության մասնակից: Ձուտ այն փաստը, որ օրենքով նաև նախատեսվում էր, որ դատախազները հանդես են գալիս որպես «պետական շահի պաշտպաններ», նրանց չէր վերապահում «դատական իշխանություն իրականացնելու համար օրենքով լիազորված պաշտոնատար անձի» կարգավիճակ: Դատարանը նաև նկատեց, որ դատախազը հայցվորին կալանավորելու մասին որոշում կայացնելուց առաջ հարցաքննել էր նրան: Տվյալ իրավիճակում, դատախազը չունեի այն անկախությունը, որն անհրաժեշտ էր «դատական իշխանություն իրականացնելու համար օրենքով լիազորված պաշտոնատար անձ» լինելու համար:

**Մասնավորապես, Նիդբալան ընդդեմ Լեհաստանի** գործով Դատարանը վճռել է, որ չնայած պարտադիր չէ, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներով զուգակցվի, այնուամենայնիվ, այն պետք է «ունենա դատական բնույթ և ապահովի ազատությունից զրկման քննարկվող տեսակին համապատասխան երաշխիքներ»: Եվրոդատարանը հավելել է նաև, որ «հատկապես ձերբակալման որոշումը բողոքարկելու վերաբերյալ դատաքննության ընթացքում պետք է ապահովվի «կողմերի դատախազի և ձերբակալվածի» հավասարությունը»: Նիդբալայի գործով վճռում Դատարանն արձանագրել է, որ այն ժամանակ գործող օրենքը՝ դիմողին կամ նրա փաստաբանին իրավունք չէր տալիս մասնակցելու դատական նիստին, և չէր պահանջում, որ նրանց տեղեկացնեն կալանավորման վերաբերյալ դատախազի միջնորդության մասին: Արդյունքում, դիմողը հնարավորություն չէր ունենում առարկել դատախազի ներկայացրած փաստարկների դեմ: Ավելին, այն դեպքում, երբ դիմողը կամ նրա փաստաբանն իրավունք չունեին մասնակցելու դատական նիստին, որի ընթացքում քննարկվում էր կալանավորման օրինականության հարցը, ըստ այն ժամանակ գործող օրենքի՝ դա թույլատրվում էր միայն դատախազին: Այդ իսկ պատճառով, Դատարանն արձանագրել է 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

չունի»: *Վարբանովն ընդդեմ Բուլղարիայի* գործով դիմողի ձերբակալման թույլտվություն տվել էր այն դատախազը, որը հետագայում դատարանում մեղադրանք էր պաշտպանել: Այդ թույլտվությունը կարող էր բողոքարկվել միայն վերադաս դատախազին: Այս գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ դիմողը ըստ էության զրկված է եղել ձերբակալման օրինականությունը բողոքարկելու հնարավորությունից, ինչը հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին: Այս առումով, ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով ՀՀ քր. դատ. օր. 290-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությանը, նշել է, որ մինչդեռ տական վարույթում, վարույթն իրականացնող մարմնի գործողություններն ու որոշումները կարող են բողոքարկվել դատարան անկախ նրանից՝ բողոքարկվել են արդյոք նախապես դատախազին, թե՛ ոչ:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «դատարան» հասկացության վրա տարածվում են Եվրոպական դատարանի նախադեպերով դատարանի անկախությանն ու անկողմնակալությանը ներկայացվող պահանջները: Կասկածից վեր է, որ անկախության պահանջն իրագործված չի համարվի, եթե վերանայման իրավասություն տրվի այնպիսի սուբյեկտի կամ մարմնի, որն ուղղակի կամ անուղղակի կախվածություն ունենա գործադիրից:

Ամեն դեպքում, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքում ընած պահանջն այն է, որ դատարանը պետք է իրավասու լինի ազատելու ապօրինի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի: Միայն այս պարագայում Կոնվենցիոնալ այս իրավունքը կվերածվի իրական և ոչ թե պատրանքային իրավունքի: Եթե դատարանի լիազորությունները սահմանափակվում են խորհրդատվական բնույթի հանձնարարականներով կամ ապօրինի ազատարկումից պաշտպանվելու այլ նմանօրինակ միջոցներով, ապա դա չի համապատասխանի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին: Դա պայմանավորված է նրանով, որ անձը իրական երաշխիք պետք է ունենա հասնելու իր ազատ արձակմանն այն դեպքում, եթե հաստատվի ազատազրկման անօրինականությունը:

տավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված համապատասխան միջոցներ: Ձերբակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին.

ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում,

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1 հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում, կամ, խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում,

գ) անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում:

Այսպիսով, հաշվի առնելով ձերբակալված անձի՝ անազատության մեջ նմալու բավական կարճ ժամանակահատվածը, որի ընթացքում ազատությունից զրկելու օրինականության բողոքարկման մեխանիզմները չեն կարող արդյունավետ լինել, ՀՀ վճռաբեկ դատարանն առաջարկում է ձերբակալման օրինականությունը ստուգել կալանավորման միջնորդության քննության ընթացքում: Եթե ձերբակալված անձն ազատ է արձակվում և վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կիրառվում, ապա վերջինս իրավասու է իրեն ազատությունից զրկելու օրինականությունը բողոքարկել ՀՀ քր. դատ. օր. 100-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետում հստակ նշվում է, որ ազատությունից զրկելու օրինականությունը ստուգում է բացառապես դատարանը, ինչը բացառում է այն մտայնությունը, որ նման գործառույթ կարող է վերապահվել դատախազին: *Վորենիկարովն ընդդեմ Սլովակիայի* գործով ՄԻԵԴ-ը դատարանը նշել է, որ իրեն ազատությունից զրկելու օրինականությունը դատախազին բողոքարկելու հնարավորության վերապահումը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, քանի որ «դատախազի կողմից այդ հարցի քննարկումը դատական բնույթ

**Պանտեան ընդդեմ Ռումինիայի (2003թ.)** գործով հայցվորի կալանքը երկարաձգելու մասին որոշումը կայացրել էր դատախազը: Դատարանը նկատեց, որ դատախազը մի քանի գործառույթներ էր կատարել: Նախևառաջ, դատախազը քննության էր առել հայցվորին քրեական մեղադրանք ներկայացնելու կամ չներկայացնելու հարցը, նա էր որոշում կայացրել հայցվորի դեմ քրեական գործ հարուցելու մասին, և նա էլ որոշել էր հայցվորի կալանքը երկարաձգել: Երկրորդ, նա պաշտոնապես մեղադրանք էր ներկայացրել հայցվորին և ընտրել է մեղադրանքի բնույթը: Չնայած որ նա ներպետական դատարանում հանդես չէր եկել որպես դատախազ, Դատարանը նկատեց, որ օրենքը չէր պարունակում որևէ դրույթ, որով դա կարգելվեր: Դատարանը նաև նկատեց, որ Ռումինիայում դատախազները ենթակա են Գլխավոր դատախազին և Արդարադատության նախարարին, և ուստի, դատախազներն անկախ չեն: Դատարանը եզրակացրեց, որ տվյալ գործով դատախազը չէր կարող համարվել «դատական իշխանություն իրականացնելու համար օրենքով լիազորված պաշտոնատար անձ»:

Այն փաստը, որը կալանավորվածը կարող է դատական կարգով բողոքարկել դատախազի որոշումը, չի կարող բավարար լինել իրավիճակը շտկելու համար, բացառությամբ, եթե բողոքարկումն ինքնաբերական է. ներպետական դատարանի կողմից դատախազի կայացրած որոշման վերանայման համար կալանավորվածի կողմից բողոքի ներկայացումը չպետք է նախապայման լինի:<sup>1</sup>

Ելնելով այն հանգամանքից, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի ընտրությունը և կիրառումը քրեական հետապնդման գործառույթի տրամաբանական շարունակությունն ու անբաժանելի մասն են, գտնում ենք, որ դատական վերահսկողության առարկա պետք է դառնա ոչ թե մեղադրյալին կալանավորելու թույլտվություն ստանալու հարցը, այլ այն, թե կոնկրետ դեպքում քրեական հետապնդման մարմնի կողմից հարկադրանքի միջոցի կիրառումը որքանով է օրինական ու հիմնավորված: Կալանավորման օրինականության և հիմնավորվածության ստուգման համար հիմք է

<sup>1</sup> Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի, կետ 55:

հանդիսանում ազատությունից զրկված անձին դատարան բերելու քրեական հետապնդման մարմնի պարտականությունը: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս կիրառել անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունն ապահովող ավելի արդյունավետ տարբերակ, որն ամրապնդված է լրացուցիչ դատավարական երաշխիքներով և համահունչ է միջազգային պրակտիկային: Եվրոպական կոնվենցիայի արդեն հիշատակված 5-րդ հոդվածը անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության երաշխիքների համակարգում առաջնային նշանակություն է տալիս պետության վերը նշված պարտականությանը: Բանն այն է, որ եթե նույնիսկ հարկադրանքի ենթարկված անձը այդ կապակցությամբ տալիս է իր համաձայնությունը կամ չի վիճարկում այն, ապա դա դեռ չի նշանակում, որ հարկադրանքը հիմնված է եղել օբյեկտիվորեն գոյություն ունեցող հիմքերի վրա, իսկ ազատությունից զրկելն էլ չի կրել անօրինական բնույթ և չի հակասել Կոնվենցիայի պահանջներին: «Անձը չի կարող զրկվել Կոնվենցիայի պաշտպանությունից միայն այն հիմքով, որ նա կամովին ներկայացել է ազատությունից զրկվելու համար»<sup>1</sup>:

Ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը՝ իրավունքի գերակայության սկզբունքը, պահանջում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված անձի ազատության իրավունքի նկատմամբ գործադիր իշխանության հնարավոր ոտնձգություններն երկրի ներպետական օրենսդրության համաձայն պետք է լինեն դատական վերահսկողության օբյեկտ: Դրանով իսկ ազգային դատական իշխանությունը դառնում է ազատության առաջին իրական պաշտպանը:

Վերոշարադրյալը ցույց է տալիս, որ քրեադատավարական օրենսդրության մեջ մարդու իրավունքների հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի իմպլեմենտացիան բավականին բարդ մեխանիզմ է ենթադրում: Այն պահանջում է ոչ միայն այդ սկզբունքների ու նորմերի մեխանիկական տրանսֆորմացիա ԶԶ Սահմանադրության մեջ, այլև ճյուղային օրենսդրությունում դրանց կոնկրետացում և

<sup>1</sup> St'u Комментарий к Европейской конвенции о защите прав человека / – Совет Европы, 1995, էջ 21:

վում է առանց քննության: ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ հոդվածով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմք նախատեսված չէ, ուստի ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բողոքն առանց քննության թողնելու հիմքերի ցանկը սպառիչ է:

Յետևաբար, եթե բողոքարկվել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ, ապա այն առանց քննության թողնելու ենթակա չէ: Եթե բողոքը բերվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, ուստի ԶԶ քրեական վերաքննիչ դատարանը պարտավոր է այն վարույթ ընդունել և որոշման կայացմամբ արտահայտել իր դիրքորոշումը:

Սակայն, եթե ԶԶ քր. դատ. օր-ը կալանավորման օրինակա-նության ստուգմանը առանձին հոդված է նվիրել և նախատեսել ստուգման հստակ ընթացակարգ, ապա ձերբակալման օրինակա-նության ստուգման կարգավորումը ԶԶ քր. դատ. օր-ով ամբողջական չէ և լրացուցիչ կարգավորում է պահանջում:

Այս խնդրին իր նախադեպային որոշմամբ արդարադարձել է նաև ԶԶ վճռաբեկ դատարանը՝ դրանով իսկ փորձելով վերացնել օրենքում առկա բացը: Գ. Միքայելյանի գործով 2009թ-ի դեկտեմբերի 18-ին կայացրած որոշմամբ, ԶԶ վճռաբեկ դատարանը նշել է. «Կալանավորման միջնորդությունը քննելիս ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել ԶԶ օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ»: Ըստ վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ ձերբակալման օրինակա-նությունը չի կարող դուրս մնալ դատական վերահսկողության շրջանակից, և հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները պետք է արժանանան համարժեք իրավական գնահատականի և հանգեցնեն համարժեք իրավական հետևանքների: Չակառակ դեպքում կխախտվի ձերբակալվածի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Ուստի, կալանավորման միջնորդությունը քննելիս, ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պար-

յացումը և վերջիններիս՝ վերաքննության կարգով վերանայումը իրականացվում են տարբեր դատավարական գործառույթների շրջանակներում: Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշումը կայացվում է մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության, իսկ նշված ակտերի՝ վերաքննիչ դատարանի կողմից վերանայումը՝ վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատարանի որոշումների ստուգման և վերանայման գործառույթի շրջանակներում: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանը անթույլատրելի է համարել անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումները վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքի սահմանափակումը՝ ելնելով այն հանգամանքից՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, թե դատական քննության փուլում գտնվող գործի շրջանակներում են դրանք բողոքարկվել: Այսինքն՝ ՀՀ ներպետական քրեադատավարական օրենսդրությունը որևէ փուլային սահմանափակում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշման բողոքարկման համար: Ուստի, անկախ այն հանգամանքից, թե կալանքը որպես խափանման միջոց ընտրվել է մինչդատական վարույթում, թե դատարանում, դրա բողոքարկումն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375.4-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողն-

մանրամասնում, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Քրեադատավարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում պետք է ունենա կոնկրետ նպատակ և որոշակի տրամաբանություն, ինչպես նաև պետք է հանդիսանա համակարգված և հետևողական գործընթացի արդյունք:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ճյուղային օրենսդրության մեջ սահմանադրական դրույթների և միջազգային-իրավական սկզբունքների կոնկրետացման ժամանակ թույլ տրված թերություններն ու անհստակությունները չպետք է կաշկանդեն իրավակիրառող սուբյեկտներին (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատարան), պրակտիկայում անմիջականորեն կիրառել ՀՀ համար միջազգայնորեն պարտադիր և ազգային օրենսդրության բաղկացուցիչ մասը կազմող այդ չափանիշները:

## **1.6. ԱՁԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՋՐԿԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է: Այս դրույթի հետ համակարգային առումով փոխկապված է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածում տեղ գտած այն իրավադրույթը, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնն զործող անձինք»: Այսպիսով, ի լրումն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դատական վերահսկողության, որի նախաձեռնությունը պետք է բխի ձերբակալումն իրականացրած մարմնից, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը երաշխավորում է ազատությունից զրկվածի իրավունքը՝ իրեն ազատությունից զրկելու օրինականությունը բողոքարկելու դատարան: Դատարանը պարտավոր է անհապաղ քննարկման առարկա դարձնել բողոքը և որոշում կայացնել անձին ազատ արձակելու մասին, եթե ազատությունից զրկումն անօրինական է: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անձին ազատությունից զրկելու օրինականության ստուգումը ենթադրում է այնպիսի երաշխիքների առկայություն, որոնք նույնական են կամ որոշակիորեն նման են *habeas corpus*-ով նախատեսված երաշխիքներին, այսինքն, յուրաքանչյուր դեպքում անձը պետք է ունենա իրեն ազատությունից զրկելու օրինականությունը դատարանում բողոքարկելու հնարավորություն: Ընդ որում, սա հավասարապես պետք է վերաբերի ազատությունից

զրկելու յուրաքանչյուր դեպքին՝ անկախ նրանից, թե ներպետական օրենսդրությամբ ազատությունից զրկումն ինչ իրավական ընթացակարգով կամ ժամկետով է իրականացվել, կամ ներպետական օրենսդրությամբ դա ինչպես է կարգավորված:

Կոնվենցիոնալ այս դրույթով և եվրոպական դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքով սահմանված պարտավորությունները ներառում է հսկողության չորս հիմնական տարր.

1. բողոքի քննությունը դատարանի կողմից,
2. կողմերի մասնակցությամբ դատական վիճարանություններ՝ մրցակցության և պաշտպանության տարրերի առկայությամբ,
3. լայն առումով ազատությունից զրկելու օրինականության ստուգում,
4. նշված ընթացակարգի (բողոքարկման և բողոքի քննության) անհապաղություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: Նշված հոդվածի իմաստով, վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվող ակտերը վերանայող դատարան, որի խնդիրն է նշված ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Այս խնդիրն անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը 2008թ-ի նոյեմբերի 28-ի Ա. Ղավալյանի որոշմամբ: Տվյալ որոշմամբ դատարանի դիրքորոշումը պայմանավորված է եղել Եվրոպական դատարանի մոտեցումներին համահունչ դատական պրակտիայի ձևավորման անհրաժեշտությամբ: Վճռաբեկ դատարանը իրավացիորեն նշել է, որ ընդհանուր իրավասության դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման կա-



ծումն նշվում է, որ քրեական գործերով “ողջամիտ ժամկետը”, որի մասին խոսվում է 6-րդ հոդվածի 1-ին մասում, սկսում է հոսել այն պահից, երբ անձին “մեղադրանք է առաջադրվել”։ դա կարող է տեղին ունենալ ավելի շուտ, քան գործը կուղարկվի դատարան՝ կալանավորման օրվանից, այն պահից, երբ շահագրգիռ անձը պաշտոնապես ծանուցվել է, որ իր դեմ հարուցվել է քրեական գործ, կամ այն պահից, երբ անձն իմացել է, որ իր դեմ սկսվել է քննություն<sup>1</sup>։

Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Եվրոպական դատարանը կարևորում է քննության ընթացքում անձի ոչ թե ձևական, այլ փաստացի կարգավիճակը, ինչը նշանակում է, որ այդ անձը պետք է օժտված լինի Կոնվենցիոն երաշխիքներով՝ գտնվելով քրեական մեղադրանքի ներքո։

Վերոգրյալի առնչությամբ, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում բերման ենթարկված անձանց իրավունքների երաշխավորման հետ կապված որոշակի դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը *Գ.Միքայելյանի վերաբերյալ գործով* (18.12.2009թ.)։

Մասնավորապես, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բերվածի իրավական վիճակը համապատասխանում է “քրեական մեղադրանքի” ներկայացման Կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմամբ։ Ուստի, բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն այնպիսի իրավունքներով, որոնք բնորոշ են մեղադրյալին կամ կասկածյալին (օրինակ՝ իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, իրավիճակը իր փաստաբանին, լռելու իրավունքները և այլն)։

Այնուհետև, Վճռաբեկ դատարանն արձանագրել է. “Այնքանով, որքանով վերաբերելի են (*mutatis mutandis*), նշված իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ

գումը կատարվում է մրցակցության պայմաններում՝ կողմերին հնարավորություն վերապահելով ինչպես ներկա գտնվել դատարանում, այնպես էլ անմիջապես դատարանին ներկայացնել իրենց դիրքորոշումը հիմնավորող ապացույցները։ Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 288-րդ հոդվածի համաձայն՝ դատական ստուգումը կատարվում է դժմփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ։ Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն։ Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին։ Նիստի սկզբում նախագահող դատավորը հայտարարում է, թե ինչպիսի բողոք է քննվելու, ներկայացնում է դատարան ներկայացած անձանց և նրանց պարզաբանում է իրենց իրավունքները և պարտականությունները։ Այնուհետև դիմողը, եթե նա մասնակցում է բողոքի քննությանը, հիմնավորում է բողոքը, որից հետո լսում են նիստին ներկա գտնվող այլ անձանց։

Ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի յուրաքանչյուր պահի կասկածի տակ դնելու ազատագրկման համապատասխանությունը ինչպես ներպետական օրենսդրության, այնպես էլ Կոնվենցիայի պահանջներին։ Ընդ որում բողոքարկման ենթակա է ինչպես իրավասու պետական մարմինների գործողությունները, այնպես էլ՝ ազատությունից զրկման հիմքում ընկած հիմնավոր կասկածը, որ ազատությունից զրկված անձը հանցանք է գործել։ *Ջեսուսն ընդդեմ Լիտվայի* գործով Դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «կալանավորված և ձերբակալված անձինք ունեն Կոնվենցիայի տեսանկյունից ազատությունից զրկման «օրինականության» համար էական նշանակություն ունեցող դատավարական կամ նյութական պայմանների հաշվառմամբ դրա վերանայման (օրինականության քննության) իրավունք։ Դա նշանակում է, որ իրավասու դատարանը ոչ միայն պետք է քննարկի ներպետական օրենսդրության դատավարական պահանջների պահպանման, այլ նաև կալանավորման հիմքում ըն-

<sup>1</sup> Стѣи Европейский Суд по правам человека. Избранные решения. Председатель ред. колл. – В.А. Туманов. Т. 1. М., 2001, 388-389 էջերը։

կած կասկածանքի հիմնավորվածությունը, անձին ազատությունից զրկելով հետապնդվող նպատակի և հետագա ազատագրված իրավաչափության հարցը»: Այս գործով Եվրոպական դատարանը նշել է, որ կալանքի թույլտվություն տված ներպետական դատարանները չեն հիշատակել ազատությունից զրկման անօրինականության մասին դիմողի բողոքների վերաբերյալ: Ավելին, Վերադաս դատական ատյանները նշել են, որ թեև ազատությունից զրկելու օրինականության ստուգման հարցն առկա է, սակայն իրենք իրավասու չեն ստուգելու դրա օրինականությունը, քանի որ այն ժամանակ գործող օրենքով նման իրավասություն չեն ունեցել:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը միևնույն ժամանակ պահանջում է, որ ազատությունից զրկելու օրինականության հետ կապված ցանկացած որոշման «անհապաղ» կայացում: Բնական է, որ սա չի ենթադրում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված անհապաղության նույն պայմանները, ուստի մեկ, երկու շաբաթվա ընթացքում որոշման կայացումը կհամարվի թույլատրելի:

Թեև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը ազատությունից զրկումը բողոքարկելու հստակ ժամկետ չի նախատեսել, սակայն Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն չի կարող գերազանցել մի քանի շաբաթ: Մեկ ամիսը գերազանցող ժամկետները բազմիցս Եվրոպական դատարանի կողմից քննադատության են ենթարկվել (*Բոզիչերին ընդդեմ Իտալիայի, Սանչես-Ռայսեն ընդդեմ Շվեյցարիայի*): Եթե դատավորի ծանրաբեռնվածության կամ արձակուրդում գտնվելու պատճառով ժամկետի ձգձգումն անընդունելի է, ապա մեղադրյալի մողքով ձգձգումն անընդունելի չի համարվի, ինչպես օրինակ *Նավարան ընդդեմ Ֆրանսիայի* գործով, որտեղ ձերբակալվածն ինքը չէր շտապում բողոքարկել ազատությունից զրկելու օրինականությունը: Եթե բողոքարկման համար իրավաբանական օգնություն է անհրաժեշտ, ապա դրա տրամադրման վերաբերյալ որոշումը ևս պետք է անհապաղ կայացվի: Այս առումով յոթնօրյա ժամկետը *Ջամիրն ընդդեմ*

տեցում է արտահայտվել նաև Սերվեսն ընդդեմ Ֆրանսիայի 1997թ. հոկտեմբերի 20-ի գործով<sup>1</sup>:

Ասվածը նշանակում է, որ քրեական մեղադրանքը կարող է իրականացվել նաև ողջամիտ կասկածի առկայության դեպքում: Եվ եթե անձին մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը պետք է հիմնվի հավաստի գիտելիքների վրա, որոնք բավարար կերպով վկայում են այդ անձի կողմից հանցավոր արարք կատարելու մասին, ապա քրեական մեղադրանքը (մեր դեպքում՝ նաև «քրեական հետապնդումը») բնութագրող որոշ տարրերի դեպքում նման հավաստիություն չի պահանջվում: Մասնավորապես, խուզարկության կամ ձերբակալման դեպքում նշված հիմքերը կարող են լինել ոչ թե հավաստի, այլ միայն հավանական: Օրինակ՝ Եվրոպական դատարանը Լաբիտան ընդդեմ Իտալիայի 2000 թվականի ապրիլի 06-ի գործով նշել է, որ ողջամիտ կասկածի առկայության համար անհրաժեշտ են այնպիսի փաստեր կամ տեղեկատվություն, որոնք օբյեկտիվ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող էր հանցանք կատարել<sup>2</sup>:

Բացի այդ, Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը վկայում է, որ մեղադրյալ կամ կասկածյալ ասելով դատարանը հասկանում է ոչ միայն այն անձանց, որոնց ձևականորեն ներկայացված է մեղադրանք կամ որոնք ձևականորեն ճանաչվում են մեղադրյալներ կամ կասկածյալներ, այլ նաև այն անձինք, որոնց նկատմամբ ձեռնարկվում են նման կասկած ենթադրող գործողություններ և որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ կասկածյալի վիճակի վրա (օրինակ՝ կալանք, բնակելի տարածության խուզարկություն կամ անձնական խուզարկություն): Եվս մեկ հանգամանք: Եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի հաշվարկման պահը կապում է ոչ թե մեղադրանքի առաջադրման, այլ դատավարության առավել վաղ փուլի հետ: Այսպես, Էկլեն ընդդեմ Գերմանիայի Ռաշնային Չանրապետության 1982 թվականի հուլիսի 15-ի գոր-

<sup>1</sup> Տե՛ս <http://cmiskp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=9822352&skin=hudoc-en&action=request>: Տե՛ս նաև, Микеле Де Сальвиа. Прецеденты Европейского Суда..., էջ 366:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1979-2000թթ.): Մասնագիտական խմբագիր՝ Վ. Յովիանիսյան, Երևան, 2002, էջ 119:

քրեորեն պատժելի իրավախախտում կատարած լինելու ենթադրության առկայության մասին<sup>1</sup>: Բնական է, մեղադրանքն այստեղ սահմանվում է որպես զուտ դատավարական կատեգորիա:

Եվրոպական դատարանի պրակտիկայի հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեղադրանքը մեկնաբանվում է այդ հասկացության լայն իմաստով: Մեղադրանքից՝ որպես պաշտոնապես, ձևականորեն ամրագրված պահանջ, Եվրոպական դատարանն առանձնացնում է մեղադրանքը որպես գործառույթ, այսինքն՝ գործունեության ուղղություն, ինչը հետապնդում է կա՛մ մեղադրանքի ձևավորման համար հիմքերի ստեղծման, կա՛մ առաջադրված մեղադրանքի հետագա պաշտպանության նպատակ: Այս “մեղադրական” գործառույթը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի հետ կապված կարելի է անվանել քրեական հետապնդում, որը նաև կարող է իրականացվել մինչև պաշտոնապես մեղադրանք առաջադրելը (օրինակ՝ այն պահից, երբ անձը ձերբակալվում է):

Այսպես, Տաեդոր Գարսիան ընդդեմ Իսպանիայի 1997 թվականի դեկտեմբերի 16-ի գործով Եվրոպական դատարանը նշել է. “Այդ հասկացությունը (քրեական մեղադրանքը – **Ա.Թ.**) ունի “ինքնավար բնույթ”, այն պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի իմաստով, այլ ոչ թե միայն ներպետական իրավունքում դրա ունեցած նշանակությանը համապատասխան”: Մեղադրանքը կարող է սահմանվել “որպես պետական իշխանության իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես ծանուցելը նրա կողմից քրեորեն պատժելի իրավախախտում կատարած լինելու ենթադրության առկայության մասին”: Բացի այդ, (...) “որոշում ընդունել առաջադրված քրեական մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ” բառերը, որոնք օգտագործվում են 6-րդ հոդվածում, չեն նշանակում, որ այդ հոդվածն անտարբեր է մինչդատական վարույթի նկատմամբ”<sup>2</sup>: Նմանատիպ մո-

*Միացյալ Թագավորության* գործով դատարանի կողմից համարվել է խիստ երկար:

Այս առումով ևս ՀՀ քր. դատ. օր-ը ևս կոնկրետ ժամկետներ է սահմանել, մասնավորապես ՀՀ քր. դատ. օր-ի 288-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:

<sup>1</sup> Ст'я Европейский Суд по правам человека. Избранные решения. Председатель ред. кол.: Туманов В.А. Т. 1. М., 2001, էջ. 310:

<sup>2</sup> Ст'я <http://cmiskp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=9822316&skin=hudoc-en&action=request>: Ст'я նաև, Микеле Де Сальвиа. Прецеденты Европейского Суда..., էջ 366:

## 1.7. ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԿԱՍ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 5-ի 5-րդ կետը պահանջում է, որ ձերբակալման կամ կալանավորման զոհ դարձած անձինք այդ հոդվածի դրույթների խախտման դեպքում փոխհատուցման իրավունք ունենան: Ինչպես 5-րդ հոդվածի 4-րդ կետում, այդ դրույթը հանդիսանում է եվրոպական կենվեցիայի 13-րդ հոդվածի ավելի ընդհանուր պարտավորության կոնկրետացում, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

5-րդ հոդվածի 5-րդ կետի պայմանները պետությանը փոխհատուցման տեսքով իրավական պաշտպանություն տրամադրող մարմնի ընտրության հարցում ազատություն չեն տալիս: Այն պահանջում է նման միջոցի տրամադրում դատարանի կողմից, ինչը նշանակում է այդ հարցով պարտադիր ուժ ունեցող որոշման ընդունում: Ինչ վերաբերում է փոխհատուցման իրավունքի պաշտպանության դատաիրավական կարգին, ապա ներպետական իշխանությունները բավականին ազատություն ունեն: Իրավական պաշտպանության միջոցի տրամադրումն այլ մարմինների կողմից (օրինակ օմբուդսմենի) կամ կառավարության կողմից ex gratia-ի վճարումը բավար չեն 5-րդ հոդվածի 5-րդ կետի նպատակների համար:

Թեև ռաբիլիտացիայի ինստիտուտին վերաբերող հարցերը գործող ՀՀ քր. դատ. օր-ում համակողմանի կարգավորում չեն ստացել, սակայն ընդհանուր առմամբ օրենսգիրքը երաշխավորում է ազատությունից ապօրինի զրկման հետևանքով իրեն պատճառված վնասի փոխհատուցման՝ անձի իրավունք: Մասնավորապես, արդարացվածի դատավարական վիճակը սահմանող ՀՀ քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածի 3-րդ մասը արդարացվածին իրավունք է վերապահում պահանջելու իրեն անօրինական ձերբակալման և կա-

## 2.2. ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱՎԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ **նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ**, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»<sup>1</sup>:

Եվրոպական դատարանի կողմից «մեղադրանք» հասկացության մեկնաբանությունն ունի էական նշանակություն հայրենական իրավակիրառ պրակտիկայի համար նախևառաջ այն պատճառով, որ «մեղադրանք» հասկացության հետ սերտորեն կապված է «մեղադրյալ» կամ «կասկածյալ» հասկացությունները, ինչն իր հերթին Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի տեսանկյունից կապված է քրեական հետապնդման, ինչպես նաև մեղադրյալի և կասկածյալի իրավունքների ծագման հետ:

Կոնվենցիայի համակարգում «մեղադրանք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն և կիրառվում է, անկախ «մեղադրանք» հասկացությանը ազգային իրավունքում տրվող բնորոշումից: Այսպես, Դեվեբերն ընդդեմ Բելգիայի 1980 թվականի փետրվարի 27-ի գործով Եվրոպական դատարանը վճռել է, որ «մեղադրանք» հասկացությանն ավելի շուտ պետք է տրվի բովանդակային և ոչ թե «ձևական» նշանակություն և որ դատարանը կոչված է տեսնելու այն, ինչ թաքնված է գործի հակառակ կողմում և հետազոտելու քննարկվող ընթացակարգի իրական կողմերը: Այնուհետև, դատարանն ընդգծել է, որ «մեղադրանքը» 6-րդ հոդվածի նպատակներին համապատասխան կարելի էր սահմանել որպես պետական իշխանության իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես ծանուցելը նրա կողմից

<sup>1</sup> «Քրեական մեղադրանք» եզրույթն օգտագործված է նաև Քաղաքացիական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածում:

րավական դիրքորոշումը. «[ՄԻԵԴ-ի] հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ [ՄԻԵԿ-ը] Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

լանավորման հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով նաև իրական հնարավոր բաց թողնված օգուտները:

Ապօրինի ձերբակալման հետևանքով անձի կրած վնասների հատուցման իրավունքին իր նախադեպային որոշմամբ անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ դրանով իսկ փորձելով վերացնել օրենքում առկա բացը: Գ. Միքայելյանի գործով 2009թ-ի դեկտեմբերի 18-ին կայացրած որոշմամբ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է. «Կալանավորման միջնորդությունը քննելիս ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ»: Այդ միջոցների շարքում ՀՀ վճռաբեկ դատարանն առանձնացնում է անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանումը:

Ընդ որում, ըստ վճռաբեկ դատարանի դիրքորոշման, ձերբակալման ընթացակարգի խախտման հիմքով հայցի քննությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի հիման վրա, որի համաձայն՝ «Ապօրինի դատապարտվելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից»:

Այլ կերպ՝ անօրինական ձերբակալման զոհը պետք է օժտված լինի փոխհատուցում ստանալու իրավունքով՝ անկախ համապատասխան հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Հակառակ դեպքում, փոխհատուցման իրավունքը կարող է վերածվել պատրանքային և վերացական իրավունքի, քանի որ անօրինական ձերբակալման զոհի վրա անարդարացիորեն կդրվի ապացուցման լրացուցիչ բեռ:

Մինևույն ժամանակ այդ հարցի քննությունը և լուծումը պետք է համապատասխանի ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությանը, այնպես էլ ՀՀ միջազգային պայմանագրերին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերը նշված հիմնավորումները պայմանավորված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված այն դիրքորոշմամբ, որ ազատությունից անօրինական զրկված անձի փոխհատուցման իրավունքը պետք է ապահովված լինի որոշակիության բավարար աստիճանով (*Սաքըքը և այլոք ընդդեմ Թուրքայի, Ս.-ն ընդդեմ Իտալիայի, Ռեիբոկն ընդդեմ Սլովենիայի* գործերով վճիռները):

Վնասի փոխհատուցումը ըստ 5-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջվում է միայն այն դեպքերում, երբ ենթադրվող զոհի ձերբակալումը կամ կալանավորումը խախտել է 5-րդ հոդվածի 1-ից 4-րդ կետերը: Հայցի ներկայացումը, միայն 5-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա, բացառիկ կլինի, եթե մինչ այդ ազգային կամ Կոնվենցիայի մակարդակով չկայացվի որևէ որոշում 5-րդ հոդվածի խախտման մասին: Առավել հավանական է, որ Դատարանը կքննի 5-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա ներկայացրած գանգատը, եթե համարի, որ 5-րդ հոդվածի մյուս կետերից որևէ մեկը խախտվել է: Ընդ որում, Դատարանը զոհից չի պահանջի իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցների սպառում՝ պարզելու համար՝ կարող էր արդյոք նա պաշտպանել իր իրավունքները ազգային իշխանությունների առջև: Սակայն, եթե պետությունը կարողանա բավական ճշգրտությամբ ապացուցել, որ խախտված իրավունքների պաշտպանության այն միջոցը, որը նախատեսված է 5-րդ հոդվածի 5-րդ կետով, զոհի համար հասանելի է եղել, Դատարանը չի արձանագրի այդ դրույթի խախտում: Ռեյբոկն ընդդեմ Սլովակիայի գործով, որում համաձայն ներքին օրենսդրության, փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է միայն այն դեպքերով, երբ ազատազրկումն անօրինական է կամ սխալի արդյունք, Դատարանը 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում է արձանագրել, քանի որ դիմողի փոխհատուցման իրավունքը, որն առաջացել էր 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման հետևանքով (կալանքի տակ գտնվող

5-ի թիվ 733 որոշմամբ. «Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին՝ խախտելով դատարանի մատչելիության իրավունքը, ապա հարկ է նշել, որ նշված հարցով դատարան դիմելու ոչ անմիջական հնարավորությունը չի առնչվում դատարանի մատչելիության իրավունքին»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը երաշխավորում է դատարանի մատչելիության իրավունքը, երբ առկա է կամ խախտված իրավունքները վերականգնելու կամ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտություն:

Մինչդեռ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար դիմելու դեպքում հարցը չի առնչվում ո՛չ խախտված իրավունքների վերականգնմանը, ո՛չ էլ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ օրենքով նախատեսված կարգի խախտման, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման հարցում օրենքով սահմանված կարգով որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման առնչությամբ, որի բողոքարկման կարգը նույնպես սահմանվում է օրենքով» (9-րդ կետ, 2-րդ պարբերություն):

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը չի համաձայնել 19-րդ հոդվածի չափազանց լայն կիրառության վերաբերյալ մոտեցումներին:

19-րդ հոդվածի կիրառելիության խնդիրը վերաբերում է ոչ միայն հորիզոնական, այլև ուղղահայաց հարթությանը՝ վերադաս դատական ատյաններին: ՀՀ սահմանադրական դատարանն այս հարցում ուղղակիորեն հենվում է եվրոպական դատարանի իրավաբանության վրա և կիրառում է այդ դատարանի նշակած իրավական չափորոշիչները: Այսպես, 2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ 765 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ ի-

կերպ՝ եթե արարքը պատժելի է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքով, այլ ուրիշ օրենքով (ոչ թե հանցագործություն է, այլ վարչական կամ կարգապահական իրավախախտում), սակայն՝ (ա) այն իր բնույթով համարժեք է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի և/կամ (բ) դրա համար սահմանված է քրեական պատժին համարժեք պատասխանատվության միջոց, ապա ՀՀ Սահմանադրության իմաստով այդ արարքով վարույթը պետք է ներառվի «*Ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզում*» հասկացության շրջանակ:

Եթե քրեական ոլորտն արտահայտող ձևակերպման ընտրության հարցում ՀՀ Սահմանադրությունը հետևել է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի եզրաբանությանը, ապա նույնը չի կարելի ասել 19-րդ հոդվածի կիրառելիությունը սահմանող երկրորդ հասկացության՝ «*խախտված իրավունքների վերականգնման*» պարագայում:

Եվրոպական կոնվենցիայով՝ «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների որոշումը»: Այդուհանդերձ, «*խախտված իրավունքների վերականգնում*» հասկացության բովանդակությունը պարզաբանելիս նույնպես անհրաժեշտ է ելնել Եվրոպական դատարանի մշակված համապատասխան իրավական չափորոշիչներից և տրամաբանությունից:

Մասնավորապես, «*խախտված իրավունք*» հասկացությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ 19-րդ հոդվածի կիրառության համար իրավունքի խախտման փաստի արձանագրումը լինի նախապայման, այլ ոչ թե հնարավոր վերջնարդյունք, քանի որ այդ դեպքում արդար դատաքննության իրավունքը կդառնա երևութական: Բացի դրանից, 19-րդ հոդվածի երաշխիքները պետք է հավասարապես վերաբերեն թե՛ դատարանի առջև ենթադրաբար խախտված իրավունք պաշտպանող անձին, թե՛ նրա դատավարական հակառակորդին, որը չի ներկայացնում խախտված իրավունքների վերականգնման պահանջ, այլ առարկում է իրեն ներկայացված նման պահանջի դեմ:

19-րդ հոդվածի առարկայական կիրառելիության խնդրին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է 2008թ. փետրվարի

անձի իրավունքը՝ կալանավորման օրինականությունը բողոքարկել դատարանում, որը պետք է անհապաղ լուծի այդ հարցը և ազատման վերաբերյալ որոշում կայացնի, եթե կալանավորումն անօրինական է), չի երաշխավորվել բավարար ճշգրտությամբ:

Այն երկրներում, որտեղ Կոնվենցիան ներքին իրավունքի մաս է, դատարանները պետք է լիազորված լինեն տրամադրելու նման փոխհատուցումն այն դեպքերում, երբ նրանք արձանագրում են 5-րդ հոդվածի խախտում: Եթե նրանք այս կամ այն պատճառով չկարողանան այդ անել, դա միայն կբարդացնի 5-րդ հոդվածի կատարված խախտումը:

## 2. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### 2.1. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Ընդհանուր առմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը եվրոպական դատարանի պրակտիկայում առավել լայն կիրառություն ստացած կոնվենցիոնալ հոդվածն է, որի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավական հարուստ և բազմաբովանդակ նախադեպային իրավունք է ձևավորել: Միայն 2010թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ Եվրոպական դատարանի կայացրած վճիռների ընդհանուր թվի մոտ կեսը (12631-ից 6112-ը) կայացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

Չնայած սույն իրավունքի կարևորությանը՝ դրա անվանման, սահմանման, կառուցվածքի և տարրերի հարաբերակցության հարցում միասնական մոտեցում չի ձևավորվել: Գոլդերի գործով Եվրոպական դատարանը մատնանշել է, որ «6-րդ հոդվածով ամրագրված են առանձին իրավունքներ, որոնք, սակայն, բխում են նույն հիմնարար գաղափարից և համակցության մեջ վերցրած՝ կազմում են մեկ միասնական իրավունք, որն առանձին եզրույթով հստակ սահմանված չէ» (կետ 28): Եվրոպական դատարանի գործունեության սկզբնական շրջանում այս իրավունքն ընդունված էր անվանել «արդարադատության պատշաճ իրականացման իրավունք» («Right to a good administration of justice»), սակայն ներկայումս առավել ընդունված է «արդար դատաքննության իրավունք» արտահայտությունը: Սակայն, ելնելով ՀՀ քրեական դատավարության

ներկախ կառուցվածքից, երբ դատական քննության փուլն առանձնանում է որոշակի ենթափուլերի կամ մասերի և «դատաքննությունը» միայն դրանցից մեկն է, նպատակահարմար կլինել կոնվենցիոնալ այս իրավունքն անվանել «արդար դատական քննության իրավունք»՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն տարածվում է ամբողջ դատական քննության վրա և դրա գործողությունը չի սահմանափակվում զուտ դատաքննությամբ:

Ամեն դեպ թում, ցանկացած անվանում պետք է պայմանական համարել, քանի որ այս իրավունքն իրենից բարդ երևույթ է ներկայացնում, որն ընդգրկում է թե՛ արդարադատության մարմնի կազմակերպմանը և թե՛ արդարադատության իրականացման ընթացակարգին վերաբերող բազմաթիվ փոխկապակցված տարրեր: Այդ տարրերը մարդու իրավունքների տարբեր հիմնարար փաստաթղթերում կարող են տարբեր ձևակերպումներ և բաշխում ունենալ: Եվրոպական կոնվենցիայում այս իրավունքի բոլոր տարրերը սահմանված են մեկ միասնական հոդվածով՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

Արդար դատաքննության իրավունքի կիրառության շրջանակն են կազմում հետևյալ երկու ոլորտները՝ խախտված իրավունքների վերականգնումը և անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզումը: Այդ հասկացություններն ինքնավար սահմանադրաիրավական իմաստ ունեն, ուստի դրանց բացահայտման համար անհրաժեշտ է ելնել ոչ միայն և ոչ այնքան ներպետական օրենսդրությունից, որքան մարդու իրավունքների առնչությամբ միջազգային իրավունքում ձևավորված չափանիշներից:

Այսպես, «անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու» հասկացությունն արտահայտում է քրեական ոլորտը, որի սահմանադրաիրավական ծավալը կարող է ավելի լայն լինել, քան ճյուղային իրավականը: Դա բխում է *Էնգելի* գործով որոշմամբ Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումից, որի համաձայն՝ արարքին ներպետական իրավունքում տրված դասակարգումը (որակումը) միակ չափանիշը չէ, որով բնորոշվում է քրեական ոլորտը. անհրաժեշտ է հիմք ընդունել նաև՝ (ա) արարքի բնույթը և (բ) սանկցիայի ժանրության աստիճանը: Այլ



## 2.4. ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ

Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում ամրագրվել է 2005 թվականի նոյեմբերի 27-ին դրանում կատարված փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, Սահմանադրության 19-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից *ողջամիտ ժամկետում* իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Ողջամիտ ժամկետում յուրաքանչյուրի դատաքննության իրավունքը երաշխավորված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից *ողջամիտ ժամկետում* արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Պատշաճ ժամկետում դատական քննության իրականացման պահանջ ամրագրված է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 2-րդ մասում:

Ողջամիտ ժամկետում գործի քննության վերաբերյալ հիշյալ դրույթներն իրենց հետագա կարգավորումն են ստացել Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության մեջ:

Մասնավորապես, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից *ողջամիտ ժամկետում* իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:

մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ» (կետ 22):

Վերոգրյալի հետ կապված համանման դիրքորոշում է արտահայտել նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը Վ.Ի.Մասլովայի վերաբերյալ 2000 թվականի հունիսի 27-ի որոշմամբ:

Քրեական մեղադրանքի ուսումնասիրության շրջանակներում կարևոր նշանակություն ունի նաև այն հարցը, թե ինչպես է որոշվում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով մեղադրանքի «քրեական» լինելը: Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ մեղադրանքի «քրեական» լինելը Եվրոպական դատարանը որոշում է երեք հիմնական չափանիշներով՝

- դասակարգումը ներպետական իրավունքի համակարգում.
- իրավախախտման բնույթը.
- պատժի բնույթը և խստության աստիճանը:

*Դասակարգումը ներպետական իրավունքի համակարգում:* Եթե որևէ պետության ներպետական իրավունքի համակարգում մեղադրանքը բնորոշվում է որպես քրեական, ապա 6-րդ հոդվածը մնան պայմաններում մեխանիկորեն ենթակա է կիրառման: Սակայն դրա հետ միասին, մեղադրանքը չի լինի քրեական, ապա դա Եվրոպական դատարանի համար 6-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության երաշխիքների կիրառման հետ կապված չի կարող որոշիչ նշանակություն ունենալ: Հակառակը կնշանակել, որ պետությունները կարող էին խուսափել արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ կոնվենցիոն դրույթների կիրառումից՝ կոնկրետ արարքների ապաքրեականացման կամ դրանց դասակարգման վերանայման միջոցով: Այսինքն՝ եթե պետությունը որևէ արարք նախատեսում է որպես կարգապահական կամ վարչական և դրանով հանդերձ այդ արարքի մեջ մեղադրվող անձին զրկում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքներից, ապա Եվ-

րոպական դատարանը կարող է ինքնուրույն որոշել՝ այդ մեղադրանքը քրեական է, թե՛ ոչ:

Այս կապակացությամբ, *Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների* գործով Եվրոպական դատարանը նշել է. “Եթե պայմանավորվող պետությունները կարողանային իրենց հայեցողությամբ իրավախախտումը քրեականի փոխարեն սահմանել որպես կարգապահական (...), 6-րդ հոդվածի 1-ին դրույթների գործողությունը կդրվեր կախվածության մեջ նրանց ինքնիշխան կամքից: Լիազորությունների նման ընդլայնումը կհանգեցներ Կոնվենցիայի նպատակների և խնդիրների հետ անհամատեղելի արդյունքների” (Case of Engel and others v. the Netherlands, 08.06.1976, կետ 81)<sup>1</sup>:

*Իրավախախտման բնույթի* հետ կապված, առանձնացվում է խախտված իրավանորմի կիրառման ոլորտը և պատժի նպատակը:

Առաջինի հետ կապված, եթե քննարկվող իրավական նորմը կիրառելի է միայն խիստ որոշակի գործառնություններ իրականացնող սահմանափակ շրջանակի անձանց, օրինակ, որոշակի մասնագիտության ներկայացուցիչների նկատմամբ, ապա դա նշանակում է, որ խոսքը վերաբերում է կարգապահական, այլ ոչ թե քրեական վարույթին<sup>2</sup>: Սակայն եթե իրավական նորմի գործողությունն ընդհանուր է, ապա մեծ հավանականությամբ այն կհամարվի քրեական իրավունքի համակարգի բաղադրիչ, որի վրա կտարածվի 6-րդ հոդվածի գործողությունը:

Ինչ վերաբերում է պատժի նպատակին, ապա այդ չափանիշը օգնում է տարբերակելու պատասխանատվության քրեաիրավական միջոցները վարչականից:

*Պատժի բնույթը և խստության աստիճանը*: Որոշ իրավախախտումներ առանձին պետությունների ներպետական օրենսդրությամբ կարող են սահմանվել որպես վարչական կամ կարգապահա-

ների, այլ նախատեսում է դատական ակտին հասարակության իրազեկումն ու հասարակական հսկողությունն ապահովող գործունե աշխիքներ: Կոնվենցիան դժբաղ դատական նիստում դատավճիռը հրապարակելու պահանջ չի ներկայացնում: Սուտերն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանը նշել է. «1889թ-ի օրենքի 197-րդ բաժնի համաձայն՝ Վճռաբեկ զինվորական դատարանի 1977թ. հոկտեմբերի 21-ին կայացրած դատավճիռը տրամադրվել է կողմերին, սակայն չի հրապարակվել դժբաղ դատական նիստում... Յուրաքանչյուր ոք, ում համար դա հետաքրքրություն է ներկայացնում, կարող է ծանոթանալ Ձինվորական վճռաբեկ դատարանի դատավճռի ամբողջական տեքստին կամ ձեռք բերել դրա պատճենը. բացի դրանից, այնպիսի կարևոր դատավճիռները, ինչպիսին է Սուտերի գործով կայացված որոշումը, հետագայում հրատարակվում են պաշտոնական ժողովածուներում: Դրա դատական պրակտիկան, հետևաբար, որոշ դեպքերում բաց է հասարակական վերահսկողության համար: Ինչ վերաբերում է Ձինվորական վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով քննարկված հարցերին և վերջինիս որոշմանը, որի արդյունքում վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական էր դարձել և ոչինչ չէր փոփոխվել պրն. Սուտերի վերաբերյալ դրա հետևություններում, 6-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունը... որը վերաբերում է դատավճռի կայացմանը, շատ կոշտ է թվում և ոչ անհրաժեշտ 6-րդ հոդվածի նպատակներին հասնելու համար... Այսպիսով, Դատարանը համաձայն է Կառավարության և Հանձնաժողովի մեծամասնության հետ՝ եզրակացնելով, որ Կոնվենցիան չի պահանջում դատավարության վերջին փուլում կայացված դատավճռի բարձրաձայն հրապարակում»<sup>1</sup>:

<sup>1</sup><http://cmiskp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=62118896&skin=hudoc-en&action=request>

<sup>2</sup> Եվրոպական դատարանը մտադրաբար դիրքորոշում է արտահայտել, օրինակ, Վեբերն ընդդեմ Շվեյցարիայի գործով (Veber v. Switzerland, 22.05.1990, կետ 33)՝ <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbk&action=html&highlight=Switzerland%20|%20Weber&sessionId=62118896&skin=hudoc-en>:

<sup>1</sup> St'u Sutter v. Switzerland. բողոք N8209/78, 22.02.1984, para. 31, 34:

նուն է դատարանի կողմից կամայական որոշումներ կայացնելու հավանականությունը: Այս մոտեցման հակառակորդները, որպես իրենց դիրքորոշման հիմնավորում, կարող են նշել նախաքննության գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, սակայն կարծում ենք, որ ճկուն մոտեցում դրսևորելու պարագայում նման խնդիր չի առաջանա: Պրակտիկան ցույց է տալիս, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելիս, վարույթն իրականացնող մարմինը բավարարվում է միայն համապատասխան հիմքերի առկայությունը նշելով, առանց դրա հիմքում կոնկրետ ապացույցներ դնելու: Ավելին, նույնիսկ եթե համապատասխան հիմքերի առկայությունը հիմնավորվում է կոնկրետ ապացույցներով, դրանք, որպես կանոն, նախաքննության ընթացքի վրա էական ազդեցություն ունենալ չեն կարող: Սակայն, ամեն դեպքում, դատարանին պետք է իրավունք վերապահել, երբ առկա է նախաքննության գաղտնիքը հրապարակելու վտանգ, որոշում կայացնել դռնփակ քննություն անցկացնելու մասին: Նման ընթացակարգն ինքնին դատավորի զգոնությունն ու պատասխանատվությունը բարձրացնող կարևոր երաշխիք է և, եթե անգամ դատարանը որոշում է կայացնում դռնփակ քննություն անցկացնելու մասին, դատարանի որոշումը պետք է հիմնավորված լինի: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումն, ամեն դեպքում, պետք է հրապարակվի դռնբաց դատական միստում, քանի որ այն չի բովանդակում այնպիսի տվյալներ, որոնք կարող են խախտել նախաքննության գաղտնիությունը:

ՀՀ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական կամ եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար: Դատավճռի հրապարակման առումով ևս ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը ոչ միայն համապատասխանում է Կոնվենցիայի պահանջ-

կան: Դա կարող է հետապնդել ինչպես դատարանները բեռնափակելու, այնպես էլ անձի շահերը պաշտպանելու նպատակ: Դրա հետ միասին, կարևոր է, որ դա տեղի չունենա առանց հիմնավորման: Մասնավորապես, այն դեպքերում, երբ պատասխանատվության միջոցն ունի պատժիչ և սարսափեցնող բնույթ, ապա կոնկրետ վարույթը պետք է կոչվի “քրեական”: Նույն կանոնը կիրառելի է նաև այն ազատագրվում նախատեսող պատասխանատվության միջոցների պարագայում: Վերոգրյալի հետ կապված, Եվրոպական դատարանը *Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների* գործով նշել է. “Այն հասարակությունում, ուր գործում է օրենքի գերակայության սկզբունքը, ազատագրված ձևով պատիժները վերաբերում են “քրեական” ոլորտին, բացառությամբ այն պատիժների, որոնք իրենց բնույթով, տևողությամբ կամ կատարման եղանակով չեն կարող համարվել էական վնաս պատճառող: (...) Պայմանավորվող պետությունների ավանդույթները և անհատի ֆիզիկական ազատության հանդեպ Կոնվենցիայի կողմից ցուցաբերվող հարգանքը (...) պահանջում են, որպեսզի հենց այդպես էլ լինի” (կետ 82):

Պետք է նշել, որ քննարկվող խնդրին ՀՀ վճռաբեկ դատարանը դեռ 2005 թվականի հուլիսի 22-ին անդրադարձել է *Վ.Սալարցորցյանի վերաբերյալ գործով* որոշման մեջ: Մասնավորապես, դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը նշված դիրքորոշումների վերլուծության հիման վրա եզրահանգել է, որ վարչական իրավախախտման համար Վ.Սալարցորցյանի նկատմամբ դատարանի կողմից նշանակված 5 օր կալանքն իր բնույթով և ծանրության աստիճանով հավասարվում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված քրեական մեղադրանքին: Դրա հիման վրա դատարանը գտել է, որ Վ.Սալարցորցյանի նկատմամբ պետք է կիրառելի լինեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները (հրապարակային դատաքննության, իրավունք, իր դեմ ցուցմունք տվող վկաներին հացաքննելու իրավունք և այլն):

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հաշվի է առել իրավախախտման բնույթը, նշանակված պատժաչափի բնույթն ու խստությունը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վիճարկվող

հողվածը (նախկին խմբագրությամբ-**Ա.Թ.**) ունի համընդհանուր կիրառման բնույթ, և այդ իրավական նորմն ուղղված է ոչ թե հատուկ կարգավիճակ ունեցող անձանց որոշակի խմբի, այլ բոլոր քաղաքացիներին, այդ իրավական նորմը բոլորի համար սահմանում է որոշակի բնույթի վարքագիծ, և դրանում ամրագրված պահանջի կատարումն ապահովվում է պատժիչ սանկցիայի միջոցով<sup>1</sup>:

Վճռաբեկ դատարանի նշված դատական ակտի հիման վրա վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարվեցին օրենսդրական փոփոխությունների, և վարչական կալանքի վերաբերյալ դրույթները ճանաչվեցին ուժը կորցրած:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի հուլիսի 22-ի որոշում // Դատական իշխանություն, N 7/72, 2005, 39-43 էջերը:

որ նույնիսկ նշված հիմքերի առկայության պարագայում հրապարակայնությունը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում, երբ դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավարության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակման:

Թեև ընդհանուր կանոնի համաձայն դատական քննությունը դռնբաց է և դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել միայն դատարանի որոշմամբ, այնուամենայնիվ, նույնիսկ դռնբաց դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանը պետք է զգուշություն ցուցաբերի, քանի որ որոշ ապացույցների հրապարակային հետազոտումը կարող է հանգեցնել կոնվենցիոնալ մեկ այլ՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման: Մասնավորապես՝ Պանտելեյենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով Դատարանը նշել է. «Անհրաժեշտ է նշել, որ Վերաքննիչ դատարանը, վերանայելով գործը, հանգել է այն եզրակացությանը, որ դիմողի անձնական տեղեկության նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատավորների վերաբերմունքը չի համապատասխանել հոգեբուժական տվյալների հավաքման, պահպանման, օգտագործման և տարածման համար հատուկ ռեժիմին... Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում»<sup>1</sup>:

Կարծում ենք, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից հրապարակայնության սկզբունքն անհրաժեշտ է տարածել նաև մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունների քննարկման նկատմամբ: ՀՀ քր. դատ. օր-ի համաձայն՝ միջնորդությունը քննում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր-ի 283 հոդվածի առաջին մաս): Նման կարգավորման պարագայում, երբ միջնորդությունների քննությունն իրականացվում է փակ, հասարակական հսկողությունից դուրս, բարձրա-

<sup>1</sup> Տե՛ս Panteleyenko v. Ukraine. քողոք N11901/02, 29.06.2006, para. 61, 62:

րանը պետք է անդրադառնա և՛ փաստին, և՛ իրավունքին, մեղավորության կամ անմեղության, կամ պատժի վերանայման հարցերի՝ բանավորությունն անհրաժեշտ է<sup>1</sup>:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է դռնփակ դատական քննություն անցկացնելու հիմքերը: ԳՅ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածի 2-րդ մասը մասնավորեցնում է կոնվենցիոն հիմքերը և հստակ սահմանում, թե կոնկրետ ինչ հանգամանքների առկայության պարագայում, ինչպիսի շահեր պաշտպանելու նպատակով և ուն նախաձեռնությամբ կարող է դռնփակ դատական քննություն անցկացվել:

ԳՅ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել պետական կամ ծառայողական գաղտնիքի հետ առնչվող հանցագործությունների գործերով:

Դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել նաև՝

1) անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին ու արժանապատվությանն առնչվող հանցագործությանների վերաբերյալ գործերով.

2) անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությանների վերաբերյալ գործերով.

3) քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Դատարանը դռնփակ դատական քննություն կարող է անցկացնել նաև ազգային անվտանգության և հասարակական կարգի պաշտպանության նկատառումներով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Այսպիսով, ԳՅ քր. դատ. օր-ը մանրամասնում է հրապարակայնության սահմանափակման կոնվենցիոնալ հիմքերը և սահմանում,

<sup>1</sup> Sten v. Ekbatani v. Sweden, 26 May 1988, and Cooke v. Austria, 8 February 2000:

## 2.3. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում իրականացված և այսօր էլ շարունակվող դատաիրավական բարեփոխումների հիմնական նպատակը հասարակության վստահությունը վայելող իրավապահպան համակարգի ձևավորումն է: Թեև բարեփոխումների վեկտորն ընդահանուր առմամբ ուղղված է ողջ դատաիրավական համակարգի կատարելագործմանը, այնուամենայնիվ դրա հիմնական նպատակը անկախ և անկողմնակալ դատարանի կայացումն է:

Ընդհանուր առմամբ ողջ դատաիրավական համակարգի միաժամանակյա վերափոխումը եթե ոչ անհնարին, ապա բավականին բարդ գործընթաց է: Դա է պատճառը, որ վերափոխումն անհրաժեշտ է սկսել դատական համակարգի կատարելագործմամբ: Միայն անկախ, անաչառ և հասարակության վստահությունը վայելող դատական համակարգի առկայության պայմաններում է հնարավոր իրավապահպան ողջ համակարգի բարեփոխումը:

Դատաիրավական բարեփոխումների «շոգեքարշի» դերը, սակայն, դատական համակարգը կարող է կատարել միայն այն դեպքում, երբ ինքն իր հերթին վայելում է հասարակության վստահությունը որպես պետական իշխանության մարմիններից անկախ և իր գործառույթներն անաչառ իրականացնող պետական մարմին:

Արդարացի չենք լինի, եթե չնշենք, որ անցած տարիների ընթացքում դատական համակարգի կատարելագործման ուղղությամբ բավականին հաջողություններ արձանագրվել են: Սակայն սխալված էլ չենք լինի, եթե արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետությունում դատարանը բավականին հեռու է արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորը լինելուց:

Դատարանն արդարադատության իրականացման իր գործառույթը հաջողությամբ կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ հասարակության կողմից այն դիտվի որպես իր իրավունքների

պաշտպանության գործուն մեխանիզմ՝ հիմնված արդարաության վեհ գաղափարի վրա:

Դատական իշխանության նկատմամբ հասարակության նման վերաբերմունք կարող է ձևավորվել միայն այն դեպքում, երբ դատարանն իրականացնի «թափանցիկ» արդարադատություն՝ մի կողմից հասարակությանը ընձեռելով իր գործունեությունը վերահսկելու հնարավորություն, մյուս կողմից՝ ապահովելով հաշվետվողականությունը նույն հասարակության առաջ: Ինչպես իր որոշումներից մեկում իրավացիորեն նշել է ԱՄՆ Գերագույն դատարանը՝ հրապարակային դատական քննությունը մի կողմից մեղադրյալին ստիպում է ձեռնպահ մնալ «դատարանը որպես մարդկանց վրա հարձակվելու գործիք» օգտագործելու փորձերից, մյուս կողմից՝ այն «դատական իշխանության հնարավոր չարաչափումները» զսպելու միջոց է<sup>1</sup>:

Դատական քննության հրապարակայնությունը վաղուց արդեն դադարել է լոկ դատավարական սկզբունք լինելուց և վերածվել է պետության քաղաքական ռեժիմի բնութագրիչներից մեկը: Դեռևս Յեզեյը նշում էր. «դատավարության դեմքացությունը հաճախ կապում են պետական կառուցվածքի ազատության հետ: Այդ ազատությունը կայանում է նրանում, որ հանրությունը ձեռք է բերում սուբյեկտիվ գիտակցության իրավունք՝ դատելու դատավարության բնույթի մասին»<sup>2</sup>:

Սա է պատճառը, որ դատական քննության հրապարակայնությունը բարձրացվել է արդարադատության սահմանադրական սկզբունքի մակարդակի և իր արտացոլումն է ստացել դատական համակարգի անկախությունն ու մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրագրող միջազգային իրավական փաստաթղթերում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան կարևորելով հրապարակայնությունը որպես արդարադատության իրականացման կարևոր և պարտադիր պայման, այն դիտել է որպես արդարա-

<sup>1</sup> St' u Uilyam Bernam Pravovaya sistema Soedinennykh Shtatov Ameriki. M., РИО "Новая юстиция", 2007, էջ 507:

<sup>2</sup> St' u Гегель. Философия права. М., 1990, էջ 446:

է, որ. «նիստերը հրապարակային չեն եղել դիմողի կամավոր խնդրանքի հիման վրա պարզեցված քննության կիրառման արդյունքում: Պարզեցված քննությունն անվիճելի առավելություններ է նախատեսում մեղադրյալի համար. դատապարտման դեպքում նրա պատիժը էականորեն նվազեցվում է և դատախազությունը չի կարող պատժի հետ կապված բողոք ներկայացնել... Մյուս կողմից, պարզեցված վարույթը հանգեցնում է ներպետական օրենսդրությանը նախատեսված դատավարական երաշխիքների նվազեցման, դա վերաբերում է, մասնավորապես, լսումների հասարակական բնույթին և Գլխավոր դատախազի գրասենյակի կողմից գործուն չներառված ապացույցներ ձեռք բերելու խնդրանք ներկայացնելու հնարավորությանը»<sup>1</sup>: Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն ունակ է եղել հասկանալու պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ իր խնդրանքի հետևանքները, հիմք ընդունելով, որ այս վեճը հասարակական շահի հետ որևէ առնչություն է ունեցել՝ այդպիսով խոչընդոտելով վերոհիշյալ դատավարական երաշխիքներից հրաժարվելուն, ինչպես նաև այն հանգամանքը, որ Իտալիայի օրենսդրությանը պարզեցված վարույթի ամրագրումն ուղղված է բացառապես քրեական դատավարության պարզեցմանը և արագացմանը, նշել է. «այն փաստը, որ առաջին և երկրորդ ատյաններում գործի քննությունը կատարվել է դռնփակ և, հետևաբար՝ առանց հասարակության ներկայացուցիչների մասնակցության, չի կարող դիտվել որպես Կոնվենցիայի խախտում...»<sup>2</sup>:

Եթե բացառիկ հանգամանքեր չկան, Դատարանը հրապարակային դատական քննության բովանդակության մեջ ներառում է նաև դատական քննության բանավորության պահանջը<sup>3</sup>: Աքսենն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով կայացրած վճռում Դատարանը նշել է, որ քրեական գործերով բանավորությունը պարտադիր չէ, եթե վերաքննիչ դատարանը մերժում է բողոքը միայն իրավունքի հիմքով<sup>4</sup>: Սակայն, եթե վերաքննիչ դատա-

<sup>1</sup> St' u Hermi v. Italy /GC/, բողոք N18114/02, 18.10.2006, para. 78.

<sup>2</sup> St' u Hermi, para. 81:

<sup>3</sup> St' u Fischer v. Austria, 26 April 1995, para.44:

<sup>4</sup> St' u Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, para. 28:

ռաջին ատյանի դատարանում՝ դռնբաց դատական նիստի ընթացքում, սակայն Շրջանային դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը: Այս գործով Դատարանը նշել է. «Տվյալ դեպքում շրջանային դատարանի կողմից իրականացված քննության սահմանները թույլ են տալիս Դատարանին համարելու, որ դռնբաց դատական նիստ անհրաժեշտ էր: Իրականում շրջանային դատարանը չի սահմանափակվել գործի օբյեկտիվ կողմին այլ իրավական մեկնաբանություն տալով, այլ նաև վերանայել և նորոպի է գնահատել առաջին ատյանի դատարանի կողմից ապացուցված փաստերը: Վերջինս անցնում է ըստ իրավունքի քննության սահմանը: Հետևաբար, վերադաս դատարանը գործը վերանայել է ըստ իրավունքի և ըստ փաստի: Հաշվի առնելով հայցվորի արդարացումն առաջին ատյանի դատարանի կողմից՝ դռնբաց նիստի արդյունքում, որի ժամանակ ներկայացվել են բազմաթիվ ապացույցներ ինչպես իրեղեն՝ դատական սեկվեստրի բանկային հաշվից տեղեկանքներ, այնպես էլ անձնական՝ հայցվորի հայտարարությունը, Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հայցվորի դատապարտումը՝ առանց նրան լսելու, չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արդար դատաքննության պահանջին»<sup>1</sup>: Նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն այս առումով դատական քննության հրապարակայնության առավել խիստ և հստակ երաշխիքներ է նախատեսում: Մասնավորապես, հրապարակայնության սկզբունքն ամբողջությամբ կիրառվում է դատական քննության բոլոր փուլերում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածում դատական քննության հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով և այս հարցում օրենքը որևէ սահմանափակում չի նախատեսում: Անգամ արագացված դատական քննության կարգի կիրառման դեպքում դատաքննությունը պետք է դռնբաց լինի: Մինչդեռ Եվրոպական դատարանը պարզեցված ընթացակարգով դատական քննությանը հրապարակայնության պահանջ չի ներկայացնում: Այսպես՝ Հերմինն ընդդեմ Իտալիայի գործով Դատարանը նշել

<sup>1</sup> St u Igual Coll v. Spain, բողոք N37496/04, 10.03.2009, para. 36,37:

ցի դատական քննության իրավունքի բաղադրիչ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատական քննության իրավունք: Դատարանի որոշումը հայտարարվում է հրապարակավ, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկրորդ մասն ամբողջապես նվիրված է հրապարակայնության սկզբունքին, քանի որ Կոնվենցիան հրապարակայնությունը դիտում է որպես արդարացի դատաքննության իրավունքի բաղկացուցիչ և դրա ապահովման կարևորագույն երաշխիք: Դատարանն իր մի շարք որոշումներում նշել է. «Հոդված 6(1)-ում ամրագրված՝ դատական մարմինների առաջ դատաքննության հրապարակային բնույթը դատավարության կողմերին պաշտպանում է գաղտնիության պայմաններում հասարակական դիտարկումից դուրս արդարադատության իրականացումից: Միևնույն ժամանակ այն ստորադաս և վերադաս դատարանների նկատմամբ վստահության ապահովման միջոցներից է: Արդարադատության իրականացումը տեսանելի դարձնելով՝ հրապարակայնությունը նպաստում է Հոդված 6(1)-ի նպատակի, այն է՝ արդարացի դատաքննության նվաճմանը, որի երաշխիքը Կոնվենցիայի իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է»<sup>1</sup>:

<sup>1</sup> St u Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, Series A no 72; Pretto v. Italy, 8 December 1983, Series A no 71; Sutter v. Switzerland, 22 February 1984, Series A no 74.

Թեև, ինչպես նշեցինք, դատական քննության հրապարակայնությունը կարևոր նշանակություն ունի դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության ձևավորման համար, սակայն անվիճելի է նաև, որ հրապարակայնության սկզբունքի բացարձականացումը կարող է դատական իշխանության վրա ներազդման միջոց դառնալ: Դեռ 1962թ-ին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը նշել է, որ որոշ գործերով ՁԼՄ-ների թշնամական գործունեությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ դատական քննության արդարացիության վրա և հանգեցնել պետության պատասխանատվության<sup>1</sup>: Սակայն Եվրոպական դատարանը ոչ միայն թույլատրելի է համարել ՁԼՄ-ների կողմից հասարակական մեծ հնչեղություն ունեցող դատավարությունների մեկնաբանությունները<sup>2</sup>, այլև նշել է, որ դատական քննության հրապարակայնությամբ հեշտ չէ ներազդել պրոֆեսիոնալ դատավորի վրա<sup>3</sup>:

Հրապարակայնության սկզբունքն իր արտացոլումն է ստացել ԶԶ քրեական դատավարության օրենսգրքում, որի 16-րդ հոդվածում սահմանված ընդհանուր կանոնն այն է, որ քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դմբաց է:

Կոնվենցիայի 6(1) հոդվածը սահմանում է դատական քննության հրապարակային բնույթն ապահովող երկու ինքնուրույն երաշխիք՝ դմբաց դատական քննություն և դատավճռի հրապարակում<sup>4</sup>:

Դմբաց դատական քննության ապահովումն ինքնին բավարար չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից դատավարությունը հրապարակային բնութագրելու համար: Հաշվի առնելով Եվ-

րոպայի խորհրդի անդամ պետություններում իրավիճակի բազմազանությունը, Դատարանն ընտրել է պրագմատիկ մոտեցում՝ նշելով հրապարակային դատական քննության ապահովման ձևական երաշխիքների երկրորդական նշանակությունը: Դատական քննության հրապարակայնության գնահատման տեսանկյունից Դատարանը կարևորել է դատավարության փաստական իրողությունների գնահատումը<sup>1</sup>: Սա է պատճառը, որ մի կողմից դատարանն ընդլայնում է հրապարակայնության սահմանները՝ ներառելով այնպիսի բաղադրիչներ, որոնք հայրենի քրեական դատավարությունը երբևէ չի դիտել որպես հրապարակայնության սկզբունքի բաղկացուցիչ, մյուս կողմից՝ դատարանը չի բացարձականացում այս սկզբունքը և այն դիտարկում է արդարացի դատաքննության բոլոր տարրերի հետ համակցությամբ:

Հրապարակային քննությունը նախ և առաջ կոչված է ապահովելու դմբաց դատական քննությունը առաջին ատյանի դատարանում: Սակայն տեխնիկական պատճառներից ելնելով հրապարակային քննությունը երբեմն կարող է պարտադիր չհամարվել<sup>2</sup>: Եթե առաջին ատյանի դատարանում հրապարակային դատական քննություն չի անցկացվում, ապա դա կարող է փոխհատուցվել ավելի բարձր ատյանի դատարանում հրապարակային քննություն անցկացնելով: Սակայն այն պարագայում, եթե վերադաս դատարանը չի անդրադառնում կամ իրավասու չէ անդրադառնալու գործի փաստական կողմին, առկա է 6-րդ հոդվածի խախտում<sup>3</sup>: Միևնույն ժամանակ, եթե վերադաս դատական ատյանը հրապարակայնության բացակայության պայմաններում բեկանում է ստորադաս դատարանի կողմից հրապարակային քննության արդյունքում կայացրած արդարացման դատավճիռը, ապա առկա է 6-րդ հոդվածի խախտում: Նման դիրքորոշում Դատարանն արտահայտել է Իգուալ Կոլն ընդդեմ Իսպանիայի գործով, երբ հայցվորն արդարացվել է ա-

<sup>1</sup> Տե՛ս X-ն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական Հանձնաժողովի N1475/62 որոշում, Coll. Dens.31, p.43 (1963):

<sup>2</sup> Տե՛ս X-ն ընդդեմ Նորվեգիայի բողոք N3444/67, 13YBECHR 302 (1970); Sunday Times v. UK, Series A no 30 (1979);

<sup>3</sup> Քրաքսին ընդդեմ Իտալիայի գործով դատարանը նշել է. «Պրոֆեսիոնալ դատավորների փորձն ու պատրաստվածությունը թույլ են տալիս վերջիններիս ուշադրություն չդարձնել արտաքին ներազդեցությանը»: (Craxi v. Italy, բողոք N34896/97, 5 December, (2002)):

<sup>4</sup> Տե՛ս The European System for the Protection of Human Rights. Edited by R. St. J. Macdonald, F. Matscher, H Petzold. Martinus Nijhoff Publishers, Dordrecht, Boston, London. էջ 393.

<sup>1</sup> Տե՛ս Pretto, para. 22; Axen, para. 26; Sutter, para. 27; Campbell and Fell, para. 91.

<sup>2</sup> Տե՛ս Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights. Human rights handbooks, No.3, 2006, էջ 20:

<sup>3</sup> Տե՛ս Nuala Mole and Catharina Harby, նույն աշխատությունը, էջ 21:



ցած էր 5 դատավորից, որոնցից երկուսը կես դրույքով աշխատող դատավորներ էին, և որոնք հանդես էին եկել որպես մյուս կողմի ներկայացուցիչ միևնույն դիմողի կողմից բերված առանձին գործով: Դատարանը նկատել է, որ կես դրույքով աշխատող դատավորների վերաբերյալ օրենսդրությունը և պրակտիկան ընդհանրապես կարող են 6-րդ հոդվածին համապատասխանող լինել: Քանի որ պատճառական կապ չկար դիմողի գործի և առանձին քննությունների միջև, որտեղ երկու իրավաբանները գործել էին որպես օրինական ներկայացուցիչներ, փաստորեն, ժամանակային համընկնում էր տեղի ունեցել: Դիմողն այդ առումով կարող էր մտահոգվելու պատճառ ունենալ, որ տվյալ դատավորը կշարունակեր նրան դիտել որպես հակառակորդ կողմ, և այս իրավիճակը միանգամայն օրինական մտահոգություն կարող էր առաջացնել, որ դատավորը գործին անհրաժեշտ անկողմնակալությամբ չի մտենա:

Այսպիսով, այն հասարակ փաստը, որ դատավորն արդեն որոշում է կայացրել նախքան դատավարությունը, ինքնին չի կարող արդարացնել նրա անկողմնակալության վերաբերյալ մտավախությունները: Այն, ինչը հաշվի է առնվում տվյալ դեպքում, նախքան դատավարությունը դատավորի կողմից ընդունած միջոցների ծավալն է: Դատավորի կողմից գործին քաջատեղյակ լինելը և գործի խորը իմացությունը նույնպես չի պարունակում գործի ըստ էության քննության արդյունքում որոշում կայացնելու պահին նրա անկողմնակալության հարցում մտավախություն: 6(1) հոդվածի խախտում արձանագրելու համար դատավորի կողմից գործի իմացությունից զատ պահանջվում են նաև հատուկ հատկանիշներ, ինչպես նկարագրված է վերը նշված գործերում: Վերջապես ազատ տվյալների նախնական գնահատականը չպետք է համարվի վերջնական գնահատականը կանխորոշող: Կարևոր է, որ այդ գնահատականը հայտնվի որոշման հետ միասին և հիմնված լինի դատական նիստում ծագած և քննության առնված հանգամանքների վրա:

Եթե վերաքննիչ բողոք ներկայացնելուց հետո որոշումը վերացվել է և լրացուցիչ քննության է ուղարկվել առաջին ատյանի դատարան, ապա տվյալ դեպքում ինքնաբերաբար տեղի չի ունենում 6-րդ հոդվածի խախտում, քանի որ նույն դատական մարմինը

ՀՀ դատական պրակտիկայում ողջամիտ ժամկետի պահպանման վերաբերյալ կարևոր պարզաբանումներ է պարունակում Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի «Գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման մասին» 2006 թվականի հունիսի 13-ի որոշումը:

Սակայն, քանի որ քննարկվող կատեգորիան նորույթ է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, ուստի դրա մեկնաբանության հարցում նպատակահարմար է անդրադառնալ Սարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) վճիռներին, որոնցում այն ստացել է առավել ամբողջական բացահայտում:

Այսպես, ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է գործի քննության չափից ավել ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը: Նշվածով հանդերձ քննարկվող երաշխիքի նշանակությունն այն է, որ պետք է ապահովվի ողջամիտ ժամկետում համապատասխան դատավարական ակտի կայացումը՝ դրանով իսկ վերջ դնելով այն անորոշ վիճակին, որում գտնվում է անձը՝ կապված քաղաքացիաիրավական բնույթի իր վիճակի կամ իր նկատմամբ առաջադրված մեղադրանքի հետ, ինչը կարևոր է ինչպես շահագրգիռ անձի համար, այնպես էլ «իրավական որոշակիության» ապահովման տեսանկյունից<sup>1</sup>:

Քրեական գործերով ողջամիտ ժամկետի հաշվարկը սկսվում է ավելի շուտ, քան քրեական գործը դատարան ուղարկելը: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին կալանավորելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունը սկսելու պահից (*Էկլեն ընդդեմ Գերմանիայի, 15.07.1982թ.*

<sup>1</sup> St'u Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of article 6 of the European Convention on Human Rights. Human rights handbooks, No. 3. Directorate General of Human Rights Council of Europe. 2006, էջ 26:

կետ 73, Կորիզլիանոն ընդդեմ Իտալիայի, 10.12.1982թ. կետ 34, Դևեերն ընդդեմ Բելգիայի, 27.02.1980թ., կետ 42):

Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը տարածվում է քրեական դատավարության բոլոր փուլերի վրա: Ընդ որում, ժամկետի հաշվարկն ավարտվում է, երբ ավարտվում է քննությունը ամենաբարձր ատյանի դատարանում, այսինքն՝ երբ կայացվում է գործն ըստ էության լուծող վերջնական որոշում: Այլ կերպ՝ գործի քննության ընդհանուր տևողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում<sup>1</sup>:

Այս առումով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 388-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է գործը քննել և որոշում կայացնել ողջամիտ ժամկետում: Գործի քննության ողջամիտ ժամկետը որոշելիս հաշվի է առնվում նաև առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի՝ վճռաբեկ դատարանը դատական նիստում գործը քննում է ողջամիտ ժամկետում:

Ողջամիտ ժամկետի առնչությամբ կարևոր է այն, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել կոնկրետ գործի առանձնահատուկ հանգամանքները և այդ իսկ պատճառով որևէ հստակ ժամանակային սահման նշել հնարավոր չէ:

Դրա հետ միասին, Եվրոպական դատարանը մշակել է չափանիշներ, որոնք հաշվի առնելով՝ որոշվում է ողջամիտ ժամկետի խախտման հարցը. *գործի բարդությունը, դիմողի վարքագիծը (խոսքն այն անձի մասին է, ով դիմել է Եվրոպական դատարան-Ա.Թ.), դատական ու վարչական մարմինների վարքագիծը և ռիսկի աստիճանը դիմողի համար*:

<sup>1</sup> Այս մասին տե՛ս նաև, Consultative Council of European Judges (CCJE). Opinion no 6 (2004) of the Consultative Council of European Judges (CCJE) to the attention of the Committee of Ministers on fair trial within a reasonable time and judge's role in trials taking into account alternative means of dispute settlement as adopted by the CCJE at its 5<sup>th</sup> meeting (Strasbourg, 22-24 November 2004), կետ 98:

Մեկ այլ օրինակ վերաբերում է Ֆերանտելլին և Սանտանջելոն ընդդեմ Իտալիայի գործին<sup>1</sup>, որտեղ Դատարանը գտել է 6-րդ հոդվածի խախտում, երբ վերաքննիչ դատարանում նախագահող դատավորը ներգրավված է եղել մեկ այլ գործով դատավճիռը կայացրած դատարանի կազմի մեջ, որով մեղադրյալները մեղավոր են ճանաչվել: Այդ դատավճիռը պարունակում էր մի շարք հղումներ, որոնք վերաբերում էին դիմողներին և գործին նրանց մասնակցությանը: Ավելին, վերաքննիչ դատարանի՝ դիմողներին մեղավոր ճանաչող դատավճիռը հղում էր կատարում նախորդ դատավճռի մի շարք հատվածների, որոնք վերաբերում էին դիմողների դատապարտմանը: Դատարանը գտավ, որ այս հանգամանքները բավարար են վերաքննիչ դատարանի անկողմնակալության կապակցությամբ դիմողների մտահոգությունը օբյեկտիվորեն արդարացված ճանաչելու համար:

Օբերշլիք համար առաջինն ընդդեմ Ավստրիայի գործում<sup>2</sup>, որը վերաբերում էր վերաքննիչ դատաքննություններին, երեք դատավորներ մասնակցել են նաև առաջին ատյանի դատարանի դատավճռի ընդունմանը: Եվրոպական դատարանը դա համարել է որպես անկողմնակալ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտում:

Հասան ընդդեմ Նիդեռլանդների գործով<sup>3</sup> վերաքննիչ դատարանում նախագահող դատավորը պետք է որոշում ընդուներ այնպիսի որոշման դեմ բերված բողոքի կապակցությամբ, որի համար ինքն էր պատասխանատու: Դատարանը գտավ, որ նախագահող դատավորի օբյեկտիվ անկողմնակալության վերաբերյալ դիմողի մտահոգությունն արդարացված է և արձանագրեց 6-րդ հոդվածի խախտում:

Ընդդեմ Շվեյցարիայի քննվող մի գործով<sup>4</sup> դատարանը արձանագրել է 6(1) հոդվածի խախտում, որտեղ դիմողը դատաքննությունների մեջ էր ներգրավված այն դատարանի կողմից, որը բաղկա-

<sup>1</sup> Տե՛ս Ferrantelli and Santargelo v. Italy, Judgement of 07 August 1996:

<sup>2</sup> Տե՛ս Oberschlick v. Austria, Judgement of 23 May 1991:

<sup>3</sup> Տե՛ս De Haan v. the Netherlands, Judgement of 26 August 1997:

<sup>4</sup> Տե՛ս Wettstein v. Switzerland, Judgement of 21 December 2000:

վորն ամենչվել է ռասսիզմի համար երդվյալներին մեղադրելու փաստի հետ, որը, չնայած դրա անորոշությանը և ոչ հստակությանը, կարելի էր բովանդակային համարել: Տվյալ հանգամանքներում դատարանն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել, որոնք հաստատում էին, որ դատարանը հանդես է եկել որպես անկողմնակալ մարմին՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի լույսի ներքո, և առաջարկել է բավարար երաշխիքներ՝ այդ կապակցությամբ ծագած ցանկացած կասկած վերացնելու համար»<sup>1</sup>:

Սակայն հետագայում Սանդերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով դատարանը եկավ հետևյալ եզրահանգման. քանի որ դատավորը պատշաճ կերպով չարձագանքեց երդվյալների կողմից ռասսիզմի նման դրսևորումներին, ապա տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում: Դատարանը հայտարարել է, որ՝ «...Դատավորը պետք է արձագանքեր առավել ճկունությամբ, քան թույլ փորձեր կատարեր երդվյալներին համոզելու համար, որպեսզի վերջիններս զերծ մնան իրենց համոզմունքներից և քննությունն իրականացնեն՝ հիմնվելով բացառապես ապացույցների վրա: Վերը նշվածը չձեռնարկելով՝ դատավորը բավարար երաշխիքներ չի ներկայացրել, որոնք կարող էին բացառել դատարանի անկողմնակալության վերաբերյալ ցանկացած օբյեկտիվորեն արդարացված կամ հիմնավոր կասկած: Դրանից հետևում է, որ դատարանը, որը դիմողին ճանաչել է մեղավոր, օբյեկտիվության տեսանկյունից անկողմնակալ չի եղել»<sup>2</sup>:

Դատարանի անկողմնակալության հարցին վերաբերող մի շարք նախադեպերում քննարկվում են այնպիսի իրավիճակներ, երբ դատական քննության ընթացքում դատավորը իրականացնում է տարբեր դատավարական գործառնություններ: Պյերսակն ընդդեմ Բելգիայի գործով<sup>3</sup> դիմողի գործը քննող դատավորը նախկինում աշխատել է դիմողի գործի նախնական քննություն իրականացնող բաժանմունքում, և նա է դիմողի նկատմամբ հարուցել քրեական գործ: Դատարանն արձանագրել է 6-րդ հոդվածի խախտում:

<sup>1</sup> St'u Gregory v. the United Kingdom, Judgement of 25 February 1997:

<sup>2</sup> St'u Sander v. the United Kingdom, Judgement of 09 May 2000:

<sup>3</sup> St'u Piersack v. Belgium, Judgement of 01 October 1981:

**Գործի բարդությունը:** Գործի բարդության աստիճանը որոշելիս կարևոր են դրա հետ կապված բոլոր հարցերը: Բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստերի, այնպես էլ իրավական հարցերի հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս այնպիսի գործոններին, ինչպիսիք են հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների քանակը, միջազգային գործոնները, տվյալ գործի միացումը այլ գործերին, ինչպես նաև նոր անձանց ներգրավումը դատավարությանը:

Դատավարության չափազանց տևական լինելը երբեմն կարող է արդարացվել գործի չափից ավելի բարդությամբ: Օրինակ՝ Բողդաերտի գործով Եվրոպական դատարանը չարդարացված երկար չի համարել գործի քննության տևողությունը 6 տարի և 3 ամիս ժամկետով, քանի որ խոսքը վերաբերել է սպանության բարդ քննությանը և դրան զուգահեռ երկու գործերի քննությանը (*Բողդաերտն ընդդեմ Բելգիայի, 12.10.1992թ., կետ 39*): Սակայն դրա հետ միասին նույնիսկ ամենաբարդ գործերի դեպքում կարող են լինել չարդարացված ձգձգումներ: Այսպես, Ֆերրանտելիի և Սարտանժելոյի գործով Եվրոպական դատարանը արդարացված չի համարել գործի քննությունը 16 տարվա ընթացքում, որն առանձնացել է անչափահասների մասնակցությամբ, չնայած, որ կապված է եղել բարդ սպանության քննության հետ (*Ֆերրանտելիի և Սարտանժելոյի ընդդեմ Իտալիայի, 07.08.1996թ.*):

**Դիմողի վարքագիծը:** Եթե գործի քննության ձգձգումը տեղի է ունենում դիմողի մեղքով, ապա դա, անկասկած, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է: Այնուամենայնիվ, չի կարելի դիմողին մեղադրել այն բանի համար, որ նա ամբողջությամբ օգտագործել է ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցները: Չի կարելի դիմողից պահանջել ակտիվ համագործակցություն դատական մարմինների հետ, ինչը կարող է հանգեցնել նրա դատապարտման: Այն դեպքում, երբ դիմողը ձգտում է արագացնել դատավարության ընթացքը, ապա դա կդիտարկվի հօգուտ վերջինիս, սակայն նրա մոտ դատավարության ընթացքն արագացնելու ցանկության բացակայությունը չի կարող որոշիչ նշանակություն ունենալ:

Նշվածի կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ դիմողը պետք է միայն «ցուցադրի քննության՝ իրեն անմիջականորեն վերաբերող բոլոր փուլերին մասնակցելու պատրաստականություն, ձեռնպահ մնա դատավարությունը ձգձգող հնարքներից, ինչպես նաև դատավարությունն արագացնելու նպատակով առավելագույնս օգտագործի ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցները» (Յունիս Ալիսենտարիա Սանդրես ՍԱ-ն ընդդեմ Իսպանիայի, 07.07.1989թ. կետ 35):

**Դատական և վարչական մարմինների վարքագիծը:** Ողջամիտ ժամկետի խախտման հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի նաև գործի քննությունը պետական մարմինների կողմից ձգձգելու հարցը: Դրանով իսկ պետությունը պատասխանատվություն է կրում ոչ միայն դատական, այլ նաև վարչական մարմինների կողմից ողջամիտ ժամկետի երաշխիքների չպահպանման համար:

Գործի քննության ողջամիտ տևողության հարցը քննարկելիս առաջնահերթ նշանակություն ունի արդարադատության պատշաճ իրականացման ապահովումը, որը կարող է իրացվել քննությունն իրականացնող մարմինների կողմից գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և ժամանակին ուսումնասիրությամբ: Ստրասբուրգյան չափանիշների համաձայն, դատարանները կրում են առանձնահատուկ պարտականություն ապահովել, որպեսզի գործի քննության ընթացքում որևէ դեր ունեցող բոլոր մասնակիցները կատարեն իրենց կախված ամեն ինչ՝ գործի քննության ցանկացած չարդարացված ձգձգումից խուսափելու նպատակով:

Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ պետությունները պարտավոր են իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որպեսզի դատարանները հնարավորություն ունենան գործել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքին համապատասխան: Ուստի, եթե գործի քննության ձգձգման պատճառ է դառնում պետության դատական համակարգի աշխատանքի ծանրաբեռնվածությունը, ապա կարող է տեղի ունենալ կոնվենցիայի 6-րդ հոդվածում նշված «ողջամիտ ժամկետի» երաշխիքի խախտում, քանի որ պետությունը համարժեք միջոցներ չի ձեռնարկել նշված

պով ստուգում չի կատարել դատական քննության անկողմնակալության կապակցությամբ՝ դրանով իսկ դիմողին զրկելով իրավիճակն ուղղելու հնարավորությունից, որը հակասում է Կոնվենցիայի պահանջներին: Այդպիսով, Դատարանն արձանագրեց 6-րդ հոդվածի խախտում:

Այն դեպքերում, երբ ազգային դատական մարմինն իրականացրել է պատշաճ քննություն կողմնապահության մեղադրանքի փաստով և եկել է այն եզրակացության, որ քննարկվող դատական քննությունը եղել է արդարացի, Դատարանը հակված չէ կասկածի տակ դնել տվյալ որոշումը: Գրեգորին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով<sup>1</sup> քննության ընթացքում դատավորը երդվյալ ատենակալներից ստացել է հետևյալ նամակը. «Երդվյալները ցույց են տալիս ռասիստական տրամադրություններ: Անդամներից մեկը պետք է դուրս գա ատենակալների կազմից»: Դատարանը նամակը ցուցադրում է մեղադրանքի և պաշտպանության կողմերի ներկայացուցիչներին: Դատարանը նաև դիմում է ատենակալներին՝ զգուշացնելով նրանց՝ գործը քննել միայն ապացույցների հիման վրա՝ զերծ մնալով բոլոր տեսակի կանխակալ համոզումներից: Դատարանը վերջինս բավարար է համարել 6-րդ հոդվածի լույսի ներքո: Նա կարևոր է համարել, որ պաշտպանը չի պահանջել ատենակալների կազմի փոփոխություն և դռնբաց դատաքննության ժամանակ նրանց չի դիմել, թե արդյոք նրանք ընդունակ են շարունակել քննությունը և ընդունել որոշում՝ բացառապես ապացույցների հիման վրա: Դատաքննությունն իրականացնող դատավորը հստակ, մանրամասն և համոզիչ հայտարարություն է արել՝ կոչ անելով ատենակալներին զերծ մնալ «բոլոր տեսակի նախահանգումներներից»: Այնուհետև, համեմատելով տվյալ գործը Ռեմլին ընդդեմ Ֆրանսիայի գործի հետ, դատարանը հայտարարել է, որ՝ «Այն գործում քննությունն իրականացնող դատավորները չկարողացան պատշաճ կերպով արձագանքել այն հայտարարությանը, որ ինչ-որ մեկը լսել է, թե ինչպես երդվյալներից մեկը, որի անձը հնարավոր էր պարզել, ասել է, որ ինքը ռասիստ է: Իսկ տվյալ գործում դատա-

<sup>1</sup> Stiu Gregory v. the United Kingdom, Judgement of 25 February 1997:

րաբերյալ կան հիմնավոր կասկածներ, պետք է դուրս գա դատարանի կազմից<sup>1</sup>:

Դատական պրակտիկային համապատասխան այստեղից է գալիս այն վստահությունը, որը դատարանները պետք է ներշնչեն ժողովրդավարական հասարակությունում և նախևառաջ՝ քրեական դատավարությունում՝ մեղադրյալների մոտ: Դա նշանակում է, որ կոնկրետ գործում դատավորներից որևէ մեկի անկողմնակալության խնդրում կասկածելու լեզուի հիմքերի առկայության հարցը լուծելիս ամբաստանյալի կարծիքը հաշվի է առնվում, սակայն այն չի խաղում որոշիչ դեր: Որոշիչ համարվում է այն, թե կարող են արդյոք դիմողի մտավախությունները համարվել օբյեկտիվ հիմնավորված<sup>2</sup>:

Տվյալ դեպքում նշանակություն ունի նաև ազգային օրենսդրության մեջ դատական քննության անկողմնակալությունն ապահովող ընթացակարգերի առկայությունը: Եվ այն դեպքում, երբ Կոնվենցիան ուղղակիորեն այնպիսի մեխանիզմների գոյության անհրաժեշտության մասին դրույթ չի ձևակերպում, որոնց օգնությամբ դատաքննության մասնակիցները կկարողանային վիճարկել նրա անկողմնակալությունը, 6-րդ հոդվածի խախտումները, որպես կանոն, տեղի են ունենում դրանց բացակայությամբ: Եթե դիմողը կասկածներ է հայտնում դատարանի անկողմնակալության վերաբերյալ, ապա անհրաժեշտ է քննություն իրականացնել, եթե միայն նման կասկածը «ամբողջովին զուրկ չէ հիմքերից»:

Ամենից հաճախ նման հարց առաջանում է ռասիզմի դրսևորումներին վերաբերող գործերով: Ներքոհիշյալ գործերում շարադրված սկզբունքները հավասարապես կիրառելի են նաև կողմնապահության կամ կանխակալ կարծիքի այլ ձևերի նկատմամբ:

Ռենլին ընդդեմ Ֆրանսիայի գործով ատենակալներից մեկի հայտարարությունը, որ «ես նաև ռասիստ եմ» լսել էր երրորդ անձը: Ազգային դատական մարմինը որոշել է գործին չմիացնել այնպիսի փաստեր, որոնք իբրև թե տեղի են ունեցել դատարանի դահլիճից դուրս: Դատարանը նշել է, որ ազգային դատարանը պատշաճ կեր-

իրավիճակը շտկելու համար: Ընդ որում, համարժեք միջոցները կարող են ներառել լրացուցիչ դատավորների և համապատասխան այլ աշխատակիցների նշանակումը, նրանց որակավորման բարձրացումը և այլն: Դրա հետ մեկտեղ, խախտում չի արձանագրվի, եթե ձգձգումը լինի ժամանակավոր ու բացառիկ և եթե պետությունը ժամանակին ձեռնարկի դրա վերցմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ (*Չիմներմանը և Շտայները ընդդեմ Շվեյցարիայի, 13.07.1983թ., կետ 29*):

**Ռիսկի աստիճանը դիմողի համար:** Այս պահանջը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ անձը գտնվում է անազատության մեջ (օրինակ՝ կալանքի տակ) կամ գործի քննությունը դիմողի համար ունի որոշիչ նշանակություն կամ առանձնանում է խիստ որոշակի յուրահատկությամբ:

Օրինակ, Եվրոպական դատարանը Իզնակկուլու-Չենիդեյի գործով նշել է, որ «երեխաներին վերաբերող բոլոր որոշումները պետք է կայացվեն արագացված կարգով» (*Իզնակկուլու-Չենիդեյն ընդդեմ Ռումինիայի, 25.01.2000թ.*):

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման փաստը գնահատելիս Եվրոպական դատարանի կողմից հաշվի են առնվում միայն օբյեկտիվ պատճառներ: Իսկ մնացածը՝ դատարանների ծանրաբեռնվածությունը, դատավորների անփորձ լինելը, դատական կամ ընդհանրապես իրավական համակարգի անկատարությունը, մեղադրյալի և նրա պաշտպանի, ինչպես նաև գործի մյուս մասնակիցների վարքագիծը գործի քննությունը ձգձգելու օբյեկտիվ պատճառ դիտվել չեն կարող:

<sup>1</sup> St'u Piersack v. Belgium, Judgement of 01 October 1981; Neumeister v. Austria, Judgement of 27 June 1968:

<sup>2</sup> St'u Fey v. Austria, Judgement of 24 February 1993:

## 2.5. ՕՐԵՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՆԿԱԽ ԵՎ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԴԱՏԱՐԱՆ

**Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է յուրաքանչյուրի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից դատաքննության իրավունքը**

### 1) Անկախ և անկողմնակալ դատարան.

Այս երկու չափանիշները՝ անկախությունը և անկողմնակալությունը, սերտորեն կապված են միմյանց հետ, և հաճախ դատարանը դիտարկում է դրանք միաժամանակ:

Եվրոպական կոնվենցիան որևէ կերպ Եվրախորհրդի անդամ պետություններին չի պարտավորեցնում, թե ինչպիսի դատական համակարգ ունենալ, ինչ կարգով նշանակել կամ ընտրել դատավորին, գործերը քննել միանձնյա, թե՛ կոլեգիալ կարգով և այլն:

Եվրոպական կոնվենցիայի միակ պահանջը հետևյալն է՝ ունենալ այնպիսի դատարան, որը լինի անկախ, անկողմնակալ, ստեղծված լինի օրենքով, գործի հրապարակայնորեն և գործերը քննի ողջամիտ ժամկետներում:

Դատարանի անկախությունն առաջին հերթին պայմանավորված է դատավորի անկախությամբ, իսկ դա նշանակում է, որ դատավորի նշանակումը, առաջխաղացումը, պատասխանատվությունը կարգավորող նորմերը պետք է ամրագրված լինեն հիմնարար օրենքով:

Դատարանը նախևառաջ հիշեցնում է, որ գործի արդարացի քննության իրավունքը՝ ներառյալ իր գործը անկախ դատարանի կողմից լսելու իրավունքը, հանդիսանում է կարևորագույն բաղկացուցիչ, որը առաջնային տեղ է զբաղեցնում ժողովրդավարական հասարակությունում: Որպեսզի որոշվի այն հարցը, թե կարելի է տվյալ դատարանին համարել «անկախ», հարկ է ուշադրություն դարձնել, մասնավորապես դրա անդամների նշանակման միջոցներին, պաշտոնավարման տևողությանը, արտաքին ճնշումներից

մանը համապատասխան, որը արտացոլում է կոնկրետ գործով տվյալ դատավորի անձնական համոզմունքները, այնպես էլ օբյեկտիվ մոտեցումներին համապատասխան, որը նշանակում է, թե առկա եղել են արդյոք բավարար երաշխիքներ, որպեսզի բացառվի այս առիթով որևէ կասկած:

Պիերսակն ընդդեմ Բելգիայի գործով Դատարանը հայտարարել է, որ՝ «Չնայած որ անկողմնակալությունը սովորաբար նշանակում է նախահամոզման կամ կողմնապահության բացակայություն, դրա բացակայությունը կամ, ընդհակառակը՝ առկայությունը կարող է ստուգվել տարբեր միջոցներով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան: Տվյալ համատեքստում կարելի է տարբերություններ անցկացնել կոնկրետ գործով տվյալ դատավորի անձնական համոզմունքներն արտացոլող սուբյեկտիվ մոտեցման և օբյեկտիվ մոտեցման միջև, որը որոշում է, թե արդյոք եղել են բավարար երաշխիքներ այդ կապակցությամբ ցանկացած կասկած բացառելու համար»<sup>1</sup>:

Սուբյեկտիվ անկողմնակալությունը ենթադրվում է, քանի դեռ չի ապացուցվի հակառակը: Տվյալ կանխավարկածը շատ ուժեղ է, քանի որ գործնականում բավականին դժվար է ապացուցել անձնական կողմնապահության առկայությունը: Ինչ վերաբերվում է օբյեկտիվ անկողմնակալությանը, ապա Ֆեյն ընդդեմ Ավստրիայի գործով դատարանը հայտարարել է, որ «օբյեկտիվության թեստի սահմաններում անհրաժեշտ է որոշել՝ արդյոք անկախ դատավորի անձնական վարքագծի համար գոյություն ունե՞ն անվիճելի փաստեր, որոնք կարող են կասկած հարուցել նրա անկողմնակալության վերաբերյալ: Այստեղ նույնիսկ արտաքին հատկանիշները կարող են ձեռք բերել որոշակի նշանակություն: Այսպես՝ պետք է ինքնաբացարկ հայտնի յուրաքանչյուր դատավոր, ում անկողմնակալության հարցում կարելի է օրինական մտավախություն ունենալ: Դատարանը վճռել է, որ ցանկացած դատավոր, որի անկողմնակալության վե-

<sup>1</sup> Stéu Piersack v. Belgium, Judgement of 01 October 1981:

կողմնակալության հետ, ինչը այդ առումով չէր համապատասխանում 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Պարտավորեցնող այնպիսի որոշում կայացնելու իրավունքը, որը չի կարող ի վնաս գործով կողմի փոփոխվել ոչ դատական իշխանությունների կողմից, համարվում է ինքնին դատարանի անբաժանելի իրավունքը: Սա նաև այն «անկախության» տարրերից մեկն է, որը պահանջում է 6-րդ հոդվածի 1-ին մասը<sup>1</sup>: Այդ կապակցությամբ չի հայտնաբերվել 6-րդ հոդվածի խախտում զինվորական տրիբունալների և այլ զինվորական կարգապահական մարմինների կողմից: Գործադիր մարմինը կարող է ընդունել ղեկավար ցուցումներ իր անդամների համար՝ կապված նրանց պարտականությունները կատարելու հետ, բայց նման ղեկավար ցուցումները ընդհանրապես չպետք է դիտվեն որպես դատական բնույթի որոշումներ ընդունելու կանոններ<sup>2</sup>:

Այն պահից, երբ դատարանը իր անդամների կազմում ունի անձ(...), որը կողմերից մեկի նկատմամբ գտնվում է ծառայողական լիազորությունների և ծառայողական ենթակայության վիճակում, վիճարկողները կարող են օրինական կասկածել այդ անձի անկախության խնդրում: Նման իրավիճակը կասկածի (վտանգի) տակ է դնում այն վստահությունը, որը դատարանները պետք է ստանան ժողովրդավարական հասարակության մեջ:

### **բ) Անկողմնակալություն**

Այս սկզբունքը գործում է և՛ երդվյալների, և՛ պրոֆեսիոնալ, և՛ ոչ պրոֆեսիոնալ դատավորների համար: Որոշ դեպքերում կոնկրետ իրավիճակում դժվար է տարանջատել անկախություն և անկողմնակալություն հասկացությունները: Այդժամ դատարանը դրանք դիտարկում է միասին:

6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակներից ելնելով՝ անկողմնակալությունը պետք է զնահատվի ինչպես այն սուբյեկտիվ մոտեց-

<sup>1</sup> St' u Findlay v. the United Kingdom, Judgement of 25 February 1997:

<sup>2</sup> St' u Campbell and Fell v. the United Kingdom, Judgement of 28 June 1984:

զերծ մնալու երաշխիքներին և յուրաքանչյուր մարմնի համար արտաքին անկախության հատկանիշների առկայությանը:

Դատավորի անկախության հետ սերտորեն կապված է դատավորի անկողմնակալության գաղափարը: Եվրոպական դատարանը Պիերսակն ընդդեմ Բելգիայի գործում նշել է. «Միայն այն փաստը, որ դատավորը երբևէ աշխատել է դատախազությունում, դեռևս հիմք չէ նրա անաչառությանը կասկածելու համար ... սակայն, եթե դատախազությունում, ըստ իր նախկին աշխատանքի բնույթի, դատավորը կարող էր գործ ունենալ տվյալ դեպքի հետ և հետագայում մասնակցել է դրա քննությանը, ապա հանրությունն իրավունք ունի մտավախություն ունենալու, որ բացակայում են անկողմնակալության բավարար երաշխիքները»:

Եվրոպական դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտում, քանի որ դատարանում գործը քննող դատավորը նախկինում նույն այդ գործով ղեկավարել է Բրյուսելի դատախազության «Վ» սեկցիան, որը և իրականացրել է նախաքննությունը:<sup>1</sup>

### **ա) Անկախություն**

Որպեսզի որոշենք, թե կարելի է տվյալ դատարանը համարել «անկախ», հարկ է ուշադրություն դարձնել մասնավորապես դրա անդամների նշանակման միջոցների, պաշտոնավարման ժամկետի, արտաքին ճնշումներից զերծ մնալու երաշխիքների առկայության և տվյալ մարմնի համար անկախության արտաքին հատկանիշներ ունենալու հանգամանքի վրա<sup>2</sup>:

Տվյալ դեպքում ուշադրության արժանի հանգամանքներից է նաև դատավորների անփոփոխելիությունը պաշտոնավարման ամբողջ ժամանակահատվածում:

Իրենց իրավասությունների ժամանակահատվածում դատավորների անփոփոխելիությունը ընդհանուր առմամբ պետք է դիտվի

<sup>1</sup> St' u Европейский суд по правам человека, т. 1. М. 2000, с. 418-421.

<sup>2</sup> St' u Campbell and Fell v. the United Kingdom, Judgement of 28 June 1984:

որպես նրանց անկախության արդյունք և որպես 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ: Նույնիսկ եթե դատավորների անփոփոխելիությունը ֆորմալ օրենքով սահմանված չէ, դա դեռևս չի ենթադրում նրանց կախվածություն գործադիր իշխանությունից, եթե այս սկզբունքը փաստացի ճանաչված է և գործում են դատարանների անկախության մյուս երաշխիքները:

Դատարանը հիշեցնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «դատարան» կոչվելու իրավունք ունի միայն այն մարմինը, որը օժտված է լիարժեք իրավազորությամբ և բավարարում է այնպիսի պահանջներին, ինչպիսիք են անկախությունը գործադիր իշխանությունից և գործով հանդես եկող կողմերից<sup>1</sup>:

Դատական մարմնում իրավաբանական որակավորում ունեցող դատավորների կամ այլ ներկայացուցիչների առկայությունը, վերջինիս անկախության վառ ապացույցն է<sup>2</sup>:

Սրանեկն ընդդեմ Ավստրիայի գործով<sup>3</sup> դատարանը որոշել է, որ քննող մարմինը (անշարժ գույքի հետ կապված գործարքների տարածքային բաժանմունքը) չի եղել անկախ: Կառավարությունը հանդես էր գալիս որպես դատավարության կողմերից մեկը, և կառավարության ներկայացուցիչը դատարանում որպես հաշվետու հանդես եկող անձի պետք էր հանդիսանում:

Այն փաստը, որ դատական մարմնի անդամները նշանակվում են գործադիր իշխանության կողմից, ինքնին չի հանդիսանում Կոնվենցիայի խախտում<sup>4</sup>: Կոնվենցիան խախտված կարող է համարվել այն դեպքում, եթե դիմողը կարողանա ցույց տալ, որ դատական մարմնի անդամներին նշանակելու կարգը, ընդհանուր առմամբ, կրել է անբավարար բնույթ, կամ որ գործի քննության համար հատուկ մարմնի հաստատությունը թելադրված է եղել այնպիսի դրդապատճառներով, որոնք կապված են դրա ընթացքի վրա ազդելու փորձի հետ:

<sup>1</sup> St'u Ringeisen v. Austria, Judgement of 16 July 1971:

<sup>2</sup> St'u Le Compte Van Leuven and De Meyere v. Belgium, Judgement of 23 June 1981:

<sup>3</sup> St'u Spramek v. Austria, Judgement of 22 October 1984:

<sup>4</sup> St'u Campbell and Fell v. the United Kingdom, Judgement of 28 June 1984:

Ուստի, եթե դատարանի անդամները նշանակվում են որոշակի տևողությամբ, ապա դա դիտարկվում է որպես նրա անկախության երաշխիք: Լե Կոնսոն ընդդեմ Բելգիայի գործով<sup>1</sup> ընդունվել է, որ վերաքննիչ խորհրդի անդամների՝ 6-ամյա տևողությամբ պաշտոնավարությունը հանդիսանում է դրա անկախության երաշխիքը: Քենպբելը և Ֆելլն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում<sup>2</sup> Այցելուների բանտային խորհրդի անդամները նշանակվում էին 3-ամյա ժամկետով: Այդպիսի ժամկետը համարվել է համեմատաբար ոչ երկարատև, սակայն, դրա հետ մեկտեղ, նշվել է, որ խորհրդի անդամներն իրենց պարտականություններն իրականացնում են անհատուցելիության հիման վրա, և որ դժվար է գտնել անձինք՝ նման աշխատանքի համար: Այդ պատճառով 6-րդ հոդվածի խախտում չի հայտնաբերվել:

Անկախության արտաքին ատրիբուտների նկատմամբ փոքրինչ կասկածելի վերաբերմունքը կարող է որոշ չափով ունենալ օբյեկտիվ արդարացում: Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի գործով<sup>3</sup> որոշմանը իրավախախտումների քննությանը զբաղվող տեղական «Ոստիկանական հանձնաժողովը» բաղկացած էր սոսկ մեկ անդամից՝ ոստիկանական պաշտոնյայից, որը գործում էր իր սեփական հայեցողությամբ: Չնայած որ նա չպետք է ենթարկվեր իշխանությունների ցուցումներին, որ նա երդում է տվել և ենթակա չէ ազատման, ի վերջո՝ պետք է վերադառնար իր պարտականությունների կատարմանը քաղաքապետարանում: Նրան կարելի էր դիտել որպես ոստիկանության ներկայացուցիչ, որը ենթարկվում է իր ղեկավարներին և համերաշխ է իր գործընկերների հետ, ինչը, հետևաբար, կարող էր վերացնել այն վստահությունը, որը պետք է ունենան դատարանները: Այդպիսով, եղել են հիմնավոր կասկածներ՝ կապված Ոստիկանական հանձնաժողովի անկախության և կազմակերպչական ան-

<sup>1</sup> St'u Le Compte Van Leuven and De Meyere v. Belgium, Judgement of 23 June 1981:

<sup>2</sup> St'u Campbell and Fell v. the United Kingdom, Judgement of 28 June 1984:

<sup>3</sup> St'u Belilos v. Switzerland, Judgement of 29 April 1988:



քին, որը տրվել է քրեական պատասխանատվության ենթարկելու մասին նախազգուշացնելուց հետո: Այդ մասին են վկայում նաև մեր կողմից քննիչների շրջանում անցկացված հարցումները, որոնց համաձայն առավել հավաստի են համարվում վկայի և տուժողի ցուցմունքները, քանի որ վերջիններս նախազգուշացվում են սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունքի ապացուցողական նշանակությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է նախատեսել դրա հավաստիությունն ապահովող երաշխիքներ, ինչպիսին, մեր կարծիքով, կարող է լինել կասկածյալի և մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության նախատեսումը:

նույն կամ այլ կազմով կրկին քննում է տվյալ հարցը<sup>1</sup>: Թոմանն ընդդեմ Շվեյցարիայի գործով<sup>2</sup> դիմողը կրկնակի դատապարտվել էր այն դատարանի կողմից, որը նախկինում նրան հեռակա կարգով ճանաչել էր մեղավոր: Դատարանն այստեղ 6-րդ հոդվածի խախտում չի տեսնում, քանի որ դատավորներն ընդունում էին, որ նրանք իրենց առաջին որոշումն ընդունել են սահմանափակ վկայությունների հիման վրա, և նախաձեռնել են գործի նոր քննություն՝ առավել լիարժեք և մրցակցային սկզբունքների հիման վրա:

Այն հանգամանքը, որ դատավորները մասնակցում են իրենց կոլեգային բացարկ հայտնելու հարցի լուծմանը, կարող է առաջացնել խնդիրներ, եթե իրենք իսկ այդպիսի բացարկի օբյեկտ են: Սակայն պետք է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը նախևառաջ վերաբերվում է առաջին ատյանի դատարաններին: Այն չի պահանջում կամ պարտադրում վերադաս դատարանների առկայություն: Անկասկած այն հիմնարար երաշխիքները, որոնց թվում է նաև անկողնակալությունը, պետք է ապահովվեն վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից: Սակայն դրանից չի հետևում, որ ստորադաս դատարանները պարտավոր չեն դրանք ապահովել տվյալ դեպքում: Նման հետևությունը կհակասեր այն նպատակներին, որոնք ընկած են դատական համակարգը օղակների բաժանելու գաղափարի հիմքում՝ ուղղված կողմերի պաշտպանության ուժեղացմանը:

Դատարանը հստակ սկզբունքներ չի ձևակերպել, որոնք կորոշեն, թե որքանով կարող է դիմողը հրաժարվել անկախ և անկողնակալ դատական քննության իրավունքից: Սակայն Դատարանը նշել է, որ հրաժարվելու հնարավորության աստիճանը պետք է սահմանափակվի նվազագույն երաշխիքները պահպանելով, որոնք կախված չեն բացառապես կողմի հայեցողությունից: Կոնվենցիայով երաշխավորված իրավունքից հրաժարվելը պետք է սահմանված լինի ոչ երկիմաստորեն: Կողմերը պետք է իրազեկ լինեն դատական քննության անկողնակալության վերաբերյալ կասկած ար-

<sup>1</sup> St'u Ringeisen v. Austria, Judgement of 16 July 1971:

<sup>2</sup> St'u Thomann v. Switzerland, Judgement of 10 June 1996:

տահայտելու իրենց իրավունքի մասին, նրանց պետք է հնարավորություն տրվի այդ հարցը բարձրացնել և դատարանի կազմի վերաբերյալ իրենց բավարարվածությունն արտահայտել: Առարկությունների սովորական բացակայությունը չի կարող բավարար պայման համարվել իրավունքից հրաժարումը ճանաչելու համար: Պֆայֆերը և Պրանկլն ընդդեմ Ավստրիայի գործով<sup>1</sup> դատարանը որոշել է, որ դատարանի երկու անդամների՝ դատաքննությանը մասնակցելու վերաբերյալ առարկությունների բացակայությունը, որոնք մինչ այդ զբաղվել են գործի քննությամբ և իրավասու չեն եղել գործի քննությանը մասնակցել որպես դատավորներ, բավարար չէ, որպեսզի դա որակվի որպես իրավունքից հրաժարում: Օբերշլիք (N1)-ն ընդդեմ Ավստրիայի գործով<sup>2</sup> վերաքննիչ դատարանում դատաքննության նախագահողը մասնակցել է գործի քննությանն առաջին փուլում, և քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ իրավասու չի եղել տվյալ դատարանի կազմի մեջ մտնելու: Դիմողը չի վիճարկել նշված դատավորի մասնակցության փաստը, բայց նա իրազեկված չէր այն մասին, որ երկու այլ դատավորներ նույնպես իրավասու չեն եղել նմանատիպ պատճառներով: Դատարանը գտել է, որ տվյալ դեպքում հիմքեր չկան պնդելու, որ դիմողը հրաժարվել է «անկողմնակալ դատարանի» կողմից գործի քննության իր իրավունքից:

## 2) Օրենքի հիման վրա ստեղծված դատարան.

Այս արտահայտության տակ հասկանում են դատական մարմին, որը ձևավորվում է օրենսդրական կամ ենթաօրենսդրական նշանակություն ունեցող նորոճով նախատեսված կանոններով:

Մոտեցումը կայանում է հետևյալում. ենթադրու՞մ է արդյոք այս արտահայտությունը միայն ինքնին դատարանի գոյության համար իրավական հիմքի առկայություն, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նկատի է ուռնվում նաև դատարանի կազմը:

Այն պահանջի կապակցությամբ, որ դատարանը պետք է

<sup>1</sup> St u Pfei and Plankl v. Austria, Judgement of 25 February 1992:

<sup>2</sup> St u Oberschlick v. Austria, Judgement of 23 May 1991:

կամ մեղադրյալի համար, սակայն, օրենքը նման պարտականություն չի նախատեսում: Ավելին՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու պաշտպանության իր իրավունքը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 63):

Ամենայն հավանականությամբ ՀՀ քր. դատ. օր-ը կասկածյալին և մեղադրյալին սուտ ցուցմունք տալու հնարավորության ընձեռումը դիտարկում է որպես լռելու իրավունքի բաղկացուցիչ: Կարծում ենք սակայն, որ նման մոտեցումը չի արտացոլում այդ իրավունքի էությունը: Լռելու իրավունքը ցուցմունք տալուց հրաժարվելու՝ անձի իրավունք է: Սակայն, եթե կասկածյալը կամ մեղադրյալը հրաժարվում են լռելու իրենց իրավունքից, նրանք պետք է ընդհանուր կարգով նախազգուշացվեն սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Այս մոտեցումն ամրագրված է նաև ամերիկյան իրավունքում, որտեղ կասկածյալը լռելու իրավունքից հրաժարվելու դեպքում, ինչպես բլոր վկաները, երդվում է տալ ճշմարտացի ցուցմունք<sup>1</sup>: Մեղադրյալի ճիշտ ցուցմունք տալու պարտականությունն ամրագրվեց նաև ամերիկյան փորձագետների աջակցությամբ մշակված Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (հոդվածներ 54; 55):

Առաջին հայացքից նման պարտականության նախատեսումը կարող է դիտվել որպես կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքի սահմանափակում, քանի որ ներկայումս վերջիններս ունեն ցանկացած եղանակով, այդ թվում նաև սուտ ցուցմունք տալու ճանապարհով պաշտպանվելու իրավունք: Առկա կարգավորումը, սակայն, կարծում ենք «նսեմացնում է» կասկածյալի կամ մեղադրյալի ցուցմունքի ապացուցողական նշանակությունը: Մասնավորապես, քրեական հետապնդման մարմինները, իսկ հետագայում նաև դատարանը ապացույցները ներքին համոզմունքով գնահատելիս նախապատվութուն են տալիս այն ցուցմունք

<sup>1</sup> St u Бернам У. նույն աշխատությունը, էջ 510.

Ի տարբերություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ԱՄՆ Գերագույն դատարանն այս հարցում ավելի կոշտ դիրքորոշում է դրսևորել: Մասնավորապես, ամերիկյան իրավունքում ցուցնունք տալուց հրաժարվելն ընկկավվում է բացարձակ իմաստով և այս իրավունքից օգտվելը որևէ պարագայում չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի: Մասնավորապես, Գրիֆինն ընդդեմ Կալիֆորնիայի գործով նախագահող դատավորն ատենակալներին պարզաբանել է, որ եթե մեղադրյալը հրաժարվում է հօգուտ իրեն ցուցնունք տալուց, սակայն բանական կլիներ կարծել, որ մեղադրյալը կհերքի իր դեմ ներկայացված ապացույցները կամ այդ կապակցությամբ բացատրություն կտա (քանի որ տեղյակի գործի որոշակի հանգամանքներին), ապա ատենակալները դա կարող են դիտարկել որպես նրա մեղավորության ապացույց: Գերագույն դատարանը, սակայն, վճռեց, որ մեղադրյալի կողմից ցուցնունք տալուց հրաժարվելու կապակցությամբ դատարանի մեկնաբանությունները խախտել են ԱՄՆ Սահմանադրության V փոփոխությամբ ամրագրված ինքնամերկացմանը հարկադրելու անթույլատրելիության վերաբերյալ դրույթը<sup>1</sup>:

Լռելու իրավունքի հետ անխզելիորեն կապված է ճշմարտացի ցուցնունք տալու պարտականությունը: ՀՀ քր. դատ. օր-ը նման պարտականությունն անխտեստում է միայն վկայի և տուժողի համար: Մասնավորապես, վկան պարտավոր է տալ ճշմարտացի ցուցնունքներ՝ հայտնել գործով իրեն ամբողջ հայտնի դարձածը և պատասխանել առաջադրված հարցերին, ստորագրությամբ հաստատել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ իր տված ցուցնունքների զրառունների ճշմարտացիությունը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 86): Մինևույն ժամանակ վկան և տուժողը հարցաքննությունից առաջ նախազգուշացվում են սուտ ցուցնունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 206): Կասկածյալի

ստեղծված լինի օրենքի հիման վրա, Հանձնաժողովը Ջանդն ընդդեմ Ավստրիայի գործով հայտարարել է, որ «6-րդ հոդվածի 4-րդ կետը, որը պահանջում է, որ դատարանները «ստեղծված լինեն օրենքի հիման վրա», նպատակ ունի, որպեսզի ժողովրդավարական հասարակությունում դատարանակազմությունը կախված չլինի գործադիր իշխանությունից, այլ կարգավորվի խորհրդարանի կողմից ընդունված օրենքով: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ ներկայացված օրենսդրությունն ինքնին դատարանակազմությանը վերաբերող հարցերում կիրառելի չէ: 6-րդ հոդվածի 1-ին մասը ենթադրում է, որ այդ ոլորտի յուրաքանչյուր հարց մանրամասն պետք է կարգավորվի օրենսդրությամբ՝ պաշտոնական խորհրդարանական ակտի միջոցով, այն դեպքում, եթե օրենսդրությունը սահմանում է, առնվազն դատարանակազմության կազմակերպչական կառուցվածքը»:

Քննարկվող հարցի ամբողջական բացահայտման նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ օրենսդրությանը և իրավակիրառ պրակտիկային: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածը յուրաքանչյուր անձի համար երաշխավորում է իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն առավելապես համապատասխանում է Կոնվենցիայի կողմից ներկայացվող բոլոր առաջնային պահանջներին և չափանիշներին: Մասնավորապես ՀՀ համապատասխան օրենսդրությունը ամենաբարձր մակարդակով նախատեսում է դատավորների անկախության երաշխիքների հետևյալ տպավորիչ ցանկը՝

1. *Դատական համակարգի կազմավորումը.*
2. *Դատավորի գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը.*
3. *Պատասխանատվությունը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար.*

<sup>1</sup> Տե՛ս Բերնամ Ս. Правовая система Соединенных Штатов Америки. Москва, ПИО “Новая юстиция”, էջ 510.

4. *Դատավորի անփոփոխելիությունը.*
5. *Դատավորի անձեռնմխելիությունը.*
6. *Դատավորի հրաժարականի իրավունքը.*
7. *Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հստակ հիմքերը և կարգը.*
8. *Օրենքով սահմանված կարգով դատավորի լիազորությունների դադարեցումը.*
9. *Դատավորի ապաքաղաքականացվածությունը.*
10. *Դատավորի գործունեության նյութական և սոցիալական երաշխիքները.*

11. *Դատավորի աշխատանքային գործունեության այլ երաշխիքները.*

12. *Արդարադատության իրականացման օրենքով սահմանված դատավարական ձևը.*

Սակայն, ինչպես արդեն վերը նշվեց, իրավական նորմերի համապատասխանությունը եվրոպական չափանիշներին որոշվում է ոչ միայն օրենսդրության մեջ ամրագրված համապատասխան դրույթների համեմատությամբ, այլև իրավակիրառ պրակտիկայում դրանց պատշաճ պահպանման արդյունքներով:

Քննարկվող հարցի կապակցությամբ դիտարկման համար նախապատրաստված հարցաթերթիկում արված հարցադրումը բնականաբար պետք է ունենար զուտ քրեադատավարական բնույթ, որպեսզի դիտարկողի համար հնարավոր լիներ այն իրականացնել արդյունավետ և հիմնավորված: Այդ իսկ պատճառով ստորև բերված դիտարկումները արվել են դատավորի անկախության և անկողմնակալության կարևորագույն քրեադատավարական երաշխիքներից մեկի՝ բացարկի ինստիտուտի գործնական կիրառման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն, բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները հայտարարվում են քրեական դատավարությանը համապատասխան անձանց մասնակցությունը բացառող հանգամանքների հիման վրա:

Դատավորը, որին հայտնի է քրեական դատավարությանն իր

կարող է դատարանի կողմից հաշվի առնվել մեղադրանքի կողմի ապացույցները գնահատելիս: Այս հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Դատարանը նշել է. «չի կարելի պահանջել, որ մեղադրյալի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը դատարանը նրա մեղքը հաստատող ապացույցները գնահատելիս հաշվի չառնի: Այն հարցը, արդյոք ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքից օգտվելու դեպքում մեղադրյալի նկատմամբ անբարենպաստ կարծիք ձևավորելը հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, պետք է լուծվի գործի բոլոր փաստական հանգամանքների համատեքստում, հաշվի առնելով այն իրավիճակը, որի պայմաններում նման եզրահանգում է արվել, այն նշանակությանը, որը ներպետական դատարանները ապացույցները գնահատելիս տվել են այդ եզրահանգմանը և տվյալ իրավիճակին բնորոշ հարկադրանքի ծավալին: Մինևույն ժամանակ, քանի որ լռելու իրավունքը, որպես ինքնամերկացման դեմ արտոնություն ընկած է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հիմքում, մեղադրյալի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելն իր դեմ մեկնաբանելիս ազգային դատարանները պետք է հատուկ զգուշավորություն դրսևորեն<sup>1</sup>: Այսինքն, դատարանը չի կարող անձին մեղավոր ճանաչել միայն այն բանի համար, որ վերջինս հրաժարվում է ցուցմունք տալուց: Միայն այն դեքում, երբ մեղադրյալի դեմ ներկայացված ապացույցներն այնպիսին են, որ պահանջվում է վերջինիս բացատրությունը, ցուցմունք տալուց հրաժարվելը կարող է մեղադրյալի բացատրության բացակայության և նրա մեղավորության մասին եզրահանգման հիմք լինել: Սակայն, եթե մեղադրանքի կողմից ներկայացված ապացույցները բավարար չափով հիմնավոր չեն, ցուցմունք տալուց հրաժարվելը չի կարող նրա մեղավորության մասին եզրահանգման պատճառ հանդիսանալ:

<sup>1</sup> St' u Eur. Court H.R. John Murrey v. the United Kingdom, Judgment of 8 February 1996. Reports. 1996-I. Para. 47; Condron v. the United Kingdom, Judgment of 2 May 2000. Para. 56.

վի առնելով դատավարության ընթացքում հարցաքննությունների օգտագործման վերաբերյալ գնահատականները, վճիռ կայացնել այն մասին՝ արդյոք ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը կրում է բացարձակ բնույթ, թե դրանից շեղումները հատուկ հանգամանքներում կարող են արդարացվել: Ինչպես և հանձնաժողովը, նա ևս գտնում է, որ 6-րդ հոդվածում առկա՝ արդարացիության պահանջները, ներառյալ՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, կիրառվում են քրեական դատավարության ժամանակ քրեորեն պատժելի բոլոր արարքների դեպքում՝ առանց ամենահասարակների և ամենաբարդերի միջև որևէ տարբերության: Չի կարելի հիմնվել հասարակական շահի վրա՝ ի արդարացումն արտադատական քննության ընթացքում հարկադրաբար ձեռք բերված պատասխանների օգտագործման, որը նպատակ ուներ մերկացնելու մեղադրյալին դատաքննության ընթացքում»<sup>1</sup>:

Լռելու իրավունքն անհարաժեշտ է դիտարկել այդ իրավունքի իրականացումն ապահովող այնպիսի երախիքի հետ համակցության մեջ, ինչպիսին այս իրավունքից օգտվելն ի վնաս մեղադրյալի մեկնաբանելու և դա որպես նրա մեղավորության ապացույց մեկնաբանելու անթույլատրելիությունն: ՀՀ քր. դատ. օր-ն ուղղակիորեն սահմանում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը (այդ թում՝ լռելու իրավունքից-Գ.Մ.) կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրանց և վերջիններիս համար առաջացնի անբարենպաստ հետևանք (ՀՀ քր. դատ. օր. հոդվածներ 63, 65): Սակայն, կարծում ենք, որոշակի պայմաններում ցուցմունք տալուց հրաժարվելն ամեն դեպքում ապացույցները գնահատելիս դատարանի մոտ կարող է որոշակի դիրքորոշում ձևավորել: Չի կարելի բացառել, որ լռելու իրավունքից օգտվելն այն պայմաններում, երբ ակնհայտ էր կասկածյալի կամ մեղադրյալի բացատրության անհրաժեշտությունը,

<sup>1</sup> Տե՛ս Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը (1996թ-ի դեկտեմբերի 17-ի վճիռը, պարբ. 74): Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.)-եր.: Տիգրան Մեծ, 2002, էջ 343.

մասնակցությունը բացառող հանգամանքներ և նա կասկածում է իր մասնակցությամբ գործի նորմալ քննության հնարավորությանը՝ պարտավոր է հայտարարել ինքնաբացարկ:

Դատավորին ինքնաբացարկի միջնորդություն կարող է ներկայացվել միայն մինչև դատաքննությունը սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ միջնորդություն ներկայացնողը կապացուցի, որ ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունը սկսվելուց հետո և մինչ այդ չէր կարող հայտնի լինել:

Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի իր իրավասության սահմաններում լուծել հայտնված բացարկների, ինքնաբացարկների և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունների հարցը կամ քրեական դատավարությանը համապատասխան անձի մասնակցությունը բացառող հանգամանքներ հայտնաբերելու դեպքում սեփական նախաձեռնությամբ հեռացնել նրան քրեական գործով վարույթին մասնակցելուց: Այլ անձանց հայտնված բացարկները լուծելու համար իրավասու անձին հայտնված բացարկը պետք է լուծվի առաջնահերթության կարգով:

Այն դեպքում, երբ գործով վարույթին մի քանի անձանց միաժամանակյա մասնակցությունը բացառվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների պատճառով, քրեական գործով վարույթից պետք է հեռացվեն այն անձինք, որոնք մյուսներից ուշ են ձեռք բերել դատավորի կամ դատավարության մասնակցի իրավավիճակ: Եթե ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերություններով կապված անձինք հայտնվել են դատարանի կազմում, քրեական գործով վարույթից հեռացվելու ենթակա անձին ընտրում է նախագահողը (ՀՀ քր.դատ.օր. հոդվ.88):

Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը, ի թիվս այլոց, ներառված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի առաջին մասում:

Դատավորի կողմից գործը դատական քննության նախապատրաստելն առաջին ատյանի դատարանի կազմում համապատաս-

խան գործի հետագա քննությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանք չէ:

Դատավարության մասնակիցները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում իրավունք ունեն դատավորին, իսկ եթե գործը քննվում է կամ պետք է քննվի կոլեգիալ՝ դատավորներին կամ դատարանի ամբողջ կազմին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու:

Միջնորդությունը պետք է լինի պատճառաբանված և նույն հիմքով կարող է ներկայացվել մեկ անգամ:

Դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդության հարցը լուծում է այն դատավորը, որին ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն է ներկայացվել: Դատավորների կոլեգիալ կազմով գործը քննելու ժամանակ, եթե ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացվել մեկից ավելի դատավորների կամ դատարանի ամբողջ կազմին, ապա յուրաքանչյուր դատավոր լուծում է իր ինքնաբացարկի հարցը:

Ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքում կայացվում է որոշում, որում նշվում են այն բավարարելու կամ մերժելու հիմքերը:

Ինքնաբացարկ հայտնած դատավորը, եթե համարում է, որ ինքը կարող է տվյալ գործով լինել անկողմնակալ, կարող է դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը դատավորի բացակայությամբ որոշում են կայացնում դատավորի ինքնաբացարկը անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո դատավորն իրականացնում է գործի դատաքննությունը:

Դատավորը պարտավոր չէ կայացնել ինքնաբացարկն ընդունելու մասին որոշում, եթե դատական ակտը կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին, կամ գործի լուծման հրատապության առումով անգործությունը կարող է հանգեցնել ծանր հետևանքների(ՀՀ քր.դատ.օր-ի հոդվ.90):

մի շարք վճիռներում: Մասնավորապես Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով<sup>1</sup> Դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է համարել դիմումատուին՝ արտասահմանյան բանկային հաշիվներից քաղվածքներ տրամադրելուն մաքսային մարմինների կողմից հարկադրելը: Քանի որ պրն Ֆունկեն չի ներկայացրել պահանջվող բանկային փաստաթղթերը, մաքսային վարչությունը դիմել է Ստրասբուրգ քաղաքի ոստիկանական դատարան, որը պրն. Ֆունկեին ենթարկել է տուգանքի: Դատարանն իր որոշման մեջ նշել է, որ մաքսային ծառայությունները որոշ փաստաթղթեր ստանալու նպատակով, որոնց գոյության մասին նրանք ենթադրել են, բայց լիակատար համոզվածություն չեն ունեցել, պրն Ֆունկեին մեղադրանք ներկայացնելու պրովոկացիայի են ենթարկել: Հնարավորություն չունենալով կամ չցանկանալով դրանք ստանալ որևէ այլ ճանապարհով՝ նրանք փորձել են դիմողին ստիպել՝ ներկայացնելու սեփական խախտման ապացույցներ: Մաքսային իրավունքի առանձնահատկությունները չեն կարող արդարացնել ցանկացած «մեղադրյալի» (6-րդ հոդվածի իմաստով)՝ լռելու կամ ի հաստատումն իր մեղքի ցուցմունք չտալու իրավունքի խախտումը:

Այսպիսով, հաշվի առնելով ինչպես ՀՀ քր. դատ. օր-ի 20-րդ հոդվածի բովանդակությունը և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը, կարծում ենք, այս սկզբունքը պետք է կրի «**Տեղեկություններ տրամադրելու պարտականությունից ազատ լինելը**» վերտառությունը, որն առավել ամբողջական կարտացուլի այս սկզբունքի էությունն ու համահունչ կլինի դրա բովանդակությանը:

ՀՀ քր. դատ. օր-ը այս իրավունքի սահմանափակման որևէ հնարավորություն չի նախատեսում: Անձը պահպանում է լռելու իրավունքը անկախ իրեն վերագրվող հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից: Այս մոտեցումն է ընկած նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիմքում: Մասնավորապես Դատարանը նշել է, որ «անհրաժեշտ չի գտնում, հաշ-

<sup>1</sup> Stéu Eur. Court. H. R. Funke v. France, Judgement of 25 February 1993. Series A. No. 256-A. Para. 44.

յունն է:<sup>1</sup> Պետք է նշել, սակայն, որ Դատարանն առանձին չձեռնարկում որոշակիորեն շեղվում է իր իսկ կողմից որդեգրած մոտեցումից: Մասնավորապես, Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճռում Դատարանը խոսում է «լռելու կամ ի հաստատումն իր մեղքի ցուցմունքներ չտալու իրավունքի խախտման» մասին<sup>2</sup>:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը, որպես ինքնուրույն քրեադատավարական սկզբունք, իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ քր. դատ. օր-ում (Հոդված 20)<sup>3</sup>: Սակայն նշված սկզբունքի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իր բովանդակությամբ շատ ավելի լայն է, քան բացառապես ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը և արդարացիորեն ներառում է նաև իր վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելու՝ անձի իրավունքը: Մասնավորապես նշված հոդվածի երկրորդ մասն ուղղակիորեն սահմանում է, որ անձն իրավունք ունի հրաժարվել վարույթն իրականացնող մարմին տրամադրելու ոչ միայն հանցանք գործելու մեջ իր, անուսնու կամ մերձավոր ազգականների մեղավորությունը հիմնավորող տեղեկություններ (որպես կանոն՝ ցուցմունք), այլ նաև նույնաբովանդակ նյութեր: ՀՀ քր. դատ. օր-ի 20-րդ հոդվածում ամրագրված այս մոտեցումն արտացոլվել է նաև Եվրոպական դատարանի

<sup>1</sup> St'u Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI. Para. 71;

<sup>2</sup> St'u Eur. Court. H. R. Funke v. France, Judgement of 25 February 1993. Series A. No. 256-A. Para. 44, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.)-եր.: Տիգրան Մեծ, 2002, էջ 467.

<sup>3</sup> Այս սկզբունքի որոշ տարրեր իրենց արտացոլումն են ստացել ՀՀ քր. դատ. օր-ի 19-րդ հոդվածում (Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը), որի 5-րդ հոդվածի համաձայն. «Կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ»: Ճիշտ է, թեև լռելու իրավունքը կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի տարրերից մեկն է, սակայն առավել ընդունելի է այն մոտեցումը, երբ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելն ամրագրվում է որպես ինքնուրույն սկզբունք, առավել ևս որ այն սահմանադրական ամրագրում է ստացել:

## **2.6. ԿԱՍԿԱԾՅԱԼԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԼՈՒԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ**

ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի համաձայն ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, անուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Իր վերաբերյալ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը քրեական դատավարությունում անձի իրավունքների պաշտպանության գործում երաշխիքներից է: Այն թեև ուղղակիորեն նախատեսված չէ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում մեղադրյալի լռության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը դիտվում է որպես արդարացի դատական քննության իրավունքի և անմեղության կանխավարկածի բաղադրիչներ (6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ թեև լռության և իր դեմ ցուցմունք չալու իրավունքները Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ուղղակիորեն նախատեսված չեն, այնուամենայնիվ դիտվում են որպես 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հասկացության հիմքում ընկած համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափորոշիչներ: Դրանց նշանակությունն, *inter alia*, մեղադրյալի պաշտպանությունն է պետական իշխանության անհիմն հարկադրանքից, ինչը կօգնի խուսափել դատական սխալներից և կնպաստի 6-րդ հոդվածով նախանշված նպատակների իրագործմանը: Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, մասնավորապես, ենթադրում է, որ քրեական հետապնդման մարմինները չպետք է օգտագործեն մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի կիրառման կամ ճնշման արդյունքում ձեռք բերված ապացույցները: Այս առումով նշված իրավունքը սերտորեն կապված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված անմեղության կանխավար-

կածի հետ<sup>1</sup>: Որպես կանոն, մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսնկյունից, ցուցմունք տալու հարկադրանք է դիտվում քրեական սանկցիաների կիրառումը կամ կիրառման սպառնալիքն այն անձի նկատմամբ, ով հրաժարվում է վարույթն իրականացնող մարմին տեղեկություններ հաղորդել այն հանցագործության կապակցությամբ, որի կատարման մեջ վերջինս կասկածվում կամ մեղադրվում է<sup>2</sup>: Ընդ որում սանկցիայի բնույթը կարող է տարբեր լինել՝ տուգանք<sup>3</sup>, ազատազրկում<sup>4</sup>: Ցուցմունք ստանալու նպատակով ուղղակի ֆիզիկական կամ հոգեբանական ներագդեցությունը որոշակի պայմանների առկայության պարագայում կարող է դիտվել որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (Խոշտանգումների արգելում):

Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության մեջ: 1995թ-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը սահմանում էր, որ մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու, մերձավոր ազգականների դեմ: 2005թ-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում փոփոխության ենթարկվեց նաև այս դրույթը՝ ավելի համահունչ դառնալով Եվրոպական դատարանի որդեգրած մոտեցմանը: Մասնա-

<sup>1</sup> St'u Eur. Court H. R. John Murrey v. the United Kingdom, Judgment of 8 February 1996. Reports. 1996-I. Para. 45; Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI. Para. 68; Serves v. France, Judgement of 20 October 1997. Reports. 1997-VI. Para 46; Heaney and McGuinness v. Ireland, Judgment of 21 December 2000. Para. 40; Quinn v. Ireland, Judgement of 21 December 2000. Para 40.

<sup>2</sup> St'u Eur. Court H. R. Heaney and McGuinness v. Ireland, Judgment of 21 December 2000. Para. 49; Quinn v. Ireland, Judgement of 21 December 2000. Para 49.

<sup>3</sup> St'u Eur. Court H. R. Funke v. France, Judgement of 25 February 1993. Series A. No. 256-A; Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI. Para. 68;

<sup>4</sup> St'u Eur. Court H. R. Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI; Serves v. France, Judgement of 20 October 1997. Reports. 1997-VI; Heaney and McGuinness v. Ireland, Judgment of 21 December 2000; Quinn v. Ireland, Judgement of 21 December 2000.

վորապես, ներկայումս, Սահմանադրության 22-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների **վերաբերյալ** ցուցմունք չտալու իրավունք: Սահմանադրական ման կարգավորման պայմաններում միանշանակորեն ապահովվում է Կոնվենցիայով երաշխավորված լռության իրավունքը, քանի որ յուրաքանչյուր դեպքում անձը ձեռք է բերում իրեն վերաբերող հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ չհայտնելու իրավունք, անկախ նրանից՝ այդ տեղեկությունները հետագայում կօգտագործվեն հօգուտ, թե՛ ի վնաս իրեն: Նման կարգավորումը որոշ չափով վերջ կդնի նաև իրավակիրառ պրակտիկայում արմատացած այն գործելաոճին, երբ քրեական գործի շրջանակներում անձը հարցաքննվում էր որպես վկա, ցուցմունք էր տալիս իրեն առնչվող հանգամանքների վերաբերյալ, առանց կասկածելու, որ նույն ցուցմունքի հիման վրա իր նկատմամբ կարող է քրեական հետապնդում իրականացվել:

Նշենք, որ սահմանադրական ամրագրում ստացած այս մոտեցումը համապատասխանում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմանը: Մասնավորապես, նույն Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Դատարանը նշել է, որ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը չի կարող ողջամտորեն սահմանափակվել միայն իրավախախտման կատարումն ընդունելու վերաբերյալ կամ մեղադրական ցուցմունքներով: Հարկադրանքի արդյունքում ստացված ցուցմունքները, որոնք առաջին հայացքից չեն դիարկվում որպես մեղադրական ապացույցներ կամ պարզապես հանդիսանում են դիտողություններ կամ փաստերի մասին տվյալներ, քրեական դատավարության ընթացքում կարող են օգտագործվել մեղադրական նպատակներով, օրինակ՝ մեղադրյալի այլ հայտարարություններին հակադրելու, դատարանում նրա տված ցուցմունքը կասկածի տակ դնելու կամ այլ եղանակով վերջինիս նկատմամբ վստահությունը խաթարելու նպատակով: Ուստի դատարանի կարծիքով, այս համատեքստում էականը դատական քննության ընթացքում հարկադրական եղանակով ստացված ապացույցների օգտագործման անթույլատրելիութ-



80,4 տոկոսում դատարանները պահպանել են ՀՀ օրենսդրության համապատասխան պահանջը, այն է՝ «Լսելով կողմերի կարծիքը՝ դատարանը որոշում է ապացույցների հետազոտման կարգը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 335)»: Նշված ֆոնի վրա զարմանալի չի հնչում նաև այն, որ, հակասելով մրցակցության սկզբունքի գաղափարին և արդար դատական քննությունը երաշխավորող՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի մյուս դրույթներին, դատական պրակտիկայում հանդիպում են դատավորների կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակման դեպքեր: Սա ևս նախկին համակարգից գործող որոշ դատավորների հոգեբանության մեջ իներցիայով անցած «ավանդույթ» է, որը շտկելու համար անհրաժեշտ են ոչ միայն օրենսդրության մակարդակով դատաիրավական բարեփոխումների իրականացում, այլ նաև իրավակիրառողներին դրանց էության լիարժեք, հստակ և ճշգրիտ ներկայացում:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 332 հոդվածի համաձայն, դատական քննությանը հրավիրված վկաներից որևէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որևէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

Գործի քննությունը հետաձգելու մասին որոշում կայացնելիս դատարանն իրավունք ունի հարցաքննել ներկայացած վկաներին: Եթե գործի քննությունը հետաձգելուց հետո այն քննվում է դատարանի նույն կազմով, ապա նշված անձինք երկրորդ անգամ դատական նիստի են կանչվում միայն անհրաժեշտության դեպքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 339 հոդվածը վերաբերվում է վկային ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար հիմքերը պարզաբանելուն և ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու և ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին նախազգուշացնելուն:

## 2.7. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԴՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է մրցակցության և կողմերի հավասարության պայմաններում յուրաքանչյուրի դատաքննության իրավունք:**

### 1) Կողմերի հավասարությունը.

Կողմերի հավասարության սկզբունքը ներառվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1 մասով նախատեսված արդարացի դատական քննության հասկացության մեջ (fair trial): Այն «արդարացի դատական քննություն» առավել լայն հասկացության տարրերից միայն մեկն է, որն ընդգրկում է նաև քրեական դատավարության մրցակցության հիմնարար սկզբունքը և տարածվում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերի վրա: Դա նշանակում է, որ դատաքննության կողմերից յուրաքանչյուրին պետք է երաշխավորել իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու հնարավորություն, որոնք, ի տարբերություն հակառակ կողմի, նրան չեն դնում էականորեն անբարենպաստ դրության մեջ: Կողմերի դրությունը դատաքննության ժամանակ պետք է լինի արդարացիորեն հավասար:

Սույն պահանջը առանձին գործերով Եվրոպական դատարանի տարբեր մեկնաբանություններում ստացել է յուրովի ձևակերպումներ, սակայն դրանից սկզբունքի էությունը և բովանդակությունը չի փոխվել: Մասնավորապես՝

ա/ Եվրոպական դատարանը գտել է, որ այն դատական քննությունների ժամանակ, որտեղ բախվում են հակադիր մասնավոր շահեր, հենց «կողմերի հավասարությունն» է ենթադրում, որ յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա ներկայացնելու իր գործը՝ ներառյալ ապացույցներ, այնպիսի պայմաններում, որտեղ կողմերից ոչ մեկը չունի **ակնհայտ առավելություն:**

բ/ Եվրոպական Դատարանը հիշեցրել է, որ արդարացի դատական քննության ընդգրկումն հասկացության բաղկացուցիչ տարրը

հանդիսացող կողմերի հավասարության սկզբունքը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին ընձեռնված լինի ողջամիտ հնարավորություն՝ շարադրելու իր դիրքորոշումը այնպիսի պայմաններում, որոնք այդ կողմին հակառակ կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակի մեջ:

զ/ Դատական քննությունն արդարացի չի լինի, եթե այն անցկացվի մեղադրյալին պակաս բարենպաստ վիճակի մեջ անհիմն դնելու պայմաններում: Յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա իր գործը ներկայացնելու այն պայմաններում, որտեղ կողմերից որևէ մեկը չունի ակնհայտ առավելություն(...):

Քրեական գործերի հետ կապված՝ տվյալ սկզբունքները մասամբ համընկնում են 6-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված որոշ հատուկ երաշխիքների հետ, սակայն դրանցով չեն սահմանափակվում: Օրինակ՝ Բենիշն ընդդեմ Ավստրիայի գործով<sup>1</sup> պաշտպանության կողմից նշանակված վկա-փորձագետին չեն տրամադրվել այնպիսի տեխնիկական նույնական պայմաններ, որոնք դատարանում տրամադրվել է մեղադրանքի կողմի վկայի համար: Դատարանը հայտարարել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

## **2) Մրցակցության սկզբունքը և ապացույցներ ներկայացնելը.**

Արդարացի դատաքննության իրավունքը, ինչպես արդեն նշել ենք, նաև ենթադրում է վարույթի մրցակցային բնույթ, որը նշանակում է կողմերի համար ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով սկզբունքային հնարավորություն՝ տեղեկացված լինելու բոլոր ներկայացված ապացույցների կամ արձանագրված դիտողությունների մասին և դրանք մեկնաբանելու հնարավորություն<sup>2</sup>: Այս համատեքստում անհրաժեշտ է հատուկ նշանակություն

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 333 հոդվածը կանոնակարգում է դատաքննության սկիզբը: Նախագահողը հայտարարում է, որ դատարանը անցնում է դատաքննությանը: Դատաքննությունը սկսվում է մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ:

Դրանից հետո նախագահողը ամբաստանյալին պարզաբանում է նրան ներկայացված մեղադրանքի էությունը, արարքի իրավաբանական որակումը, նրան ներկայացված քաղաքացիական հայցի հիմքերը և չափը: Մի քանի ամբաստանյալի առկայության դեպքում նման պարզաբանում տրվում է նրանցից յուրաքանչյուրին:

Նախագահողն ամբաստանյալներից յուրաքանչյուրին հարցնում է, թե նա արդյոք իրեն ճանաչում է մեղավոր և կոնկրետ ինչու: Ամբաստանյալին պետք է պարզաբանվի, որ նա կաշկանդված չէ նախաքննության ընթացքում մեղքն ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ արված հայտարարությամբ, պարտավոր չէ պատասխանել առաջադրված հարցերին և, որ պատասխանելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

Նախագահողը հարցնում է ամբաստանյալին, թե նա լրիվ կամ մասնակի ընդունում է արդյոք իրեն ներկայացված քաղաքացիական հայցը: Եթե ամբաստանյալը պատասխանում է այս հարցին, նա իրավունք ունի պատճառաբանել այն:

Կողմերն իրավունք ունեն ամբաստանյալին տալ այնպիսի հարցեր, որոնք ուղղված են ամբաստանյալի դիրքորոշումը ճշտելուն(ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 334):

Լսելով կողմերի կարծիքը՝ դատարանը որոշում է ապացույցների հետազոտման կարգը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 335):

ՀՀ-ում փաստաբանության ինստիտուտի թերի կամ ոչ լիարժեք կայացվածության կամ դատարանների՝ քրեական հետապնդմանը հակված լինելու մասին մեր վերն արված նկատառման լրացուցիչ հիմնավորում կարելի է զնահատել նաև ստացված հետևյալ վիճակագրական պատկերը, որ ապացույցների հետազոտման կարգը սահմանելիս 75,6 տոկոս դեպքերում դատարանը հաշվի է առել մեղադրանքի կողմի դիրքորոշումը: Եվ սա չնայած նրան, որ դեպքերի

<sup>1</sup> St u Benish v. Austria, Judgement of 06 May 1985:

<sup>2</sup> St u Ruiz-Mateos v. Spain, Judgement of 23 June 1993:

տաթղթերի ձևով՝ ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

Մյուս բոլոր որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ վերոհիշյալ կարգով, կամ տեղում դատավորների խորհրդակցելուց հետո՝ որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ: Դատական քննության ժամանակ դատարանի կայացրած որոշումները հրապարակվում են (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 313):

ՀՀ համապատասխան վիճակագրական տվյալների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ միջնորդություններ հարուցելու ինստիտուտը բավականին տարածված է ՀՀ դատական պրակտիկայում ընդհանրապես և առաջին ատյանի դատարանների դատական պրակտիկայում՝ մասնավորապես: Այս ատյանի դատարաններում գործերը քննելիս միջնորդություններ հարուցվում են գրեթե յուրաքանչյուր դատական նիստում և դրանց գերակշիռ մասը բաժին է ընկնում պաշտպանության կողմին: ՀՀ վերաքննիչ դատարաններում հարուցվող միջնորդությունների համեմատաբար փոքր տոկոսը կարելի է բացատրել ՀՀ օրենսդրությամբ վերաքննիչ վարույթում դատական քննության սահմանների և ընթացակարգային առանձնահատկություններով, ինչը, մեր կարծիքով, բնական է:

Արված դիտարկումների շրջանակներում անակնկալ չէին նաև ստացված պատասխանները այն հարցադրումով, թե որ կողմի միջնորդություններն են դատարանները առավելապես բավարարել՝ մեղադրանքի, թե պաշտպանության կողմի: 51,4 տոկոս դեպքերում բավարարվել են մեղադրանքի կողմի միջնորդությունները: Սա մի կողմից կարող է վկայել պաշտպանության կողմի մեծամասամբ ոչ պատշաճ պատրաստված լինելու և արդյունքում չհիմնավորված միջնորդություններ հարուցելու մասին: Մյուս կողմից չի բացառվում նաև այն տարբերակը, որ դատարանները դեռևս լիովին չեն ձերբազատվել քրեական հետապնդման մարմին լինելու՝ նախկին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսվող իրենց կարգավիճակից: Այս առումով հատկապես ուշագրավ է այն փաստը, որ դատարաններում 90,5 տոկոս դեպքերում միջնորդությունների հարցը լուծվել է տեղում, այլ ոչ թե խորհրդակցական սենյակում:

տալ արդարացի դատաքննության իրականացման արտաքին հատկանիշներին<sup>1</sup>:

Մրցակցության սկզբունքը դատավարության հիմնական երաշխիքներից մեկն է: Ազգային օրենսդրությունը այս պահանջը կարող է կատարել տարբեր կերպ, սակայն դրանով նախատեսված միջոցը պետք է երաշխավորի, որ հակառակ կողմը կհմանա ներկայացված մեկնաբանությունների մասին և հնարավորություն կունենա դրանք մեկնաբանելու իր տեսանկյունից:

Կողմերի հավասարության սկզբունքը կախված չէ դատավարության անօրինականության հետ կապված լրացուցիչ արդարացիության բացակայությունից: Հենց պաշտպանությունը պետք է զննհատի՝ արդյոք մեղադրանքի կողմի մեկնաբանությունները արժանի են պատասխանի, թե ոչ: Հետևաբար, արդարացի չէ այն, որ մեղադրանքի կողմը իր նկատառումները հանձնում է դատարանին առանց պաշտպանության կողմի իմացության և առանց նրան դրանց պատասխանելու հնարավորություն ընձեռելու:

Հատկանշական է, որ որոշման տեքստում մեղադրանքի կողմի արած եզրահանգումները մեկնաբանելու անուղղակի և զուտ հիպոթետիկ հնարավորությունը ամբաստանյալի համար չի կարող համարվել համարժեք՝ դրանք անմիջականորեն հետազոտելու և վիճարկելու նրա իրավունքը:

Քաղաքացիական գործերով 6-րդ հոդվածը որոշակի հանգամանքներում պահանջում է, որպեսզի կողմերն ունենան վկաների խաչաձև հարցաքննության իրավունք<sup>2</sup>: Կողմերի հավասարության իրավունքը նմանապես խախտվում է, երբ կողմը զրկված է պետության ներկայացուցչի կողմից ազգային դատարանին ուղղված հայտարարություններին պատասխանելու հնարավորությունից<sup>3</sup>: «Դոմբո Բեհեր B.V.-ին ընդդեմ Նիդեռլանդների» գործով<sup>4</sup> դիմողը՝ սահմանափակ պատասխանատվության մի ընկերություն, քաղաքացիական հայց էր ներկայացրել ընդդեմ մի բանկի՝ ապացուցելու

<sup>1</sup> St'u Brogers v. Belgium, Judgement of 30 October 1991:

<sup>2</sup> St'u KH v. Austria, 42 CD 145:

<sup>3</sup> St'u Ruiz-Mateos v. Spain, Judgement of 23 June 1993:

<sup>4</sup> St'u Dombó Beher B.V. v. the Netherlands, Judgement of 27 October 1993:

համար, որ բանավոր համաձայնություն է կայացվել իր և այդ բանկի միջև վարկերի տրամադրման ժամկետը երկարացնելու վերաբերյալ: Միայն երկու անձինք են ներկա գտնվել այն հանդիպմանը, որի ժամանակ, իբրև, կայացվել է համաձայնությունը. առաջինը ներկայացնում էր դիմողին, երկրորդը՝ բանկը:

Այնուամենայնիվ, ազգային դատարանի կողմից միայն բանկը ներկայացնող անձին է թույլատրվել հանդես գալու որպես վկա: Դիմող ընկերությանը զրկել են իրեն ներկայացնող անձին կանչելու հնարավորությունից, քանի որ դատարանը նրան նույնացրել է հենց դիմող ընկերության հետ:

Սրա հետ կապված՝ Եվրոպական դատարանը գտել է, որ կարևոր բանակցությունների ընթացքում երկու ներկայացուցիչները գործել են հավասար հիմքերով. երկուսն էլ իրավասու են եղել բանակցելու համապատասխան կողմերի անունից, և դժվար է հասկանալ, թե ինչու երկուսին էլ չի թույլատրվել ապացույցներ ներկայացնել: Այդ պատճառով դիմող ընկերությունը բանկի նկատմամբ հայտնվել է էապես անբարենպաստ պայմաններում և տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

Սեկ այլ՝ «Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի» գործում<sup>1</sup> Դատարանը վճռել է, որ 6(1) հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Այս գործը նույնպես վերաբերվում է վկաներ կանչելուն: Դիմողը բողոքում էր, որ դատարանը, չթույլատրելով իր կնոջը՝ ի պաշտպանություն իր բողոքի, երդումով ապացույցներ տրամադրել քաղաքացիական գործի քննության ժամանակ, խախտել է կողմերի հավասարության սկզբունքն այն առումով, որ հակառակ կողմը հնարավորություն է ունեցել ներկայացնելու մի վկայի, որը երդումով ապացույց է տրամադրել:

Դատարանը նշել է, որ հասկանալի չէ, թե դիմողի կնոջ կողմից երդումով ապացույց տրամադրելու փաստն ինչպես կարող էր ազդել քննության արդյունքի վրա: Այդպես էր, քանի որ դատարանը կարող էր հաշվի առնել տիկին Անկերլի կողմից արված հայտարարությունները, ավելին՝ դատարանը հատուկ նշանակություն չի տվել հակա-

այլ նաև ԶԶ օրենսդրությամբ ուղղակի նախատեսված նորմերի պահանջների պահպանման վիճակը պարզելու ուղղվածություն:

1. ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 331 հոդվածը վերաբերվում է դատական նիստի նախապատրաստական մասում միջնորդություններ հարուցելուն և լուծելուն: Համաձայն սույն հոդվածի՝ նախագահողը հարցնում է մեղադրանքի կողմին և պաշտպանության կողմին, թե արդյոք նրանք ունեն միջնորդություններ նոր ապացույցներ պահանջելու և գործին կցելու մասին: Միջնորդություն հարուցող անձը պարտավոր է ցույց տալ, թե հատկապես ինչ հանգամանքներ պարզելու համար են անհրաժեշտ լրացուցիչ ապացույցները:

Յուրաքանչյուր հարուցված միջնորդություն դատարանը պարտավոր է քննարկել, լսել կողմերի կարծիքը: Եթե հանգամանքները, որոնց բացահայտման համար հարուցված է միջնորդությունը, կարող են նշանակություն ունենալ գործի համար, կամ նյութը, որի ապացուցողական նշանակությունը վիճարկվում է, ստացված է օրենքի էական խախտումով, դատարանը բավարարում է միջնորդությունը: Միջնորդությունը մերժելու մասին դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում: Դատարանի կողմից միջնորդության մերժումը չի սահմանափակում միջնորդություն հարուցող անձի իրավունքը՝ նույն միջնորդությունը հարուցել հետագայում:

Դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, այլ ապացույցներ պահանջելու մասին(ԶԶ քր.դատ. օր-ի հոդվ. 331):

ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 313 հոդվածի համաձայն, այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

Գործը կարճելու կամ կասեցնելու, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու, բացարկների, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է խորհրդակցական սենյակում և դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաս-

<sup>1</sup> St u Ankerl v. Switzerland, Judgement of 23 October 1996:

Կրեմցովն ընդդեմ Ավստրիայի գործով<sup>1</sup> դիմողին չեն թույլատրել մասնակցել իրավունքի հարցերին վերաբերող դատական լսումներին, և դատարանը ընդունել է, որ նրա մասնակցությունն անհրաժեշտ չի եղել, քանի որ նրա փաստաբանը կարողացել է մասնակցել լսումներին և հայտարարություններ անել նրա անունից: Այնուամենայնիվ, դատարանը խախտումը տեսնում է նրանում, որ դիմողին թույլ չեն տվել մասնակցելու դատավճռի դեմ բերված բողոքի քննությանը, որը նախատեսում էր պատժի խստացում, այն է՝ հատուկ ռեժիմի բանտում ցմահ ազատազրկում, ինչն ընդունվել էր այնպիսի վկայությունների հիման վրա, որոնք երդվյալները հնարավորություն չէին ունեցել ստուգել: Դատարանը նշել է, որ, քանի որ դիմողի, նրա մտադրությունների և դրդապատճառների բնույթի գնահատականը կարևոր դեր են կատարել որոշում ընդունելիս, ինչը վկայում էր, թե որքանով է դիմողը շահագրգիռ, անհրաժեշտ էր ապահովել նրա՝ փաստաբանի հետ մեկտեղ ներկայությունը և մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը:

Քննարկվող հարցի ամբողջական բացահայտման նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ օրենսդրությանը և իրավակիրառ պրակտիկային: Մասնավորապես, կողմերի հավասարության և դատական քննության մրցակցության սկզբունքների կիրառման վերաբերյալ եվրոպական Կոնվենցիայի պահանջներն իրենց արտացոլում են ստացել ինչպես ՀՀ Սահմանադրության մեջ, այնպես էլ ճյուղային օրենսդրություններում, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Սակայն հայտնի է, որ իրավական նորմերի համապատասխանությունը եվրոպական չափանիշներին որոշվում է ոչ միայն օրենսդրության մեջ ամրագրված համապատասխան դրույթների համեմատությամբ, այլև իրավակիրառ պրակտիկայում դրանց պատշաճ պահպանման և կիրառման արդյունքներով: Այդ իսկ պատճառով անցկացված դիտարկումները հիմնականում ունեցել են ոչ միայն իրավակիրառ պրակտիկայում Կոնվենցիայի ընդհանուր պահանջների պահպանման,

<sup>1</sup> St u Kremcov v. Austria, Judgement of 21 September 1993:

նակ կողմի հարցաքննությանը, և այն, որ դատարանը, բացի գործում արված հայտարարություններից, հենվել է այլ ապացույցի վրա:

Դատարանը նաև նշել է, որ կողմերի հավասարության սկզբունքը խախտվել է, երբ պետության օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենսդրությունը նպատակ է ունեցել ձախողել դիմողի՝ ազգային դատարանների կողմից քննվող բողոքը:

Վան Օրհովենն ընդդեմ Բելգիայի գործով<sup>1</sup> վերաբերում էր կարգապահական քննությունների մեջ ներգրավված մի բժշկի: Դիմողը բողոքել էր իրեն պաշտոնական ցուցակից հանելու որոշման դեմ, սակայն դատարանը մերժել էր բողոքը: Նա նշել է, որ վերաքննիչ դատարանում քննությունների ոչ մի փուլում հնարավորություն չի ունեցել պատասխանելու գլխավոր դատախազության հայտարարություններին, և դրա մասին նա չի տեղեկացվել:

Դատարանը վճռել է, որ այն ամենի հետ կապված, ինչը կարևոր էր դիմողի համար, ինչպես նաև գլխավոր դատախազության կողմից արված հայտարարությունների բնույթը և այն փաստը, որ պարոն Վան Օրհովենի համար անհնարին է եղել պատասխանելու հայտարարություններին մինչև քննության ավարտը, հանդիսանում է մրցակցային դատաքննության սկզբունքի խախտում: Դատարանն ընդգծում է, որ այս իրավունքը նշանակում էր հնարավորություն երկու կողմերի համար՝ տեղյակ լինելու և մեկնաբանելու ձեռք բերված բոլոր ապացույցները կամ արված լրացուցիչ դիտողությունները: Չետևաբար, տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

Այսպիսով, յուրաքանչյուր քրեական գործով վարույթի դատավարական ընթացակարգը պետք է ունենա մրցակցային բնույթ և երաշխավորի կողմերի հավասարությունը: Սրանում է կայանում արդարացի դատական քննության իրավունքի հիմնարար ասպեկտներից մեկը: Բացի այդ, 6-րդ հոդվածի 1-ին մասը ուղղակի պահանջում է (...), որպեսզի հետապնդում իրականացնող իշխանությունները պաշտպանությանը հայտնեն իրենց տրամադրության տակ եղած և գործին առնչվող ինչպես մեղադրող, այնպես էլ արդարացնող բոլոր ապացույցների մասին:

<sup>1</sup> St u Van Orhoven v. Belgium, Judgement of 25 June 1997:

Ընդհանուր առմամբ քրեական դատավարության ոլորտում ապացույցների ներկայացման հիմնախնդիրը պետք է դիտարկել 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի լույսի ներքո:

Այսպես՝ Յեսպերսն ընդդեմ Բելգիայի գործով<sup>1</sup> Հանձնաժողովը հայտարարել է, որ հոդված 6(3)բ-ի հետ համատեղ դիտարկվող կողմերի հավասարության սկզբունքին համապատասխան, դատախազության մարմինների վրա պարտականություն է դրվում ներկայացնել նրանց տնօրինության տակ գտնվող կամ նրանց հասուցանկացած նյութ, որը կարող է մեղադրյալին օգնել ազատվելու պատասխանատվությունից կամ ստանալու նվազ խիստ պատիժ: Նշված սկզբունքի գործողությունը տարածվում է այն նյութերի վրա, որոնք կարող են սասանել մեղադրանքի վկայությունների արժանահավատությունը:

Մեկ այլ՝ Ֆուշեն ընդդեմ Ֆրանսիայի գործով<sup>2</sup> Դատարանը վճռել է՝ քանի որ դատարանում ինքն իրեն պաշտպանել ցանկացող մեղադրյալին դատախազը մերժել է օգտվել գործի նյութերից և պատճենահանել գործում եղած փաստաթղթերը (որն էլ նրան զրկել է իր պաշտպանությանը պատշաճ կերպով նախապատրաստվելու հնարավորությունից), ապա տեղի է ունեցել 6(3)բ հոդվածի հետ համատեղ դիտարկվող կողմերի հավասարության սկզբունքի խախտում:

Մինչդեռ գործին առնչվող ապացույցների բացահայտման իրավունքը բացարձակ չէ: Տվյալ քրեական դատավարությունում կարող են լինել մրցակցող շահեր (պետական անվտանգության շահեր կամ այնպիսի վկաների պաշտպանության անհրաժեշտություն, որոնք կարող են ենթարկվել սանկցիաների, կամ հանցագործությունների քննության ոստիկանական մեթոդները գաղտնի պահելը), որոնք պետք է համաձայնեցվեն մեղադրյալի իրավունքների հետ: Որոշ դեպքերում անհրաժեշտություն կարող է առաջանալ պաշտպանությունից թաքցնել որոշակի ապացույցներ, որպեսզի պաշտպանվեն այլ անձի հիմնարար իրավունքները կամ հանրային շահը: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից օրինա-

իտալական իշխանություններին տրամադրել իր հասցեն: Իտալական իշխանություններին հայտնի էր, որ դիմողի դեմ արտասահմանում հարուցված է քրեական գործ, և դատաքննության շարունակումն առանց հետագա քայլեր նախաձեռնելու փորձի, որոնք ուղղված էին իրադրության պարզաբանմանը, դժվար թե կարելի էր համատեղելի ճանաչել մանրակրկիտության հետ, որն անհրաժեշտ է պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովման գործում:

Վերաքննիչ վարույթին մասնակցելու անձի իրավունքը կարող է կախված լինել դատաքննության բնույթից և ծավալից: Վերաքննիչ դատարան ամբաստանյալի անձամբ ներկայանալը ձեռք չի բերում(...) այն նշանակությունը, ինչպիսին առաջին ատյանի դատարանում է(...): Նույնիսկ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանում ունի լրիվ իրավասություններ, 6-րդ հոդվածը չի վերապահում իրապարակային լսումների և դատարան անձամբ ներկայանալու իրավունքը:

Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը զբաղվում է բացառապես իրավական հարցերի քննությամբ, մեղադրյալի մասնակցությունն անհրաժեշտ չէ: Սակայն իրավիճակը փոխվում է, եթե վերաքննիչ դատարանը քննում է մաև գործի փաստական կողմը: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը պետք է քննի գործը և՛ փաստական և՛ իրավական կողմից և ընդհանուր ուսումնասիրի մեղավորության կամ անմեղության հարցը, դատավարության արդարացիության ուժով մա չի կարող այդ հարցերով որոշում կայացնել առանց այն մեղադրյալի կողմից անձամբ տված ցուցմունքների անմիջական գնահատման, որը պնդում է, որ ինքը չի կատարել հանցագործություն:

Վերաքննությանը մեղադրյալի մասնակցության իրավունքի կապակցությամբ որոշում ընդունելիս՝ Դատարանը պետք է նկատի ունենա դիմողի համար ռիսկի աստիճանը («ինչն է նրա համար կարևոր»), թե փաստերի հայտնաբերման նպատակով վերաքննիչ դատարանը որքանով մեղադրյալի մասնակցության կարիքն ունի :

<sup>1</sup> Sten v. Jaspers v. Belgium, 27 DR 61:

<sup>2</sup> Sten v. Fushen v. France, Judgement of 18 March 1997:

ավելի ուշ նա կարող է հասնել նրան, որ դատարանը նորից որոշում կայացնի այն բանից հետո, երբ կլսի նրան մեղադրանքի ինչպես փաստական, այնպես էլ իրավական հիմնավորվածության վերաբերյալ(...):

Քաղաքացիական գործերով՝ դատաքննությանը կողմերի մասնակցության պահանջը տարածվում է միայն հատուկ դեպքերի վրա, օրինակ, այն գործերի վրա, որոնք ենթադրում են դատավարության մի կողմի ներկայացուցչի անձնական վարքագծի գնահատում:

Քրեական գործի քննության իրականացումը մեղադրյալի կամ կողմերից մեկի բացակայությամբ կարող է թուլատրվել որոշ բացառիկ հանգամանքներում, այն դեպքում, երբ պաշտոնական մարմինները, չնայած բոլոր ձեռնարկած կամ անհրաժեշտ միջոցներին, ի վիճակի չեն եղել տեղեկացնելու շահագրգիռ անձին դատական քննության անցկացման մասին կամ որոշ դեպքերում՝ կապված մասնակիցների հիվանդության հետ:

Դատական քննության մասնակիցները կարող են հրաժարվել դատարանում հանդես գալու իրենց իրավունքից, բայց այդ դեպքում իրավունքից հրաժարվելը պետք է կատարվի ոչ երկիմաստ ձևով և ապահովվի դրա նշանակությանը համաչափ նվազագույն երաշխիքներով՝ Սակայն, եթե հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը հրաժարվել է դատաքննությանը մասնակցելու իր իրավունքից, նրա շահերը, միևնույն է, պետք է ներկայացվեն դատարանում:

F.C.B.-ն ընդդեմ Իտալիայի գործով<sup>1</sup> իտալական դատարանը կրկնակի դատական քննություն էր իրականացնում դիմողի բացակայությամբ, չնայած որ նրա փաստաբանը հայտնել էր դատարանին, որ իր պաշտպանյալը ձերբակալված է արտասահմանում: Դատարանը նշել է, որ դիմողը ցանկություն չի հայտնել հրաժարվելու դատաքննությանը մասնակցելուց և չի ընդունել կառավարության ներկայացուցչի փաստարկն այն մասին, որ նա դիտավորյալ է օգտագործել դատաքննության ձգձգման տակտիկան՝ հրաժարվելով

կան են պաշտպանության իրավունքը սահմանափակող միայն այն միջոցները, որոնք բացարձակ անհրաժեշտություն են: Դրանից բացի, եթե մենք ցանկանում ենք մեղադրյալի համար երաշխավորել արդարացի դատական քննություն, իր իրավունքների սահմանափակման արդյունքում պաշտպանության մոտ ծագող դժվարությունները պետք է բավարար չափով փոխհատուցվեն հետագա դատական քննության ընթացքում:

Եթե ելնելով հանրային շահից ապացույցները թաքցվել են պաշտպանությունից, Եվրոպական դատարանը չպետք է իր տեսակետը հայտնի այն հարցի մասին, թե նման որոշումը եղել է արդյոք բացարձակ անհրաժեշտություն, թե՛ ոչ, քանի որ ընդհանուր կանոնով հենց ներքին դատարանները պետք է գնահատեն ներկայացված ապացույցները: Մեծամասամբ այն գործերով, որոնցով ապացույցները, ինչպես տվյալ դեպքում, երբեք չեն բացահայտվել, Եվրոպական դատարանը հնարավորություն չունի վիճահարույց ապացույցները չհրապարակելու՝ հանրային շահը համադրել մեղադրյալի՝ դրանց տեղեկանալու շահի հետ: Դատարանը, որքանով դա հնարավոր է, նախ պետք է պարզի, թե որոշիչ դատավարությունը բավարարել է արդյոք մրցակցության և կողմերի հավասարության պահանջները և ապահովված է եղել արդյոք մեղադրյալի շահերի պաշտպանությունը:

«Ռուոն և Դեվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության»<sup>1</sup> գործով երկու դիմողները և մեկ այլ երրորդ անձ մեղադրվում էին սպանության, ծանր մարմնական վնասվածք հասցնելու և երեք կետով կատարված կողոպուտ կատարելու մեջ: Մեղադրանքը գլխավորապես հիմնվում էր անձանց մի փոքր խմբի կողմից տված ցուցմունքների վրա, որոնք ապրում էին դիմողների հետ, և որոնցից մեկը հանդիսանում էր դիմողներից մեկի ընկերուհին: Երեք անձինք էլ դատապարտվել էին այդ մեղադրանքներով, և վերաքննիչ դատարանն անփոփոխ էր թողել դատավճիռները: Սույն գործով առաջին ատյանի դատարանում դատավարության ընթացքում մեղադրանքի կողմը, առանց դատավորին տեղեկացնելու, որոշել է թաքցնել կոնկ-

<sup>1</sup> St u F.C.B. v. Italy, Judgement of August 1992:

<sup>1</sup> St u Rowe and Davis v. the United Kingdom, Judgement of 16 February 2000:

րետ ապացույց՝ հանրային շահի պաշտպանության նկատառումով: Դիմողների վերաքննիչ բողոքի քննության սկզբում մեղադրանքի կողմը պաշտպանությանը տեղեկացրել է, որ որոշակի տեղեկություններ թաքցվել են՝ առանց պարզաբանելու այդ նյութերի բնույթը: Այնուհետև, նախորդ քննություններում չբացահայտված ապացույցը դատարանը երկու անգամ վերանայել է մեղադրողի ներկայությամբ, սակայն պաշտպանության կողմի բացակայությամբ: Դատարանը որոշում է կայացրել նյութը չհրապարակելու մասին:

Եվրոպական դատարանը նորից նշել է, որ կարևոր ապացույց հրապարակելը բացարձակ իրավունք չէ, և որ կարող են լինել հակադիր շահեր, այնպիսիք, ինչպիսիք են վկաների պաշտպանությունը կամ հանցագործության քննության ոստիկանական գաղտնի մեթոդները պահպանելը: Այնուամենայնիվ, պաշտպանության՝ 6-րդ հոդվածով թույլատրվող իրավունքները սահմանափակող միակ միջոցները նրանք են, որոնք խիստ անհրաժեշտ են: Դատարանը վճռել է, որ պաշտպանությունից քողարկված տեղեկության կարևորության մասին՝ մեղադրանքի գնահատականը չի համապատասխանել դատաքննության մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքներին: Վերաքննիչ դատարանում գործի քննությունը բավարար չէր շտկելու տեղի ունեցած անարդարությունն այն պատճառով, որ դատավորները քողարկված նյութի հնարավոր կարևորությունը հասկանալու համար կաշկանդված էին առաջին ատյանի դատաքննությամբ և գործի վերաբերյալ միայն մեղադրանքի կողմից տրամադրված նյութերի պատճեններով: Համապատասխանաբար, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### **3) Դատական քննությանը մասնակցելու մեղադրյալի իրավունքը.**

Գործի դատական քննությանը մասնակցելու մեղադրյալի իրավունքը բխում է ընդհանուր 6-րդ հոդվածի խնդիրներից և նպատակներից: 6-րդ հոդվածը, որպես մեկ ամբողջություն, ճանաչում է դատավարությանը մեղադրյալի իրական մասնակցության իրավունք:

քը<sup>1</sup>: Ամենից բացի, դա ենթադրում է ոչ միայն քննությանը ներկա գտնվելու, այլ նաև լսելի լինելու և վիճաբանություններին մասնակցելու իրավունք:

Մրցակցային դատավարության հասկացությանը հատուկ լինելով հանդերձ, այս իրավունքները կարող են հավասար չափով բխեցվել 6-րդ հոդվածի 3-րդ մասի c),d) և e) ենթակետերով նախատեսված երաշխիքներից:

Իր դեմ սկսված դատական քննության մասին որևէ մեկին ծանուցելը իրավաբանական գործողություն է, որն ունի այնպիսի նշանակություն, որ պետք է բավարարի մեղադրյալի իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելու ունակ ձևին և էությանը առնչվող պայմաններին: Դա հետևում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի a) ենթակետի խնդիրներից և նպատակներից: Չի կարող բավարար համարվել վերացական և ոչ պաշտոնական ծանուցումը:

Ամբաստանյալի ներկայանալը մեծ նշանակություն ունի ինչպես լսելի լինելու վերջինիս իրավունքի ուժով, այնպես էլ նրա պնդումների ճշմարտացիությունը ստուգելու և դրանք զոհի, ինչպես նաև վկաների ցուցումներին հետ համադրելու անհրաժեշտության տեսանկյունից:

Թեև ամբաստանյալի վերջին խոսքի իրավունքն ունի որոշակի նշանակություն, այն չի բխում վիճաբանությունների ժամանակ դատարանի կողմից լսելի լինելու նրա իրավունքից:

Այսպիսով, օրենսդիրը պետք է կարողանա կանխել դատական նիստին մասնակցելուց նրան չհիմնավորված զրկելը:

Երբ ներքին օրենսդրությունը թույլ է տալիս դատական նիստն անցկացնել այն անձի բացակայությամբ, որին «ներկայացված է քրեական մեղադրանք»(...), ապա այդպիսի անձը, դատական քննության մասին իրեն հայտնի դառնալու պահից, պետք է հնարավորություն ստանա հասնելու նրան, որ իր գործը քննած դատարանը նորից անդրադառնա իրեն:

Ամբաստանյալի բացակայությամբ անցկացվող դատական քննությունը սկզբունքորեն համատեղելի չէ Կոնվենցիայի հետ, թեև

<sup>1</sup> Sten Ekbatan v. Sweden, Judgement of 26 May 1988:



պես են ստացվել ապացույցները (ինդոգծումն իմն է)»<sup>1</sup>: Մեկ այլ վճռով դատարանը նշել է, որ. «Ինչ վերաբերում է ներպետական իրավական նորմերի «որակին» Կոնվենցիայի լույսի ներքո, ապա հիշյալ որակը կախված է այն ճշգրտությունից, որով օրենսդրությունը և դատական պրակտիկան սահմանում են իշխանական լիազորությունների իրականացման ծավալն ու պայմանները՝ բացառելով կամայականության վտանգը»<sup>2</sup>: Դեռևս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով չորս դատավորներ (Պետիտի, Շպիլման, Դե Մեյերի, և Կարիլո Սասլեդո) հատուկ կարծիք հայտնեցին թույլատրելիության հարցի կապակցությամբ՝ նշելով, որ. «Ոչ մի դատարան չի կարող, առանց վնաս պատճառելու արդարադատության պատշաճ իրականացմանը, հենվել մի ապացույցի վրա, որը ստացվել է ոչ միայն անազնիվ, այլև, նախ և առաջ, ապօրինի ճանապարհով: Եթե դատարանն այդպես է վարվում, ապա այն չի կարող Կոնվենցիայի իմաստով արդարացի համարվել»<sup>3</sup>:

Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այն դեպքերում, երբ ներպետական դատարանները դատավճռի հիմքում դնում են օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ, Եվրոպական դատարանն այս փաստը հիմք չի համարում հողված 6-ի խախտում արձանագրելու համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ ապացույցը համարվել է անթույլատրելի, այն հակասել է ոչ թե արդարացի դատաքննության իրավունքին, այլ Կոնվենցիայի այլ հողվածներին: Մասնավորապես, Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հողվածի (ոչ թե 6-րդ - Դ. Մ.) խախտում է համարել վկաների «խորացված հարցաքննությունը», քանի որ կիրառված մեթոդները թեև մարմնական

<sup>1</sup> Տե՛ս Վան Սեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով Դատարանի 1997թ. ապրիլի 23-ի վճիռը (քաղվածք), Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 278:

<sup>2</sup> Տե՛ս Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով Դատարանի 1993թ. փետրվարի 25-ի վճիռը (քաղվածք), Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 469:

<sup>3</sup> Տե՛ս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի 1988թ. հուլիսի 12-ի վճիռը (քաղվածք), Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 530:

Այսպես՝ հարցաքննությունից առաջ նախագահողը պարզում է վկայի ինքնությունը և պարզաբանում է՝

1) իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ վկայելուց հրաժարվելու նրա իրավունքը,

2) ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին:

Այս պահանջների կատարումը նշվում է դատական նիստի արձանագրության մեջ:

Տասնվեց տարեկան չդարձած վկան ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին չի նախագուշացվում (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 339):

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է, որ վկաները հարցաքննվում են միմյանցից անջատ և դեռևս չհարցաքննված վկաների բացակայությամբ:

Նախագահողը պարզում է վկայի հարաբերությունն անբաստանյալի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և գործին մասնակցող այլ անձանց հետ և վկային առաջարկում է հայտնել այն անձնը, ինչ հայտնի է իրեն գործի վերաբերյալ: Չի թույլատրվում վկային հարցերով ընդհատել:

Կողմի միջնորդությամբ դատական քննության կանչված կան նրա կողմից ներկայացված վկային առաջին հերթին հարցաքննում է միջնորդություն հարուցած կամ վկային ներկայացրած անձը, այնուհետև՝ տվյալ կողմում հանդես եկող այլ անձինք, իսկ վերջում՝ հակառակ կողմի ներկայացուցիչները և դատարանը:

Դատարանի նախաձեռնությամբ կանչված վկային առաջին հերթին հարցաքննում է մեղադրանքի կողմը, ապա՝ պաշտպանության կողմը, այնուհետև՝ դատարանը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 340):

Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման վերադարձումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը,

եական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Վկայի ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը հնարավոր է միայն նրա հարցաքննության արձանագրությունը կամ դատական նիստի արձանագրության այն մասը հրապարակելուց հետո, որտեղ ամրագրված են վկայի ցուցմունքները(ՀՀ քր. դատ. օր. ի հոդվ. 342):

Տուժողը հարցաքննվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 339-342 հոդվածներով սահմանված կանոններով:

ՀՀ համապատասխան վիճակագրական տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել որոշակի մտահոգիչ օրինաչափություն: Նախ մտածելու տեղիք է տալիս դատակոչի ցուցակում ընդգրկված վկաների դատական նիստին չներկայանալու դեպքերի բավականին մեծ տոկոսը: Այնուհետև ուշադրության է զարնում այն հանգամանքը, որ չներկայացած վկաների 63,2 տոկոսը մեղադրանքի կողմի վկաներն են:

Հաջորդ վերլուծության արժանի օրինաչափությունը, որը, մեր կարծիքով, տրամաբանական կապի մեջ է գտնվում նախորդների հետ, կայանում է նրանում, որ վկաների չներկայանալու պատճառների շարքում տոկոսային հարաբերությամբ գերակշռում են դատարանին անհայտ պատճառները և, որ հետաքրքրական է, տվյալ դեպքում դատարանի ընդունած որոշումների մեջ նորից զգալի տոկոսային հարաբերակցությամբ առանձնանում են ոչ թե վկաներին կրկին անգամ կանչելու կամ բերման ենթարկելու մասին որոշումները, այլ նախաքննության ընթացքում տվյալ վկայի տված ցուցմունքի հրապարակման մասին որոշումը:

Եվ երրորդ օրինաչափությունը կայանում է նրանում, որ չնայած նման դեպքերում դատարանները, պահպանելով ՀՀ քրեադատավարական օրենսդրության դրույթները, որոշում կայացնելիս ճշտում են կողմերի դիրքորոշումը (84,2 տոկոս), սակայն միայն 12,5 տոկոս դեպքերում են հաշվի առնվել պաշտպանության կողմի կարծիքը, մինչդեռ մեղադրանքի կողմի դիրքորոշումը դրվել է դատարանի կողմից ընդունվող 43,8 տոկոս որոշումների հիմքում:

Եվրոպական դատարանում դիմողը պնդում էր, որ իշխանությունները խախտել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածը (Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) և 6-րդ հոդվածը: Դատարանը գտավ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ բացակայում է գաղտնի լսողական սարքերի կիրառումը թույլատրող օրենք: Թեև հսկողությունը կատարվել է Ներքին գործերի նախարարության ուղեցույցին համապատասխան, Դատարանը գտել է, որ այն հասարակության համար բավարար չափով մատչելի չէ: Այսպիսով, չի պահպանվել 8-րդ հոդվածում ամրագրված «նախատեսված է օրենքով» պահանջը, որն անհրաժեշտ է միջամտության արդարացման համար: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ Դատարանը նշել է, որ Դիմումատուն ունեցել է ձայնագրության նույնականությունն ու օգտագործման փաստը վիճարկելու լայն հնարավորություն: Այն հանգամանքը, որ նա հաջողության չի հասել, Դատարանի գնահատականներում փոփոխություն չի մտցրել: Այնուամենայնիվ, Դատարանը գտել է, որ **8-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված նյութի օգտագործումը չի հակասում 6-րդ հոդվածով նախատեսված արդարացիության պահանջներին:** Այսինքն 6-րդ հոդվածի շրջանակներում ապացույցների թույլատրելիությանը անդրադառնալիս դատարանը չի հիմնվել այն հանգամանքների վրա, արդյոք ապացույցը ձեռք է բերվել ներպետական օրենսդրության պահպանմամբ, թե՛ ոչ: Դատարանը գնահատել է ամբողջ դատավարության արդարացիությունը:

Սակայն, պետք է նշել, որ որոշ վճիռներում դատարանը դրսևորվել է ավելի մեղմ, վերը նշվածից որոշակիորեն տարբերվող մոտեցում, որն իր արտացոլումն է ստացել Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով դատարանի վճռում: Դատարանը, մասնավորապես, նշել է. «Դատարանը կրկնում է, որ ապացույցների թույլատրելիությունը հարց է, որը *հիմնականում* (ընդգծումն իմն է) կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ և, որպես կանոն, հենց ներպետական դատարաններն են կոչված գնահատելու ներկայացված ապացույցները: Ըստ կոնվենցիայի՝ դատարանի խնդիրն է ոչ թե գնահատել վկաների ցուցմունքները, այլ համոզվել, որ դատաքննությունն արդարացի է եղել, ներառյալ և այն, *թե ինչ-*

վել օրենքով սահմանված կարգով: Այս դրույթը կողմերին իրավունք է տալիս դատարանից պահանջելու իր վճիռները կայացնել բացառապես օրենքի պահանջների պահպանմամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա: Սա համապատասխանում է նաև ՀՀ քր. դատ. օր-ի 104 հոդվածի պահանջին, ըստ որի քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ:

Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացրած վճռում դատարանը նշում է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը, բայց չի սահմանում ապացույցների՝ որպես այդպիսին թույլատրելիության որևէ կանոն. դա ներպետական իրավունքի խնդիրն է: Դատարանն, այսպիսով, չի կարող սկզբունքորեն և in abstracto բացառել ապօրինաբար ձեռք բերված նույնաբնույթ ապացույցների ընդունելիությունը: Նա պետք է գնահատի միայն, թե արդյոք պրն. Շենկի գործով դատաքննությունն անբողջությամբ արդարացի է եղել»<sup>1</sup>:

Կհանն ընդդեմ Միացյալ Թագավարության գործով<sup>2</sup> դիմողը Միացյալ Թագավորություն էր ժամանել իր զարմիկի հետ, որի մոտ թմրանյութ է հայտնաբերվում: Խուզարկության արդյունքում դիմողի մոտ թմրանյութ չի հայտնաբերվում: Հինգ ամիս անց դիմողն այցելում է թմրանյութերի առուվաճառքով զբաղվող ընկերոջը, առանց որի իմացության նրա բնակարանում լսող սարք էր տեղադրվել: Արդյունքում ոստիկանությունը ստանում է դիմումատուի և նրա ընկերոջ զրույցի ձայնագրությունը, որտեղ դիմումատուն խոստովանում է, որ ներգրավված է եղել թմրանյութերի մաքսանենգության մեջ: Վերջինս ձերբակալվում է և մեղադրվում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար:

<sup>1</sup> Տե՛ս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի 1988թ. հուլիսի 12-ի վճիռը (քաղվածք), Մարդու իրավունքների եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 527:

<sup>2</sup> Khan v. the United Kingdom, 12 May 2000.

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 307-րդ հոդվածը կանոնակարգում է դատական քննությանը տուժողի մասնակցության հարցը և նրա չներկայանալու հետևանքները: Մասնավորապես տուժողը, մասնակցելով դատական քննությանը, օգտվում է սույն օրենսգրքով սահմանված իր իրավունքներից:

Տուժողի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, լուծում է նրա բացակայությամբ գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի, օբյեկտիվ հետազոտման և օրինական ու հիմնավորված դատավճիռ կայացնելու հնարավորության հարցը:

Առանց հարգելի պատճառների տուժողի՝ դատարան չներկայանալու դեպքում դատարանն իրավունք ունի նրան բերման ենթարկել, եթե դատարանի կարծիքով նրա ներկայությունն անհրաժեշտ է:

Բացի այդ, տուժողը, որպես քրեական դատավարության ակտիվ և իր շահերի պաշտպանության հիմնական գործառույթ իրականացնող սուբյեկտ, իրավունք ունի հարուցել միջնորդություններ, հայտնել բացարկներ, առարկել նախագահողի կամ մյուս կողմի գործողությունների դեմ, հարցեր տալ ամբաստանյալին, վկաներին, դատական վիճաբանություններում հանդես գալ ճառով և ռեպլիկի իրավունքով, իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

Քննարկվող հարցի կապակցությամբ վերը նշված ՀՀ օրենսդրության դրույթներից և վիճակագրական տվյալներից պարզ է դառնում, որ չնայած ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ դատական վարույթում տուժողը հստակ առանձնանում է որպես մեղադրանքի կողմում հանդես եկող ինքնուրույն սուբյեկտ և ունի դատավարության ակտիվ մասնակցին բնորոշ իր դատավարական շահերի ներկայացման և պաշտպանության համար լայն իրավունքներ, սակայն դատական քննության ժամանակ մեղադրանքի կողմը ներկայացնող առանցքային սուբյեկտը եղել և մնում է դատախազը, ում գործողություններով էլ առավելապես պայմանավորվում է գործի հավանական հանգուցալուծումը:

Թեև դատախազի դիրքորոշումից տուժողի դիրքորոշման տարբերության ցուցանիշը մեծ չէ, սակայն դա դեռևս չի նշանակում, որ տուժողը մշտապես բավարարված է իր դիրքորոշումը պաշտպանելուն ուղղված՝ դատախազի գործողություններով: Այդ մասին են վկայում D27 աղյուսակում ներկայացված ցուցանիշները:

Հետաքրքրական է, որ ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, ավելի բարձր է տուժողի մասնակցության աստիճանը վերաքննիչ դատարանում: Սա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ առաջին ատյանի դատարանում գործի քննությունն ավարտելուց հետո տուժողն իր շահերի պաշտպանությանն ուղղված դատախազի գործողությունները բավարար չի համարում: Այդ մասին է վկայում նաև տուժողի առավել ակտիվ մասնակցությունը (ամբաստանյալին հարցեր տալու իրավունքից օգտվելը) վերաքննիչ դատարանում (առաջին ատյանի դատարանում 27,5%, վերաքննիչ դատարանում՝ 66.7%):

5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 344 հոդվածի համաձայն, եթե նախաքննության ժամանակ կատարվել է փորձաքննություն, դատական քննության ժամանակ կողմերը և դատարանը հետազոտում են փորձագետի եզրակացությունը: Անհրաժեշտության դեպքում փորձագետը հրավիրվում է դատական քննությանը և մասնակցում է փորձաքննության առարկային վերաբերող ապացույցների հետազոտմանը՝ ամբաստանյալի, տուժողի, վկաների հարցաքննության ժամանակ տալիս է փորձաքննության առարկային վերաբերող հարցեր, մասնակցում է իրենց ապացույցների զննմանը և այլ քննչական գործողություններին:

Փորձագետի եզրակացությունը հետազոտելուց հետո դատարանն իրավունք ունի կողմերի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ նշանակել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն՝ լսելով դրա վերաբերյալ կողմերից յուրաքանչյուրի կարծիքը(ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 344):

Եթե նախաքննության ժամանակ փորձաքննություն չի նշանակվել, դատական քննության ժամանակ կողմերն իրավունք ունեն միջնորդել այն նշանակելու:

լուծելիս<sup>1</sup>: Եվրոպական դատարանը ապացույցների թույլատրելիության խնդրին անդրադարձել է Կոնվենցիայի հոդված 6-ի (Արդարացի դատաքննության իրավունք) շրջանակներում: Միաժամանակ դատարանը բազմիցս նշել է, որ իր խնդիրը ոչ թե վկաների ցուցմունքների գնահատումն է, այլ պարզելը՝ արդյոք դատաքննությունը եղել է արդարացի՝ ներառելով նաև ապացույցների թույլատրելիության հարցը: Մասնավորապես, Հոդված 6-ի համաձայն «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության՝ խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից»: Ինչպես նշվում է Եվրոպական դատարանի՝ Մոնելն ու Մորիսն ընդդեմ Միացյալ թագավորության գործով կայացրած վճռում «արդար դատաքննության պահանջը տարածվում է ոչ միայն կողմերի մասնակցությամբ դատաքննության, այլ ամբողջ դատավարության վրա»<sup>2</sup>: Հետևաբար, արդարացի դատաքննության պահանջն իրագործելու համար դատարանը պետք է անդրադառնա նաև ապացույցների թույլատրելիության խնդրին և կողմերի պահանջով անթույլատրելի ճանաչի օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները: Ավելին, հոդված 6-ի 2-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչև նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան»: «Օրենքին համապատասխան» դրույթը ենթադրում է, որ մեղադրական դատավճռի հիմքում պետք է դրվեն միայն այն ապացույցները, որոնք ձեռք են բեր-

<sup>1</sup> Միե՛ր-ը ապացույցների թույլատրելիության հարցին անդրադարձել է հիմնականում դատական քննությանը վկաների ներկայության, դատավարության ընթացքում «զենքերի հավասարության», անանուն վկաների հարցաքննության հարցերի լույսի ներքո (Nuala Mole and Catharina Harby The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights, 2<sup>nd</sup> edition, August 2006, page 52):

<sup>2</sup> Տե՛ս Monnell and Morris v. United Kingdom., Judgement of 2 Marth 1987, Series A., No.115. p.25, para. 55-70.

## **2.8. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ապացույցների թույլատրելիության ինստիտուտի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար առավել քան կարևոր է Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը: Սա պայմանավորված է Եվրոպական դատարանի վճիռների պարտադիր իրավաբանական ուժով, քանի որ Կոնվենցիայի անդամ պետությունները պարտավոր են կատարել դատարանի վերջնական վճիռներն այն գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են հանդիսանում (Կոնվենցիայի հոդված 46): Ավելին և, ՀՀ Դատական օրենսգրքում (հոդված 15) և ՀՀ քր. դատ. օր-ում (հոդված 8) ուղղակիորեն սահմանվեց ներպետական դատարանների համար Եվրոպական դատարանի վճիռների պարտադիր իրավաբանական նշանակությունը: Մասնավորապես, որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Պետք է նշել, որ թեև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան ապացույցների թույլատրելիության վերաբերյալ որևէ կոնկրետ դրույթ չի նախատեսում, սակայն Եվրոպական դատարանը այս հարցի կապակցությամբ ձևավորել է որոշակի նախադեպ, որն ամեն դեպքում պետք է հաշվի առնվի ներպետական դատարանների կողմից՝ այս կամ այն ապացույցի թույլատրելիության հարցը

Կողմը, որի միջնորդությամբ նշանակվում է փորձաքննություն, գրավոր ներկայացնում է այն հարցերը, որոնց վերաբերյալ պետք է տրվի փորձագետի եզրակացություն, նշում է, թե ինչ պետք է հետազոտվի, կարող է նշել, թե ով պետք է ներգրավվի որպես փորձագետ: Այս բոլոր հարցերի մասին մյուս կողմն իրավունք ունի շարադրել իր կարծիքը:

Դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելիս նախագահողը մեղադրանքի և պաշտպանության կողմերին առաջարկում է ձևակերպել փորձագետին ուղղված հարցերը և շարադրել իրենց կարծիքն այն մասին, թե ում հանձնարարել փորձաքննությունը և ինչ պետք է հետազոտել: Վերջնական որոշումը կայացնում է դատարանը:

Նշված հարցերի մասին իր կարծիքը շարադրելու համար մեղադրանքի կամ պաշտպանության կողմում հանդես եկող որևէ անձի միջնորդության առկայության դեպքում կարող է հայտարարվել ընդմիջում: Կողմերն իրավունք ունեն որպես փորձագիտական հետազոտության օբյեկտներ ներկայացնել առարկաներ, փաստաթղթեր: Այդպիսի օբյեկտների թվից դրանք հանելիս դատարանը պարտավոր է կայացնել պատճառաբանված որոշում:

Փորձագետ նշանակված անձին հանձնվում է փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշման պատճենը ու պարզաբանվում են նրա իրավունքները և պարտականությունները: Փորձագետի եզրակացությունը հրապարակվում և հետազոտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 344 հոդվածով սահմանված կարգով (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 345):

Փորձագետի կողմից եզրակացությունը հրապարակելուց հետո նրան կարող են տրվել հարցեր՝ եզրակացությունը պարզելու կամ լրացնելու համար:

Փորձագետին առաջին հերթին հարցաքննում է այն անձը, որի միջնորդությամբ նշանակվել է փորձաքննությունը, ապա՝ այդ կողմում հանդես եկող այլ անձինք, այնուհետև՝ հակառակ կողմի ներկայացուցիչները և դատարանը:

Եթե փորձաքննությունը կատարվել է կողմերի միջև համաձայնությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, փորձագետին

սկզբից հարցաքննում է մեղադրանքի կողմը, ապա՝ պաշտպանության կողմը, այնուհետև՝ դատարանը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 346):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 348 հոդվածը սահմանում է իրեղեն ապացույցների զննման կարգը: Դատարանում գտնվող իրեղեն ապացույցները և դատական նիստում կողմերի ներկայացրած և իրեղեն ապացույցներ ճանաչված առարկաները զննում են մեղադրանքի կողմը, պաշտպանության կողմը և դատարանը: Եթե իրեղեն ապացույց ճանաչված առարկան ներկայացրել է կողմը՝ նա առաջինն է մասնակցում դրա զննությանը: Ձևնության ժամանակ իրեղեն ապացույցները նախագահողը կարող է ներկայացնել վկաներին, փորձագետին, մասնագետին: Այդ անձինք պարտավոր են դատարանի ուշադրությունը հրավիրել իրեղեն ապացույցի զննման ժամանակ հայտնաբերված և գործի համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների վրա:

Նախաքննության ժամանակ գործին կցված կամ դատական նիստում դատարանին ներկայացված փաստաթղթերը հրապարակվում են, եթե դրանցում արտացոլված կամ հաստատված են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ(ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 349): Ընդ որում, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 352 հոդվածի, մեղադրողն իրավունք ունի միջնորդել, որպեսզի ապացույցների հետազոտումը սահմանափակվի մինչ այդ պահը հետազոտված ապացույցներով: Դատարանը, լսելով կողմերից յուրաքանչյուրին, իրավունք ունի բավարարել այդ միջնորդությունը: Դատարանը մերժում է միջնորդությունը, եթե գտնում է, որ դեռևս չհետազոտված ապացույցները վերաբերում են գործի այնպիսի էական հանգամանքներին, որոնք դեռևս չեն ստացել բավարար լուսաբանում:

Պաշտպանության կողմն իրավունք ունի հրաժարվել դեռևս չհետազոտված այն ապացույցները հետազոտելուց, որոնք ներկայացվել, գործին կցվել են այդ կողմի միջնորդությամբ: Այդպիսի հրաժարումը դատարանի համար պարտադիր է:

ՀՀ համապատասխան վիճակագրական տվյալներն ակնհայտորեն վկայում են, որ ոչ բոլոր դատական քննությունների ժամանակ են պատշաճ նակարդակով հետազոտվում յուրաքանչյուր գոր-

դատավճիռների տեսակարար կշիռը էապես գերազանցում է մյուս եզրափակիչ ակտերի տեսակարար կշիռը՝ միասին վերցված: Մեր կարծիքով, դա կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով.

- դատարանի կողմից պատշաճ միջոցներ չձեռնարկելը գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության համար,

- դատարանի անկախության դեռևս ցածր մակարդակը և մեղադրական հակվածության առկայությունը,

- պաշտպանների ոչ պատշաճ պրոֆեսիոնալիզմը և ակտիվության ցածր մակարդակը,

- դատախազության բարձր պրոֆեսիոնալիզմը և ներկայացված մեղադրանքների հիմնավորվածության բարձր մակարդակը

- այլ հանգամանքներ:

Համեմայն դեպս անկախ և անկողմնակալ դատական համակարգի կայացման համար արդարացման դատավճիռների թվաքանակի արիեստական աճը կարող է ունենալ նույն վտանգավոր հետևանքները, ինչը որ դրանց անհիմն սահմանափակումները: Արդարացի դատական քննության ապահովումը պետք է լինի իրական, առանց ինքնանպատակ վիճակագրական տվյալներով պայմանավորված:

և լսում է ամբաստանյալի վերջին խոսքը, որից հետո հեռանում է խորհրդակցական սենյակ:

Դատարանի դատավճիռը կարող է լինել մեղադրական կամ արդարացման:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ:

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը(ՀՀ քր. դատ. օր-ի հոդվ. 394, մաս 1):

ՀՀ դատական պրակտիկայում բավականին ցածր և մտահոգիչ է արդարացման դատավճիռների քանակը: Ավելին, մեղադրական

ծի ճիշտ և բազմակողմանի լուծման համար նշանակություն ունեցող այնպիսի առանցքային ապացույցներ, ինչպիսիք են քննչական գործողությունների արձանագրությունները և փորձագետի եզրակացությունը: Բավականին ցածր է նաև քննչական գործողության ընթացքի անրագրման լրացուցիչ միջոցների կիրառման ցուցանիշը: Աննշան են տեխնիկական միջոցների կիրառմամբ քննչական գործողությունների հավելվածների վերարտադրման դեպքերի թիվը:

Կարծում ենք, նման իրավիճակը մեծամասամբ պայմանավորված է նաև պաշտպանների պասիվ վարքագծով: Այդ մասին է վկայում նաև այն, որ ըստ անցկացված վիճակագրության կողմերը հետազոտվող ապացույցների վերաբերյալ հարցեր տվել են միայն 29.4% դեպքերում: Ընդ որում առաջին ատյանի դատարանում նշված ապացույցների հետազոտման ընթացքում կողմերի բավականին պասիվ վարքագծով է պայմանավորված վերաքննիչ դատարանում նույն ապացույցների հետազոտմանը նրանց ավելի ակտիվ մասնակցությունը (29.4%-ն ընդդեմ 50%-ի):

6. Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի, դատաքննությունն ավարտելուց հետո նախագահողը հայտարարում է, որ դատարանն անցնում է դատական վիճաբանություններն ունկնդրելուն և ամբաստանյալի վերջին խոսքը լսելուն:

Եթե դատական վիճաբանություններին մասնակցող անձանցից որևէ մեկը միջնորդում է՝ իրեն ժամանակ տրամադրել դատական վիճաբանություններին նախապատրաստվելու համար, նախագահողը հայտարարում է ընդմիջում՝ նշելով դրա տևողությունը:

Դատական վիճաբանությունները բաղկացած են մեղադրողի, տուժողի կամ նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի, քաղաքացիական պատասխանողի կամ նրա ներկայացուցչի, պաշտպանի, ամբաստանյալի՝ նշված հաջորդականությամբ արտասանած ճառերից:

Եթե մեղադրանքը պաշտպանում է մի քանի մեղադրող, գործին մասնակցում են մի քանի տուժող, պաշտպան, քաղաքացիական պատասխանող և նրանց ներկայացուցիչներ, քաղաքացիական հայցվոր և նրանց ներկայացուցիչներ, ամբաստանյալ, նախագահ

հողը նրանց ժամանակ է տալիս՝ ելույթ ունենալու հաջորդականությունն իրենց միջև որոշելու համար: Անհրաժեշտության դեպքում դրա համար կարող է հայտարարվել ընդմիջում: Եթե նշված անձինք վիճաբանություններում ելույթ ունենալու հաջորդականության հարցում համաձայնության չեն գալիս, դատարանը, լսելով նրանց կարծիքը, ընդունում է համապատասխան որոշում:

Իրենց ճառերում կողմերն իրավունք չունեն հիմնվել այնպիսի ապացույցների վրա, որոնք չեն հետազոտվել դատաքննության ժամանակ: Իր հետևությունները հիմնավորելու համար նոր ապացույցներ օգտագործելու անհրաժեշտության դեպքում կողմը միջնորդություն է հարուցում դատաքննությունը վերսկսելու մասին նշելով, թե որ հանգամանքներն են պահանջում լրացուցիչ հետազոտություն և ինչպիսի նոր ապացույցների հիման վրա: Դատարանը, լսելով մյուս կողմի կարծիքը, պատճառաբանված որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

Դատարանը չի կարող դատական վիճաբանությունների տևողությունը սահմանափակել որոշակի ժամանակով, սակայն նախագահողն իրավունք ունի ընդհատել վիճաբանություններին մասնակցող անձանց, եթե նրանք շոշափում են քննարկվող գործի հետ առնչություն չունեցող հանգամանքներ:

Դատական վիճաբանությունների բոլոր մասնակիցներն իրենց արտասանած ճառերից հետո իրավունք ունեն այդ ճառերում ասվածի առթիվ ևս մեկական անգամ ելույթ ունենալ ռեպլիկի կարգով: Վերջին ռեպլիկի իրավունքը միշտ պատկանում է պաշտպանին և ամբաստանյալին(ՀՀ քր.դատ. օր.հոդվ. 354):

Քննարկվող խնդրում դատական նիստի՝ օրենքով սահմանված ընթացակարգը պահելու կողմերի ցանկությունը անշուշտ դրական միտում ունի, քանի որ հազվադեպ են դեպքերը, երբ կողմերը դատական վիճաբանությունների փուլում վկայակոչել են ապացույցներ, որոնք չեն հետազոտվել դատաքննության փուլում: Միևնույն ժամանակ մտահոգիչ է այն, որ չհետազոտված ապացույցներ վկայակոչելու դեպքում դատարանը հաճախ չի արձագանքել դրան:

Այն փաստը, որ դիտարկված բոլոր դեպքերում էլ նման ապացույցներ վկայակոչել է պաշտպանության կողմը, կարող է վկայել երկու հանգամանքի մասին.

1/ դատարանի կողմից դատաքննության ընթացքում ասենք՝ մերժվել է ներկայացված առարկան կամ փաստաթուղթը ապացույց ճանաչելու և դատաքննության ընթացքում հետազոտելու մասին պաշտպանի միջնորդությունը և պաշտպանը ցանկացել է նման կերպ ևս մեկ անգամ անդրադառնալ դրան.

2/ դատաքննության ընթացքում պաշտպանը այդ ապացույցների հետազոտմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել:

Միևնույն ժամանակ մտահոգիչ է այն, որ չհետազոտված ապացույցներ վկայակոչելու դեպքում դատարանը հաճախ չի արձագանքել:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածը նախատեսում է դատական քննության անընդհատության սկզբունքը: Այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ներմուծվեց 2006 թվականին դրանում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում: Յուրաքանչյուր գործով դատական նիստը տեղի է ունենում անընդհատ՝ բացի հանգստի համար օրենսդրությամբ սահմանված ժամանակից: Նույն դատավորի (դատավորների) կողմից նախքան սկսված գործի դատական քննությունն ավարտելը կամ կասեցնելը կամ հետաձգելը այլ քրեական գործեր քննել չի թույլատրվում: Իսկ սկսված գործի դատական քննությունն ավարտելը կամ կասեցնելը կամ հետաձգելը կատարվում է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հիմքերի առկայության դեպքում և կարգով:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 363-րդ հոդվածի, եթե խորհրդակցական սենյակում, սույն օրենսգրքի 360-362 հոդվածներում մատնանշված հարցերը քննարկելիս, դատարանը գտնի, որ դրանց լուծման համար անհրաժեշտ է լրացնել դատաքննությունը, դատարանը որոշում է կայացնում դատաքննությունը վերսկսելու մասին: Վերսկսված դատաքննությունն ավարտելուց հետո դատարանը նորից է սկսում դատական վիճաբանությունները



ելքից և ոչ միայն մեղադրանքն ըստ էության քննելիս: Ամբաստան-  
յալի մեղավորության վերաբերյալ ցանկացած դատողություն, որն  
արվում է դատավորի կողմից մինչև դատական քննության ավարտը  
կամ մեղադրյալին արդարացնելիս, համարվում է անմեղության  
կանխավարկածի խախտում:

Անմեղության կանխավարկածը խախտելու կամ պահպանելու  
հարցը սերտորեն կապված է մեղադրյալին առաջադրված մեղադ-  
րանքից պաշտպանվելու հնարավորություն վերապահելու հետ:  
Դրա համար անձին առաջադրվում է մեղադրանք, այսինքն՝ անձը  
պաշտոնապես իրազեկվում է իր կողմից քրեորեն պատժելի արար-  
քը կատարելու ենթադրության առկայության մասին:

Նշված գործերով Եվրոպական դատարանի որոշումների վեր-  
լուծությունից հետևում է, որ՝

1. Դատարանն իրավունք չունի մինչև դատական քննության  
ավարտն իր որոշմամբ կամ որևէ այլ ձևով կարծիք արտահայտել  
մեղադրյալի մեղավորության վերաբերյալ:

2. Անմեղության կանխավարկածի սկզբունքը գործում է քրեա-  
կան դատավարության բոլոր փուլերում:

3. Պաշտպանության իրավունքի խախտումը դիտվում է որ-  
պես մեղադրյալի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախ-  
տում:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է պահպան-  
վի ոչ միայն դատական քննության ընթացքում, այլև արդարացման  
դատավճիռ կայացնելուց հետո: Եվրոպական դատարանը Սեկանին  
ընդդեմ Ավստրիայի գործով անմեղության կանխավարկածի խախ-  
տում համարեց ազգային դատարանի կողմից արդարացման դա-  
տավճիռ կայացնելուց հետո անձի մեղավորության վերաբերյալ  
կարծիք արտահայտելը: Տվյալ դեպքում դիմողը, որն արդարաց-  
վել էր սպանության մեջ մեղադրանքի գործով, միջնորդություն է  
հարուցում նախնական կալանքի տակ գտնվելու համար վնասի  
հատուցում ստանալու մասին: Ազգային դատարանը, մերժել է միջ-  
նորդությունը, վնասի հատուցման վերաբերյալ այն պատճառաբա-  
նությամբ, որ հանցագործության կատարման վերաբերյալ կաս-  
կածները հնարավոր չեղավ փարատել, իսկ երդվյալները որոշեցին

վնասվածքներ չեն առաջացրել, սակայն լուրջ ֆիզիկական և հոգե-  
կան տառապանք են պատճառել, հարցաքննվողներին նվաստաց-  
նելու, վարկաբեկելու, նրանց ֆիզիկական և բարոյական դիմադ-  
րությունը կտրելու նպատակով վախի և անլիարժեքության զգա-  
ցում են տարածել»<sup>1</sup>:

Այսինքն, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների  
օգտագործումն ինքնին Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատես-  
ված արդար դատաքննության իրավունքի խախտում չի համար-  
վում: Անթույլատրելի ապացույցների օգտագործումը կհամարվի 6-  
րդ հոդվածի խախտում, եթե դատարանի վճիռը հիմնվի բացառա-  
պես այդ ապացույցների վրա: Փաստորեն այն, թե նման ապացույց-  
ների օգտագործումն արդար դատաքննության իրավունքի խախ-  
տում է, թե ոչ, կախված է կոնկրետ գործի հանգամանքներից:

Հիմնականում Եվրոպական դատարանն իր վճիռներում անդ-  
րադարձել է ոչ թե ընդհանուր առմամբ ապացույցների թույլատրե-  
լիությանը, որպես արդար դատական քննության իրավունքի բա-  
ղադրատարրի, այլ թույլատրելիության խնդրին անդրադարձել է  
Կոնվենցիայի առանձին դրույթների խախտումների զնահատման  
լույսի ներքո: Օրինակ Սաունդերս ընդեմ Միացյալ թագավորության  
գործով<sup>2</sup> Դատարանն անդրադարձել է քրեական դատավարությու-  
նից դուրս օրենքի խախտմամբ ձեռք բերված տվյալների՝ դատա-  
րանում օգտագործելու թույլատրելիությանը: Այս գործով, մասնա-  
վորապես, դիմողը գանգատվում էր այն հանգամանքից, որ Առևտրի  
և արդյունաբերության նախարարության կողմից նշանակված տե-  
սուչների հարկադրանքի ազդեցության տակ իր տված ցուցմունք-  
ները իր գործով քրեական դատավարության ժամանակ չէին կարող  
ճանաչվել որպես թույլատրելի մեղադրական ապացույցներ: Այս  
գործով Դատարանը նշել է, որ «Չի կարելի հիմնվել հասարակա-  
կան շահի վրա՝ ի արդարացումն արտադատական քննության ըն-

<sup>1</sup> Ireland v. United Kingdom, Judgement of 18 Jan. 1978, Series A., No 25., para.167 Цит. по: Дженис М., Кэй Р., Брэдли Э. Европейское право в области прав человека. Практика и комментарии. М., 1997, т. 2 140:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1979-2000թթ.): Երևան, 2002, էջեր 336-351:

թացքում հարկադրաբար ձեռք բերված պատասխանների օգտագործման, որը նպատակ ունի մերկացնելու մեղադրյալին դատաքննության ընթացքում: Այս կապակցությամբ հատկանշական է, որ համապատասխան օրենսդրության համաձայն, այն լիազորությունների ուժով հարկադրաբար ստացված վկայությունները, որոնցով օժտված է կորպորատիվ իրավախախտումների դեմ պայքարի վարչությունը, որպես կանոն, չեն կարող հետագայում օգտագործվել դատավարության ժամանակ և ոչ այն պատճառով, որ այդ ցուցմունքները տրվել են դիմողի կողմից մինչև իր դեմ մեղադրանքի առաջադրումը (կետ 74)»:

Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով<sup>1</sup> դատարանն անդրադարձել է «անանուն վկաների» ցուցմունքների օգտագործման թույլատրելիությանը: Նշված գործով մեղադրանքները հիմնված էին *inter alia* ոստիկանների զեկույցների վրա, որոնք ընդգրկում էին ոստիկանության սպաների ցուցմունքները: Նրանք վկայություն էին տվել ըստ համարների, սակայն չէին բացահայտել իրենց ինքնությունը: Նրանք պնդում էին, որ եթե իրենց անունները բացահայտվեն, ապա նրանք այլևս չեն կարողանա կատարել իրենց պրտականությունները պատշաճ կերպով: Այս գործով մեղադրանքները, սակայն, հիմնված էին նաև այլ վկաների՝ ինչպես ոստիկանների, այնպես էլ տեղի բնակիչների վկայությունների վրա: Դիմողները գանգատվում էին, որ դատավճիռը կայացվել է հիմնականում ոստիկանության սպաների ցուցմունքների հիման վրա, որոնց անձը մնացել է անանուն և որոնց չեն լսել հրապարակայնորեն՝ իրենց ներկայությամբ: Դատարանը, հիմնվելով Դորսոնի գործով վճռի վրա, նշել է. «6-րդ հոդվածը հատուկ չի պահանջում հաշվի առնել վկաների շահերը: Սակայն, երբ դրված է կյանքի, մարդու ազատության կամ անվտանգության հարցը, ապա, որպես ընդհանուր կանոն, հարցն ընկնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի գործողության ներքո: Վկաների կամ զոհերի նման շահերը պաշտպանվում են Կոնվենցիայի այն հոդվածներով, որոնց համաձայն, պայմանավորվող պետությունները պետք է քրեական գործերով դատա-

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1979-2000թթ.): Երևան, 2002, էջեր 275-289:

լու, նրան վերաբերող դատավարական որոշումն արտահայտում է այն կարծիքը, որ նա մեղավոր է: Դա հնարավոր է նաև որևէ ձևական որոշման բացակայության դեպքում, երբ կան հիմքեր ենթադրելու, որ դատարանը մեղադրյալին համարում է մեղավոր<sup>1</sup>:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկան վկայում է, որ անձը պետք է մեղավոր ճանաչվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդար և հրապարակային դատական քննության արդյունքում: Պետական իշխանության բոլոր ներկայացուցիչները պարտավոր են ձեռնպահ մնալ դատական քննության ելքը կանխորոշելուց: Մասնավորապես, Եվրոպական դատարանը մնան դիրքորոշում արտահայտել է Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի և Ադոլֆն ընդդեմ Ավստրիայի գործերով<sup>2</sup>:

Այսպես, Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանն առաջին անգամ արձանագրեց Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում: Տվյալ գործով դիմողը հանդիսանում էր զրպարտության վերաբերյալ մասնավոր մեղադրանքի գործով պատասխանող: Չնայած քրեական վարույթի հայցը դադարեցվել էր վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով, սակայն դատարանը որոշեց, որ դիմողը պետք է կրի մասնավոր մեղադրողի կրած որոշակի դատական ծախսերի հատուցում:

Ազգային դատարանը որոշում կայացրեց հատուցել ոչ միայն դատական ծախսերի մի մասը, այլև ենթադրյալ տուժողների կրած վնասները, նշելով, որ եթե չլիներ ժամանակի գործոնը, ապա դիմողն ըստ էության կդատապարտվեր: Այսպիսով, տվյալ դեպքում առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, քանի որ ազգային դատարանի որոշումն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի հետ<sup>3</sup>:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը գործում է քրեական դատավարության ողջ ընթացքում անկախ մեղադրանքի

<sup>1</sup> Տե՛ս Series, N 62, P. 15-16,18:

<sup>2</sup> Տե՛ս Европейский суд по правам человека. Избранные решения: В 2-ух т.. т. 1. М., 2000, էջ 710:

<sup>3</sup> Տե՛ս Нула Моул, Катрина Харби, Алексеев Л.Б. Европейская конвенция о защите прав человека и основных свобод, Статья 6. Право на справедливое судебное разбирательство, М., 2001, չջ 90:

պահից /ճախքան դատավճռի կայացումը/ դատարանն իր նկատմամբ որոշակի ճախատրամադրվածություն է ունեցել<sup>1</sup>:

Նշված նորմում տեղ գտած կարգավորումը հակասում է նաև անմեղության կանխավարկածի սկզբունքին, քանի որ առաջադրված մեղադրանքը վերահաստատելու մասին գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին դատարանի կողմից առաջարկ ներկայացնելը ուղղակիորեն ենթադրում է համապատասխան հանցագործություն կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի նախնական համոզվածություն, իսկ մեղադրանքը վերահաստատելու դեպքում՝ մեղադրական եզրակացությանը համապատասխան դատական ակտի կայացում:

Բոլոր դեպքերում օրենքը չպետք է իրավունք վերապահի դատարանին քրեական գործի դատաքննության ընթացքում ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն ավելի խստացնելու մասին որևէ համոզմունք կամ ենթադրություն արտահայտելու: Դատարանի նման դիրքորոշումն ուղղակի ենթադրում է ամբաստանյալի մեղավորության մասին նախնական համոզվածության առկայություն, որի հետևանքն ավելի ծանր մեղադրանքով կամ մեղադրական եզրակացությանը համապատասխան դատական ակտի կայացումն է: Անմեղության կանխավարկածը պահանջում է, որ դատարաններն իրենց լիազորություններն իրականացնելիս հեռու մնան այն կանխակալ մոտեցումից, որ ամբաստանյալը կատարել է հանցավոր արարքը, քանի որ ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրողի վրա, և յուրաքանչյուր կասկած մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի<sup>2</sup>:

Եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի խախտում է համարում այն դեպքը, երբ մինչև օրենքով սահմանված կարգով մեղադրյալի մեղավորությունն ապացուցելը, մասնավորապես առանց նրան պաշտպանության իրավունք վերապահե-

վարությունը կազմակերպեն այնպես, որպեսզի այդ շահերը չվտանգվեն: Նման դեպքերում, արդարացի դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որ պաշտպանության շահերը համաչափ լինեն դատարանում վկայություն տվող վկաների կամ զոհերի շահերին: Այսպիսով, դատարանը թույլատրելի համարելով անանուն վկաների ցուցմունքների օգտագործումը, այնուամենայնիվ, պահանջում է ապահովել հակադիր շահերի համաչափությունը և նման ընթացակարգի կիրառմամբ պաշտպանության կողմի համար առաջացող դժվարությունները հավասարակշռել դատական ընթացակարգով: Ավելին, Կոստովսկին ընդդեմ Նիդեռլանդների գործով<sup>1</sup>, որտեղ նույնպես վիճարկվում էր անանուն վկաների տված ցուցմունքների թույլատրելիության հարցը, Դատարանը նշել է, որ մինչդեռ վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին համապատասխանում է 6-րդ հոդվածի պահանջներին այնքան ժամանակ, քանի դեռ հարգվել է պաշտպանության իրավունքը: Այս իրավունքը ենթադրում է նույն պայմաններով վկային հարցաքննելու՝ մեղադրյալի հնարավորությունը: Առկա գործում այդ հնարավորությունը չի ապահովվել և դատարանը 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել»: Սակայն այս հարցում ևս Դատարանը, գործի հանգամանքներից ելնելով, տարբերակված մոտեցում է դրսևորել: Մասնավորապես, Դատարանն առանձնահատուկ վերաբերմունք է դրսևորել անունուն ոստիկանների հարցաքննության թույլատրելիությանը: Այսպես, Վան Մեխելենն ընդդեմ Նիդեռլանդների գործով դատարանը նշել է. «Ոստիկանները կրում են գործադիր իշխանություններին ենթարկվելու պարտականություն և նրանք կապված են դատախազության հետ. այս պատճառներից յուրաքանչյուրը բավական է, որպեսզի նրանք՝ որպես անանուն վկաներ, օգտագործվեն միայն բացառիկ հանգամանքներում: Բացի այդ, նրանց ծառայողական պարտականությունների բնույթը, մասնա-

<sup>1</sup> Տե՛ս Դազինայն Գ., Մելիքյան Ռ. Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմանակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և ՀՀ իրավական համակարգը: //Պետություն և իրավունք, թիվ 1-2, 2008, էջ 15:

<sup>2</sup> Տե՛ս Де Сальвиа М. Прецеденты Европейского Суда по правам человека. СПб: Изд. „Юридический центр Пресс,,“, 2004, էջ 483:

<sup>1</sup>Տե՛ս Kostovski v. Netherlands, 20 November 1989. Nuala Mole and Catharina Harby The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights, 2<sup>nd</sup> edition, August 2006, page 52):

վորապես՝ ձերբակալելու նրանց իրավասությունը, պահանջում է վկայություն տալ դռնբաց դատական միստում (կետ 56)»:

«Տեյքսերիո դե Կաստրոն ընդեմ Պորտուգալիայի», «Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի». «Վանյանն ընդդեմ Ռուսաստանի» գործերով դատարանն անդրադարձել է գաղտնի գործակալների օգտագործման թույլատրելիությանը: Ընդհանուր առմամբ թույլատրելի համարելով գաղտնի գործակալների օգտագործման հնարավորությունը Դատարանը սահմանեց դրա թույլատրելիությունն ապահովող որոշակի չափանիշներ: Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ Դատարանը գաղտնի գործակալների մասնակցությունը թույլատրելի է համարում միայն այն դեպքում, երբ դրանք սադրիչ բնույթ չեն կրել, այսինքն, երբ ուղղակիորեն անձին չեն դրդել հանցագործության կատարմանը: Մասնավորապես «Տեյքսերիո դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի» գործով դատարանը նշել է, որ. «ոստիկանության երկու աշխատակիցների գործողությունները անցել էին թույլատրելի գործողությունների շրջանակները, քանի որ նրանք հրահրեցին հանցանքը և չկա ոչինչ, ինչը ցույց կտա, որ առանց միջամտության հանցանքն այնուամենայնիվ կկատարվեր: Վիճահարույց դատավարությունում նման միջամտությունը նշանակում է, որ սկզբից ևեթ դիմումատուն որոշակիորեն զրկված է եղել արդարացի դատաքննության իրավունքից: Ուստի, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում»: Ավելին, «Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի» գործով Դատարանը նշել է, որ. «չնայած հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությանը՝ գաղտնի գործակալների օգտագործումը պետք է լինի խիստ սահմանափակ: Տվյալ գործում հանցագործությունը չէր կատարվի առանց ոստիկանության աշխատակիցների միջամտության»:

ված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում(28.11.2007) կատարվեց համապատասխան փոփոխություն և լրացում: Քրեական դատավարության դատական քննության ընդհանուր պայմանների շարքում ավելացվեց նոր պայման՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 309.1):

Տվյալ դեպքում ուշադրության է արժանի ՀՀ քր. դատ. օր-ի 309.1 հոդվածի 5-րդ մասում տեղ գտած հետևյալ կարգավորումը. «Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերաորակելու որոշում չի կայացնում կամ վերաորակելու համար դատական միստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչև 10 օր ժամկետով հետաձգում է դատական միստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը:

Մեղադրական եզրակացությունը վերահաստատելուց հետո դատարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դատական ակտ»: Կարծում ենք, որ օրենքում տեղ գտած այս կարգավորումն արդարացված չէ, քանի որ այն բովանդակում է բազմաթիվ հակասություններ: Այս կապակցությամբ պետք է համաձայնել Գ. Ղազինյանի և Ռ. Մելիքյանի այն մոտեցման հետ, որ քննարկվող իրավանորմի հիման վրա մեղադրական եզրակացությունը վերահաստատման ուղարկելու անհրաժեշտ պայման է մինչև գործի ըստ էության լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշման արտահայտումը: Այսպիսով, եթե այս ինստիտուտի գործադրմամբ մեղադրական եզրակացությունը փոփոխվի, և իր իսկ նախաձեռնած նոր որակմամբ դատարանը մեղադրական դատավճիռ կայացնի, ապա դատապարտյալն օբյեկտիվ հիմքեր կունենա պնդելու, որ մեղադրական եզրակացությունը գլխավոր դատախազին ուղարկելու

լու համար ներկայացնի բավարար ապացույցներ<sup>1</sup>: ճիշտ կլիներ, որ վերը նշված բոլոր հատկանիշները պարտադիր ամրագրվեին ազգային օրենսդրության մեջ և իրականացվեին իրավակիրառ պրակտիկայում: Իհարկե, անմեղության կանխավարկածի իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի մեկնաբանությունները վերը թվարկված հատկանիշներով չի սահմանափակվում, քանի որ առանձին քրեադատավարական ինստիտուտների վերաբերյալ կան նախադեպային այլ որոշումներ, որոնք նույնպես կարևոր նշանակություն ունեն դրանց օրենսդրական ամրագրման համար (օրինակ՝ ոչ արդարացման հիմքերով քրեական գործի կարճման կամ արդարացման դատավճիռ կայացնելիս դատական ծախսերի հատուցում և այլն):

Եվրոպական դատարանն արդար դատական քննության իրավունքից ելնելով, դատարանին արգելում է իրականացնել գործի քննություն՝ անձի մեղավորության վերաբերյալ նախնական համոզմամբ կամ ենթադրությամբ: Դատարանի կայացրած ցանկացած որոշում կամ գործողություն, չպետք է հիմք տա ենթադրելու, որ դատարանը ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ արդեն ունի կանխակալ մտեցում:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես մինչդատական վարույթում դատական վերահսկողություն իրականացնելիս, այնպես էլ դատական քննության նախապատրաստման ընթացքում դատարանի կողմից կայացվող որոշումները և կատարվող գործողությունները չեն հանգեցնում անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման: Կարծում ենք, որ նույնը չենք կարող ասել դատական քննության ընթացքում առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու սահմանների օրենսդրական կարգավորման մասին:

ՀՀ Սահմանադրական դատարանի դատական քննության ընթացքում գործը լրացուցիչ քննության վերադարձնելու ինստիտուտը հակասահմանադրական ճանաչելու որոշմամբ պայմանավոր-

<sup>1</sup> St'u Judgement of ECHR of 6 December 1988 Barbara, Messege and Jabardo v. Spain. Para. 77// [www.echr.coe.int](http://www.echr.coe.int)., Application H 5124/71, Xv. United Kingdom, 42 Coil 135:

## **2.9. ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԷԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մարդկային հասարակության պատմական զարգացման ընթացքում մշակվել և հռչակվել են այնպիսի գաղափարներ, որոնք մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար ունեն հիմնարար նշանակություն: Որպես համամարդկային արժեքներ՝ այդ գաղափարներն արտացոլվել են միջազգային իրավունքի նորմերում և հանրաճանաչ սկզբունքներում:

Այսօր միջազգային իրավունքի նորմերը և հանրաճանաչ սկզբունքները կիրառվում են ոչ միայն ներպետական օրենսդրության մեջ դրանց ամրագրված լինելով, այլ նաև առանց օրենսդրության մեջ ամրագրվելու: Դա բխում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածից, որի համաձայն՝ «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»:

Սահմանադրական այս կարգավորումը ենթադրում է ոչ միայն իրավական նորմերի անմիջական կիրառում, այլև միջազգային իրավական նորմերի հիման վրա ներպետական օրենսդրության ստեղծում: Միջազգային պայմանագրերի վավերացումը կամ հաստատումը և դրանցում ամրագրված չափանիշների հիման վրա ազգային օրենսդրության ստեղծումը մերժեցնում են ազգային իրավական համակարգերը: Մարդու իրավունքների և ազատությունների մասին հանրաճանաչ սկզբունքները և միջազգային նորմերը փոխակերպվում են սահմանադրական նորմերի, իսկ այնուհետև կոնկրետացվում են ճյուղային օրենսդրության մեջ:

Քրեական դատավարությունում հանրաճանաչ սկզբունքների և մարդու իրավունքների մասին նորմերի կիրառման համար կարևոր է ազգային իրավաստեղծ գործունեությունը: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները միշտ ճանաչվում և երաշխավորվում են իրավունքի նորմերին և հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան: Օրենսդիրը մարդու իրավունքներն ու դրանց իրականացումն ապահովող երաշխիքները սահմանելիս պետք է հաշվի առնի այն պահանջները և չափանիշները, որոնք ամրագրված են միջազգային պայմանագրերում: Դա նշանակում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային չափանիշները կազմում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության հիմնական կողմնորոշիչները: Օրենքների իմաստը և բովանդակությունը, ինչպես նաև դրանց կիրառման աստիճանը ստուգվում են նրանով, թե դրանք որքանով են համապատասխանում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին միջազգային պայմանագրերով նախատեսված չափանիշներին:

Մարդու իրավունքներն ու ազատությունները հռչակող և դրանց պաշտպանությունը երաշխավորող միջազգային իրավական ակտերը բավականին շատ են, և այդ շարքում իր նշանակալի տեղն ունի 1950 թվականին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան: Այն քրեական արդարադատության ոլորտում սահմանել է մի շարք չափանիշներ, որոնք մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար ունեն հիմնարար նշանակություն: Հայաստանի Հանրապետությունը, 2002 թվականին ապրիլի 26-ին վավերացնելով նշված կոնվենցիան, ստանձնեց բազմաթիվ պարտավորություններ, որոնց թվում նաև՝ քրեական արդարադատության ոլորտում: Դա նշանակում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան այն միջազգային պայմանագրերից է, որը բովանդակում է քրեական դատավարությանը վերաբերող հանրաճանաչ

պետք է մեկնաբանվի հոգուտ պաշտպանության: Եվրոպական դատարանի պրակտիկան վկայում է, որ անմեղության կանխավարկածի համաձայն՝ «հանցագործության մեջ մեղադրվողի մեղավորության ապացուցման պարտականությունը դրվում է դատախազի վրա, իսկ կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի»<sup>1</sup>:

Եվրոպական դատարանի՝ անմեղության կանխավարկածին վերաբերող նախադեպերի հիմնական մասը կապված է դատական քննության ընթացքում այդ իրավունքի խախտման հետ: Անմեղության կանխավարկածի իրավունքի խախտումների վերացման հետ կապված, Եվրոպական դատարանը մշակել է այդ սկզբունքի էությունը բնութագրող հիմնական չափանիշները: Այդ չափանիշների կարևորությունն արտահայտվում է նրանում, որ դրանք միաժամանակ իրենց օրենսդրական ամրագրում են ստանում Եվրոպական կոնվենցիան վավերացրած երկրների օրենսդրության մեջ: Նշված հարցում այդպիսի մոտեցում է որդեգրել նաև ՀՀ օրենսդրությունը, որում Եվրոպական դատարանի մշակած չափանիշները ներկայացվել են որպես անմեղության կանխավարկածի իրավունքի պարտադիր տարրեր:

Եվրոպական դատարանի պրակտիկայում անմեղության կանխավարկածի իրավունքը բնութագրող չափանիշներն առավել սպառնիչ ներկայացված են Բարբարան, Մեսսեգեն և Խաբարդոն գործում: Եվրոպական դատարանը գտնում է, որ քրեական դատավարությունում դատարանը չպետք է գործի քննությունն իրականացնի այն համոզմամբ կամ ենթադրությամբ, որ մեղադրյալը կատարել է հանրորեն վտանգավոր այն արարքը, որի մեջ նրան մեղադրում են, և ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրանքի կողմի վրա, իսկ ցանկացած կասկածանք մեկնաբանվում է հոգուտ մեղադրյալի: Դրանից նաև հետևում է, որ մեղադրանքի կողմը պետք է մեղադրյալին իրազեկի նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին, որպեսզի վերջինս համապատասխանաբար կարողանա նախապատարաստվել և իրականացնել իր պաշտպանությունը, ինչպես նաև այն պետք է նրան դատապարտե-

<sup>1</sup> X v. Germany, Judgement of 13 July 1970:

սահմանափակ է, քանի որ ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի՝ «մեղադրանքը» սույն օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորում է որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին:

Անմեղության կանխավարկածը պետք է պահպանվի քրեական դատավարության բոլոր փուլերում, այդ թվում նաև՝ մինչդատական վարույթում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի նկատմամբ: Քրեական գործով վարույթն իրականացնող անձինք, ինչպես նաև պետական իշխանության ներկայացուցիչները պարտավոր են իրենց գործունեության ընթացքում պահպանել անմեղության կանխավարկածի սկզբունքը և ձեռնպահ մնալ գործով անձին մեղավոր ճանաչելու վերաբերյալ նախնական որոշումների կայացումից:

Քրեական դատավարությունում անմեղության կանխավարկածի նշանակությունը հակադրվել է այն ամենն, ինչը բովանդակում է «սուբյեկտիվիզմ» կամայականություն, մեղադրական թեքվածություն, այն ամենը, ինչ քրեական դատավարությունը վեր է ածում միջոցի մեղադրյալի նկատմամբ՝ նրան նույնացնելով մեղավորի հետ, նրան ըստ էության դարձնելով լրիվ իրավազուրկ, իսկ գործով ճշմարտությունը՝ կեղծ: Անմեղության կանխավարկածի սկզբունքը հաստատում է անձի օբյեկտիվ կարգավիճակը: Պետությունը, հասարակությունը գտնում են, որ անձը բարեխիղճ է այնքան ժամանակ, քանի դեռ օրենքով սահմանված կարգով այլ բան չի ապացուցված և չի հաստատված: Անձը, որը ներգրավվել է որպես մեղադրյալ, հասարակության կողմից դիտվում է ոչ թե որպես հանցագործ, այլ հանցագործության մեջ մեղադրվող<sup>1</sup>:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է, որ մեղավորության ապացուցման ծանրությունը գլխավորապես կրում է մեղադրանքի կողմը, և եթե նույնիսկ դատարանը պարտավոր է հետազոտել փաստերը, ինչպես դա նախատեսված է որոշ համակարգերում, ապա ապացույցների վերաբերյալ ցանկացած կասկած

<sup>1</sup> Стів Рабцевич О.И. Право на справедливое судебное разбирательство: международное и внутригосударственное правовое регулирование. М., 2005, ст. 112:

սկզբունքներ և մարդու իրավունքների պաշտպանության մասին նորմեր: Այսօր դրանք չափանիշ են քրեական դատավարության և նրա առանձին ինստիտուտների ճիշտ կառուցման համար:

Եվրոպական կոնվենցիայով նախատեսված համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներից է անմեղության կանխավարկածը: Որպես հանրաճանաչ սկզբունք՝ այն իր ամրագրումն է ստացել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետում: Քրեական արդարադատության ոլորտում եվրոպական կոնվենցիան նախատեսում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության բավական ընդարձակ միջոցներ: Անմեղության կանխավարկածի սկզբունքը այն արժեքներից է, որը կոչված է ապահովելու քրեական արդարադատության ոլորտում կասկածյալի և մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը: Անմեղության կանխավարկածի սկզբունքն իր ամրագրում է ստացել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, քանի որ այն կազմում է արդար դատական քննության իրավունքի անբաժան մասը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2 և 3 կետերը 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված ընդհանուր սկզբունքի կոնկրետացումն են: Անմեղության կանխավարկածի իրավունքը և տարբեր իրավունքներ, որոնց ոչ սպառիչ շրջանակը նախատեսված է 3-րդ կետում, մյուս իրավունքների հետ միասին կազմում են քրեական գործերով արդար դատական քննության իրավունքի կառուցվածքային տարրերը<sup>1</sup>:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքին համապատասխան»:

Անմեղության կանխավարկածի սկզբունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում, որի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

<sup>1</sup> Стів Allent de Ribemont, 35:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

Անմեղության կանխավարկածի սկզբունքն առավել մանրամասն կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածում, ըստ որի՝ «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

Ինչպես տեսնում ենք, անմեղության կանխավարկածի վերաբերյալ միջազգային փաստաթղթերում և ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ձևակերպումները միմյանցից տարբերվում են: Մասնավորապես, միջազգային պայմանագրերում շեշտը հիմնականում դրվում է օրենքով սահմանված կարգով անձի մեղավորությունն ապացուցված լինելու հանգամանքի վրա, իսկ ՀՀ Սահմանադրության մեջ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ դատարանի օրինա-

կան ուժի մեջ մտած դատավճռով անձին մեղավոր ճանաչելու վրա: Իրականում անմեղության կանխավարկածի վերաբերյալ վերը նշված ձևակերպումների միջև բովանդակային տարբերություն չկա, քանի որ անմեղության կանխավարկածը կազմում է արդար դատական քննության իրավունքի անբաժան մասը, իսկ ՀՀ օրենսդրության մեջ այն ավելի է կոնկրետացվել:

Քրեադատավարական օրենսդրությամբ ընդարձակվել են նշված սկզբունքի կիրառման շրջանակները: Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության քրեական դատավարության օրենսգրքում նշված սկզբունքը կիրառվում է ոչ միայն մեղադրյալի, այլև կասկածյալի նկատմամբ: Պետք է նշել, որ Եվրոպական կոնվենցիայում օգտագործվում է ոչ թե «կասկածյալ» կամ «մեղադրյալ» հասկացությունը, այլ «յուրաքանչյուր ոք», որն ավելի ընդհանուր է: Դրանից հետևում է, որ կոնվենցիայի համակարգում «մեղադրանքը» լայն հասկացություն է, անկախ այն բանից, թե ազգային օրենսդրության մեջ այն ինչպես է սահմանված: Այսպես, Դևեերն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանը սահմանում է, որ «մեղադրանք» հասկացությանը պետք է տալ ոչ թե ձևական, այլ բովանդակային նշանակություն: Եվրոպական դատարանը մեղադրանք հասկացությունը բնորոշում է որպես պետական իշխանության լիազոր մարմնի կողմից անձին պաշտոնապես իրազեկում՝ տվյալ անձի կողմից քրեորեն պատժելի արարքը կատարելու ենթադրության առկայության մասին<sup>1</sup>:

ՀՀ Սահմանադրությունը «մեղադրյալ» հասկացության օգտագործմամբ սահմանափակում է անմեղության կանխավարկածի կիրառման շրջանակները: Ճիշտ է, այդ բացը լրացվել է ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, որտեղ օգտագործվում է նաև «կասկածյալ» հասկացությունը, բայց բոլոր դեպքերում Եվրոպական կոնվենցիան «մեղադրանք» հասկացությունը ներկայացնում է լայն իմաստով: Կարծում ենք, որ, ի տարբերություն Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում անմեղության կանխավարկածի սկզբունքի կիրառման շրջանակն ավելի

<sup>1</sup> Stin Dèveer против Бельгии, 27 февраля 1980 г., п. 42,44-46:



կածյալի վիճակում ձերբակալված կարող է պահվել մինչև 72 ժամ: Այդ ժամկետը լրանալիս կասկածյալը պետք է ազատվի ձերբակալումից կամ էլ որոշում ընդունվի նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Այն դեպքերում, երբ գործով կասկածյալ չկա, անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահը որոշում է քննիչը: Այս հանգամանքը գործնականում հանգեցնում է նրան, որ որոշ դեպքերում նման որոշում կայացվում է նախաքննության ավարտից անմիջապես առաջ, որով մեղադրյալը զրկվում է իր դատավարական իրավունքների իրացումից: Չի կարելի անձին մեղադրանքի առարկայով հարցաքննել որպես վկա:

Ինչպես արդեն նշվեց, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի պահանջը կտրական է: Առաջադրված մեղադրանքի բնույթը վերաբերում է հանցակազմին, իսկ հիմքերը՝ այն ապացույցներին, որոնք հաստատում են կոնկրետ անձի կողմից կոնկրետ հանցագործությունը կատարելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ պետք է նշվեն նաև «...մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով»:

ՀՀ քր. դատ. օր. 202 հոդվածը չի սահմանում, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ պետք է նշվեն նաև այն ապացույցները, որոնք հիմք են տվել նրա նկատմամբ նման որոշում կայացնելու համար: Կարծում ենք, որ այս հարցում ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի համապատասխանում Կոնվենցիայի վերոհիշյալ պահանջին: Թերևս նպատակահարմար կլիներ, որ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ քրեական հետապնդման մարմինը շարադրեր նաև նվազագույն այն ապացույցները, որոնք հիմք են հանդիսացել անձին մեղադրյալի կարգավիճակ տալու և մեղադրանք առաջադրելու համար:

Վերջին հանգամանքի հետ կապված՝ տեղին է հիշատակել ՀՀ քր. դատ. օր. 285 հոդվածի 4-րդ մասը, ըստ որի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը եր-

նրան արդարացնել միայն չփարատված կասկածները նրա օգտին մեկնաբանելու հիման վրա: Ազգային դատարանը մերժելով դիմողի միջնորդությունը հենվում է ազգային օրենսդրության այն դրույթի վրա, որ անձին արդարացնելիս վնասի հատուցման իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, երբ հանցագործության կատարման մեջ անձի նկատմամբ կասկածը հանվում է:

Նշված գործով Եվրոպական դատարանի դիրքորոշումը հետևյալն է. ազգային դատարանները չպետք է կասկածեն անձի մեղավորության վերաբերյալ, եթե արդեն կայացվել է արդարացման դատավճիռ: Այսինքն՝ քրեական գործով կասկածանք կարող է լինել մինչև գործով վերջնական որոշման կայացումը, իսկ արդարացման դատավճռ կայացնելուց հետո չի կարելի անձի անմեղությունը դնել կասկածի տակ: Այս կապակցությամբ ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ խնդիրներ չկան, քանի որ ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 365 հոդվածի 2-րդ մասի՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ»: Դատարանը պարտավոր է արդարացման դատավճիռ կայացնել նաև այն դեպքում, երբ մեղադրյալի մասնակցությունը չի ապացուցվել, և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը նշանակում է, որ եթե մեղավորությունը չի հաստատվել բավարար ապացույցների հիման վրա, ապա մեղադր-

յալը պետք է ճանաչվի անմեղ և լիվ արդարացվի՝ դրանից բխող հետևանքներով:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը սերտորեն կապված է նաև քրեական գործի կարճման հետ: Այդ կապակցությամբ ուշագրավ է Եվրոպական դատարանի պրակտիկան՝ կապված քրեական գործերի կարճման հիմքերի հետ:

Անմեղության կանխավարկածի և ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու ինստիտուտի համապատասխանության անկյունաքարը, որը տարակարծիքությունների պատճառ է դարձել, նախնական քննության փուլում անձի մեղավորության որոշման հարցն է<sup>1</sup>:

Այդ կապակցությամբ Եվրոպական դատարանը «Ադոլֆն ընդդեմ Ավստրիայի» գործով, եկավ այն եզրակացության, որ արարքի ոչ մեծ վտանգավորության հիմքով քրեական գործի կարճումը համապատասխանում է անմեղության կանխավարկածին: Խնդրի էությունն այն է, որ օկրուգային դատարանը, որը կարճել էր գործը, իր որոշման մեջ մատնանշում է դիմողի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելու մասին, ինչը դիմողը գտնում է, որ հակասում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետին: Ավստրիայի Գերագույն դատարանը, ստուգելով նշված ակտի օրինականությունը, ընդգծեց, որ փաստարկման համար ոչ հաջող ձևակերպման ընտրությունը չի կարող այդ փաստարկումը զրկել կոնկրետ նշանակությունից, որն ի նկատի ունեն և դիմող անձի համար այն որևէ բացասական հետևանքներ չի կարող առաջացնել»:

Եվրոպական դատարանը գտնում է, որ օկրուգային դատարանի որոշումը անհրաժեշտ է ընկալել Գերագույն դատարանի որոշման հետ զուգակցված և նրա լույսի ներքո: Եվրոպական դատարանը եզրակացրեց, որ տվյալ դեպքում չկա Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում<sup>2</sup>:

<sup>1</sup> St u Бойков А.Д. Состояние и задачи научных исследований в области советского уголовного процесса и судопроизводства. //Научная информация по вопросам борьбы с преступностью. N 66. М., 1980, էջ 91:

<sup>2</sup> St u Eur. Court H.R. Adolff v. Austria, para. 16:

Մեղադրյալին մեղադրանքը առաջադրվում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կողմից որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, մեղադրյալին բացատրվում է առաջադրված մեղադրանքի էությունը, այսինքն՝ ինչպես արարքի փաստական կողմը, այնպես էլ իրավաբանական որակումը: Առաջադրված մեղադրանքի պատճենը նրա իրավունքների և պարտականությունների ցանկի հետ հանձնվում է մեղադրյալին (ՀՀ քր. դատ. օր. 203 հոդված):

Մեղադրյալն իրավունք ունի նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով ծանոթանալ փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների նշանակման, իր նկատմամբ խափանման միջոց և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին կայացված որոշումներին (ՀՀ քր. դատ. օր. 65 հոդվածի 2-րդ մաս):

Եթե նախաքննություն կատարելիս ծագում է առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտություն, քննիչը պարտավոր է կրկին մեղադրանք առաջադրել՝ պահպանելով սույն օրենսգրքի 202 և 203 հոդվածներով սահմանված պահանջները (ՀՀ քր. դատ. օր. 204 հոդված):

ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը հստակ միմյանցից տարանջատում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու, նրան մեղադրանք առաջադրելու, ինչպես նաև քրեական հետապնդման ինստիտուտները (ՀՀ քր. դատ. օր. 34,64,202 հոդվածներ):

Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը, ըստ էության, պետք է պարունակի առաջադրվելիք մեղադրանքը, քանի որ մեղադրանք առաջադրել նշանակում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը մեղադրյալին հայտնելը: Այս տարանջատումն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ ՀՀ քր. դատ. օր. 202 հոդվածը որևէ ժամկետ չի սահմանում, թե նախաքննության որ պահին քննիչը պետք է որոշում կայացնի անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Այս հարցում օրենսդիրը կատարել է մեկ բացառություն: Ըստ ՀՀ քր. դատ. օր. 62 հոդվածի՝ անձը կաս-

ձևով, «Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի»<sup>1</sup> գործով Դատարանը վճռել է, որ մեղադրյալը, որը չի տիրապետում դատավարության լեզվին, կարող է հայտնվել անհարմար դրության մեջ այն դեպքում, եթե նրան հնարավորություն չտրվի ծանոթանալ մեղադրական ակտին իրեն հասկանալի լեզվով թարգմանությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ անձին մեղադրանք է առաջադրվում այն դեպքում, երբ կան նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցներ: Անձը քրեական դատավարությունում հանդես է գալիս ոչ միայն մեղադրյալի, այլև կասկածյալի վիճակով: Կասկածյալ համարվում է այն անձը, որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով կամ որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրվելը ընտրվել է խափանման միջոց (ՀՀ քր. դատ. օր. 62 հոդված):

Քրեական դատավարության օրենսդրությունը երաշխավորում է ոչ միայն մեղադրյալի, այլև կասկածյալի կողմից նշված իրավունքի իրականացումը:

Կասկածյալը, մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք, նրանք իրավունք ունեն իմանալ, թե ինչու են կասկածվում կամ մեղադրվում, տեղեկացվել կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը, իրենց վերագրվող արարքի փաստական կողմին և իրավաբանական որակմանը, ձերբակալվելուց կամ խափանման մասին որոշումն իրեն հայտարարվելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես ստանալ ձերբակալելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման պատճենը կամ ձերբակալման արձանագրության պատճենը (ՀՀ քր. դատ. օր. 63 հոդվածի 2-րդ մաս), մեղադրանք առաջադրելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը (ՀՀ քր. դատ. օր. 65 հոդվածի 2-րդ մաս):

Եիշտ է, քննիչը քրեական օրենքով արգելված արարք կատարելու մեջ անձին մեղավոր ճանաչելու իրավունք չունի, բայց նա կրում է հանցագործության կատարման մեջ անձի մեղավորության ապացուցման պարտականություն, որովհետև այն բխում է ինչպես անմեղության կանխավարկածի սկզբունքից, այնպես էլ քրեական դատավարության օրենսգրքի 107 հոդվածից, որում սահմանված են յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքները, մասնավորապես անձի մեղավորությունը քրեական օրենքով արգելված արարք կատարելու մեջ: Նախաքննության մարմինը հետազոտված ապացույցների հիման վրա պարտավոր է ապացուցել անձի մեղքը, բայց դա դեռևս մեղադրյալի մեղավորության ճանաչում չէ:

Ոչ արդարացման հիմքերով քրեական գործի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը չի հակասում անմեղության կանխավարկածի սկզբունքին, քանի որ նշված հիմքերով նախնական քննության փուլում անձին քրեական պատասխանատվությունից ազատելը նրա մեղավորության ճանաչում չէ: Քննիչը քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ պարտավոր է ապացուցել անձի մեղավորությունը, որն արտացոլվում է ինչպես մեղադրական եզրակացության, այնպես էլ ոչ արդարացման հիմքերով քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է պահպանվի ոչ միայն դատարանի, այլև պետական մյուս մարմինների կողմից: «Ալեն դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի» գործով եվրոպական դատարանը նշեց հետևյալը. եթե դիմողին առաջադրվել է քրեական մեղադրանք, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի է ոչ միայն դատարանների, այլև մյուս պետական մարմինների պաշտոնատար անձանց համար:

Այսպես, 1976 թվականի դեկտեմբերի 24-ին սպանվել է պառլամենտի պատգամավոր և նախկին նախարար պարոն Ժան դե Բրոլին: Ֆրանսիայի ՆԳՆ քննության բաժնի տնօրենը և քրեական ոստիկանության տնօրենը անցկացրեցին մամլո ասուլիս, որտեղ հայտարարեցին Ալեն դե Ռիբենոնի անունը՝ որպես տվյալ հանցա-

<sup>1</sup> St u Kaminski v. Austria, Judgement of 19 December 1989:

գործության հանցակից: Յետագայում քրեական գործը Ալեն դե Ռիբեմոնի նկատմամբ կարճվում է, և նա պահանջում է նյութական և բարոյական վնասի հատուցում:

Եվրոպական դատարանում տվյալ գործը քննելիս ֆրանսիական կառավարությունը հենվում էր այն բանի վրա, որ հայտարարությունը վնաս չի հասցրել անձի անմեղության կանխավարկածի իրավունքին, քանի որ այն կրել է տեղեկատվական բնույթ և չի կաշկանդել դատարանին, բացի դրանից բոլոր պնդումները կարող էին հերքվել հետագա քննության ընթացքում:

Եվրոպական դատարանը չհամաձայնվեց նման մեկնաբանմանը, քանի որ բարձրաստիճան պաշտոնատար անձինք առանց որևէ պարզաբանման կամ ենթադրության հասարակությանը համոզում են հավատալ, որ դիմողը մեղավոր է մինչ այն պահը, երբ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքները դեռ չեն հետազոտվել: Տվյալ գործով Եվրոպական դատարանի հետևությունն այն է, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը: Եվրոպական դատարանի որոշումից հետևում է, որ ոստիկանության, ինչպես նաև մյուս զերատեսչությունների պաշտոնատար անձանց կողմից զանգվածային լրատվության միջոցներում արվող հայտարարությունները, որոնցում մինչև դատական քննությունը պնդում են որոշակի անձի հանցագործ լինելու մասին, համարվում է անմեղության կանխավարկածի խախտում<sup>1</sup>:

Մինևույն ժամանակ Եվրոպական դատարանը պաշտոնատար անձանց իրավունք է տալիս հանրությանը տեղեկացնելու քննության ընթացքի մասին, նշել, որ այս կամ այն անձը, ճիշտ է, կասկածվում կամ մեղադրվում է հանցագործության կատարման մեջ, բայց նրա մասնակցությունը հանցագործության կատարմանը պետք է հաստատի դատարանը: Տվյալ դեպքում արդեն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում չկա<sup>2</sup>:

Առանձնակի հետաքրքրություն է նարկայացնում անմեղության կանխավարկածի խախտումը զանգվածային լրատվական միջոցների կողմից: Արդյո՞ք անձի մեղավորության մասին մամուլի և

սում է «ձերբակալման և ներկայացված ցանկացած մեղադրանքի պատճառների», իսկ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը՝ «ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի» մասին:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով սահմանված մյուս երաշխիքն այն է, որ առաջադրված մեղադրանքի էությունը և հիմքերը մեղադրյալին պետք է ներկայացվեն նրան հասկանալի լեզվով: Խոսքը վերաբերում է դատավարության լեզվի սկզբունքի պահպանմանը: Մեղադրյալին նման հնարավորություն պետք է տրվի ոչ միայն մեղադրանք առաջադրելու և նրան հարցաքննելու ժամանակ, այլ նաև դատավարության ամբողջ ընթացքում: Եթե մեղադրյալը չի տիրապետում դատավարության լեզվին, ապա մեղադրական ակտը պետք է գրավոր թարգմանվի այն լեզվով, որին նա տիրապետում է (Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի, 19.12.89):

Որևէ խոսք չի կարող լինել մեղադրյալի ցանկացած իրավունքի իրացման մասին, եթե նա չի տիրապետում դատավարության լեզվին: Այդ է պատճառը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածն իր «ա» և «ե» կետերով անդրադառնում է նշված հիմնախնդրին:

Եթե «ա» կետում Կոնվենցիան պահանջում է, որպեսզի առաջադրված մեղադրանքի մասին նրան տեղյակ պահվի իրեն հասկանալի լեզվով, ապա «ե» կետում արդեն խոսքը վերաբերում է այդ երաշխիքի իրականացմանը՝ ընդհանրապես. օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

Այսպես, «Բրոզիչեկ ընդդեմ Իտալիայի»<sup>1</sup> գործով ազգությամբ գերմանացի դիմողն ազգային դատարանին ուղղված իր դիմումում պարզորոշ ձևակերպել էր, որ ինքն ունի լեզվական դժվարություններ: Դատարանը հայտարարել է, որ իտալական իշխանությունները, այն դեպքում, եթե նրանք համոզված չեն եղել դիմողի՝ իտալերենին բավարար չափով տիրապետելու մասին, պետք է ապահովելին դիմողին առաջադրվող մեղադրանքի մասին տեղեկացման թարգմանությունն իր հարազատ լեզվով, ինչը չի արվել: Նույն

<sup>1</sup> St'u Allén de Ribemón protiv Francei, 10 fevralja 1995:  
<sup>2</sup> St'u Allén de Ribemón protiv Francei, 10 fevralja 1995:

<sup>1</sup> St'u Brozichek v. Italy, Judgement of 19 December 1989:

Պեղիսյերը և Սասին ընդդեմ Ֆրանսիայի գործով դիմողներին մեղադրանք էր առաջադրվել հանցավոր սնանկության համար, սակայն նրանք դատապարտվել էին հանցավոր սնանկության նպատակով դավադրություն կազմակերպելու համար: Դատարանը վճռել է, որ, քանի որ նշված իրավախախտումները տարբերվում են իրենց բնույթով, ապա տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի վերոհիշյալ պահանջի հետ կապված՝ Եվրոպական դատարանի պրակտիկան այնքան էլ մեծ չէ: «Սակայն, ակներև է, որ ցանկացած օգտակար տարր՝ ինչպես փաստերի, այնպես էլ իրավունքի բնագավառից, պետք է հաղորդվի մեղադրյալին (բավականաչափ) նախապես, որպեսզի նա կարողանա նախապատրաստել իր պաշտպանությունը, ինչպես դա երաշխավորվում է 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» պարբերությամբ»<sup>1</sup>:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում թվարկված նվազագույն երաշխիքների ցանկը սպառնիչ չէ: Դրանում ներկայացված են արդարացի դատաքննության իրավունքի առավել կոնկրետ ասպեկտները:

Տվյալ դրույթը վերաբերում է այն տեղեկատվությանը, որը պահանջվում է տրամադրել մեղադրյալին՝ նրան մեղադրանք առաջադրելու կամ գործ հարուցելու պահին: Թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը պահանջում է, որ առաջադրված մեղադրանքի մասին մեղադրյալը տեղյակ պահվի անհապաղ և նրան հասկանալի լեզվով, սակայն հարկ է նշել, որ ««անհապաղ» հասկացությունը, այս դրույթի շրջանակներում, չի համապատասխանում 5-րդ հոդվածի 2-րդ կետի «անհապաղ» հասկացությանը»:<sup>2</sup> Բացի այդ, 6-րդ հոդվածի այս դրույթի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի միջև գոյություն ունեցող կապի առումով, վերջինս կրում է նվազ մանրամասն և խիստ բնույթ, քանզի 5-րդ հոդվածի 2-րդ մասը խո-

լրատվության այլ միջոցների հրապարակումները խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, թե՞ ոչ: Այս հարցում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը միասնական չէ: Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպերից մեկում՝ «Սանդի Թայնսն ընդդեմ Միացյալ Թագավորության» նշված է. «Հանձնաժողովը նաև հնարավոր համարեց, որ մեղադրյալի դեմ որոշ անբարենպաստ հրապարակումներ, որ գրվում են մինչև դատական քննությունը, օրինակ՝ ի դեմս մամուլում անողորք արշավի, վնասում են անմեղության կանխավարկածի սկզբունքին: Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զանգվածային լրատվության միջոցների նմանօրինակ արշավներն ազդել են դատավորների կամ երկրպագուների վրա այն աստիճան, որ նրանք մոռացել են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման մասին»<sup>1</sup>:

Նշենք, որ առաջարկվող բանաձևն ունի գնահատողական բնույթ և գործնականում, պրոֆեսիոնալ դատավորների առումով, հնարավոր չէ պարզել անմեղության կանխավարկածի պահանջների մոռացության խնդիրը: Ինչպես անմեղության կանխավարկածը, այնպես էլ կարծիքի արտահայտման ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից են, և մեկը մյուսի նկատմամբ որևէ առավելություն չունի: Դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Արգելել մամուլի հրապարակումը վերը նշված խնդրի վերաբերյալ այն հիմքով, որ դրանք դատավորի մոտ կարծիք են ձևավորում, կնշանակի ամրագրել դատավորի կողմից իր պարտականությունները չկատարելու կանխավարկածը: Այն դեպքում, երբ ամենաբարձր օրենքով ամրագրված է դատավորի անկախության և միայն օրենքին ենթարկվելու դրույթը:

Ինչպես արդեն նշել ենք՝ «Ալեն դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի» գործով (10.02.1995) Եվրոպական դատարանը, անդրադառնալով կարծիքի արտահայտման ազատության և անմեղության կանխավարկածի փոխհարաբերությանը, նշել է. «Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորվող անձնական կարծիքի արտահայտ-

<sup>1</sup> St'u Досье по правам человека, Статья 6 Европейской конвенции по правам человека, изд-во Совета Европы, 1994, с. 31.

<sup>2</sup> St'u Донна Гомьен, Давид Харрис, Лео Зваак, Европейская конвенция по правам человека и Европейская социальная хартия: право и практика, перев. с англ., М. 1998, с. 242.

<sup>1</sup> St'u Статья 6: Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство. Эндрю Гротрайан, Страсбург, 1994, Изд-во Совета Европы, т. 30.

ման ազատությունը տարածվում է նաև տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատության վրա: Հետևաբար, 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող խանգարել իշխանություններին հասարակությանը տեղեկացնելու կատարվող քրեական հետաքննությունների մասին, սակայն այն պահանջում է, որ իշխանությունները դա անեն զուսպ և նրբանկատորեն, ինչպես որ պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ ունեցած հարգանքը»<sup>1</sup>:

Դրա հետ մեկտեղ՝ Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ մասը բացառում է ազգային օրենսդրությունում անմեղության ապացուցման բեռը մեղադրյալի վրա դնող իրավական կամ փաստական կանխավարկածների գոյության հնարավորությունը: Սակայն ցանկացած դրույթ, որը բնորոշում է անմեղության ապացուցման բեռի տեղափոխումը կամ հնարավոր է դարձնում այնպիսի կանխավարկածի կիրառումը, որը գործում է մեղադրյալի դեմ, պետք է սահմանափակվի «ողջամիտ սահմաններով, որոնք հաշվի են առնում մեղադրյալի համար խիստ կարևոր հանգամանքները, և որոնք ապահովում են նրա պաշտպանության իրավունքը»<sup>2</sup>:

Անմեղության կանխավարկածի կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրանքի կողմի վրա: Ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրանքի կողմի վրա, քանի որ պաշտպանության կողմն իր հնարավորություններով ավելի թույլ է, քան մեղադրանքի կողմը: Եվրոպական դատարանն այս ընդհանուր կանոնից նախատեսում է նաև բացառություն, որի իմաստն արտահայտվում է նրանում, որ առանձին դեպքերում ապացուցման պարտականությունը դրվում է պաշտպանության կողմի վրա: Այդպիսի վիճակ առաջանում է այն դեպքում, երբ մեղադրողը պետք է հերքի ապացուցման գլխավոր փաստը կազմող ժխտողական փաստերը, որոնց վրա հիմնվում է պաշտպանության կողմը:

Անկասկած, երբ բացակայում են հաստատող փաստեր՝ մեղադրանքի կողմի համար շատ դժվար է հերքել ժխտողական փաս-

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Վճիռների ընտրանի (1979-2000 թթ.), Երևան, 2002, էջ 373:

<sup>2</sup> Տե՛ս Salabiaku v. France, Judgement of 07 October 1988:

«բնույթ» և «հիմքեր» հասկացությունները վերաբերում են ինչպես փաստին, այնպես էլ իրավունքին՝ կապված ենթադրվող հանցագործության հետ, որի մեջ մեղադրվում է տվյալ անձը:

Եթե դատական քննությունը վարող դատավորը գտնում է, որ գործի այն փաստերը, որոնք պաշտպանում է մեղադրողը, չեն մտցված սկզբնական մեղադրական ակտի մեջ, իսկ մեղադրյալն այդ մասին ժամանակին չի տեղեկացվել, ապա կարող է տեղի ունենալ 6-րդ հոդվածի նշված դրույթի խախտում (Էքիմոջյանը և Շիշլյանն ընդդեմ Ֆրանսիայի, 28.11.89):

«Դե Սալվադոր Տորեսն ընդդեմ Իսպանիայի»<sup>1</sup> գործով դիմողը գանգատվում էր, որ ազգային դատարանն իր նկատմամբ կայացրել էր առավել խիստ դատավճիռ՝ մեղադրանքում չիիշատակված ծանրացուցիչ հանգամանքի հիման վրա: Սակայն Դատարանը չի արձանագրել խախտում, քանի որ նշված հանգամանքը դրված է եղել դիմողին առաջադրված մեղադրանքի հիմքում և նրան հայտնի է եղել քննության սկզբից: Դրան հակառակ, Հանձնաժողովը խախտում է արձանագրել Շիշլյանը և Էքիմոջյանն ընդդեմ Ֆրանսիայի գործով, որտեղ մեղադրանքի ձևակերպումը փոփոխության էր ենթարկվել ըստ էության: Սկզբում դիմողներին առաջադրված մեղադրանքի ծավալից հանվել էր տարադրամային գործառնությունների հետ կապված իրավախախտում կատարելու մեղադրանքը, համաձայն ազգային օրենսդրության մի մասի, սակայն հտազայում, տվյալ որոշումը վերաքննիչ դատարանի կողմից քննվելուց հետո, նրանք դատապարտվել էին այդ նույն օրենսդրության մեկ այլ մասի համապատասխան: Հանձնաժողովը հայտարարել է, որ չնայած գործի նյութերը հայտնի են եղել մեղադրյալներին, այնուամենայնիվ, բացակայում են այնպիսի վկայություններ, որ նրանք համապատասխան մարմինների կողմից տեղեկացվել են իրենց կողմից կատարված իրավախախտումը վերադրակելու մտադրության մասին՝ մինչև վերաքննիչ քննությունը:

Կարևոր է նաև, որ մեղադրական դատավճիռն ընդունվի հենց այն իրավախախտման համար, որով մեղադրանք է առաջադրվել:

<sup>1</sup> Տե՛ս De Salvador Torres v. Spain, Judgement of 24 October 1996:

կան քննության փուլի ընթացքում (օրինակ՝ վկաների խաչաձև հարցաքննության իրավունքը) կամ հստակ սահմանափակված են այդ փուլով (օրինակ, դատարանում գործածվող լեզուն չհասկանալու դեպքում թարգմանչի անվճար օգնության իրավունքը):

***ա) Մեղադրյալի իրավունքը՝ իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետ)***

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը հանցանքի կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի երաշխավորում է անհապաղ և մանրամասն, իրեն հասկանալի լեզվով առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացված լինելու իրավունք:

Անձն այս իրավունքից օգտվում է ինչպես այն դեպքում, երբ նրան պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել<sup>1</sup>, այնպես էլ, երբ նրա նկատմամբ սկսվում է իրականացվել քրեական հետապնդում (ձերբակալում, խուզարկություն, բերման ենթարկում և այլն)<sup>2</sup>: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի նման տվյալ հոդվածը նույնպես կիրառվում է որոշ քաղաքացիական գործերի նկատմամբ, որոնք, Կոնվենցիայի համաձայն, քննվում են որպես «քրեական», օրինակ՝ մասնագիտական կարգապահական վարույթները:

Մեղադրյալն իրավունք ունի տեղյակ լինել ինչպես իրեն մեղասագրվող արարքի փաստին, այնպես էլ արարքի որակմանը: Մեղադրանքի ցանկացած փոփոխություն պետք է հաղորդվի նրան (հայց 524/59՝ Օֆներն ընդդեմ Ավստրիայի):

Մեղադրյալին մեղադրանքը պետք է հաղորդվի այնպիսի ծավալով, որպեսզի նա կարողանա պատշաճ ձևով իրականացնել իր պաշտպանությունը: Կոնվենցիայում սահմանված մեղադրանքի

տերը: Այդպիսի փաստերը հերքելու համար հաստատող փաստերը պետք է բավարարեն հասանելիության պայմաններին, որը ենթադրում է, որ դրանք որոշակի են և կարող են ժամանակի և տարածության մեջ ապացուցվել: Եթե հաստատող փաստերը չեն համապատասխանում հասանելիության այդ պայմաններին, ապա քրեական հետապնդման կողմի համար մեղադրանքի ապացուցվածությունը, անկախ նրա հնարավորություններից, գործնականում մնում է անկատարելի<sup>1</sup>:

Այս կապակցությամբ ուշադրության է արժանի Եվրոպական դատարանի պրակտիկան, մասնավորապես, «Փան Հոանգն /Pham Hoang/ ընդդեմ Ֆրանսիայի գործով, որտեղ կասկածյալը ձերբակալվել էր Ֆրանսիայի սահմանին՝ թմրամիջոց տեղափոխելիս: Ֆրանսիական օրենսդրությունը սահմանում է, որ արգելված ապրանքներ տեղափոխելը, որոնց շարքի մեջ է մտնում նաև հերոինը, համարվում է անօրինական, եթե այդ ապրանքը տեղափոխող անձը չի ապացուցում հակառակը, օրինակ՝ ներկայացնում է արդարացնող բավարար ապացույցներ կամ ապացուցում, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կամ սխալի հետևանք է, որից խուսափելն անհնար էր: Նշված գործում պաշտպանության կողմը չի ներակայացրել արդարացնող ապացույցներ, իսկ մեղադրյալը հրաժարվել է տալ որևէ բացատրություն: Եվրոպական դատարանը քննելով դիմողի բողոքը, ընդունել է, որ, անթույլատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, որը տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բավարար չափով բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում՝ նա կճանաչվի մեղավոր<sup>2</sup>:

Եվրոպական դատարանը նման հետևության է հանգել նաև «X.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործում. Հանձնաժողովը կիրառելի է համարել այն կանխավարկածը, որ դիմողը, որը, ինչպես պարզվել էր, ապրում էր մարմնավաճառությամբ զբաղվող մի կնոջ հետ, և հնարավոր է՝ հանդիսանում էր նրա կավատը, գո-

<sup>1</sup> Стѝ Европейский суд по правам человека. т. 1. М. 2000, с. 310. (дело “Девеер против Бельгии”).

<sup>2</sup> Европейский суд по правам человека. т. 1. М. 2000, с. 388-389. (дело “Экле против ФРГ”).

<sup>1</sup> Стѝ Калиновский К.Б., Смирнов А.В. Презумпции в уголовном процессе. //Российское правосудие. 2008. <sup>1</sup> 4, չջ 69:

<sup>2</sup> Стѝ Pham Hoang v. France. //Ser.A. N 243. 25. 09. 1992:

յատևում էր բարոյագուրկ ճանապարհով ստացվող եկամուտներով<sup>1</sup>: «Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի»<sup>2</sup> գործով, որը վերաբերում էր մի պահատուկի առաքում իրականացրած դիմողի, որը, ինչպես պարզվեց, բեռնավորված էր եղել թմրամիջոցներով, առաջ էր քաշվել անմեղության կանխավարկածը: Սակայն Դատարանը հանգել է հետևյալ եզրակացության. քանի որ ազգային դատարանն իրավիճակի գնահատման հարցում ազատ է եղել, հաշվի է առել գործի փաստերը և վերացրել է ավելի վաղ ընդունված դատավճիռներից մեկը, ապա 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի խախտվել:

Անմեղության կանխավարկածի իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում առկա հակասությունները և բացերը, և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ: Բացի դրանից, այն պրակտիկ իրավաբաններին հնարավորություն է տալիս տեղեկացված լինել այդ նախադեպերում տեղ գտած չափանիշների մասին և ղեկավարվել դրանցով:

<sup>1</sup> St u X v. the United Kingdom, 42 CD 135:

<sup>2</sup> St u Salabiaku v. France, Judgement of 07 October 1988:

## 2.10. ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Եվրոպական կոնվենցիան անմեղ համարելով հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձին, վերջինիս օժտել է նվազագույն մի շարք իրավունքներով, որոնց ամբողջությունը ընդհանրացված ձևով ընդունված է անվանել մեղադրյալի պաշտպանության իրավունք: Եվրոպական կոնվենցիան այս իրավունքն անրագրելով 6-րդ հոդվածի 3-րդ մասում, այն դիտում է որպես արդարացի դատական քննության իրավունքի կարևորագույն բաղադրատարր:

Պաշտպանության արարողակարգային այս միջոցները հիմնականում համապատասխանում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նույնաբովանդակ դրույթներին, սակայն կան նաև որոշակի տարբերություններ մանրամաստների մեջ: Միջազգային դաշնագրով նախատեսված որոշ երաշխիքներ Կոնվենցիայի մեջ ավելացվել են թիվ 7 Արձանագրության օգնությամբ:

Մեղադրյալը կարող է օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր իրավունքներից, անկախ նրանից՝ գտնվում է ազատության մեջ, ձերբակալված է, թե կալանավորված: Սակայն, որպեսզի այդ իրավունքները սկսեն գործել, անձը պետք է մեղադրվի քրեական հանցանք կատարելու մեջ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասում նշված իրավունքները սահմանվում են որպես նվազագույն և պետք է քննարկվեն ազգային քրեադատավարական օրենսդրությունների ենթատեքստում, որոնք հաճախ սահմանում և ապահովում են երաշխիքներ: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ազգային քրեադատավարական օրենսդրությունների հիմքում ընկած տարբեր սկզբունքները Կոնվենցիայում իրենց արտացոլումը չեն գտնում:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի հիմնարար նպատակը հանգում է այն գաղափարի ապահովմանը, որ մեղադրյալը չմնա միայնակ, առանց պաշտպանության միջոցների, հատկապես, եթե նա գտնվում է կալանքի տակ: Մյուս կողմից՝ նշված հոդվածում թվարկված որոշ իրավունքներ նշանակություն ունեն միայն դատա-



նրանք պետք է կամ նրան փոխարինեն, կամ ստիպեն իրականացնել իր պարտականությունները»<sup>1</sup>:

Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի գործով Դատարանը գտել է, որ «6(3)c հոդվածին համապատասխան՝ իրավասու մարմինների միջամտությունը պահանջվում է միայն այն դեպքում, եթե անվճար նշանակված պաշտպանը ցուցաբերել է արդյունավետ օգնություն ապահովելու ակնհայտ անկարողություն կամ դա նրանց հայտնի է դարձել որևէ այլ ձևով»<sup>2</sup>:

Եթե պարզ է դառնում, որ ազգային դատական մարմնում դատական քննությանը մասնակցող մեղադրյալի պաշտպանը չի ունեցել բավարար ժամանակ և հնարավորություններ դատական քննությանը պատշաճ կերպով պատրաստվելու համար, ապա նախագահողը պարտավոր է տրամադրել արդյունավետ միջոցներ, որոնք կապահովեն պատասխանողի նկատմամբ ունեցած իր պարտականությունների լիակատար իրականացում: Նման հանգամանքներում սովորաբար դատական նիստը հետաձգվում է:

Հանձնաժողովը գտել է, որ պաշտպան ընտրելու իրավունքի հարց կարող է ծագել միայն այն դեպքում, եթե մեղադրյալը բավարար միջոցներ ունի նրա ծառայությունների դիմաց վճարելու համար: Այսպիսով, նշանակված պաշտպանի օգնությունն անվճար օգտագործող մեղադրյալը չունի ընտրության կամ այդ հարցի կապակցությամբ իր կարծիքն արտահայտելու հնարավորություն<sup>3</sup>: Թեև ընտրության իրավունքը բացարձակ չէ, պետությունը իրավասու է կարգավորել դատական նիստերին պաշտպանի մասնակցությունը, և եթե այդ են պահանջում հանգամանքները՝ թույլ չտալ որոշակի անձանց իրականացնելու պաշտպանությունը:

*Անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը* մեղադրյալի համար բնորոշվում է երկու հանգամանքներով. առաջին, մեղադրյալը չունի բավարար միջոցներ պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար: Կոնվենցիայի մարմիններն այնքան էլ հաճախ ստիպված չեն լինում քննել այնպիսի հարցեր, ո-

կարացնելու մասին միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր և բացատրություններ, որոնք կարող են վերաբերել նաև որպես մեղադրյալ ներգարվելու հիմքը կազմող ապացույցներին, այսինքն՝ ցույց տալ մեղադրյալի առնչությունը կատարված հանցանքին:

Մեղադրանքի առաջադրմամբ է, որ մեղադրյալը հնարավորություն է ունենում իրացնել իր պաշտպանության իրավունքը: Հետևաբար, մեղադրյալին մեղադրանք առաջադրելուց հետո, պետք է ժամանակ տրվի պատրաստվելու ցուցմունք տալու համար: Այս հարցում կատարելագործման կարիք ունի նաև ՀՀ քր. դատ. օր. 212 հոդվածի 1-ին մասը, համաձայն որի քննիչը պարտավոր է մեղադրյալին հարցաքննել նրան մեղադրանք առաջադրելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան՝ 24 ժամվա ընթացքում, իսկ մեղադրյալի խուսափելու կամ նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու դեպքում՝ նրան բերման ենթարկելուց 48 ժամվա ընթացքում: «Ընթացքում» բառը նշանակում է ինչպես օրենքում նշված ժամկետի սկզբում, այնպես էլ՝ դրա ավարտից մեկ րոպե առաջ:

Կարծում ենք, որ կարելի է մեղադրյալին մեղադրանք առաջադրելուց հետո որոշակի ժամկետ տրամադրել հարցաքննությանը նախապատրաստվելու համար, ինչպես դա սահմանված է ամբաստանյալի համար մեղադրական եզրակացությունը հանձնված չլինելու դեպքում, երբ դատարանը հետաձգում է դատական նիստը երեք օրով՝ ամբաստանյալին հանձնելով մեղադրական եզրակացության պատճենը (քր. դատ. օր. 323 հոդվածի 2-րդ մաս):

Օրենսդրական ման կարգավումը երաշխիք կհանդիսանա նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի, այն է՝ բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար:

Վերը քննարկված հարցերը ՀՀ քրեական դատավարության դատական քննության փուլում ստացել են բավականին սահմանափակ կիրառում և հիմնականում կապվում են դատարանի կողմից ամբաստանյալի անձը ճշտելու և նրան մեղադրական եզրակացու-

<sup>1</sup> St' u Artico v. Italy, Judgement of 13 May 1980:

<sup>2</sup> St' u Kamasinski v. Austria, Judgement of 19 December 1989:

<sup>3</sup> St' u M. V. the United Kingdom. 36 DR 155:

յան պատճենը հանձնելու հանգամանքը և ժամկետները ճշտելու հետ:

Այսպես, ՀՀ քր. դատ. օր. 323 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախագահողը ճշտում է ամբաստանյալի ինքնությունը՝ պարզելով նրա ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, օրը, ծննդավայրը, ընտանեկան դրությունը, ինչպես նաև ամբաստանյալի անձնավորությունը բնութագրող այլ հանգամանքներ:

Ըստ ՀՀ քր. դատ. օր. նույն հոդվածի 2-րդ մասի՝ նախագահողը հարցնում է ամբաստանյալին, թե նրան հանձնված է արդյոք մեղադրական եզրակացության պատճենը և երբ է հանձնված:

Ամբաստանյալից դրական պատասխան ստանալու դեպքում դատարանը պարտավոր է պարզել նաև, թե նշված փաստաթուղթը երբ է հանձնվել նրան, քանզի այդ ժամկետից է կախված առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկանալու, իսկ հետագայում նաև դրանից պաշտպանվելու ամբաստանյալի՝ Կոնվենցիայով և ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավունքի իրականացումը:

Սակայն իրավակիրառ պրակտիկայում միշտ չէ, որ պահպանվում է քրեադատավարական օրենքով նախատեսված կարգը, որը սկսում է գործել մեղադրական եզրակացության պատճենը ամբաստանյալին հանձնված չլինելու դեպքում: Եթե նշված փաստաթուղթը հանձնված չէ, դատական նիստը հետաձգվում է երեք օրով՝ ամբաստանյալին հանձնելով մեղադրական եզրակացության պատճենը (քր. դատ. օր. 323 հոդվածի 2-րդ մաս):

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը ներկայացված հոդվածները համահունչ են Եվրոպական Կոնվենցիայի 6 հոդվածի համապատասխան դրույթի պահանջներին և իրավակիրառ պրակտիկայում դրանց չկատարումը կարող է հանգեցնել նրան, որ ամբաստանյալը (մեղադրյալը) չի տեղեկացվի իրեն առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին և կզրկվի դատարանում այդ մեղադրանքից իրական պաշտպանվելու հնարավորությունից:

անձը իրավաբանական օգնության կարիք է զգում: Եթե որևէ գործով առաջանում են իրավունքի հարցեր, որոնք պահանջում են որոշակի մակարդակի պրոֆեսիոնալ գիտելիքներ, ապա պետությունը չի կարող մեղադրյալից պահանջել լուծել այդպիսի հարցերը (Կրեմզովն ընդդեմ Ավստրիայի, 21.09.93): Հանձնաժողովը և Դատարանը հաստատեցին պետության իրավունքը՝ նշանակել պաշտպան, «երբ դա պահանջում է արդարադատության շահերը» նույնիսկ մեղադրյալի առարկությունների դեպքում (Բռանդստետերն ընդդեմ Ավստրիայի՝ 28.08.91): Այս հարցը լուծելիս, Դատարանը ելնում է այն չափանիշից, որ անհրաժեշտ է հաշվի առնել հանցագործության ծանրությունը, քրեական գործի փաստական և իրավաբանական տարրերի բարդությունը: Պետությունը կարող է մեղադրյալին լրիվ ազատել պաշտպանին վճարվելիք ծախսերից կամ ժամանակավորապես մինչև նրա ֆինանսական վիճակի բարելավումը (հայց 9365/81 ընդդեմ Գերմանիայի):

Դատարանը որոշել է, որ իրեն անձամբ պաշտպանելու իրավունքը բացարձակ չէ: Քրոյսամտն ընդդեմ Գերմանիայի գործում Դատարանը հայտարարել է, որ ազգային դատական մարմնում դատական քննության ընթացքում պաշտպանի կողմից մեղադրյալին օգնություն ցույց տալու պահանջը չի հակասում 6(3)գ հոդվածին:

Եթե մեղադրյալին երաշխավորվում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, ապա այդ իրավունքը պետք է կրի գործնական և արդյունավետ, այլ ոչ թե տեսական կամ երևակայական բնույթ: Արտիկոն ընդդեմ Իտալիայի գործով Դատարանը, նշելով, որ չնայած իշխանությունները չեն կարող պատասխանատվություն կրել իրավաբանական օգնություն տրամադրելու և պաշտպանությունն իրականացնելու հետ կապված ցանկացած բացթողման համար, ընդգծել է, որ «...6(3)գ հոդվածում խոսվում է «օգնության», այլ ոչ թե պաշտպանի «նշանակման»՝ մասին: Ինքնին նշանակումը դեռ չի ապահովում արդյունավետ օգնություն, քանի որ նշանակված պաշտպանը կարող է մահանալ, լուրջ հիվանդանալ, երկարաժամկետ զրկված լինել գործելու հնարավորությունից կամ կարող է ձեռնպահ մնալ իր պարտականությունները կատարելուց: Եթե իշխանությունները տեղյակ են ստեղծված իրադրությանը,

այդ իրավունքի սահմանափակման դեպքում վարույթն իրականացնող նարմինը պետք է ողջամտորեն հաշվի առնի մեղադրյալի՝ մեղադրանքից պաշտպանվելու բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը:

**զ) Մեղադրյալի իրավունքը՝ պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված պաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, 3-րդ մասի «զ» կետ)**

Կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի «զ» կետը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում առաջադրված մեղադրանքից պաշտպանվել անձամբ կամ իր կողմից անմիջականորեն ընտրված պաշտպանի միջոցով կամ, եթե նա չունի բավարար միջոցներ պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալ անվճար նշանակված պաշտպան, երբ այդ են պահանջում արդարադատության շահերը:

Մեղադրյալն ունի բացարձակ իրավունք՝ իր ընտրությանը օգտվելու պաշտպանի ծառայությունից, եթե նա դրա համար ունի բավարար ֆինանսական միջոցներ (Քեմպբել և Ֆելլը գործով՝ 28.06.84): Դատարանի կարծիքով, եթե մեղադրյալը չի ցանկանում պաշտպանությունն իրականացնել անձամբ, ապա նա պետք է հնարավորություն ունենա օգտվել պաշտպանի ծառայությունից իր ընտրությամբ, իսկ եթե նա չունի բավարար միջոցներ, ապա Կոնվենցիան ճանաչում է անվճար նշանակված պաշտպան ունենալու նրա իրավունքը, եթե դա պահանջում է արդարադատության շահերը (Պակելին ընդդեմ Գերմանիայի, 25.04.83):

Անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելը բխում է արդարադատության շահերից: «Արդարադատության շահ» հասկացությունը պետք է մեկնաբանել ընդարձակ և այն կիրառել ցանկացած պահի, երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվող

**բ) Մեղադրյալի իրավունքը՝ ունենալ բավարար ժամանակ և հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետ)**

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով հռչակվում է, որ մեղադրյալը պետք է ունենա «բավարար ժամանակ և հնարավորություն՝ նախապատրաստելու իր պաշտպանությունը»: Այս դրույթը սերտորեն կապված է 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի հետ, որը վերաբերում է մեղադրանքին մանրամասն տեղյակ լինելուն և իրավաբանական ներկայացուցչություն ստանալուն:

Եվրոպական դատարանը գտնում է, որ պաշտպանության համար «բավարար ժամանակ» սահմանելիս պետք է հաշվի առնվեն գործի բոլոր հանգամանքները, գործի բնույթը և բարդությունը, ինչպես նաև՝ քննության փուլը: Այդ ժամանակը կարող է լինել բազմաբնույթ /օրինակ՝ մանր խարդախության գործով նոր փաստաբանին գործի նյութերին ծանոթանալու համար տրամադրվող 15-օրյա ժամկետը համարվում է բավարար /Յայց թիվ 7909/77 ընդդեմ Ավստրիայի/:

Բավարար ժամանակի չափանիշը բնորոշվում է գործի բոլոր հանգամանքներով՝ ներառելով դրա բարդությունը և քննության փուլը: Այն հարցը, թե ինչպիսի «հնարավորություններ» են անհրաժեշտ պաշտպանության նախապատրաստման համար, նույնպես կախված է գործի կոնկրետ հանգամանքներից: Յաննաթոլովը եկել է այն եզրակացության, որ այդպիսի հնարավորությունների շարքին է դասվում նաև քննության արդյունքներին ծանոթանալու «հնարավորությունը» /Յայց թիվ 8403/78 ընդդեմ Բելգիայի/:

Նախադեպերից մեկով դիմողները պնդում էին, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «զ» կետերով նախատեսված իրենց իրավունքը, քանի որ դատական քննության ընթացքում դատարանը գործի փաստերը բնութագրել է որպես երկու ինքնուրույն հանցագործություններ և ոչ թե մեկ հանցագործություն, ինչպես դա ներկայացված էր սկզբնական մեղադրական ակտում: Դատարանը, դիմողներին մեղավոր ճանաչելով, ինչպես սկզբնական, այնպես էլ նոր մեղադրանքում, համապատասխանա-

բար մեծացրել էր պատժի չափը: Դիմողները պնդում էեն, որ իրենք տեղյակ չեն եղել նոր մեղադրանքի մասին և չեն ունեցել բավարար ժամանակ ու հնարավորություն՝ իրենց պաշտպանությունը կազմակերպելու համար /Շիշյանն ու Էքինջյանն ընդդեմ Ֆրանսիայի՝ 28.11.89թ./:

Այս դրույթի կապակցությամբ՝ դատարանի գլխավոր խնդիրը նշված պահանջի և ողջամիտ ժամկետի սահմաններում դատական քննությունն իրականացնելու պարտականության միջև անհրաժեշտ հավասարակշռություն պահպանելն է: Այս դրույթը սերտորեն կապված է նաև 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի հետ, որը վերաբերում է իրավաբանական օգնության իրավունքին:

Դատական քննության ընթացքում տվյալ դրույթի խախտման հետ կապված բողոքները ճանաչվել են ոչ կիրառելի այն դեպքերում, երբ դրանք ներկայացվել են մի անձի կողմից, որն արդյունքում արդարացվել է վերաքննիչ դատարանի կողմից, կամ՝ այն մեղադրյալի կողմից, որը հայտարարել է հետագա քննություններին չմասնակցելու իր մտադրության մասին<sup>1</sup>: Այնուամենայնիվ, դատարանի խնդիրն այն է, որ ապահովի նշված երաշխիքի պահպանությունն իր կողմից իրականացվող քննությունների ընթացքում, դրա հետ մեկտեղ՝ հույսը չդնելով այն հանգամանքի վրա, որ դատավարական ցանկացած խախտում կարող է շտկվել վերաքննիչ դատարանում:

Փաստաբանի օգնությունից օգտվելու իրավունքի իրականացումը սերտորեն կապված է 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» և «գ» կետերի հետ: Անկասկած, «իր պաշտպանի հետ խորհրդակցելու հնարավորություն ունենալը» պաշտպանության նախապատրաստման կարևորագույն հնարավորություններից մեկն է: Դիմորդ հայցվորներ Քեմբելը և Ֆելը պնդել են, որ ոստիկանության աշխատակիցների ներկայությունը մեղադրյալի հետ պաշտպանի հանդիպման ժամանակ՝ բավարար հնարավորություն ունենալու իրավունքի և պաշտպան ունենալու իրավունքի խախտում է:

<sup>1</sup> St u X v. the United Kingdom, 19 DR 223, և X v. the United Kingdom, 21 DR 126:

ներ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն (քր. դատ. օր. 65 հոդվածի 2-րդ մաս և 73-րդ հոդվածի 1-ին մաս): Բացի այդ, 33 քր. դատ. օր. 265 հոդվածի համաձայն՝ մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով, քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին, պաշտպանին, ... և որոշում է գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը և տեղը: Մեղադրյալին և պաշտպանին գործի նյութերը ծանոթանալու համար ներկայացվում է անկախ նրանց միջնորդությունից:

Եթե մեղադրյալի պաշտպանը ... չի կարող ներկայանալ նշանակված ժամին, քննիչը ծանոթանալը հետաձգում է մինչև 5 օր ժամկետով: Տվյալ ժամկետում պաշտպանի ... չներկայանալու դեպքում մեղադրյալին հնարավորություն է ընձեռվում իր համաձայնությամբ կամ նշանակմամբ ունենալու այլ պաշտպան: Մեղադրյալը և պաշտպանը գործին ծանոթանում են դատավարության մյուս մասնակիցներից ավելի ուշ: Նրանք իրավունք ունեն գործին ծանոթանալ միասին կամ առանձին: Մեղադրյալը և պաշտպանն իրավունք ունեն գործում առկա փաստաթղթերից անել դուրսգրումներ և պատճենահանել դրանք, լուսանկարել իրեղեն ապացույցները (քր. դատ. օր. 266 հոդված):

Օրենսդրությամբ գործի նյութերին ծանոթանալու ժամկետ չի նախատեսված, ինչից կարելի է ենթադրել, որ նրանց տրամադրվում է այնքան ժամանակ, որը բավարար է գործի նյութերին ծանոթանալու համար: Սակայն 33 քր. դատ. օր. 197-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական գործի նյութերին մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթանալու ժամկետը չի ստնում գործի քննության ժամկետի մեջ: Եթե մեղադրյալը կամ նրա պաշտպանն առանց հարգելի պատճառների ձգձգում են քրեական գործին ծանոթանալը, քննիչի որոշմամբ կարող է սահմանափակվել ծանոթանալու ժամկետը:

Կարծում ենք, որ նման սահմանափակումը համահունչ է Եվրոպական Դատարանի նախադեպերի շրջանակներում ընդունված մեղադրյալի իրավունքների արդարացված սահմանափակման կոնցեպցիային, սակայն հարկ ենք համարում ընդգծել, որ նույնիսկ

դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածը պաշտպանին գործով վարույթից հեռացնելու նման հիմք չի նախատեսում: Ավելին, նման անորոշությունը պարարտ հող է ստեղծում վարույթն իրականացնող մարմնի կողմից մշտական չարաշահումներ թույլ տալու համար:

Կարծում ենք, որ այս դեպքը պատկերավոր բնութագրում է այն իրավիճակը, որն առաջանում է քրեական դատավարության օրենսգրքում չհամակարգված և հապճեպ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու հետևանքով: Իսկ խնդրի լուծումը մենք տեսնում ենք հետևյալում. անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածում նախատեսել պաշտպանի կողմից իր լիազորությունների չարաշահման դեպքում նրան քրեական գործով վարույթից հեռացնելու հնարավորություն: Միաժամանակ դրա հիմքում պետք է ընկած լինեն ոչ թե անորոշ ձևակերպումները կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունը, այլ պաշտպանի ոչ իրավաչափ վարքագծի մասին վկայող բավարար տվյալները:

Մեղադրյալի կողմից իր պաշտպանությունը նախապատրաստելու բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքը ՀՀ քրեադատավարական օրենսդրությունն ապահովում է նաև քրեական գործի նյութերին ծանոթանալու ինստիտուտի միջոցով: Օրենքը սահմանում է, որ ինչպես մեղադրյալը, այնպես էլ նրա պաշտպանն իրավունք ունեն ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նրանք մասնակցել կամ ներկա է գտնվել, և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները, նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից անվճար պատճեն-

Հանձնաժողովը սահմանել է, որ մեղադրյալի և պաշտպանի միջև շփումները պետք է կրեն կոնֆիդենցիալ բնույթ՝ վստահելի հարաբերություններ ունենալու համար: Սակայն, դատարանը գտնում է, որ որոշակի բացառիկ հանգամանքների դեպքում պետությունը կարող է սահմանափակել այդպիսի կոնֆիդենցիալ հարաբերությունը, եթե կան լուրջ հիմքեր կարծելու, որ տվյալ պաշտպանը կարող է չարաշահել իր պրոֆեսիոնալ վիճակը, օրինակ՝ հանցավոր համաձայնության գալ իր վստահորդի հետ և ոչնչացնել ապացույցները կամ լուրջ արգելք հանդիսանալ դատավարությանը: Սակայն, դատարանը գտել է, որ տվյալ գործով թույլ է տրվել 6-րդ հոդվածի «բ» և «գ» կետերի խախտում /Քեմբելը և Ֆելը գործով՝ 28.06.84թ./:

Հիմնական շեշտադրումն այստեղ այն է, որ պաշտպանը պետք է նշանակվի այնպես, որպեսզի բավարար ժամանակ ունենա դատաքննությանը նախապատրաստվելու համար<sup>1</sup>: Տվյալ սկզբունքը ենթադրում է, որ մեղադրյալի պաշտպանը պետք է ունենա անսահմանափակ և խորհրդապահական հաղորդակցություն իր պաշտպանյալներից ցանկացածի հետ, որոնք գտնվում են նախնական քննության պայմաններում՝ գործի բոլոր հանգամանքները քննարկելու համար: Այն համակարգը, որում պահանջվում է դատավորի կամ դատախազի թույլտվությունը պաշտպանի կողմից մեղադրյալին այցելելու համար, խախտում է նշված դրույթը: Անհրաժեշտ է, որպեսզի նախնական կալանքի կիրառման կամ երկարացման մասին որոշում ընդունելիս դատավորները դատավարության բոլոր մասնակիցներին հստակ պարզաբանեն, որ պաշտպանը մեղադրյալին կարող է այցելել առանց իրենց թույլտվության: Այն դեպքում, եթե դատախազը, այդուհանդերձ, կամենա թույլտվություն տալ պաշտպանին մեղադրյալին այցելելու համար, դա կհանդիսանա ոչ միայն տվյալ դրույթի խախտում, այլ նաև կարող է կասկածի տակ դնել հենց դատական քննության արդարացիությունը: Հետևաբար, կալանավարների վարչակազմն իրավասու չէ դատավորից պահանջել տալու այդ այցելությունները դյուրացնելու թույլտվությունը:

<sup>1</sup> Տե՛ս X and Y v. Austria, 15 DR 160:

Դեռ ավելին, նրանք պետք է ապահովեն այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի այդ այցելություններն անցնեն խորհրդապահական և առանց կալանավայրի վարչակազմի մասնակցությամբ:

Այն դեպքում, եթե մեղադրյալը կամ նրա պաշտպանը պնդում են, որ անհրաժեշտ միջոցներ չեն ապահովվել, դատավորը պարտավոր է որոշում ընդունել, որը վերաբերում է առանց 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետը խախտելու դատական քննությունը շարունակելու հնարավորության հարցին: Դրա հետ մեկտեղ, դատավորը պետք է հիշի, որ պաշտպանությանը նախապատրաստվելու ընթացքում իր պաշտպանի հետ անարգել հաղորդակցվելու մեղադրյալի իրավունքը դիտվում է որպես արդարացի դատաքննության հայեցակարգի կենտրոնական տարր<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, բացառիկ հանգամանքներում որոշ սահմանափակումներ կարող են արդարացված լինել: «Քրյուհերը և Մյուլերն ընդդեմ Շվեյցարիայի»<sup>2</sup> գործը վերաբերում էր «առանձնապես վտանգավոր որակվող անձանց» կալանքի տակ պահելուն, որոնք մեղադրվում էին ահաբեկչական գործողության հետ կապված առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու մեջ: Դատավորն ընդհատել էր պաշտպանների այցելությունները երեք շաբաթով, որի ընթացքում իրենց պաշտպանների հետ նրանք միայն գրավոր հաղորդակցվելու հնարավորություն ունեին կալանավայրի վարչակազմի հսկողության պայմաններում: Այցելությունների թույլատրումից հետո հսկողությունը վերացվել էր: Հանձնաժողովը դա չի համարել 6(3)բ հոդվածի խախտում: Հանձնաժողովը խախտում չի հայտնաբերել նաև մեկ այլ գործում, որում դիմողը գտնվում էր կալանքի տակ, և նրան մերժել էին հաղորդակցվելու իր պաշտպանի հետ որոշակի սահմանափակ ժամանակահատվածների ընթացքում, քանի որ մնացած ժամանակահատվածում նրան տրամադրվել է նման հնարավորություն<sup>3</sup>: «Քուրուպն ընդդեմ Դանիայի»<sup>4</sup> գոր-

<sup>1</sup> St'u Campbell and Fell v. the United Kingdom, Judgement of 28 June 1984:

<sup>2</sup> St'u Kryuher and Myuler v. switzerland, 26 DR 24:

<sup>3</sup> St'u, օրինակ, Bonc v. Switzerland, 12 DR 185:

<sup>4</sup> St'u Kurup v. Denmark, 42 DR 287:

ծին և որի արդյունքում գործի համար էական հանգամանքներ են պարզվել:

Քրեադատավարական օրենսդրության մեջ ամրագրված հայտնի դրույթներից մեկն այն է, որ մեկից ավելի կասկածյալները կամ մեղադրյալները կարող են ունենալ մեկ պաշտպան: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում կասկածյալի, մեղադրյալի այս իրավունքը ևս ենթարկվեց որոշակի սահմանափակման: Մասնավորապես, օրենքը սահմանում է, որ միևնույն քրեական գործով մեկից ավելի կասկածյալները կամ մեղադրյալները կարող են ունենալ մեկ պաշտպան, բացառությամբ պաշտպանյալների շահերի միջև հակասության առկայության, ինչպես նաև այն դեպքերի, երբ վտանգ կա, որ նրանց միջև պաշտպանի շփումները կարող են խոչընդոտել արդարադատության իրականացմանը (քր. դատ. օր. 70-րդ հոդվածի 7-րդ մաս):

Անշուշտ, օրենսդրական նման կարգավորումը նպատակ է հետապնդում բացառել պաշտպանության իրականացման ընթացքում շահերի բախումը, ինչպես նաև կանխել պաշտպանի կողմից իր լիազորությունների չարաշահման հնարավոր դեպքերը: Վերջին հիմքի հետ կապված օրենսդիրն ընդօրինակել է եվրոպական մի շարք երկրների (Գերմանիա, Յուլանդիա, Շվեյցարիա և այլն) ունեցած փորձը, ինչը շատ դեպքերում օբյեկտիվորեն արդարացված է և նույնիսկ եվրոպական Դատարանի պրակտիկայում որոշակի պայմաններում դիտվում է որպես մեղադրյալի պաշտպանության իրավունքի արդարացված սահմանափակում:

Սակայն հարկ է նշել, որ փորձելով այս եղանակով կանխել պաշտպանի կողմից իր լիազորությունների չարաշահման հնարավոր դեպքերը, օրենսդիրը խնդրի իրավական կարգավորումը կիսատ է թողել: Նախ, նշված նորմի բովանդակությունից պարզ չէ, թե ով և ինչի հիման վրա է որոշում արդարադատության իրականացմանը խոչընդոտող վտանգի առկայությունը: Բացի այդ, այս դրույթը բացառում է պաշտպանի մասնակցությունը քրեական գործով վարույթին, և եթե նույնիսկ լինի նման վտանգ, ապա հայտնի չէ, թե ինչպես պետք է դադարեցվեն քրեական գործով վարույթին արդեն մասնակցող պաշտպանի լիազորությունները, քանզի ՀՀ քրեական

Մեղադրյալի վերը նշված իրավունքն ապահովվում է նաև պաշտպանին վերապահված մի շարք լիազորությունների իրականացմամբ: Մասնավորապես, պաշտպանն իրավունք ունի ծանոթանալ առաջադրված մեղադրանքին կամ իմանալ՝ ինչու է կասկածվում պաշտպանյալը, մասնակցել նրա հարցաքննություններին. առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ապահովում է ամբաստանյալի՝ պաշտպանի ծանոթություններից օգտվելու մի շարք այլ երաշխիքներ: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 304 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանի չներկայանալու և այդ նիստում նրան մեկ ուրիշ պաշտպանով փոխարինելը հնարավոր չլինելու դեպքում գործի քննությունը հետաձգվում է: Դատական նիստին չներկայացած պաշտպանի փոխարինումը թույլատրվում է միայն ամբաստանյալի համաձայնությամբ: Եթե ամբաստանյալի կողմից հրավիրված պաշտպանի մասնակցությունն անհնար է անընդմեջ երեք դատական նիստի չներկայանալու կամ տևական բուժում պահանջող հիվանդության կամ որևէ այլ հիմքով երկար ժամանակով դատական նիստին ներկայանալու անհնարինության պատճառով դատարանը, հետաձգելով դատական քննությունը, իրավունք ունի ամբաստանյալին առաջարկել ընտրելու այլ պաշտպան, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ նշանակել նոր պաշտպան: Գործը հետաձգելիս, լուծելով պաշտպանին փոխարինելու հարցը, դատարանը հաշվի է առնում նման որոշման նպատակահարմարությունը (դատական քննության վրա արդեն ծախսված ժամանակը, գործի բարդությունը և դրա հետ կապված դատական քննությանը նոր մասնակցող պաշտպանի կողմից գործի նյութերի ուսումնասիրման տևողությունը և այլ հանգամանքներ): Գործին նոր մասնակցող պաշտպանին դատարանը բավարար ժամանակ է տրամադրում գործի նյութերն ուսումնասիրելու համար: Նա իրավունք ունի միջնորդելու կրկնել ցանկացած գործողություն, որը դատական քննության ընթացքում կատարվել է նախքան իր ընդգրկվելը գոր-

ծով նույնպես Կոնվենցիայի խախտում չի հայտնաբերվել, քանի որ պաշտպանի վրա պարտականություն էր դրվել չբացահայտել դատավարությանը մասնակցող որոշ վկաների անձը:

Այդուհանդերձ, այս սահմանափակումներից ցանկացածը պետք է իրականացվի միայն խիստ անհրաժեշտության դեպքում և պետք է համաչափ լինի այն ռիսկին, որը կապված է փաստաբանի հետ ազատ հաղորդակցման տրամադրման հետ:

Իր պաշտպանի հետ խորհրդակցելու իրավունքը ներառում է նաև նամակներով հաղորդակցվելու իրավունքը: Նման գործերից շատերը քննվել են՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածին (գրագրության իրավունքը), ինչպես նաև 6(3)բ հոդվածին համապատասխան: Դոմենիչինին ընդդեմ Իտալիայի<sup>1</sup> գործով Դատարանը վճռել է, որ կալանավայրի վարչակազմի կողմից դիմողի՝ իր պաշտպանին ուղղած նամակների **գաղտնիությունը** հանդիսանում է երկու հոդվածների խախտում (8-րդ և 6(3)բ հոդվածների խախտում), մասնավորապես, դիմողի՝ իր պաշտպանին ուղղված նամակներից մեկի ուղարկումը ձգձգելու պատճառով:

Կոնվենցիան ենթադրում է, որ իր պաշտպանի հետ հաղորդակցվելու մեղադրյալի կամ ձերբակալված անձի իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով, որը պետք է լինի «ճշգրիտ և որոշակի» և հստակ ձևակերպի այն պայմանները, որոնց դեպքում թույլատրելի են նման սահմանափակումները:

Վկաների ցուցմունքներին ծանոթանալու դիմողի իրավունքի կապակցությամբ՝ Հանձնաժողովը Յեսպերսն ընդդեմ Բելգիայի<sup>2</sup> գործով հայտարարել է, որ «Հանձնաժողովը գտնում է, որ «յուրաքանչյուր մեղադրյալ պետք է ունենա այնպիսի հնարավորություններ, որոնք ներառում են իր պաշտպանությունը կազմակերպելու նպատակով դատավարության ողջ ընթացքում իրականացվող քննության արդյունքներին ծանոթանալու հնարավորություն: Ավելին, Հանձնաժողովն արդեն հայտարարել է, որ չնայած Կոնվենցիան չի պարունակում քննչական մարմինների նյութերին ծանոթա-

<sup>1</sup> St' u Domenichini v. Italy, Judgement of 25 November 1996:

<sup>2</sup> St' u Jespers v. Belgium, 27 DR 61:

նալու իրավունքի հստակ երաշխիք, սակայն այդպիսի իրավունք կարող է ենթադրվել 6(3)բ հոդվածում... Բացի այդ, այդքան էլ կարևոր չէ, թե ում կողմից և երբ են իրականացվել քննությունները, և ում ղեկավարությամբ են դրանք իրականացվել»:

Հանձնաժողովը հաստատել է, որ 6(3)բ հոդվածն ընդունում է մեղադրյալի իրավունքն իր տիրապետման տակ ունենալու բոլոր անհրաժեշտ նյութերը, որոնք հավաքվել են կամ կարող էին հավաքված լինել իրավասու մարմինների կողմից՝ իր մեղադրանքը հերքելու կամ նվազ խիստ դատավճռի հասնելու նպատակով: Հանձնաժողովն ավելացրել է, որ նշված իրավունքը սահմանափակվել է այն հնարավորություններով, որոնք համագործակցում են կամ կարող են համագործակցել պաշտպանության կողմի հետ:

Պրակտիկայում տվյալ սկզբունքը բավականին նեղ մեկնաբանություն ունի: Յեսպերսն ընդդեմ Բելգիայի վերոհիշյալ գործում դիմողը բողոքում էր, որ ինքը զրկված է եղել հանրային մեղադրողի հատուկ նյութերին ծանոթանալու հնարավորությունից: Հանձնաժողովն ընդգծելով այն փաստը, որ գործի նյութերին ծանոթանալը մերժելը կարող էր խախտել 6(3)բ հոդվածն այն դեպքում, երբ դրանում առկա է եղել այնպիսի նյութ, որը դիմողին հնարավորություն կտար խուսափել պատասխանատվությունից կամ ստանալ նվազ խիստ պատիժ, այնուամենայնիվ, չի գտել որևէ ապացույց, որ նշված նյութերն իրոք պարունակել են դրա համար անհրաժեշտ տեղեկատվություն, և հայտարարել է, որ Հանձնաժողովը պատրաստ չէ ընդունելու, որ Կառավարությունը խախտել է իր պարտավորությունները: Ուստի, Դատարանը վճռել է, որ պետությունը կարող է սահմանափակել գործի նյութերին ծանոթանալը մեղադրյալի պաշտպանության ներկայացուցիչների համար: Քննության ապացույցների դիմողի ծանոթանալու սահմանափակումները ճանաչվել են թույլատրելի, քանի որ դրանք իրականացվել են ելնելով արդարադատության արդյունավետ իրականացման շահերից՝ նույնիսկ չնայած այն փաստի անվիճելի բնույթին, որ ապացույցները կարևորություն են ներկայացրել պաշտպանության համար<sup>1</sup>:

<sup>1</sup> St u Kurup v. Denmark. 42 DR 287:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը մեղադրյալի՝ նշված իրավունքի իրականացման համար նախատեսում է բավարար երաշխիքներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը: Բացի այդ, մեղադրյալն իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման (քր. դատ. օր. 65-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ):

Այս ընդհանուր կանոնից բացառություն է արված միայն կասկածյալի համար: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների հետևանքով սահմանափակվեց պաշտպանի հետ կասկածյալի տեսակցության տևողությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 211 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցաքննությունից առաջ կասկածյալին իր ցանկությանը հնարավորություն է տրվում առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանի հետ: Եթե առկա է կասկածյալի մասնակցությամբ դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, ապա հետաքննության մարմինը կամ քննիչը տեսակցության տևողությունը կարող է սահմանափակել՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով կասկածյալին և նրա պաշտպանին:

Կարծում ենք, որ քրեական դատավարության խնդիրների իրականացման և քրեական գործի արդյունավետ քննության տեսանկյունից այդպիսի սահմանափակումն արդարացված է, քանի որ շատ հաճախ առանց քանակության և տևողության սահմանափակման պաշտպանի հետ տեսակցության իրավունքի իրականացումը կարող է հանգեցնել լուրջ չարաշահումների: Միաժամանակ շատ կարևոր է նույն հոդվածում ամրագրված այն երաշխիքը, որ հիշյալ իրավունքի սահմանափակման պարագայում պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող երկու ժամից պակաս լինել:



ծը, որին նա ձգտում է հարցաքննել, դա նրան կարող է զրկել շատ կարևոր դետալներից, որոնք թույլ են տալիս նրան ցուցադրելու, որ տվյալ վկան կողմնակալ կամ թշնամաբար է տրամադրված և վստահություն չի ներշնչում: Սեղադրյալին մերկացնող ցուցմունքները կամ այլ հայտարարությունները կարող են դիտավորյալ սուտ կամ պարզապես սխալ լինել, և պաշտպանությունը դժվար թե ի վիճակի լինի հայտնաբերել դա՝ փորձելով կասկածի տակ դնել վկայի ցուցմունքների արժանահավատությունը կամ դրանց ճշմարտացիությունը՝ տեղեկատվության բացակայության պատճառով: Նման իրավիճակում առկա վտանգներն ակնհայտ են»<sup>1</sup>:

Հավասարակշռող ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են արդարացի դատաքննության իրավունքի ապահովման համար, կարող են փոփոխվել՝ կախված գործի բնույթից: Այդ կապակցությամբ, առավել կարևոր են հետևյալ հանգամանքները. արդյոք, մեղադրյալը ունեցե՞լ է վկայի հարցաքննությանը ներկա գտնվելու հնարավորություն, նա կարողացե՞լ է հարցեր տալ վկային, և նախագահողը տեղյա՞կ է եղել վկայի անձի մասին: Ինչպես հայտարարել է Դատարանը Վան Սեհելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով. «Հաշվի առնելով արդարացի դատաքննության իրավունքի կարևոր նշանակությունը ժողովրդավարական հասարակության մեջ՝ պաշտպանության իրավունքը սահմանափակող ցանկացած միջոց պետք է թելադրվի խիստ անհրաժեշտությամբ: Եթե բավարար կլինի նվազ սահմանափակող միջոցը, ապա պետք է կիրառվի այն»<sup>2</sup>:

Վերջապես, կարևոր է ընդգծել, որ նույնիսկ բավարար ընթացակարգերի առկայության դեպքում մեղադրանքը չպետք է հիմնվի բացառապես կամ էապես անանուն վկաներից ստացված ապացույցների վրա:

Ինչպես արդեն նշվել է, կարևորն այն է, որ մեղադրյալը պետք է տեղյակ պահվի վկաների այն ցուցմունքների մասին, որոնք տրվել են իր դեմ: Իսկ թե մեղադրյալն այդ ցուցմունքների ժխտման ինչ ձև կընտրի՝ կպահանջի իր հետ առերես հարցաքննել մինչդատական

րոնք վերաբերում են նշված պայմանին, բայց ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ մեղադրյալին ներկայացվող՝ բավարար միջոցներ չունենալու ապացույցներ տրամադրելու պահանջները չափազանց մեծ չեն: Երկրորդ, արդարադատության շահերը պահանջում են տրամադրել անվճար իրավաբանական օգնություն: Այստեղ տեղին է հիշատակել մի շարք հանգամանքներ: Դատարանը դիտարկելու է մեղադրյալի՝ իր գործն առանց պաշտպանի օգնության համապատասխան ձևով ներկայացնելու ունակությունը: «Հոանգն ընդդեմ Ֆրանսիա»<sup>1</sup> գործով Դատարանը հայտարարել է, որ այն դեպքում, երբ խոսքը գնում է բարդ հարցերի մասին, և մեղադրյալը չունի իրավաբանական պատրաստվածություն, որն անհրաժեշտ է համապատասխան փաստարկներ ներկայացնելու ու զարգացնելու համար (այդպիսի հնարավորություն ունի միայն գործին պատրաստվելու համար բոլոր հնարավորություններն ունեցող փորձառու փաստաբանը), ապա արդարադատության շահերը պահանջում են, որպեսզի գործին մասնակցելու համար պաշտոնապես նշանակվի պաշտպան:

Դատարանը նաև հաշվի է առնելու գործի բարդությունը: Վերջապես, ցանկացած հնարավոր սանկցիայի խստության աստիճանը նույնպես նշանակություն ունի անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հարցում: «Բենամն ընդդեմ Միացյալ Թագավորության»<sup>2</sup> գործով Դատարանը հայտարարել է, որ «այնտեղ, որտեղ գոյություն ունի ազատությունից զրկելու վտանգ, արդարադատության շահերն են, ըստ էության, թելադրում իրավաբանական օգնության տրամադրման անհրաժեշտությունը»: Դատարանը նաև ընդգծել է, որ տվյալ դատական քննությունը կրել է բարդ բնույթ:

«Փերքսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության»<sup>3</sup> գործում Դատարանը ելնում էր «Բենամն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով իր որոշումից: Տվյալ գործը վերաբերում էր մի քանի դիմողների, որոնք ազատությունից զրկվել էին անհատական

<sup>1</sup> St' u Kostovski v. the Netehrlands, Judgement of 20 November 1989:

<sup>2</sup> St' u Van Mechelen and others v. the Netherlands, Judgement of 23 April 1994:

<sup>1</sup> St' u Pham Hoang v. France, Judgement of 25 September 1992:

<sup>2</sup> St' u Benham v. the United Kingdom, Judgement of 10 June 1996:

<sup>3</sup> St' u Perks and others v. the United Kingdom, Judgement of 12 Octoer 1999:

տուրքը չվճարելու համար: Դատարանը վճռել է, որ, հաշվի առնելով դիմողներին սպառնացող պատժի ծանրության աստիճանը, ինչպես նաև համապատասխան օրենքի բարդությունը, արդարադատության շահերը պահանջում են, որպեսզի, ելնելով արդարացի դատաքննության ասպահովման շահերից, դիմողներին տրամադրվի անվճար իրավաբանական օգնություն:

Անվճար իրավաբանական օգնության հետ կապված հանգամանքները կարող են փոփոխվել, և այն տրամադրելու ցանկացած մերժում պետք է ենթարկվի վերանայման: «Գրենջերն ընդդեմ Միացյալ Թագավորության»<sup>1</sup> գործում գործի էությանը վերաբերող հարցերից մեկի բարդության աստիճանը պարզ դարձավ միայն վերաքննիչ քննությունների ընթացքում: Դատարանը վճռել է, որ, ելնելով արդարադատության շահերից, դիմողին պետք է տրամադրել անվճար իրավաբանական օգնություն սկսած հենց այդ պահից, և որ հաշվի առնելով նախնական որոշման վերանայման բացակայությունը, տվյալ գործում տեղի է ունեցել 6(3)գ հոդվածի խախտում:

Դատարանն ընդգծել է, որ 6(3)գ հոդվածի նման խախտումն արձանագրելու համար բոլորովին էլ չի պահանջվում ապացույց, որ անվճար իրավաբանական օգնության բացակայությունը մեղադրյալին էական վնաս է հասցրել: Եթե պահանջվեր այդպիսի ապացույց, ապա դա նշված դրույթն էապես կզրկեր իր էական բովանդակությունից<sup>2</sup>:

«Պակեյին ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» գործով այս իրավունքի առնչությամբ եվրոպական դատարանը նշել է, որ՝ «6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվողի համար երաշխավորում է հետևյալ երեք իրավունքը. պաշտպանվել անձամբ, ունենալ իր կողմից ընտրված պաշտպան և, որոշակի պայմաններում՝ ունենալ իրեն անվճար նշանակված պաշտպան»:<sup>3</sup> Այսպիսով, Կոնվեն-

Մեղադրյալի կողմից հաշվեհարդար տեսնելու իրական ռիսկը որոշ հանգամանքներում կարող է արդարացնել ուրիշի խոսքերի վրա հիմնված ցուցմունքների օգտագործումը: Սակայն այդ դեպքում պետք է գոյություն ունենան պաշտպանության իրավունքն ապահովող հավասարակշռող ընթացակարգեր: Սահդին ընդդեմ ֆրանսիայի գործում դիմողը մեղադրվում էր թմրամիջոցների առուվաճառքի մեջ՝ երեք անանուն վկաների կողմից մեղադրյալին ճանաչելու ընթացքում ստացված ցուցմունքների հիման վրա: Դատարանը վճռել է. «Դատարանը լիովին գիտակցում է թմրամիջոցների առուվաճառքի դեմ տարվող պայքարի անվիճելի բարդությունները, հատկապես այն, ինչ վերաբերում է ապացույցների ստացմանն ու ներկայացմանը, և այն վնասը, որը թմրամիջոցները պատճառում են հասարակությանը, սակայն նշված դիտարկումները չեն կարող արդարացնել հանցագործության մեջ ցանկացած մեղադրվող անձի պաշտպանության իրավունքի նման աստիճանի սահմանափակումը: Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 6(3)դ հոդվածի խախտում, քանի որ ճանաչման ժամանակ անանուն վկաների կողմից ստացված ցուցմունքները ծառայել են որպես մեղադրյալին դատապարտելու միակ հիմք:

Որպես ընդհանուր կանոն՝ հաշվեհարդար տեսնելու վախը, որը հաշվի է առնվում ուրիշի խոսքերի վրա հիմնված ցուցմունքների գաղտնազերծման արդարացման նպատակով, անպայմանորեն չպետք է կապված լինի մեղադրյալի կողմից արված որևէ կոնկրետ սպառնալիքի հետ: Դորսոնն ընդդեմ Նիդեռլանդների գործով Դատարանը վճռել է, որ չնայած երկու վկաները երեք սպառնալիք չեն ստացել մեղադրյալի կողմից, թմրամիջոցներ վաճառողները վկաների հանդեպ, որոնք ցուցմունքներ են տալիս նրանց դեմ, դիմում են սպառնալիքների և բռնության:

Անանուն վկաների ցուցմունքների օգտագործման մյուս հիմնախնդիրն այն է, որ տվյալ իրավիճակում պաշտպանության ներկայացուցիչները հնարավորություն չունեն վիճարկելու վկաների հայտնած տեղեկությունների արժանահավատությունը: Կոստովսկին ընդդեմ Նիդեռլանդների գործով Դատարանը հայտարարել է. «Այն դեպքում, եթե պաշտպանության կողմին անհայտ է վկայի ան-

<sup>1</sup> St'u Granger v. the United Kingdom, Judgement of 28 March 1990:

<sup>2</sup> St'u Artico v. Italy, Judgement of 13 May 1980:

<sup>3</sup> St'u Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Վճիռների ընտրանի (1979-2000 թթ.), (հայերեն): Երևան, 2002, կետ 581:

տինգերն ընդդեմ Ավստրիայի»<sup>1</sup> գործով Դատարանը հայտարարել է, որ նման դրույթներն ակնհայտորեն չեն հակասում 6 հոդվածի 1-ին մասին և 6 հոդվածի 3-րդ մասի դ կետին: Սակայն Դատարանը նշել է, որ տվյալ գործում ազգային դատարանը քննում էր մեղադրյալի նախկին կնոջ և նրա խորթ դստեր հայտարարությունները՝ ոչ թե որպես մտածելու տեղիք տվող տեղեկատվություն, այլ որպես ժամանակին այդ կանանց կողմից առաջ քաշված մեղադրանքների ճշմարտացիության ապացույց: Դիմողի նկատմամբ մեղադրական դատավճիռը կայացվել է բացառապես նշված ցուցմունքների հիման վրա, հետևաբար, բացակայում էին պաշտպանության իրավունքի բավարար երաշխիքները:

Խնդիրներ կարող են առաջանալ նաև վկայի լուրջ հիվանդության կամ մահվան դեպքում: Դատարանը վճռել է, որ տվյալ հանգամանքը կարող է որպես այլոց կողմից արված ցուցմունքներին վստահելու արդարացուն ծառայել՝ պաշտպանության իրավունքի առկայությունն ապահովող հավասարակշռող փաստերի առկայության պայմանով<sup>2</sup>: Ինչ վերաբերում է վկաների առողջական վատ վիճակի հետ կապված հարցերին, ապա Դատարանին կհետաքրքրի ուրիշի խոսքերի վրա հիմնված ցուցմունքների օգտագործումից խուսափելու հնարավորության այլընտրանքների առկայության քննությունը: «Բրիմոնն ընդդեմ Բելգիայի» գործում Բելգիական արքայազնը գործ էր հարուցել ընդդեմ դիմողի, սակայն չէր կարողացել ցուցմունքներ տալ՝ ելնելով առողջական վիճակից: Դատարանը վճռել է, որ՝ «Չաշվի առնելով գործի հանգամանքները՝ պաշտպանության իրավունքը, որպես արդարացի դատաքննության իրավունքի էական տարր, ենթադրում է, ըստ էության, որ դիմողները պետք է հնարավորություն ունենան հրապարակայնորեն վիճարկելու հայցի ցանկացած կետ կամ, անհրաժեշտության դեպքում, հայցվորի տանն իրականացված առերեսման կամ հարցաքննության ընթացքում»<sup>3</sup>:

<sup>1</sup> St'u Unterperntinger v. Austria, Judgement of 24 November 1986:

<sup>2</sup> St'u Ferrantelli and Santangelo v. Italy, Judgement of 07 August of 1996:

<sup>3</sup> St'u Bricmont v. Belgium, Judgement of 07 July 1989:

ցիան, առաջին հերթին, ամրագրում է մեղադրյալի՝ իրեն անձամբ պաշտպանելու իրավունքը: Այսինքն՝ անձի պաշտպանության իրավունքը դիտվում է որպես նրա սոցիալական պաշտպանության ձևերից մեկը: Այստեղ նկատի է առնվում անձի ազատության խնդիրը՝ այն իմաստով, որ անձին ոչ մի պարագայում չի կարելի ստիպել պաշտպան ունենալ՝ եթե նա նման ցանկություն չունի, և այդ ցանկությունն իրական է: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետում ամրագրված երկրորդ իրավունքը՝ մեղադրյալի պաշտպան ընտրելու բացարձակ իրավունքն է: Այդ իրավունքը չի կարող սահմանափակվել ոչ մի պարագայում. մեղադրյալն ազատ է պաշտպանի ընտրության հարցում:

Եվրոպական կոնվենցիայի համաձայն, եթե մեղադրյալը ցանկանում է պաշտպան ունենալ, սակայն չունի բավարար միջոցներ նրա ծառայությունների դիմաց վճարելու համար, ապա պաշտպանի մասնակցությունն ապահովվում է պետության կողմից, երբ այդ են պահանջում արդարադատության շահերը: Սակայն շատ երկրների օրենսդրություններ մեղադրյալին պաշտպան տրամադրելը չեն կապում նրա անվճարունակության հանգամանքի հետ:<sup>1</sup>

Այս հարցի պատասխանը տրված է Եվրոպական դատարանի բազմաթիվ նախադեպերում, որոնց ուսումնասիրությունից երևում է, որ նշված հասկացության տակ նկատի են առնվել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ գործի բարդությունը, իրավաբանական խնդիրների առկայությունը և այլն: Մասնավորապես, «Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների» գործով Եվրոպական դատարանը նշել է, որ «այս գործի հանգամանքներում տվյալ սահմանափակումը համատեղելի է արդարադատության շահերի հետ, քանի որ դիմումատուներն ի վիճակի էին բացատրություններ տալ այնպիսի պարզ փաստերի առնչությամբ, որոնց մեջ նրանց մեղադրում էին: Չետևաբար, որևէ ոտնձգություն «գ» կետում ամրագրված իրավունքի դեմ տվյալ գործի նյութերից չի բխում»:<sup>2</sup> Մեկ այլ՝ «Արտիկոն ընդդեմ Իտալիա-

<sup>1</sup> St'u Մարդու իրավունքների Եվրոպական դատարան. Վճիռների ընտրանի (1979-2000 թթ.), (հայերեն): Երևան, 2002, էջ 582:

<sup>2</sup> St'u Европейский суд по правам человека. т. 1. М. 2000, с. 117.

յի» գործով Եվրոպական դատարանը հանգեց այն եզրակացության, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի պահանջների խախտում: Դատարանը եկել էր այն համոզման, որ Վճռաբեկ դատարանում դիմումատուին իրավաբանական օգնություն ցույց չի տրվել, միաժամանակ նշելով հետևյալը. «Տվյալ գործով արդարադատության շահերը, իսկապես, պահանջում էին արդյունավետ օգնության տրամադրում: Գրավոր ընթացակարգը, որը Վճռաբեկ դատարանում շատ մեծ դեր է կատարում, չէր ավարտվել 1972թ. օգոստոսի 8-ի դրությամբ: Որակյալ իրավաբանը կկարողանար լրացուցիչ պարզաբանել պրն Արտիկոյի կողմից ներկայացվող փաստարկները և, մասնավորապես՝ անհրաժեշտ շեշտը դնել վաղեմության՝ օրենքով սահմանված ժամկետներն անցնելու հանգուցային հարցի վրա: Այդ հարցը թերի էր լուսաբանված 1972թ. մարտի 14/15-ին ներկայացված «փխրուն և շատախոս» գանգատներում: Բացի այդ, միայն իրավաբանը կարող էր առարկել պետական մեղադրողին՝ համոզելու Վճռաբեկ դատարանին անցկացնել հրապարակային քննություն, որի ընթացքում, այլ հարցերի հետ մեկտեղ, վաղեմության հիմնահարցը մանրամասնորեն կքննարկվեր»:

Իր վճռում Եվրոպական դատարանը նշել է նաև, որ «... իտալական իրավասու իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեին՝ ապահովելու դիմումատուին այն բանից օգտվելու իրական հնարավորությունը, ինչի իրավունքը, նրանց խոստովանությամբ, նա ունեցել է: Իշխանությունների առջև բացվել էր երկու ճանապարհ՝ կամ փոխարինել պրն Դե Լա Ռոքին կամ, եթե դա տեղին էր, ստիպել նրան կատարելու իր պարտականությունները... Նրանք գնացին երրորդ ճանապարհով՝ մնացին պասիվ, այն ժամանակ, երբ Կոնվենցիայի կատարումը նրանցից դրական (պոզիտիվ) գործողություններ էր պահանջում»:

Մեկ այլ գործով իր վճռում Եվրոպական դատարանը նշել է հետևյալը՝ «Եթե որևէ գործով ծագում են մասնագիտական ձեռնահատության որոշակի մակարդակի առկայություն պահանջող իրավուն-

մունքները գործին չեն վերաբերում: Եվրոպական դատարանը գտնում է, որ դատարանը կարող է նաև չիրավիբել վկային, եթե նոր ցուցմունքները կլինեն անօգտակար (հայց 9365/81 ընդդեմ Գերմանիայի):

Այսպիսով, դիմողը պետք է ապացուցի, որ կոնկրետ վկային լսելու մերժումը լուրջ վնաս է հասցրել իր գործին: Ցանկացած դեպքում, վկաներին իրավիբելու և հարցաքննելու արարողակարգերը պետք է լինեն միատեսակ ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմի համար՝ ելնելով կողմերի հավասարության սկզբունքի նպատակներից:

Ըստ էության մեղադրանքի հիմքը կազմող բոլոր ցուցմունքները պետք է վերցվեն մեղադրյալի ներկայությամբ՝ հրապարակային դատաքննության ընթացքում, հաշվի առնելով մրցակցության սկզբունքը<sup>1</sup>: Խնդիրներ կարող են ծագել այն դեպքում, եթե մեղադրանքի հիմքում ընկած են այն անձի գրավոր հայտարարությունները, որը չի մասնակցում դատաքննություններին, օրինակ՝ մեղադրյալի կամ նրա հանցակցի կողմից հաշվեհարդարի ենթարկվելու վախի պատճառով:

Միայն բացառիկ հանգամանքները կարող են մեղադրանքի կողմին թույլ տալ հիմնվել այն վկայի ցուցմունքների վրա, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել ենթարկել խաչաձև հարցաքննության: Դատավորի կողմից քրեական գործով որոշում ընդունելը՝ դատախազի ներկայացրած նյութերի հիման վրա՝ առանց դատախազի ներկայության, որը նրան հնարավորություն է տալիս պատասխանելու մեղադրյալի կողմից արված ցանկացած առարկության, որպես կանոն, մեծացնում է նշված դրույթի խախտման վտանգը: Անխոս, դատարանը չի կարող կողմ լինել դատախազի դիրքորոշմանը նրա բացակայության պայմաններում՝ դրանով իսկ չխախտելով անկողմնակալության սկզբունքը:

Կոնվենցիայի մասնակից շատ պետություններում ընդունված են կանոններ, որոնք որոշ կատեգորիայի վկաների, օրինակ՝ ընտանիքի անդամներին, ազատում են ցուցմունք տալուց: «Ունտերպեր-

<sup>1</sup> Stiu Barbera, Messegue and Jabardo, Judgement of 06 December 1988:

**տված վկաները (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետ)**

6(3)դ հոդվածը մեղադրյալին իրավունք է տալիս հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որպեսզի այդ վկաները հարցաքննվեն, և իրավունք ունենալ, որպեսզի իր վկաները կանչվեն և հարցաքննվեն իր դեմ ցուցմունք տվող վկաների հետ նույն պայմաններում: Եվրոպական դատարանը մեղադրյալի այս իրավունքը դիտարկում է որպես կողմերի հնարավորությունների հավասարություն: Այս իրավունքի հիմնական նպատակն է ապահովել, որ հանցագործության մեջ մեղադրվող անձը համապատասխան և պատշաճ հնարավորություն ունենա վիճարկել իր դեմ վկայություն տվող ցանկացած անձի ցուցմունքները: Եվրոպական դատարանը գտնում է, որ քրեական գործով բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն մեղադրյալի ներկայությամբ հրապարակային, մրցակցային քննության ընթացքում: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտում է համարում այն, որ դատավճիռը հիմնված է պաշտպանության կողմից չհարցաքննված անձանց անանուն վկայությունների վրա (Կոստովսկիյի ընդդեմ Յուլանդիայի, 20.11.89): Մեղադրանքի կողմի վկաների ինքնությունը պետք է հայտնի լինի մեղադրյալին, և նա պետք է հնարավորություն ունենա նրանց հարցաքննելու (Վինդիշն ընդդեմ Ավստրիայի՝ 27.09.90): Այսպիսով, գլխավոր սկզբունքն այն է, որ մեղադրյալին պետք է թույլ տալ կանչել և հարցաքննել ցանկացած վկայի, որի ցուցմունքները վերջիններս կարևոր են համարում իրենց գործի քննության համար. նրանք պետք է նաև հնարավորություն ունենան հարցաքննելու ցանկացած վկայի, որին կանչել է դատախազը կամ որի ցուցմունքների վրա հիմնվում է դատախազը:

Միաժամանակ տվյալ դրույթը մեղադրյալին բացարձակ իրավունք չի տալիս կանչել վկաների կամ ազգային դատական մարմիններից պահանջել լսելու որևէ կոնկրետ վկայի: Ազգային դատարաններն իրավունք ունեն որոշելու վկաներին հրավիրելու պայմանները, և իրավասու մարմինները կարող են մերժել այս կամ այն վկայի հրավիրումն այն դեպքում, եթե նրանք կգտնեն, որ նրա ցուց-

քի հարցեր, ապա պետությունը չի կարող պահանջել մեղադրյալից, որպեսզի նա ինքնուրույն լուծի այդ հարցերը»:<sup>1</sup>

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Եվրոպական դատարանը պետությունից պահանջում է ապահովել անվճար պաշտպանի մասնակցությունը միայն այն դեպքում, երբ մեղադրյալը չի կարողանում ինքնուրույն իրեն պաշտպանել՝ ելնելով իր մասնագիտական հնարավորություններից: Եվրոպական Կոնվենցիայի այն պահանջը, որ պետությունը պարտավոր է ապահովել պաշտպանի մասնակցությունը միայն այն դեպքում, երբ դա են պահանջում արդարադատության շահերը, հենց ուղղված է քրեական դատավարության խնդիրների իրականացմանը: Այս պատճառով է, որ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի նշված պահանջը կիրառում է միայն այն դեպքերում, երբ գործի հանգամանքներն այնպիսին են, որ մեղադրյալն օբյեկտիվորեն ի վիճակի չէ դրանք հասկանալ և, ըստ այդմ էլ՝ պաշտպանվել համարժեքորեն:

ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացման հարցում առավելապես համապատասխանում է Եվրոպական Կոնվենցիայի պահանջներին: Նախ և առաջ, դա արտահայտվում է նրանում, որ օրենսդիրը բոլոր տեսակ գործերով դատական քննությանը ամբաստանյալի մասնակցությունը պարտադիր է համարում (քր. դատ. օր. 302 հոդված), ինչն էլ իրական նախապայման է ամբաստանյալի կողմից իրեն անձամբ պաշտպանելու համար:

Միաժամանակ, որպես գործի դատական քննությանը ամբաստանյալի պարտադիր մասնակցության լրացուցիչ երաշխիք օրենքը սահմանում է, որ առանց հարգելի պատճառների ամբաստանյալի չներկայանալու դեպքում, նա դատարանի որոշմամբ կարող է բերման ենթարկվել, իսկ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում՝ նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց կամ այն փոխարինվել ավելի ծանրով:

<sup>1</sup> St'u Donna Gомьен, Давид Харрис, Лео Зваак. Европейская конвенция по правам человека и Европейская социальная хартия: право и практика, перев. с англ.: М. 1998, с. 251.

Ազգային օրենսդրության մեջ ևս ամրագրված է անձի կողմից իր ընտրությամբ պաշտպան ունենալու առաջնային իրավունքը: ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք»: Մեղադրյալի պաշտպանության հարցերը առավել մանրամասնորեն կարգավորված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Քրեական դատավարության օրենսգրքի 65 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մեղադրյալն իրավունք ունի մեղադրանք առաջադրելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն, ինչպես նաև հարցաքննվել պաշտպանի ներկայությամբ: ՀՀ քր. դատ. օր. 70 հոդվածի 1-ին մասի համաձայն փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝ 1) կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով կամ 2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների միության կողմից նշանակվելով քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:

Միաժամանակ, օրենքը սահմանում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի, իսկ պաշտպանը նշանակվում է ՀՀ փաստաբանների պալատի միջոցով՝ 1) կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ, 2) այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:

Այս առումով հետազոտության առարկա է դարձել նաև դատական քննությանը հրավիրված և նշանակված պաշտպանների մասնակցության հարցը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հրավիրված պաշտպանները շուրջ երեք անգամ գերակշռում են նշանակվածներին, ինչը վկայում է այն մասին, որ ինչպես օրենսդրության մեջ, իրավակիրառ պրակտիկայում ևս գերակշռում է պաշտպանի ընտրովիության սկզբունքը:

կասկածյալին, մեղադրյալին բնութագրող այս կամ հատկանիշի կամ որոշակի պայմանի առկայությունից:

Եթե ստեղծված իրավիճակը համադրենք Եվրոպական դատարանի պրակտիկայի հետ, ապա պարզ է դառնում, որ այս հիմնախնդիրը իրավական կարգավորման ենթարկելուց օրենսդիրը ելնում է քրեական դատավարությունում պաշտպանի պարտադիր մասնակցության ապահովման անհրաժեշտության ոչ թե էությունից, այլ ձևից: Օրենսդրական նման կարգավորման պայմաններում կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ առկա չէ 69 հոդվածում նշված դեպքերից որևէ մեկը, սակայն գործի բնույթը, առաջադրված մեղադրանքի բարդությունը և մեղադրյալի վիճակը հիմք կհանդիսանան պաշտպանի պարտադիր մասնակցության, այսինքն՝ արդարադատության շահի ապահովման համար: Նման իրավիճակում քրեական վարույթն իրականացնող մարմինը նույնիսկ ցանկության դեպքում չի կարողանա ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցությունը:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ որոշակի իրավիճակում արդարադատության շահի պահանջի կտրվածքով ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը կարող է հակասել Եվրոպական Կոմիտեի 6 հոդվածի 3-րդ մասի «գ» կետի պահանջին: Միջազգային և ներպետական նորմերի նման բախումից խուսափելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում պաշտպանի պարտադիր մասնակցության կոնկրետ դեպքերը համատեղել ոչ սպառիչ այնպիսի ձևակերպման հետ, որը քրեական վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն կտա կոնկրետ դեպքերում, ելնելով որոշակի հանգամանքներից, ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցությունը՝ չոտնահարելով արդարադատության շահերը:

***դ) Մեղադրյալի իրավունքը՝ հարցաքննել իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք***

ազգային օրենսդրության մեջ ամբողջությամբ չի արտացոլում «արդարադատության շահի» եվրոպական չափանիշները:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր. 69 հոդվածի՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝

1) այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով.

3) կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում.

4) կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին.

5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալը անչափահաս է.

6) մեղադրյալը ժամկետային ծառայության զինծառայող է.

7) կասկածյալների կամ մեղադրյալների շահերի միջև կան հասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.

8) քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.

9) կասկածյալը կամ մեղադրյալը անգործունակ է.

10) դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում.

11) դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան:

Ինչպես տեսնում ենք, օրենքը սպառիչ կերպով սահմանում դեպքերի այն ցանկը, երբ պետությունը պարտավոր է ապահովել պաշտպանի մասնակցությունը գործով վարույթին՝ ելնելով միայն

Օրենքը առանձին կարգավորում է սովել պաշտպանի փոխարինման հարցին: Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանն իրավունք ունեն կասկածյալին կամ մեղադրյալին առաջարկել հրավիրելու այլ պաշտպան կամ պաշտպան նշանակել Հայաստանի Հանրապետության փաստաբանների միության միջոցով, եթե՝ 1) պաշտպանի իրավավիճակ ձեռք բերելու պահից 24 ժամվա ընթացքում պաշտպանը հնարավորություն չունի ներկայանալու կամ չի ներկայանում կասկածյալի կամ արգելանքի վերցված մեղադրյալի առաջին հարցաքննությանը, 2) պաշտպանը հնարավորություն չունի մասնակցելու քրեական գործով վարույթին 3 օրից ավելի ժամանակով (քր. դատ. օր. 70 հոդվածի 5-րդ մաս):

Գործող քրեադատավարական օրենսդրությունը, պաշտպանի հրավիրումից, նշանակումից և փոխարինումից բացի, կարգավորում է նաև պաշտպանից հրաժարվելու հետ կապված իրավահարաբերությունները: Այսպես, ըստ ՀՀ քր. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի, պաշտպանից հրաժարվելը նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության: Պաշտպանից հրաժարվելու մասին կասկածյալի կամ մեղադրյալի հայտարարությունն արտացոլվում է արձանագրության մեջ:

Քրեադատավարական օրենքը պաշտպանից հրաժարվելու դեպքում սահմանում է որոշակի երաշխիքներ, որոնք կոչված են ապահովելու կասկածյալի, մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացումը և դրա չարդարացված սահմանափակումները: Մասնավորապես, պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Դա նշանակում է, որ եթե մեղադրյալը անվճարունակ է, ապա պաշտպան նշանակվում է պետության հաշվին: ՀՀ քր. դատ. օր. 69 հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նա-

խատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները (քր. դատ. օր. 72 հոդվածի 2-րդ մաս): Այն դեպքում, երբ դատարանը դատական սանկցիա կիրառելու արդյունքում ամբաստանյալին հեռացնում նիստերի դահլիճից, օրենքը պարտավորեցնում է դատարանին չընդունել պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և օրենքով սահմանված կարգով նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69 հոդվածի 5-րդ մաս):

Պաշտպանից հրաժարվելու պահից կասկածյալը և մեղադրյալը համարվում են իրենց պաշտպանությունն ինքնուրույն իրականացնող, որը տվյալ դեպքում իրավունքներից չի զրկում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հետագայում նշանակված կամ քրեական գործով վարույթին մասնակցելուց չազատված պաշտպանին թույլատրելու մասնակցել վարույթին: Ի լրաումն դրա՝ օրենքը սահմանում է, որ պաշտպանից հրաժարված կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի քրեական գործով վարույթի ցանկացած պահի փոխել իր դիրքորոշումն այդ առիթով: Տվյալ դեպքում, նոր պաշտպանի մասնակցությունը հիմք չէ գործի վարույթը վերսկսելու համար (քր. դատ. օր. 72 հոդվածի 4-րդ մաս):

ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առավել լուրջ խնդիրներ են ծագում կապված պետական միջոցների հաշվին պաշտպանի տրամադրման հետ, երբ այդ են պահանջում արդարադատության շահերը: Մինչև վերջերս ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հայտնի չէր «արդարադատության շահ» եզրույթը, այդ իսկ պատճառով դրա մեկնաբանության հետ կապված պրակտիկայում առաջանում են որոշակի դժվարություններ: Միայն 2006թ. ՀՀ քր. դատ. օր.-ում կատարված փոփոխություններից հետո այդ հասկացությունը ներմուծվեց օրենսդրական դաշտ: ՀՀ քր. դատ. օր. 10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կասկածյալի, մեղադրյալի կողմից ցանկություն հայտնելու կամ այն դեպքում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, ինչպես

նաև սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով պարտադիր համարվող դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել նրանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Այս քայլով փորձ արվեց ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել եվրոպական Կոնվենցիայի չափանիշներին: Սակայն օրենսդիրը կանգ առավ կես ճանապարհին՝ չբացելով «արդարադատության շահ» հասկացությունը:

Դրա հետ մեկտեղ քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է նաև անձի համար անվճար իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն: ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Իսկ ըստ ՀՀ քր. դատ. օր. 10 հոդվածի 5-րդ մասի՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից: Այդուհանդերձ, պարզ չէ, թե ով պետք է որոշի մեղադրյալի անվճարունակությունը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկա որևէ իրավական ակտ, որը հնարավորություն կընձեռեր քրեական վարույթն իրականացնող մարմնին որոշելու անձի գույքային դրությունը, հետևաբար, և չկան լուրջ նախապայմաններ մեղադրյալի անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացման համար: Մեր կարծիքով, այս հարցը պետք է կարգավորվի առանձին օրենքով:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հատուկ կարգավորման է ենթարկել քրեական գործի քննությանը պաշտպանի պարտադիր մասնակցության ինստիտուտը: Վերջինս որոշ չափով ապահովում է արդարադատության շահի ապահովումը քրեական արդարադատության իրականացման գործընթացում: Սակայն, օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ինստիտուտը, այնուհանդերձ, ունի սահմանփակ կիրառում և



Չափը 60×84<sup>1/16</sup>: Թուղթը օֆսեթ:  
17 տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն  
ՀՀ, Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1

վարություն, թե հետագայում նման միջնորդությամբ հանդես կգա դատարանում, կորոշի ինքը՝ կախված նրանից, թե ինչ մարտավարություն է նա ընտրել:

Դելտան ընդդեմ Ֆրանսիայի գործով, որով դիմումատուն դատապարտվել էր ենթադրվող հանցագործության զոհի ցուցմունքների հիման վրա, որը հանդիսացել էր ոստիկանության սպայի մտերիմ ընկերը: Մեղադրող կողմի՝ դատարան կանչված երկու վկաները չներկայացան դատավարությանը, և դիմումատուն դատապարտվեց նրանց կողմից մինչ այդ տրված ցուցմունքների հիման վրա. վկաներից ոչ ոք չէր հարցաքննվել ոչ նախաքննությունը կատարած դատավորի կողմից, ոչ էլ դատարանի կողմից»: <sup>1</sup> Դատարանը, գտնելով, որ խախտվել է Կոնվենցիայի համապատասխան պահանջը իր որոշման մեջ նշել է. «Սկզբունքորեն ապացույցները պետք է ներկայացվեն հրապարակային դատավարության ընթացքում՝ մեղադրյալի ներկայությամբ՝ նրակցային վիճաբանություններ անցկացնելու նպատակով: Սակայն դա չի նշանակում, որ վկաների ցուցմունքները որպես ապացույց օգտագործվելու համար, պետք է ներկայացվեն դատարանում՝ հրապարակային քննության ընթացքում: Մինչդատական փուլում ստացված նման ցուցմունքների օգտագործումը որպես ապացույցներ ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի «դ» կետերին՝ պաշտպանության իրավունքի ապահովման պայմանով: Որպես կանոն, այդ իրավունքները ենթադրում են մեղադրյալին համապատասխան և պատշաճ հնարավորություն ընձեռելը՝ բացարկելու իր դեմ ցուցմունք տվող վկային և հարցաքննելու նրան՝ կամ վերջինիս կողմից ցուցմունք տալու, կամ դատական քննության հետագա փուլում»:

Եվրոպական դատարանը 6 հոդվածի 3-րդ մասի «դ» կետի խախտում է արձանագրել նաև հետևյալ գործերով.

✓ «Իսգրոուն ընդդեմ Իտալիայի» (մեղադրական դատավճիռը մասամբ հիմնված է եղել այն ցուցմունքների վրա, որոնք վկայի

<sup>1</sup> Տե՛ս Донна Гомьен, Давид Харрис, Лео Зваак. Европейская конвенция по правам человека и Европейская социальная хартия: право и практика, перев. с англ.. М. 1998, с. 254-255.

կողմից տրվել են քննիչին և ընթերցվել դատական նիստում. նշված վկային հնարավոր չի եղել գտնել),

✓ «Ա.Շ.-ն ընդդեմ Ավստրիայի» (մեղադրական դատավճիռը մասամբ հիմնված է եղել այն ցուցմունքների վրա, որոնք վկայի կողմից տրվել են ոստիկանին և ընթերցվել դատական նիստում. նշված վկան հրաժարվել է դատարան ներկայանալուց),

✓ «Արտներն ընդդեմ Ավստրիայի» (մեղադրական դատավճիռը մասամբ հիմնված է եղել այն ցուցմունքների վրա, որոնք վկայի կողմից տրվել են ոստիկանությունում՝ և քննիչին, հետագայում ընթերցվել դատական նիստում՝ նշված վկայի անհետանալուց հետո),

✓ «Սաիդին ընդդեմ Ֆրանսիայի» (մեղադրական դատավճիռը բացառապես հիմնված է եղել այն ցուցմունքների վրա, որոնք տրվել էին մեղադրյալի հետ առերեսման չենթարկված վկաների կողմից):<sup>1</sup>

Ինչպես նշված, այնպես էլ բազմաթիվ այլ գործերով Եվրոպական դատարանի դիրքորոշումը միանշանակ է. մեղադրական դատավճռում որպես մեղադրյալի մեղքը հիմնավորող ապացույցներ կարող են օգտագործվել միայն այն վկաների ցուցմունքները, որոնց հարցաքննության ժամանակ պահպանվել են Կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված մեղադրյալի իրավունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հիմնականում պահպանել է մեղադրյալի վերը նշված իրավունքին առնչվող Եվրոպական Կոնվենցիայի պահանջները: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 65 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի տալ ցուցմունքներ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, առերես հարցաքննվել իր դեմ վկայած անձանց հետ: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, մեկ քայլ առաջ անցնելով Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի «դ» կետի դրույթներից, 216 հոդվածում ամրագրել է, որ «քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում»:

<sup>1</sup> Ств Европейский суд по правам человека, т. 2. М. 2000, с. 610-611.

խոսում այդ լեզվով: Հակառակ դեպքում մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը և քրեական գործի քննությանը նրա մասնակցությունը կվերածվի ֆիկցիայի: Այդ պատճառով ՀՀ քր. դատ. օր. 15 հոդվածի 2-րդ մասի դրույթն առ այն, որ թարգմանի ծառայությունից անհատույց օգտվում են դատավարության բոլոր այն մասնակիցները, որոնք չեն տիրապետում դատավարության լեզվին, համահունչ է Կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի «ե» կետի տարածական մեկնաբանությանը: Վերջին հաշվով դրանով է պայմանավորված նաև քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման խնդիրը:

Այսպիսով, առերեսում կատարելը, ըստ ազգային օրենսդրության դիտվում է որպես քննիչի պարտականություն: Ընդ որում, օրենսդրական այսպիսի կոշտ կարգավորումը գործում է միայն քրեական գործի մինչդատական վարույթում:

Միաժամանակ, օրենսդիրը որևէ ժամկետ չի սահմանում, թե նախաքննության որ պահին պետք է քննիչը կատարի առերեսում: Դա թողնված է քննիչի հայեցողությանը, ելնելով կոնկրետ գործով կատարվող քննության առանձնահատկություններից: Ի տարբերություն Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ քր. դատ. օր-ը սահմանում է, որ մեղադրյալը առերես պետք է հարցաքննվի ոչ միայն վկաների, այլև ցանկացած անձի՝ այլ մեղադրյալների, տուժողների, դատապարտյալների հետ, եթե նրանց ցուցմունքներում կան էական հակասություններ: Նշված լրացուցիչ երաշխիքները բխում են Եվրոպական կոնվենցիայի 53 հոդվածի պահանջներից, ըստ որի՝ «սույն կոնվենցիայում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ նվազեցում, որոնք կարող են ապահովվել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ որևէ այլ համաձայնագրով, որին նա մասնակցում է»: Այլ կերպ ասած, Կոնվենցիայի 6 հոդվածը սահմանում է մեղադրյալի նվազագույն իրավունքների երաշխիքների ցանկը, իսկ 53 հոդվածն ազգային պետություններին իրավունք է վերապահում, իրենց օրենսդրություններով, մեղադրյալի համար սահմանել ավելի շատ իրավունքներ և երաշխիքներ:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քր. դատ. օր. 216 հոդվածում կա նաև գնահատողական բաղադրատարրիչ պահ՝ կապված ցուցմունքներում առկա «էական հակասությունների»: Հակասության էական լինելու հանգամանքը որոշում է քննիչը, ինչը որոշ դեպքերում կարող է հնարավորություն տալ քրեական հետապնդման մարմնին շրջանցելու օրենքի այս պահանջի կատարումը, մասնավորապես, որ օրենսդիրը «էական հակասություն» հասկացությունը չի պարզաբանել: Մյուս կողմից նման մոտեցումը ևս ունի իր տրամաբանությունը, քանզի օբյեկտիվորեն հնարավոր չէ բոլոր քրեական գործերով նախօրոք որոշել, թե որ հակասությունը պետք է համարվի էական, իսկ որը՝ ոչ:

Կարծում ենք, որ բոլոր դեպքերում, հակասությունը պետք է վերաբերի կոնկրետ քրեական գործով ապացուցման առարկան կազմող առավել կարևոր հանգամանքներին: Եթե նշված հանգամանքների պարզաբանման ընթացքում հակասություններ են առաջանում մեղադրյալի և այլ անձի ցուցմունքների միջև, ապա այդ հակասությունը պետք է դիտվի էական և կատարվի առերեսում: Այդուհանդերձ, մեղադրյալի համար առերեսվելը մնում է նրա իրավունքը, և դրա իրականացումն առավել կարևորվում է դատական քննության ընթացքում, քանզի ինչպես արդեն նշվել է Եվրոպական Դատարանը նշված իրավունքի իրականացմանը հատուկ ուշադրություն է դարձնում հենց դատավարության այս փուլում:

Այդ պատճառով Կոնվենցիայի վերը նշված հոդվածով նախատեսված իրավունքի հետ կապված առավել հետաքրքրական է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այն դրույթների վերլուծությունը, որոնք դատարանում կարգավորում են մեղադրյալի խաչաձև հարցաքննության իրավունքը: Ըստ ՀՀ քր. դատ. օր. 354 հոդվածի 5-րդ մասի՝ իրենց ճառերում կողմերն իրավունք չունեն հիմնվել այնպիսի ապացույցների վրա, որոնք չեն հետազոտվել դատաքննության ժամանակ: Իր հետևությունները հիմնավորելու համար նոր ապացույցներ օգտագործելու անհրաժեշտության դեպքում կողմը միջնորդություն է հարուցում դատաքննությունը վերսկսելու մասին՝ նշելով, թե որ հանգամանքներն են պահանջում լրացուցիչ հետազոտություն և ինչպիսի նոր ապացույցների հիման վրա: Բացի այդ, դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա (քր. դատ. օր-ի 358 հոդված): Այսինքն՝ դատարանն իրավունք չունի դատավճիռը կայացնել չհետազոտված ապացույցների, այդ թվում՝ չհարցաքննված վկաների կամ նրանց չհրապարակված ցուցմունքների հիման վրա:

Որպես լրացուցիչ երաշխիք, քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է, որ վկայի հաղորդած տվյալները չեն կարող ծառայել որպես ապացույց, եթե նա չի նշում դրանց ստացման աղբյուրը (քր. դատ. օր. 112 հոդվածի 2-րդ մաս): Դա նշանակում է, որ օրենսդիրը բացառում է վկայի այն ցուցմունքների օգտա-

Օրենքը կտրականապես արգելում է դատավորին, դատախազին, քննիչին, պաշտպանին, ինչպես նաև ընթերակային, վկային, դատական նիստի քարտուղարին, փորձագետին հանդես գալու որպես թարգմանիչ: Օրենքի այս պահանջն ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ իրավակիրառ պրակտիկայում բավականին հաճախ են հանդիպում դեպքեր, երբ թարգմանիչ գործառույթն իրականացնում են դատավարության մյուս մասնակիցները, մասնավորապես, քննիչները:

Թարգմանիչ մասնակցությունից բացի, օրենքը սահմանում մի շարք կարևոր դրույթներ, որոնք ապահովում են իրականացվող թարգմանության պատշաճ որակը: Մասնավորապես, թարգմանիչը պարտավոր է քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանիչ՝ իր որակավորումը հաստատող փաստաթղթերը, քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին, թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին, ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությունում թարգմանության զրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը (քր. դատ. օր. 83 հոդվածի 4-րդ մաս):

Թարգմանիչը նախազուլացվում է նաև կեղծ թարգմանություն կատարելու համար սահմանված պատասխանատվության մասին:

Չնայած Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ե» ենթակետը թարգմանի ծառայություններից անվճար օգտվելու իրավունքի սուբյեկտ է սահմանում մեղադրյալին, սակայն այդ դրույթը ավելի լայն է մեկնաբանվում, այն է՝ թարգմանի անվճար ծառայությունից պետք է օգտվի նաև մեղադրյալի պաշտպանը, եթե վերջինս չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի

թարգմանչի ծառայությունից ոչ միայն ցուցմունքներ տալուց, այլև իրենց մյուս բոլոր իրավունքներն իրացնելիս:

Որպես դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալի իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը վարույթն իրականացնող մարմնից պահանջում է, որպեսզի նա դատավարության լեզվին չտիրապետող անձանց համապատասխան դատավարական փաստաթղթերի պատճենները հանձնեն այն լեզվով, որին նրանք տիրապետում են: Այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են դրանց հայերեն թարգմանությունների հետ: Մասնավորապես, մեղադրյալն իրավունք ունի քննիչից կամ դատախազից անվճար ստանալու իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում: Բացի այդ, մեղադրյալի խնդրանքով նրան անվճար տրվում է փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների նշանակման, իր նկատմամբ խափանման միջոց և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին որոշումների, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման, հայցադիմումի պատճենը, ինչպես նաև՝ դատավճռի կամ դատարանի այլ վերջնական որոշման պատճենը (քր. դատ. օր. 65 հոդվածի 2-րդ մաս): Այդ փաստաթղթերի թարգմանության և հանձնման պարտականությունը կրում է քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմինը:

Դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալի այս իրավունքի իրականացման կարևորագույն երաշխիք է քրեական վարույթին թարգմանի մասնակցությունը: Ըստ ՀՀ քր. դատ. օր. 83 հոդվածի՝ թարգմանիչը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, ում քրեական վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն իրականացնելու համար: Ընդ որում, թարգմանիչը պետք է ազատորեն տիրապետի քրեական դատավարության լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը: Թարգմանիչ է համարվում նաև համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը:

գործումը, որոնք հիմնված են անանուն աղբյուրի կամ ասեկոսների վրա:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ վկայի ներկայությունը դատարանում պարտադիր է և նա պարտավոր է ցուցմունք տալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Դրանով օրենսդիրն ապահովում է իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու և այլ վկաներ հրավիրելու մեղադրյալի իրավունքի իրականացումը: Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, եթե վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև (քր. դատ. օր. 342 հոդվածի 1-ին մաս):

Այստեղ հարկ է նշել, որ թեև իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին հարցաքննելու մեղադրյալի իրավունքը գործում է նաև մինչդատական վարույթում, երբ կատարվում է առերեսում իր և համապատասխան վկաների միջև, սակայն եթե նման առերեսում չի կատարել քննիչը կամ չի ցանկացել մեղադրյալը, ապա այդ իրավունքից նա շարունակում է օգտվել դատական քննության փուլում՝ «իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննության ենթարկվեն»:

Այդուհանդերձ, իրավական նորմերի նախատեսումը և դրանց արդյունավետ կիրառման ապահովումը տարբեր հարթություններ են: Սակայն, այս երկու բաղադրատարրերի միասնությունն է, որ կարող է վկայել Եվրոպական Կոնվենցիայի պահանջներին ազգային օրենսդրության համապատասխանության մասին: Չնայած քննարկվող հիմնախնդրի հետ կապված Կոնվենցիայի 6 հոդվածի (3) դ կետին ՀՀ օրենսդրության արտաքուստ համապատասխանությունը, Եվրոպական Դատարանի չափանիշների իմաստով առավել կարևորվում է մեղադրյալի վերը նշված իրավունքի իրականացման համար ոչ միայն օրենսդրական, այլև իրական հնարավորությունների ստեղծումը:

Փորձաքննությունների նշանակման և փորձագետների հարցաքննության հետ կապված հանգամանքը մասամբ պայմանավորված է նաև գործող քրեադատավարական օրենսդրության թերություններով: Թեև պաշտպանության կողմը կարող է փորձաքննության նշանակման միջնորդություն հարուցել, գրավոր ներկայացնել այն հարցերը, որոնց վերաբերյալ պետք է տրվի փորձագետի եզրակացությունը, նշել, թե ով պետք է ներգրավվի որպես փորձագետ, ինչպես նաև մյուս կողմից նույնանման գործողությունների վերաբերյալ շարադրել իր կարծիքը (քր. դատ. օր. 345 հոդվածի 2-րդ մաս), սակայն փորձաքննության նշանակման հետ կապված Կոնվենցիայի պահանջները չեն պահպանվում այնքանով, որքանով պաշտպանության կողմը իրավունք չունի մեղադրանքի կողմին զուգահեռ կամ այլընտրանքային փորձաքննություն նշանակել ինքնուրույն: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում լուրջ խնդիր է մնում փորձագիտական հիմնարկների անկախության հարցը, քանզի դրանք շարունակում են գործել գործադիր մարմինների, մասնավորապես՝ արդարադատության, առողջապահության, պաշտպանության նախարարությունների կամ ոստիկանության համակարգերում:

Թեև վերջին տարիներին փորձեր են արվում գործադիր մարմինների կազմում գործող փորձագիտական հիմնարկները դարձնել ոչ պետական կամ ստեղծել անկախ փորձագիտական կենտրոններ, սակայն իրական դրական տեղաշարժերն առայժմ քիչ շոշափելի են: Առավել տրամաբանական է, որ փորձագիտական հիմնարկները ստեղծվեն գիտական հաստատություններին կից, ինչը կարող է ապահովել փորձագետների անկախությունը և ինքնուրույնությունը դատարանից և քրեական հետապնդման մարմիններից:

Կոնվենցիայով նախատեսված վերը նշված իրավունքի ապահովման հետ կապված առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 2006 թվականի մայիս ամսին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունը, որով ամրապնդվեց քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն

մանության համար կատարված ծախսերն այն բանից հետո, երբ նա դատապարտվել է: Կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի «ե» կետի նմանօրինակ ընթերցումը, ներքին դատարաններին թույլատրելով այդ ծախսերը դնել դատապարտյալի վրա, հավասարազոր է հոդվածի գործողության ժամկետային շրջանակների սահմանափակմանը և գործնականում նշանակում է, որ մեղադրյալը, հետագա դատապարտման դեպքում, զրկվում է այդ իրավունքից օգտվելուց: Նման մեկնաբանման պարագայում 6 հոդվածի 3-րդ մասի «ե» կետը զգալիորեն կորցնում է իր արդյունավետությունը: Մեղադրյալը, որը չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում դրանով, անբարենպաստ վիճակում է հայտնվում այն մեղադրյալի համեմատ, որն այդ լեզվին տիրապետում է. սրանք հենց այն անբարենպաստ պայմաններն են, որոնք կոչված է հարթելու 6 հոդվածի 3-րդ մասի «ե» կետը»:<sup>1</sup>

Եվրոպական Կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի «ե» կետի դրույթների ապահովման երաշխիքները հիմնականում արտացոլվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 հոդվածում: Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է:

Մեղադրյալը թարգմանչի ծառայությունից կարող է օգտվել քրեական դատավարության ողջ ընթացքում, այսինքն՝ ինչպես նախաքննության փուլում, այնպես էլ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում: Թարգմանչի վարձատրության ծախսերը ոչ մի դեպքում չեն կարող դրվել մեղադրյալի վրա: Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել օրենքով սահմանված բոլոր իրավունքները (քր. դատ. օր. 15 հոդվածի 2-րդ մաս): Դա նշանակում է, որ մեղադրյալը կամ ամբաստանյալն անհատույց օգտվում են

<sup>1</sup> Стів Європейський суд по правам человека. т. 1. М. 2000, с. 191.

րի մասին նրան տեղեկացնող նամակների իմաստը հասկանալու համար»<sup>1</sup>:

Սակայն, «Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի» գործով Ղատարանն առավել սահմանափակող մոտեցում ընտրել է և որոշել է, որ չնայած 6(3)ե հոդվածը կիրառվում է գործի նյութերի հրապարակման նկատմամբ դատական քննությունն սկսվելուց առաջ, այն չի պահանջում նման ողջ թղթավարության գրավոր թարգմանության ներկայացում: Տվյալ դեպքում Ղատարանն ընդգծել է, որ մեղադրյալի պաշտպանը տիրապետում էր մայրենի լեզվին: Ղատարանը որոշել է, որ օգնությունը «պետք է լինի այնպիսին, որ հեշտացնի մեղադրյալի՝ իր դեմ հարուցված գործը հասկանալը, նրա համար հնարավորություն ապահովի պաշտպանելու ինքն իրեն, և, նախառաջ, հնարավորություն՝ դատարանին ներկայացնելու իրադարձությունների իր սեփական տարբերակը»<sup>2</sup>:

Իրավասու մարմինների պարտականությունը չի սահմանափակվում թարգմանչի նշանակմամբ և կարող է ներառել նաև հսկողության գործառույթի իրականացում թարգմանության որակի համապատասխանության նկատմամբ, եթե նման գործողությունների անհրաժեշտություն է առաջացել: Թարգմանչի օգուճության իրավունքը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք տառապում են խլությամբ և, որոնց համար հաղորդակցվելու սովորական միջոցը հանդիսանում է ժեստերի լեզուն:

Եվրոպական դատարանը «Լյուդիկեն, Բելքասենն ու Քոսն ընդդեմ Գերմանիայի Ղաշնային Չանրապետության» գործով իր 28.11.1978թ. վճռում նշել է հետևյալը. «Ղատարանը արձանագրում է, որ արդարացի դատաքննության ապահովման նպատակով 6 հոդվածի 3-րդ մասում թվարկվել են մի քանի իրավունքներ (նվազագույն իրավունքներ), որոնք տրված են մեղադրյալին (յուրաքանչյուրին, ում «առաջադրված է քրեական հանցագործություն կատարելու մեղադրանք»): Սակայն «ե» կետի հետ զուգակցված՝ դրանից չի հետևում, որ մեղադրյալից կարելի է պահանջել հոգալու թարգ-

հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք (ՀՀ քր. դատ. օր. 98 հոդվածի 1-ին մաս): Քրեական դատավարությանը մասնակցող անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի (այսուհետ՝ պաշտպանվող անձ) պաշտպանությունն իրականացնում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: Վերջինս հայտնաբերելով, որ պաշտպանվող անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման:

Քրեադատավարական օրենքով նախատեսվել են մինչ այդ օրենսդրությանն անհայտ պաշտպանության այնպիսի միջոցներ, ինչպիսին են դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը, ինչպես նաև դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման: Այսպես, դատարանի կողմից պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց նրա ինքնության մասին տվյալների հրապարակման, կարող է կատարվել կեղծանվան օգտագործմամբ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել դատական նիստերի դահլիճից ամբաստանյալի և պաշտպանության կողմի ներկայացուցչին հեռացնելուց հետո: Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել այնպիսի պայմաններում, որոնք բացառում են անձի ինքնության ճանաչումը: Այդ նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոփոխող սարք և օրենքին չհակասող պաշտպանության այլ միջոցներ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց դատավարության մյուս մասնակիցների ակներև տեսանելիության, կարող է կատարվել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ՝ դատավարության սահմանափակ շրջանակով մասնա-

<sup>1</sup> St u Brozicek v. Austria, Judgement of 19 December 1989:

<sup>2</sup> St u Kamasinski v. Austria, Judgement of 19 December 1989:

կիցների մասնակցությամբ՝ գաղտնիության պահպանման մասին նախագրուշացումով: Բացառիկ դեպքերում դատարանը կարող է պաշտպանվող անձին ազատել դատական նիստին մասնակցելու պարտականությունից՝ նրա կողմից նախկինում տրված ցուցմունքի գրավոր հաստատման առկայության դեպքում: Անհրաժեշտության դեպքում դատական նիստի նախագահողը կարող է դատաքննության ընթացքում արգելել տեսաձայնային և այլ միջոցներով հարցաքննության տեսաձայնագրառումը (քր. դատ. օր. 98.13 հոդված):

Թեև նշված հոդվածներն ուղղակիորեն առնչվում են ամբաստանյալի կողմից իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքի իրականացման հետ և առանձին դեպքերում նույնիսկ կարող են այդ իրավունքի չարդարացված սահմանափակման հիմք հանդիսանալ, սակայն նշված նորանունությունը դասվում է այն դրույթների շարքին, որոնց առկայությունն ինքնին չի կարող վկայել Եվրոպական Կոնվենցիայի հետ ազգային օրենսդրության հակասության մասին և համապատասխան հետևություններ անելու համար անհարժեշտ է ունենալ և վերլուծել այդ դրույթների կիրառման կոնկրետ օրինակներ: Մնում է հույս հայտնել, որ ապագայում ԶԶ դատարանները պաշտպանության միջոցներ կիրառելու անհրաժեշտության դեպքում որպես չափանիշ կընդունեն Եվրոպական Դատարանի համապատասխան որոշումներն ու մեկնաբանությունները:

***ե) Մեղադրյալի իրավունքը՝ օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով (Կոնվենցիայի 6-րդ հոդված-ի 3-րդ մասի «ե» կետ)***

6(3)ե հոդվածը ենթադրում է, որ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում դատարանում օգտագործվող լեզվին կամ չի խոսում այդ լեզվով: Եվրոպական դատարանը ընդարձակ մեկնաբանության է ենթարկում անվճար թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքը, եթե մեղադրյա-

լը չի հասկանում դատավարության լեզուն: Ի տարբերություն անվճար իրավական օգնության ցուցադրման, անվճար թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքն որևէ այլ հանգամանքով չի պայմանավորված: Դատարանը Օցթյուրքի գործով որոշեց, որ կառավարության փորձը անվճար թարգմանչի ծառայության համար կատարված դատական ծախսերը դատապարտված անձի վրա դնելը՝ 6 հոդվածի, 3-րդ մասի «ե» կետի խախտում է, որովհետև այդպիսի ֆինանսական հետևանքի նկատմամբ ունեցած վախը բոլորովին չի նպաստում այդ իրավունքի իրականացմանը (Օցթյուրքն ընդդեմ Գերմանիայի, 21.02.84):

«Լյուդիկեն, Բելկասենը և Քոչն ընդդեմ ԳԴԶ-ի» գործով Դատարանը որոշել է, որ տվյալ դրույթը միանշանակ արգելում է մեղադրյալից պահանջել վճարելու թարգմանչի ծառայությունների դիմաց, քանի որ «անվճար» տերմինը չի նշանակում «ոչ վճարումից ազատում որոշակի պայմաններով, ոչ վճարման ժամանակավոր արտոնություններ, ոչ էլ վճարման դադարեցում, այլ համընդհանուր և լիարժեք ազատում վճարելու անհրաժեշտությունից»: Դատարանը գտել է, որ նշված սկզբունքը վերաբերում է «մեղադրյալի դեմ հարուցված գործով այն փաստաթղթերի կամ հայտարարությունների թարգմանությանը, որոնք նրան անհրաժեշտ են կատարվածը հասկանալու համար, և երաշխավորում է արդարացի դատաքննության նրա իրավունքի պահպանումը»<sup>1</sup>:

«Բրոզիչեկն ընդդեմ Իտալիայի» գործով Գերմանիայի քաղաքացուն մեղադրանք էր առաջադրվել Իտալիայում: Դատարանը վճռել է, որ համաձայն 6(3)ե հոդվածի, որը տվյալ դեպքում հրատապ է, մեղադրանքը պարունակող փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներենով, «եթե միայն իշխանությունները չեն կարողացել պարզել, որ դիմողը իրոք տիրապետել է իտալերենին այն աստիճանի, որը բավարար է իր դեմ առաջադրված մեղադրանքները»:

<sup>1</sup> St'u Luedicke, Belkacem and Koc v. Germani, Judgement of 28 November 1978: